HAL
open science

- XX XXI

Edik Minasyan, Ararat Vardanyan, Vrej Harutyunyan, Ellada Ayrapetyan

To cite this version:

Edik Minasyan, Ararat Vardanyan, Vrej Harutyunyan, Ellada Ayrapetyan. - XX XXI . Edik Minasyan. La maison d'édition YSU, pp.271, 2022, 978-5-8084-2586-6. hal-04168934

HAL Id: hal-04168934

https://hal.science/hal-04168934

Submitted on 22 Jul 2023

HAL is a multi-disciplinary open access archive for the deposit and dissemination of scientific research documents, whether they are published or not. The documents may come from teaching and research institutions in France or abroad, or from public or private research centers.

L'archive ouverte pluridisciplinaire **HAL**, est destinée au dépôt et à la diffusion de documents scientifiques de niveau recherche, publiés ou non, émanant des établissements d'enseignement et de recherche français ou étrangers, des laboratoires publics ou privés.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Էդիկ Մինասյան
Արարատ Վարդանյան
Վրեժ Հարությունյան
Էլլադա Հայրապետյան

ԱՐՑԱԽ-ՍՓՅՈՒՌՔ

ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XX ԴԱՐԱՎԵՐՋԻՆ ԵՎ XXI ԴԱՐԱՍԿԶԲԻՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Էդիկ Գարեգինի Մինասյան, Արարատ Վլադիմիրի
Վարդանյան, Վրեժ Կիմի Հարությունյան,
Էլլադա Էդվարդի Հայրապետյան

ԱՐՑԱԽ-ՍՓՅՈՒՌՔ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XX ԴԱՐԱՎԵՐՋԻՆ ԵՎ XXI ԴԱՐԱՍԿԶԲԻՆ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2022

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3
Ա 948

Հրատարակության են երաշխավորել ԵՊՀ պատմության ֆակուլտետի գիտական և ԵՊՀ գրահրատարակչական խորհուրդները:
Տպագրվում է Արցախի Հանրապետության ԿԳՄՍ նախարարության ֆինանսական աջակցությամբ:

Խմբագիրներ՝
պ.գ.դ., պրոֆ. Էդիկ Մինասյան
բ.գ.թ. Մերի Հովհաննիսյան
Գրախոսներ՝ պ.գ.դ., պրոֆեսոր Վալերի Թունյան
պ.գ.դ., պրոֆեսոր Վանիկ Վիրաբյան

Մինասյան Էդիկ Գարեգինի, Վարդանյան Արարատ Վլադիմիրի, Հարությունյան Վրեժ Կիմի, Հայրապետյան Էլլադա Էդվարդի
Ա 948 Արցախ-Սփյուռք առնչությունները XX դարավերջին և XXI դարասկզբին /Է. Մինասյան, Ա. Վարդանյան, Վ. Հարությունյան, Է. Հայրապետյան/: Կոլեկտիվ մենագրություն: Երևան, ԵՊՀ հրատ., 2022, 272 էջ:

Эдик Гарегинович Минасян, Арарат Владимирович Варданян, Вреж Кимич Арутюнян, Эллада Эдуардовна Айрапетян
Отношения Арцах-Диаспора в конце XX века в начале XXI века. Коллективная монография, Ереван, Из-во ЕГУ, 2022, 272 с.

Edik Minasyan, Ararat Vardanyan, Vregh Harutyunyan, Ellada Hayrapetyan
Artsakh-Diaspora relations at the end of the 20th century and at the beginning of the 21st century. Yerevan, YSU Press, 2022, 272 pp.

Կոլեկտիվ մենագրությունը ներկայացնում է Արցախի Հանրապետության կառավարության հաստատած և գիտական կենտրոնում իրականացրած «Արցախ-Սփյուռք առնչությունները XX դարավերջին և XXI դարասկզբին» (ծածկագիր և պայմանագրի համար՝ SCS 19AA-005) գիտական թեմայի հետազոտության արդյունքները:

Մենագրությունը նախատեսված է Արցախի հարցերով զբաղվող մասնագետների, պատմաբանների, ինչպես նաև ընթերցող լայն հանրության համար:

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3
ISBN 978-5-8084-2586-6
© ԵՊՀ հրատ., 2022
© Հեղ. խումբ, 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ.....6

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԵՎ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ
ԱՐՑԱԽ-ՍՓՅՈՒՌՔ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ
ԳՈՐԾՈՒՄ XX ԴԱՐԱՎԵՐՋԻՆ ԵՎ XXI ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ
ՏԱՍՆԱՄՅԱԿՆԵՐՈՒՄ.....41

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ, ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՈՒ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ
ԲԱՐԵՐԱՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՈՒՄ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՄԱՆ
ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ XX ԴԱՐԱՎԵՐՋԻՆ ԵՎ XXI ԴԱՐԱՍԿԶԲԻ
ԵՐԿՈՒ ՏԱՍՆԱՄՅԱԿՆԵՐՈՒՄ.....67

«Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ)», «Թուֆենկյան» հիմնադրամի և համասփյուռքյան այլ հիմնադրամների, բարեգործական ու հասարակական կազմակերպությունների գործունեությունը Արցախում սոցիալական ծրագրերի կենսագործման ուղղությամբ.....67

Հայ կրթական հիմնարկության ներդրումը հայրենիքում կրթական ոլորտի ծրագրերի իրականացման գործում.....98

Սփյուռքահայ բարերարների և բարեգործական կազմակերպությունների ներդրումներն Արցախում կրթական ոլորտի ծրագրերի իրականացման գործում XXI դարի երկու տասնամյակներում.....109

Հիմնադրամների, սփյուռքահայ բարեգործական հասարակական կազմակերպությունների և անհատ բարերարների ներդրումը առողջապահական ոլորտի ծրագրերի իրականացման գործում 129

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ, ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՈՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ԲԱՐԵՐԱՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՈՒՄ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ XX ԴԱՐԱՎԵՐՋԻՆ ԵՎ XXI ԴԱՐԱՍԿԶԲԻ ԵՐԿՈՒ ՏԱՍՆԱՄՅԱԿՆԵՐՈՒՄ 156
«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից Արցախի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի կենսագործումը 156
Հայ օգնության ֆոնդի ազգօգուտ գործունեությունը Արցախում 173
Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության (ԱՀԱԸ) հայրենանվեր գործունեությունը Արցախում 183
Հայ օգնության միության գործունեությունը Արցախի Հանրապետությունում XXI դարի երկու տասնամյակներում 193

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ԲԱՐԵՐԱՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՈԼՈՐՏԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ XX ԴԱՐԱՎԵՐՋԻՆ ԵՎ XXI ԴԱՐԱՍԿԶԲԻ ԵՐԿՈՒ ՏԱՍՆԱՄՅԱԿՆԵՐՈՒՄ 199

Համահայկական հիմնադրամների և հասարակական, բարեգործական կազմակերպությունների և անհատ բարերարների ներդրումները Արցախի Հանրապետության տնտեսության մեջ և այդ ոլորտի ծրագրերի կենսագործումը.... 199
«Թուֆենկյան» հիմնադրամի գործունեությունը Արցախի Հանրապետության տնտեսության զարգացման ծրագրերի իրականացման ուղղությամբ.... 222
2020 թ. արցախյան 44-օրյա պատերազմը և դրա հետևանքները 240
ՎԵՐՋԱԲԱՆ.... 253
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.... 258

ԱՌԱՋԱԲԱՆ

XX դարավերջին Հայաստանի ազգային անկախության վերականգնումը և հայկական զույգ հանրապետությունների՝ Հայաստանի Հանրապետության ու Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության ստեղծումը շրջադարձային իրողություն եղան հայ ժողովրդի պատմության մեջ:

1991 թ. ԽՍՀՄ փլուզումը, Հայաստանի Հանրապետության անկախության վերականգնումն (1991 թ. սեպտեմբերի 21-ի հանրաքվեով) ու Արցախի Հանրապետության անկախության հռչակումը (1991 թ. սեպտեմբերի 2-ին) նոր որակ ու փուլ սկզբնավորեցին Հայաստան-Սփյուռք առնչություններում, որոնք ընդգրկեցին կյանքի բոլոր ոլորտները՝ հասարակական, քաղաքական, մշակութային և սոցիալ-տնտեսական:

ԽՍՀՄ կազմալուծման հետևանքով սկսված անկախացման գործընթացները չէին կարող անտարբեր թողնել արցախահայությանը, որը նույնպես ընտրեց իր անկախացման ուղին:

Դեռևս 1988 թ. փետրվարի 27-ից սումգայիթյան ցեղասպանությամբ սկիզբ առած ադրբեջանահայության բռնագաղթը ժամանակի ընթացքում ընդունեց ավելի ու ավելի ահագնացող չափեր: Դրանով սկսվեց բռնագաղթի առաջին փուլը: Ադրբեջանում հայ բնակչության ցեղասպանությունն ու զանգվածային բռնագաղթը շարունակվեցին իրար հաջորդող բազմաթիվ փուլերով[1]: Ցեղասպանության բռնկման ամեն մի նոր փուլ սկսվում էր զանգվածային ջարդերով ու մեծ բռնագաղթով: Եվ եթե բռնկման ամեն մի նոր փուլի համար բնորոշը կարմիր ջարդն էր, ապա հարաբերական դադարի փուլերում բռնագաղթը ևս մերթընդմերթ ուղեկցվում էր ջարդերով:

---

[1] Տե՛ս Խոջաբեկյան Վ., Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում, XXI դարի շեմին, Եր., 2001, էջ 274:

1988 թ. նոյեմբերի 21-22-ին սկսվեց Ադրբեջանում հայ բնակչության ցեղասպանության երկրորդ փուլը: Ցեղասպանության ալիքը ոլորապտույտի մեջ ներքաշեց Ադրբեջանի գրեթե ամբողջ հայ բնակչությանը:

1989 թ. հուլիս-օգոստոսյան օրերից սկսած՝ սկիզբ առավ երրորդ մեծ բռնագաղթը:

1990 թ. հունվարին Բաքվում ժողովրդական ճակատի և Ադրբեջանի կառավարող իշխանությունների ձեռնարկած ցեղասպանությունը դարձավ Ադրբեջանից հայերի արտաքսման չորրորդ՝ ամենավճռական փուլը:

Ադրբեջանից հայ բնակչության բռնագաղթի և ցեղասպանության հինգերորդ փուլը սկսվեց 1991 թ. գարնանը: Ադրբեջանի և խորհրդային զինված միավորումների բացահայտ համատեղ գործողությունները սկսվեցին «Օղակ» գործողությամբ: Այդ ժամանակ գրեթե ավարտին հասցվեց Ադրբեջանի տարածքում բոլոր հայաշատ վայրերից հայ բնակչության հայաթափման ընթացքը, որն ուժգնորեն ոլորապտույտի մեջ ներքաշեց Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանը:

Փաստորեն՝ 1988 թ. սկիզբ առած ցեղասպանությունն Ադրբեջանում վերջնականապես դարձավ բացահայտ պետական քաղաքականություն: 1991 թ. գարնանը Ադրբեջանը ձեռնարկեց լայնածավալ պատերազմ Լեռնային Ղարաբաղի ամբողջ տարածաշրջանի երկայնքով: 1991 թ. ամռանը սկիզբ դրվեց ցեղասպանության և բռնագաղթի վեցերորդ փուլին: Այս փուլի բնորոշ կողմը ոչ միայն երկու հանրապետությունների միջև մղվող իսկական պատերազմն էր, այլև բուն Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության ցեղասպանության ու զանգվածային բռնագաղթի կազմակերպումը: Բռնագաղթը ոլորապտույտի մեջ ներքաշեց փախստականների նորանոր քարավաններ Մարտակերտի, Ստեփանակերտի, Ասկերանի, Հադրութի, Մարտունու շրջանների մի քանի տասնյակ բնակավայրերից:

Ըստ ակադեմիկոս Վլադիմիր Խոջաբեկյանի հաշվումների՝ ընդհանուր առմամբ 1988-1995 թթ. Ադրբեջանից և այլ վայրերից բնավեր եղան 419000 փախստականներ և հարկադիր վերաբնակեցվածներ, որոնցից 360000-ը՝ Ադրբեջանական ԽՍՀ-ից, 48000-ը՝ Լեռնային Ղարաբաղից, 8000-ը՝ Աբխազիայից, 1500-ը՝ Չեչնիայից, 900-ը՝ Ուզբեկստանից, 600-ը՝ Տաջիկստանից և այլ վայրերից: Նրանցից Հայաստանում ապաստանեցին 381,5 հազարը, այդ թվում՝ Ադրբեջանի հետ սահմանակից տարածքներից հարկադրաբար վերաբնակեցվածները կազմեցին 72000 մարդ[2]:

1998 թ. Հայաստանում հաշվվում էին 316000 փախստական ու բռնագաղթված Ադրբեջանից ու Լեռնային Ղարաբաղից (18000): Նրանցից 64000-ը ժամանակավորապես արտագաղթել էր այլ երկրներ, այսինքն՝ Հայաստանում մնացել էր 252000-ը[3]: Այդուհանդերձ, տնավեր, սեփական տունը, ունեցվածքը հարկադրաբար թողած, սպանդից մազապուրծ հարյուր հազարավոր բռնագաղթված հայեր վերջնական հանգրվան չգտան Հայաստանի Հանրապետությունում. չունեին աշխատանք, ապրուստի կայուն ու հուսալի աղբյուրներ:

1980-ական թթ. երկրորդ կեսին հավատալով գորբաչովյան թվացյալ «Վերակառուցման» քաղաքականությանը՝ հայ ժողովուրդը, 1988 թ. փետրվարից սկսած, Արցախյան շարժումով փորձեց հասնել Արցախի ազատագրման ազգային իղձերի իրականացմանը: Սակայն երկու տարվա ծանր փորձություններից հետո համոզվելով, որ ամբողջատիրական վարչակարգն ու ժողովրդավարությունը անհամատեղելի են, համազգային պայքարը միաժամանակ ուղղեց անկախ պետականության հաստատմանը: Այս պայքարի ընթացքում մեծ դժվարությամբ հաղթահարելով իր դեմ

---

[2] Տե՛ս Խոջաբեկյան Վ., նշվ. աշխ., էջ 274, 283-284:

[3] Տե՛ս նույն տեղում:

ուղղված դավերն ու ծանր փորձությունները՝ մեր ժողովուրդը վերստին նվաճեց իր անկախ պետականությունը:

1980-ական թթ. սկզբներին ԽՍՀՄ-ում տեղի ունեցած քաղաքական բուռն զարգացումների արդյունքում կազմալուծվեց այդ երկիրը, և Հայաստանը, ի թիվս նախկին խորհրդային մյուս հանրապետությունների, անկախացավ: ՀՀ անկախությունը վերջնականապես ձևակերպվեց 1991 թ. սեպտեմբերի 21-ի համաժողովրդական հանրաքվեի արդյունքներով, իսկ Արցախի անկախությունը՝ 1991 թ. սեպտեմբերի 2-ին Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների պատգամավորների հրավիրած նստաշրջանում ընդունած «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» անկախության մասին հռչակագրով:

1991 թ. Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումը նոր թափ հաղորդեց արդեն իսկ 1988 թվականից սկսած ավերիչ երկրաշարժով ու Արցախյան շարժման զարթոնքով պայմանավորված հայրենիք-Սփյուռք սերտացող հարաբերություններին, երբ Սփյուռքի առաջ բացվեցին հայրենի պետության փակ դռները: Նախորդ ժամանակաշրջանի համար այս շրջափուլում Սփյուռքի ու հայրենիքի միջև, ըստ էության, հաստատվեցին սահմանափակումներից զերծ ազատ հարաբերություններ: Հայաստանի Հանրապետության և Արցախի քաղաքական անկախության վերականգնմանը հաջորդած առաջին տարիներին, Արցախյան պատերազմով և սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակով պայմանավորված դժվարին պայմաններից դրդված, հարյուր հազարավոր հայեր, արտագաղթելով հայրենի երկրից, ավելի ստվարացրին արտերկրում ապրող սփյուռքահայության թվաքանակը: Փաստորեն՝ Խորհրդային Միությունում ընթացող բախտորոշ գործընթացների արդյունքում Սփյուռքը կրեց զգալի փոփոխություններ: Սփյուռքում իրավիճակը փոխվեց այն բանից հետո, երբ 1988-

1992 թթ. հայկական համայնքները համալրվեցին Սպիտակի երկրաշարժից ու Ադրբեջանի իշխանությունների կազմակերպած հալածանքների ու սպանության, Սումգայիթի, Բաքվի և հայաշատ այլ շրջանների հրեշավոր վայրագությունների, ծրագրած ցեղասպանության հետևանքով բռնագաղթած հայության միջոցով: Ադրբեջանի ողջ հայ բնակչությունը (400 հազար) հարկադրաբար արտագաղթեց Հայաստան, Ռուսաստան և այլուր:

Օգտվելով ԽՍՀՄ ղեկավարության բացարձակ աջակցությունից՝ ադրբեջանական իշխանությունները շարունակում էին զավթել հայկական գյուղերը՝ բնակիչներին արտաքսելով իրենց բուն հայրենիքից: 1991 թ. ապրիլ-մայիս ամիսներին ադրբեջանական միլիցիայի հատուկ նշանակության ջոկատները (ռուս.՝ ՕՄՈՆ) խորհրդային բանակի աջակցությամբ բացահայտ պատերազմ սկսեցին Շահումյանի շրջանի ու Գետաշենի ենթաշրջանի հայ բնակչության դեմ:

Փաստորեն՝ 1991 թ. մայիսին Ադրբեջանի կողմից հրահրվեց ղարաբաղա-ադրբեջանական պատերազմ: 1991 թ. հուլիսին Արցախում ստեղծվեցին ինքնապաշտպանության ընդհատակյա կոմիտե և ինքնապաշտպանական ուժերի շտաբ: Մարզի բոլոր շրջաններում կազմակերպվեցին զինված ջոկատներ, որոնք հետագայում համախմբվեցին մեկ միասնական հրամանատարության ներքո:

Երբ ակնհայտ դարձավ ԽՍՀՄ փլուզման անխուսափելիությունը, 1991 թ. օգոստոսի 30-ին Բաքվում հրավիրված Ադրբեջանի Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջանն ընդունեց Ադրբեջանական Հանրապետության անկախության վերականգնման մասին հռչակագիր[4]: Դա նշանակում էր, որ Ադրբեջանը դուրս էր գալիս ԽՍՀՄ կազմից՝ նպատակ ունենալով նույն ուղիով տանել

[4] Տե՛ս НКР, История и современность, Степанакерт, 1998, с. 9:

նաև Լեռնային Ղարաբաղը: Հռչակագրում ասված էր, որ Ադրբեջանի Հանրապետությունը ընդգրկված է լինելու 1918-1920 թթ. մուսավաթական Ադրբեջանի Հանրապետության սահմաններում: Փաստորեն՝ Բաքուն հրաժարվում էր Խորհրդային Ադրբեջանի իրավահաջորդը լինելուց: Դա նշանակում էր, որ նրա կազմում չէին կարող լինել ո՛չ Նախիջևանը, ո՛չ էլ Լեռնային Ղարաբաղը: Ուստի անհրաժեշտ էր շտապել և ձեռքից բաց չթողնել հարմար պատմական պահը, հատկապես որ 1990 թ. ապրիլի 3-ից գործող «ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին»[5] ԽՍՀՄ օրենքով Խորհրդային Միությունից դուրս եկող հանրապետության սահմանների մեջ գտնվող ինքնավար հանրապետություններին ու ինքնավար կազմավորումներին ու տվյալ տարածքում բնակչության մեծամասնությունը կազմող համահավաք բնակվող ազգային խմբերին իրավունք էր տրվում ինքնուրույնաբար վճռելու իրենց պետական-իրավական կարգավիճակի խնդիրը, հետևաբար այդ օրենքը Լեռնային Ղարաբաղի հայությանը թույլ էր տալիս օրինական ճանապարհով բաժանվել Ադրբեջանից և դառնալ սեփական ճակատագրի տերը, մանավանդ որ 1918-1920 թթ. Ղարաբաղը երբեք այդ պետության մաս չէր կազմել: Բացի դրանից՝ 1991 թ. հոկտեմբերի 18-ի «Անկախության մասին» սահմանադրական ակտով Ադրբեջանը անվավեր ճանաչեց Խորհրդային Միության գոյության ժամանակ ընդունված, իրեն վերաբերող ակտերը: Դրանով իսկ Ադրբեջանը անվավեր ճանաչեց նաև բոլոր ակտերը, որոնք վերաբերում էին Լեռնային Ղարաբաղին:

Առաջնորդվելով ԽՍՀՄ Սահմանադրությամբ և նշված օրենքով՝ 1991 թ. սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում տեղի ունեցավ Լեռնային Ղարաբաղի մարզային ու Շահումյանի շրջանային բո-

[5] Տե՛ս Золян С., Нагорный Карабах: Проблема и конфликт, Ереван, 2001, с. 111:

լոր մակարդակների խորհուրդների պատգամավորների մասնակցությամբ համատեղ նստաշրջան: Ընդունվեց «Հռչակագիր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին» որոշումը: Նախկին ԼՂԻՄ և Շահումյանի շրջանի տարածքում հռչակվեց անկախ հայկական պետություն՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը (ԼՂՀ)[6]: Նրա տարածքում մինչև ԼՂՀ սահմանադրության ու օրենքների ընդունումը գործելու էին ԽՍՀՄ Սահմանադրությունն ու օրենսդրությունը, ինչպես նաև նշյալ հռչակագրի նպատակներին ու սկզբունքներին և հանրապետության առանձնահատկություններին չհակասող ու գործող մյուս օրենքները:

Փաստորեն՝ Ադրբեջանի անկախության հռչակումից հետո ԼՂԻՄ-ը՝ որպես ինքնավար կազմավորում, և Շահումյանի շրջանը՝ իբրև ազգային փոքրամասնությամբ համահավաք բնակեցված տարածք, մինչև ԽՍՀՄ իրավաբանական գոյության ավարտն իրականացրին իրենց պետահիրավական կարգավիճակների որոշմանը նպատակաուղղված, Խորհրդային Միության գործող օրենսդրությամբ սահմանված իրավական քայլեր: Հետևաբար Ադրբեջանի հավակնությունները Լեռնային Ղարաբաղի նկատմամբ ԽՍՀՄ օրենսդրության շրջանակում զուրկ են իրավական հիմքերից:

Միջազգային իրավունքի տեսանկյունից ևս նման հիմքեր գոյություն չունեն, քանի որ Ադրբեջանը, անկախություն հռչակելով, իրեն հայտարարել է 1918-1920 թթ. գոյություն ունեցած Ադրբեջանական Հանրապետության իրավահաջորդը, որը չի ճանաչվել Ազգերի լիգայի կողմից այդ հանրապետության մեջ մտնող տարածքների հստակ սահմանների որոշման դժվարության պատճառով:

Ադրբեջանի հավակնությունները Լեռնային Ղարաբաղի նկատմամբ զուրկ են նաև պատմական հիմքերից, քանի որ վերջինս երբևէ չի եղել անկախ Ադրբեջանի մաս:

---

[6] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 3 սեպտեմբերի, 1991:

Տասնամյակներ շարունակ ազգերի ինքնորոշման իրավունքից օգտվելու՝ արցախահայության բոլոր խաղաղ նախաձեռնություններին ի պատասխան՝ Ադրբեջանը կիրառել է բռնություններ, ոտնահարել հայ բնակչության իրավունքներն ու շահերը, ուստի Ադրբեջանի հավակնությունները Լեռնային Ղարաբաղի նկատմամբ չունեն նաև բարոյական հիմքեր:

Այսպիսով՝ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշումը իրականացվում է մի տարածքի վրա, որի նկատմամբ Ադրբեջանն իրավական, պատմական և բարոյական հավակնություններ ունենալ չի կարող: Սակայն Ադրբեջանը ոչ մի կերպ չի ցանկանում ընդունել այս իրողությունը: Ուստի պատահական չէր, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակումից անմիջապես հետո Ադրբեջանի Գերագույն խորհրդի նախագահությունն ընդունեց որոշում, որով տեղի ունեցածը համարեց դավադրություն Ադրբեջանի ամբողջականության ու անկախության դեմ՝ հանրապետության ուժային գերատեսչություններին հանձնարարելով խափանել այդ հռչակագրի իրականացման ցանկացած փորձ ու պատասխանատվության ենթարկելով դրա հեղինակներին[7]: Միաժամանակ հանրապետական կազմկոմիտեին հանձնարարվեց լրացուցիչ միջոցառումներ ձեռնարկել ԼՂԻՄ բնակչության զինաթափումն արագացնելու ուղղությամբ: Սակայն այս հանձնարարականները գործնականում անհնար էր իրականացնել, քանի որ մարզի մեծ մասը, գտնվելով հայկական ուժերի վերահսկողության ներքո, անհասանելի էր Ադրբեջանի պաշտոնական անձանց, ուստի Ադրբեջանը սաստկացրեց ռազմական գործողությունները Լեռնային Ղարաբաղում:

---

[7] Տե՛ս Հակոբյան Տ., ԼՂՀ հռչակումը և պետական շինարարության գործընթացը (1991-1994 թթ.), Երևան, 2011, էջ 21:

1991 թ. դեկտեմբերի 10-ին տեղի ունեցավ անկախության հանրաքվե, որը հաստատեց Լեռնային Ղարաբաղի անկախությունը: Այդ օրը, չնայած պատերազմական դժվարին վիճակին, ԼՂՀ բնակչության ձայնի իրավունք ունեցողների 82 %-ը մասնակցեց հանրաքվեին, իսկ քվեարկողների 99,8 %-ը ձայն տվեց անկախության օգտին[8]:

1991 թ. դեկտեմբերի 28-ին կայացան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհրդի (հետագայում՝ Ազգային ժողով) պատգամավորների ընտրություններ, որին ադրբեջանցիները չմասնակցեցին ղեկավարության հրահանգով: 1992 թ. հունվարի 6-ին Ստեփանակերտում նախկին մարզխորհրդի նիստերի դահլիճում ընտրված 51 պատգամավորներից 48-ի մասնակցությամբ (ճանապարհը փակ լինելու պատճառով 3 պատգամավոր չէր հասել Ստեփանակերտ), 80 դիտողների, լրագրողների ներկայությամբ և «Հայր մեր» տերունական աղոթքով իր աշխատանքն սկսեց ու կայացավ հանրապետության առաջին գումարման Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանը, որն ընդունեց «ԼՂՀ անկախության հռչակագիրը»:

Հունվարի 8-ին ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահ ընտրվեց 33-ամյա պատմաբան Արթուր Մկրտչյանը: Ստեղծվեց ԼՂՀ նախարարների խորհուրդ՝ Օլեգ Եսայանի վարչապետությամբ[9]:

1992 թ. հունիսի 2-ին ԼՂՀ Գերագույն խորհուրդը հաստատեց պետական դրոշը, իսկ նոյեմբերի 17-ին՝ երկրի զինանշանն ու օրհներգը: ԼՂՀ դրոշը եռագույն է՝ կարմիր, կապույտ, նարնջագույն՝ սպիտակ գույնի հնգատամ սանդղանման զարդանախշով, որի աջ փոքրիկ հատվածը անջատված է դրոշի հիմնական մասից, ինչը խորհրդանշում է Արցախի և՛ այսօրվա կացությունը, և՛ նրա ապագան:

---

[8] Տե՛ս Հակոբյան Տ., նշվ. աշխ., էջ 22-23:

[9] Տե՛ս Աբրահամյան Հ., Ճակատագրին ընդառաջ, Երևան, 2001, էջ 151:

Աստիճանաբար կազմավորվեց դատական համակարգը՝ Հայաստանի Հանրապետության օրինակով: Մարտերի բովում կազմավորվեց ԼՂՀ բանակը, որն ազատագրական պայքարում իրեն պսակեց հաղթանակների փառքով:

Հետագայում ԼՂՀ-ում մտցվեց նախագահական կառավարում: 1994 թ. դեկտեմբերին ԼՂՀ Գերագույն խորհրդի կողմից Ռոբերտ Քոչարյանը ընտրվեց Հանարապետության նախագահ, իսկ 1996 թ. նոյեմբերից պաշտոնավորեց համաժողովրդական ընտրությամբ:

ԼՂՀ հռչակումն ու պետական իշխանության ձևավորումը մեծապես նպաստեցին Արցախյան շարժման հաջողություններին ու Ադրբեջանի սանձազերծած պատերազմական գործողություններին վերջ տալուն:

Արցախյան պատերազմի ծավալումը: 1991 թ. վերջից գնալով ուժեղանում էր ԼՂՀ-ի դեմ Ադրբեջանի ծավալած ռազմական ագրեսիան: Հայաստանի Հանրապետությունը ԼՂՀ-ի հետ հետևողական պայքար սկսեց շրջափակման վերացման ու պատերազմական գործողությունների դադարեցման համար: Սակայն Ադրբեջանի իշխանությունների կարգադրությամբ սկսեցին անընդհատ ռմբակոծվել Արցախի բնակավայրերը: Համապարփակ շրջափակումն ու շուրջօրյա հրետակոծությունները ավերել ու կաթվածահար էին արել Արցախի տնտեսությունը: Առանց հակառակորդի ռազմական հենակետերի վերացման հնարավոր չէր ապահովել բնակչության անվտանգությունը, ինչին 1992 թ. ձմռանից ձեռնամուխ եղան ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերը: Դաժան մարտերից հետո՝ 1992 թ. հունվարին, ազատագրվեց Ստեփանակերտի արվարձան Կրկժանը: 1992 թ. հունվարին թեժ մարտեր տեղի ունեցան Քարինտակի մատույցներում: Շուշիի բարձունքից ադրբեջանցիները գրոհում էին, բայց ներքևում գտնվող գյուղը մնում էր

անառիկ: Ադրբեջանի ազգային բանակն այդ ուղղությամբ նոր լայնածավալ հարձակում սկսեց 1992 թ. հունվարի 25-26-ին, սակայն պարտություն կրելով՝ հետ շպրտվեց[10]:

Ստեփանակերտի համար ամենավտանգավորը Խոջալուն էր (այժմ՝ Իվանյան), որը փակում էր Ստեփանակերտ–Ասկերան մայրուղին:

Փետրվարի 26-ին՝ մի քանի ժամվա ընթացքում հայ ինքնապաշտպանական ուժերը, տալով մի քանի զոհեր, լիովին ջախջախեցին Խոջալուում տեղակայված ադրբեջանական ուժերը: Հայոց ազատամարտի մեր նորօրյա պատմության փառավոր էջերից է Շուշիի ազատագրումը: Երկու տարի շարունակ Ստեփանակերտի խաղաղ բնակչության ռմբակոծումը կատարվում էր Շուշի քաղաքից:

1992 թ. մայիսի սկզբին որոշվեց իրագործել Շուշիի ազատագրման «Հարսանքի լեռներում» խիստ գաղտնի ծրագիրը: Ռազմական գործողությունները ղեկավարում էր գնդապետ Արկադի Տեր-Թադևոսյանը (Կոմանդոս), նրա կողքին էին գեներալ Գուրգեն Դալիբալթայանը, շտաբի պետ Ֆելիքս Գզողլյանը և ուրիշներ[11]:

Մայիսի 8-ին հրետանային կրակի ներքո բոլոր ուղղություններով սկսվեց ընդհանուր գրոհը: Մայիսի 9-ին թշնամին խուճապահար փախուստի դիմեց:

Շուշիի ռազմական գործողությունները լուրջ մարտական մկրտություն էին ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի համար և իրենց արժանի տեղը գտան հայ ազգային-ազատագրական պայքարի պատմության տարեգրությունում:

Այս մարտերում իրենց հերոսությամբ աչքի ընկան բազմաթիվ հայ մարտիկներ, որոնց թվում էին իրենց կյանքը հայրենիքին նվի-

---

[10] Մանրամասն տե՛ս Է. Մինասյան, Հայոց նորագույն պետականության քառորդ դարը (1991-2017), Երևան, 2018, էջ 88-92:

[11] Տե՛ս նույն տեղում, էջ 91-92:

բաբերած Գագիկ Ստեփանյանը, Արթուր Ղարիբյանը, Աշոտ Ղուլյանը և ուրիշներ: Շուշիի հաղթանակն ամրապնդեց հայ ժողովրդի հավատը վերջնական հաղթանակի հանդեպ: Դրանով վերջ տրվեց Արցախի տնական շրջափակմանը:

Հետապնդելով խուճապի մատնված հակառակորդին՝ Արցախի ազատամարտիկները մայիսի 18-ին ազատագրեցին Լաչինը (Բերդձորը) և նրա շրջակա գյուղերը: Լաչինի մարդասիրական միջանցքով սկսվեց Հայաստանի Հանրապետությունից Արցախին սննդամթերքի, վառելանյութի, դեղորայքի և այլ անհրաժեշտ ապրանքների առաքումը: Սակայն Ադրբեջանը չհաշտվեց պարտության հետ:

1992 թ. ամռանը ադրբեջանական կանոնավոր բանակը օտարերկյա վարձականների աջակցությամբ լայնածավալ հարձակում սկսեց ԼՂՀ հյուսիսային մասում: Հակառակորդին հաջողվեց գրավել Շահումյանի շրջանն ու Մարտակերտի շրջանի մեծ մասը[12]: Այս շրջաններից մազապուրծ գաղթականների նոր խմբեր հայտնվեցին Հայաստանի Հանրապետությունում ու Արցախում: Ադրբեջանցիների գրաված տարածքներում սկսվեց պարտիզանական շարժում: 1992 թ. ամռանը ռազմական դրություն հայտարարվեց ԼՂՀ տարածքում: Օգոստոսի 15-ին ստեղծվեց Պաշտպանության պետական կոմիտե (ՊՊԿ)՝ Ռ. Քոչարյանի գլխավորությամբ: Իր ձեռքը վերցնելով գործադիր իշխանությունը՝ ՊՊԿ-ն կազմակերպեց արցախահայության ինքնապաշտպանությունը: Նրա ջանքերով կարգավորվեց տնտեսական վիճակը, կազմակերպվեց Արցախի մարտունակ բանակը:

Ձեռնարկված միջոցառումները շուտով տվեցին դրական արդյունքներ: Վերախմբավորելով ուժերը՝ ԼՂՀ ինքնապաշտպանական բանակը կարողացավ կանգնեցնել թշնամու բազմահազարա-

[12] Մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 92-93:

նոց ուժերի առաջխաղացումն ու անցնել հակահարձակման, ազատագրել զավթված տարածքները: 1993 թ. ապրիլին արցախյան ուժերի ճնշման տակ թշնամին ստիպված թողեց Քարվաճառի (Քելբաջարի) տարածքները: Փաստորեն՝ ռազմական գործողությունների երկրորդ շրջադարձային կետը Քարվաճառի ազատագրումն էր[13]:

1993 թ. առաջին կիսամյակի մարտական գործողությունների եզրափակիչ փուլը Մարտակերտ քաղաքի ազատագրումն էր (հունիսի 28): Թշնամին պարտություն կրեց հուլիսի 23-ին Աղդամի մոտ, և քաղաքն ազատագրվեց: Շուտով ազատագրվեցին Ֆիզուլին, Ջաբրայիլի (օգոստոսի 23), Կուբաթլիի (օգոստոսի 31), Հորադիզի հոկտեմբերի 24) և Զանգելանի (Կովսական) շրջանները: Ազատագրական այդ մարտերում զոհվեցին հայ քաջորդիներ Լեոնիդ Ազգալդյանը, Սամվել Շահմուրադյանը, Մոնթե Մելքոնյանը, Շահեն Մեղրյանը, Յուրա Հովհաննիսյանը և շատ ուրիշներ[14]:

Շուտով իշխանափոխությամբ Ադրբեջանի նախագահ դարձավ Հեյդար Ալիևը: Վենջինս ժամանակ շահելու նպատակով իբրև սկսեց զինադադարի գործընթաց, սակայն իրականում ուժեղացրեց հակահայկական քարոզչությունը և դրսից վարձկանների հավաքագրումը: 1993 թ. դեկտեմբերի կեսերին Ադրբեջանը լայնածավալ հարձակման անցավ ռազմաճակատի ամբողջ երկայնքով՝ փորձելով բեկում մտցնել պատերազմում: Ադրբեջանը զինված էր ժամանակակից տեխնիկայով: Նրան օգնում էին տարբեր երկրների զինվորական խորհրդատուներ, իսկ բանակի շարքերում կռվում էին աֆղան ու թուրք վարձկաններ: Սակայն թշնամուն չհաջողվեց բեկում մտցնել ռազմական գործողությունների մեջ: 1994 թ. փետրվարի կեսերից արցախյան ուժերը անցան հակահարձակման և ազատագրեցին թշնամու զավթած Օմարի լեռնանցքը,

---

[13] Տե՛ս նույն տեղում, էջ 92-94:

[14] Նույն տեղում:

Մարտակերտի և Ասկերանի շրջակա տարածքները: Շուրջ երկամսյա թեժ մարտերի ընթացքում թշնամի կորցրեց 5 հազարից ավելի զինվոր ու սպա, 72 միավոր տեխնիկա[15]: Ադրբեջանական իշխանությունները հակադրված էին Ռուսաստանի միջնորդությամբ և Մինսկի խմբի օգնությամբ 1994 թ. մայիսին զինադադար կնքել: Դադարեցվեցին ռազմական գործողությունները, սկսվեց հակամարտության կարգավորման բանակցային փուլը: Այսպիսով՝ Ադրբեջանը կրեց ջախջախիչ պարտություն և ունեցավ սպառազինության ու մարդկային մեծ կորուստներ: Հաղթելով Արցախյան պատերազմում՝ արցախահայությունն ու ընդհանրապես համայն հայությունը ապացուցեցին, որ կարելի է հաղթել փոքր ուժերով՝ ունենալով աներեր հավատ հայրենիքի ու հաղթանակի նկատմամբ, ազգային միասնական կամք ու գերազանց կազմակերպվածություն: Հայ ժողովուրդը խորին երախտագիտությամբ և ակնածանքով է հիշում Արցախյան ազատամարտի բոլոր հերոսներին:

Արցախյան ազատագրական պատերազմին մասնակցեց նաև սփյուռքահայությունը: Նրանց օգնությունը դրսևորվեց ռազմական, տնտեսական ու բարոյական բնագավառներում: Սփյուռքի մեր հայրենակիցների ավանդը մեծ էր նաև ազատամարտիկների մարտավարական ու բարոյահոգեբանական մակարդակը բարձրացնելու առումով:

Սփյուռքահայերից ոմանք ոչ միայն մասնակցեցին ռազմական գործողություններին, այլև ծանրակշիռ ներդրում ունեցան զինվորական կադրերի պատրաստման, մարտական ջոկատների և պաշտպանական շրջանների ձևավորման գործում: Սփյուռքահայ քաջերի մի մասը՝ Վիգեն Զաքարյանը, Միհեր Զուլհաճյանը, Մոնթե Մելքոնյանը, Կարո Քահքեջյանը և ուրիշներ, զոհվեցին:

---

[15] Մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 94-96:

Ջոկատի քաջարի հրամանատար Կարապետ Քահքեջյանը ծնվել է Հալեպում 1962 թ.: Ավարտել է Ֆրանկֆուրտի ճարտարագիտական համալսարանը, մասնակցել Բեյրութի հայկական թաղամասի ինքնապաշտպանությանը: 1991-1993 թթ. եղել է ՀՀ Արարատի (Երասխ), Տավուշի և ԼՂՀ Ասկերանի, Մարտակերտի ու Քելբաջարի (Քարվաճառ) պաշտպանական մարտերի գործուն մասնակիցը: 1992 թ. մայիսին կազմավորվել է խաչակիրների ջոկատը, որի հրամանատարն էր Կարո Քահքեջյանը: Խաչակիրների ջոկատը հաղթական մարտեր է մղել Դրմբոնում, Քարվաճառում, Ասկերանի ու Մարտակերտի շրջաններում: Զոհվել է 1993 թ. հունիսի 26-ին Մարտակերտի շրջանի Պուշկենյալե բարձունքի վրա[16]:

Հայ ազատամարտի նվիրյալ, ՀՀ ազգային հերոս Մոնթե Մելքոնյանը (Ավոն) ծնվել է 1957 թ. Վայսիլիայում՝ Ֆրեզնոյի մոտ (Կալիֆոռնիա, ԱՄՆ): Նա ավարտել է Բերկլիի (Կալիֆոռնիա) համալսարանի հին ասիական ժողովուրդների պատմության և հնագիտության բաժինը (1978 թ): Նույն թվականին ընդունվել է Օքսֆորդի համալսարան, սակայն չավարտելով՝ մեկնել է Լիբանան, 3 տարի մասնակցել քաղաքացիական պատերազմին, Բեյրութի հայկական թաղամասի պաշտպանությանը[17]:

1990 թ. հոկտեմբերից զինվորագրվել է Արցախի պաշտպանությանը: 1991 թ. սկզբին հիմնել է «Հայրենասիրական» ջոկատը: Մոնթեն մասնակցել է ՀՀ Իջևանի, Ճամբարակի, ԼՂՀ Շահումյանի, Մարտակերտի, Մարտունու, Քարվաճառի շրջանների ինքնապաշտպանությանն ու ազատագրական մարտերին: 1992 թ. սեպ-

---

[16] Տե՛ս Մինասյան Է., Արցախյան ազատագրական շարժումը և «դեպի երկիր» կարգախոսը, ՀՅԴ հիմնադրման 115 և 120-ամյակներին նվիրված գիտաժողովների նյութեր, Երևան, 2011, էջ 159:

[17] Տե՛ս «Դեպի երկիրի» գաղափարապաշտը, ՀՅԴ, Զավարյան ուս. միության մատենաշար, բ. շրջան, թիվ 7, մարտ, 2001, էջ 8-11:

տեմբերին 1993 թ. ղեկավարել է Մարտունու ուղղությամբ մարտնչող հայկական զորամասերը: 1993 թ. հունիսի 12-ին զոհվել է Մարզիլու գյուղում (Աղդամի մոտ)[18]:

Սփյուռքահայ ազատամարտիկներից մուսալեռցի Լևոն Թաշճյանը 1993 թ. սեպտեմբերից մինչև 1994 թ. հունվար մասնակցել է Ֆիզուլիի, Զանգելանի, Ջաբրայիլի, Մարտակերտի, Կուբաթլիի շրջանների ազատագրական մարտերին:

Շուշիի առանձնակի գումարտակը միավորում էր Արցախից ու Սփյուռքի տարբեր օջախներից, աշխարհի տարբեր մասերից եկած հայության քաջակորով զավակներին: Գումարտակը ճանաչվել է լավագույններից մեկը Արցախի բանակի հրամանատարության կողմից:

Գումարտակը ստեղծվել էր 1992 թ. սեպտեմբերի 1-ին մինչ այդ կազմավորված ՀՅԴ կուսակցության կամավորական ջոկատների հիմքի վրա: Գումարտակը պարբերաբար համալրվել է կամավորներով (շուրջ 1600 ազատամարտիկ), որոնցից 11-ը՝ ԱՄՆ-ից, 7-ը՝ Կանադայից, 6-ը՝ Սիրիայից, 23-ը՝ Լիբանանից, 1-ը՝ Իտալիայից, 7-ը՝ Ֆրանսիայից, 9-ը՝ Իրանից, 6-ը՝ Վրաստանից, 3-ը՝ Ռուսաստանից, 45-ը՝ Ջավախքից և այլն: Գումարտակի հրամանատարներից են եղել Ժիրայր Սեֆիլյանը: Նա արժանացել է ԼՂՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանի:

Սեֆիլյանը ծնվել է 1967 թ. Բեյրութում, ավարտել է տեղի հայկական քոլեջը, մասնակցել է Լիբանանի քաղաքացիական պատերազմին (1983-1990 թթ.), Բեյրութի հայկական թաղամասի ինքնապաշտպանությանը: 1991 թվականից կամավորական ջոկատի, 1992 թ. սեպտեմբերից Շուշիի առանձնակի գումարտակի հրամանատարն էր[19]:

---

[18] Տե՛ս Մինասյան Է., նշվ. աշխ., էջ 159:

[19] Տե՛ս Ղարաբաղյան ազատագրական պատերազմ, 1988-1994, հանրագիտարան, էջ 591:

Գումարտակի հրամանատարի տեղակալն է եղել Պետրոս Ղևոնդյանը, իսկ շտաբի պետը՝ Ռոմիկ Մարգարյանը, որը հետագայում դարձել է նույն գումարտակի հրամանատարը: Վերջիններս աչքի են ընկել իրենց քաջագործություններով: Գումարտակը աչքի է ընկել ԼՂՀ Շահումյանի, Ստեփանակերտի (Կրկժան), Շուշիի, Մարտակերտի, Ասկերանի, Աղդամի, Մարտունու, Զանգելանի, Ջաբրայիլի, Ֆիզուլու շրջանների ինքնապաշտպանական մարտերում: Զորամիավորումից զոհվել են 56 ազատամարտիկ, որոնցից 2-ը՝ սփյուռքահայ, վիրավորվել են 157-ը, որից 6-ը՝ սփյուռքահայ, անհայտ կորել է 3 ազատամարտիկ: Ցուցաբերած քաջության համար ԼՂՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանով պարգևատրվել են Հ. Հովսեփյանը, Ա. Ղարիբյանը՝ հետմահու (նաև ՀՀ 1-ին աստիճան), Վ. Ստեփանյանը, Պ. Ղևոնդյանը (նաև «Ոսկե արծիվ»), արժանացել է «Արցախի հերոսի» կոչման[20]:

Այսպիսով՝ հայ ժողովուրդն իր միասնության ու աննկուն ոգու շնորհիվ իրեն պարտադրված պատերազմից հաղթականորեն դուրս եկավ՝ ստեղծելով ազգային երկրորդ պետությունը Հայաստանի ազատագրված հատվածում:

Չնայած 1994 թ. հաստատված զինադադարին՝ շուրջ 22 տարի ադրբեջանական կողմը մշտապես խախտում էր զինադադարը՝ պարբերաբար ռմբակոծելով արցախա-ադրբեջանական սահմանային հայկական դիրքերն ու ՀՀ սահմանամերձ գյուղերը: Այս ամենին հայկական կողմը հաճախ պատասխանում էր պատժիչ գործողություններով: 2016 թ. ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը՝ ժամը 3-ի սահմաններում, Ադրբեջանը Արցախի դեմ դիմեց աննախադեպ լայնածավալ հարձակման՝ շփման գծի ողջ երկայնքով կիրա-

[20] Է. Մինասյան, Հայոց նորագույն պետականության քառորդ դարը (1991-2017), էջ 97-98:

ռելով սպառազինությունների ողջ համալիրը, այդ թվում՝ զրահատեխնիկա, ծանր հրետանի և օդուժ, հատկապես անօդաչու թռչող սարքեր։ Ծավալված մարտական գործողությունները առավել թեժ էին ռազմաճակատի վերածված հյուսիսարևելյան (Թալիշ–Մատաղիս–Մարտակերտ) և հարավային (Հադրութ) ուղղություններում[21]։ Ծավալվեցին արյունահեղ մարտեր։ Թշնամին, հույսը դնելով հատուկ պատրաստվածություն անցած գրոհայինների վրա, անակնկալի եկավ՝ հանդիպելով 18-20 տարեկան հայ զինվորների համառ դիմադրությանը։ Հայրենիքի մերօրյա հերոս պաշտպանները՝ քաջարի դիրքապահները, ինչպես միշտ, իրենց սպաների հրամանատարությամբ սառնասրտորեն դիմակայեցին հակառակորդի մինչև ատամները զինված հատուկջոկատայիններին ու կանոնավոր զորամասերին։ Ապրիլի 2-ին և 3-ին հակառակորդի գերազանցող ուժերի առաջին հարվածն իրենց վրա վերցրին հյուսիսարևելյան ուղղության հրաձգային վաշտերից մեկի քաջարի մարտիկները՝ աննկուն հրամանատար Արմենակ Ուրֆանյանի գլխավորությամբ։ Կատաղի մարտերի ընթացքում հակառակորդը բազմիցս համառ փորձեր արեց՝ տիրելու արցախյան դիրքերին, սակայն ամեն անգամ հետ շպրտվեց՝ տալով բազմաթիվ զոհեր ու վիրավորներ։ Կապիտան Ուրֆանյանը կարողացավ դիպուկ կրակով ոչնչացնել հակառակորդի տասնյակից ավելի զինյալների։ Կրակով ապահովելով իր զինվորների տեղաշարժը՝ վաշտի հրամանատարը մինչև վերջին փամփուշտը կռվեց՝ տեսնելով, որ ուժերն անհավասար են, և զինամթերքը սպառվում է, ընդունեց խրամատ հետ քաշվելու, այնտեղ վերախմբավորվելու ու հակագրոհի անցնելու որոշումը։ Սակայն չհասցրեց, հերոսաբար զոհվեց արկի պայթյունից։ Սիրված հրամանատարի կողքին էր ազգու-

[21] Մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 101-102։

թյամբ եզդի, 20-ամյա շարքային Քյարամ Սլոյանը, որը, չենթարկվելով նահանջի հրամանին, մինչև վերջ մնաց ու կռվեց ոսոխի դեմ: Զոհված հերոսի հետ հակառակորդը դաժան վարվեց՝ գլխատելով նրան:

Անձնուրաց հերոսությամբ աչքի ընկավ նաև 19-ամյա Ռոբերտ Աբաջյանը: Նա հակառակորդի հետ կռիվ տվեց մինչև վերջին փամփուշտը, չհանձնվեց ու չնահանջեց, իսկ վերջում իր մոտ եղած միակ նռնակով պայթեցրեց իրեն և հակառակորդի մոտ մեկ տասնյակ զինվորների: Անձնազոհ հայորդին հետմահու արժանացավ «Արցախի հերոս» ԼՂՀ բարձրագույն կոչմանը[22]: 2022 թ. այդ կոչմանն արժանացան նաև Ռաֆայել Ուրֆանյանն ու Քյարամ Սլոյանը:

Մինչ ռազմաճակատի ողջ երկայնքով մարտական գործողությունները շարունակվում էին, մեր հայրենիքի տարբեր շրջաններից հազարավոր ազատամարտիկներ շտապում էին առաջնագիծ՝ անվարան կանգնելու իրենց կրտսեր ընկերների և որդիների կողքին: Ապրիլի 2-ից հակառակորդի մարտական ուղղաթիռները սկսեցին հրթիռային հարվածներ հասցնել հարավային ուղղությամբ գտնվող մեր դիրքերին՝ նպատակ ունենալով ապահովելու իրենց տանկերի ու հետևակի առաջխաղացումը: Սակայն այստեղ ևս հակառակորդը հանդիպեց համառ դիմադրության և հետ մղվեց: Այս ուղությամբ իրենց սխրագործություններով աչքի ընկան շարքայի Նարեկ Մալխասյանը, հրաձիգ-զենիթային Գևորգ Մանուկյանը, որոնք խոցեցին թշնամու մարտական ուղղաթիռներ: Հակառակորդի դեմ մարտերում իրենց քաջագործություններով աչքի ընկան շարքայիններ Շուլի Հակոբյանն ու Մարատ Պետրոսյանը: Շուլին խոցել էր թշնամու երեք, իսկ Մարատը՝ հինգ տանկ[23]:

---

[22] Տե՛ս նույն տեղում, էջ 104-105:

[23] Տե՛ս նույն տեղում, էջ 103-104:

Քառօրյա մարտերում հակառակորդը հուժկու հակահարված ստացավ և խնդրեց նոր զինադադար։Ապրիլի 5-ին հաստատվեց հրադադար արցախա-ադրբեջանական շփման գծի ողջ երկայնքով։ Քառօրյա պատերազմում հայկական կողմը տվեց շուրջ 100-զոհ, իսկ ադրբեջանցիները՝ հինգ անգամ ավելին։

Արցախյան պատերազմի այս նոր փուլն ապացուցեց, որ հայ ժողովուրդն աչքի է ընկնում իր համախմբվածությամբ, զինվորի ու բանակի կողքին կանգնելու հաստատակամությամբ։

* * *

Զինադադարի կնքումից հետո շարունակվեցին բանակցային գործընթացները, որոնք դարձան Եվրոպայի անվտանգության և համագործակցության կոմիտեի (ԵԱՀԿ) քննարկման առարկա, քանի որ 1992 թ. հունվարին ՀՀ-ն անդամակցել էր ԵԱՀԿ-ին։ Ըստ էության, իր գոյության ընթացքում ԵԱՀԿ-ն առաջին անգամ դարձավ միջազգային առճակատման լուծման միջնորդ։ ԵԱՀԿ-ն հենց սկզբից ակտիվ գործունեություն ծավալեց պատերազմը դադարեցնելու ու Արցախյան հիմնախնդիրը բանակցային ճանապարհով լուծելու ուղղությամբ։ Նրա ջանքերով Արցախյան հարցը միջազգայնացվեց։ ԵԱՀԿ-ն կոչ էր անում միջազգային հեղինակավոր կառույցներին միջոցներ ձեռնարկելու Ադրբեջանի վայրագությունները կանխելու ու Լեռնային Ղարաբաղի ժողովրդին կոնկրետ առարկայական օգնություն ցուցաբերելու նպատակով։ Պատահական չէ, որ հենց ԵԱՀԿ ձևաչափով ստեղծվեց Արցախյան հիմնահարցի լուծման հիմնական կառույցը՝ ԵԱՀԿ Մինսկի խումբը՝ Ռուսաստանի, Ամերիկայի Միացյալ Նահանգների ու Ֆրանսիայի համանախագահությամբ։ Մինսկի խմբի երկրների տարբեր պատվիրակություններ շարունակաբար եղել են տարածաշրջանում, կազմակերպել բազմապիսի հանդիպումներ ու քննարկումներ։ Այսօր ամերիկյան յոթ և Ավստրալիայի մեկ նահանգ, ինչպես

նաև բասկերի խորհրդարանն ու Ֆրանսիայի սենատը ճանաչել են Արցախի Հանրապետության անկախությունը:

ԵԱՀԿ Մինսկի խումբը առ այսօր նորանոր առաջարկություններով բազում հանդիպումներ է ունեցել երկու երկրների և Արցախի ղեկավարների հետ: Ցավոք, այդ բոլոր հանդիպումներն ու բանակցությունները շոշափելի արդյունքներ չեն տվել:

Սկզբնական փուլում ԵԱՀԿ Մինսկի խմբի բանակցություններում, Հայաստանի Հանրապետությունից բացի, մինչև 1998 թվականը մասնակցում էր ԼՂՀ ներկայացուցիչը: Այդ բանակցություններում Հայաստանը որդեգրել էր հետևյալ սկզբունքը. «ՀՀ-ն կվավերացնի յուրաքանչյուր փաստաթուղթ, որն ընդունելի կլինի Արցախի ժողովրդի համար և կստորագրվի ԼՂՀ ղեկավարության կողմից»: ԼՂՀ ղեկավարությունը բացառում է որևէ ուղղակի ենթակայություն Ադրբեջանին: Դեռևս 1999 թ. սկսվեցին Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության ղեկավարների ուղղակի շփումները, որոնք շարունակվում են մինչ այժմ և նույնպես որևէ արդյունք չեն տվել: ՀՀ-ն և Արցախը կողմ են հիմնահարցի խաղաղ կարգավորմանը, միջազգային իրավունքի նորմերի պահպանմանն ու պատմական արդարության վերականգնմանը, ինչը չի կարել,ի ասել Ադրբեջանի վերաբերյալ: Վերջինս, փորձելով ռազմական ուժի միջոցով լուծել Արցախյան հարցը, իր «եղբայր» Թուրքիայի անմիջական հրահրմամբ թուրք-հայկական պատերազմից 100 տարի անց՝ 2020 թ. սեպտեմբերի 27-ին, Արցախի Հանրապետության դեմ սանձազերծեց նոր պատերազմ և չդադարող ագրեսիայի հետևանքով բռնազավթեց Արցախի Հանրապետության տարածքի շուրջ 75 %-ը, ոչ միայն նախկինում ազատագրված 7 շրջանները, այլև Հադրութն ու Շուշին: Դրանով, փաստորեն, հարևան թշնամի երկրի՝ Ադրբեջանի կողմից յուրացվեցին սփյուռքահայության, սփյուռքահայ բարեգործական, հասարակական կազմակերպությունների, համահայկական կառույցների

ու անհատ բարեգործների, ամբողջ հայության շուրջ 30 տարի կատարած մեծածավալ աշխատանքների արդյունքները Արցախում: Սակայն չբավարարվելով այդ ամենով՝ նույն Թուրքիայի խորհրդով Ադրբեջանը 2021 թ. մայիսին ներխուժեց Հայաստանի անկախ հանրապետության սուվերեն տարածք՝ Գեղարքունիքի և Սյունիքի մի հատված՝ ստեղծելով իրական վտանգ հայոց պետականության գոյության համար, ռեալ «սպառնալիք հայ ժողովրդի անվտանգության համար, փորձ անելով, այսպես կոչված, զանգեզուրյան միջանցքով, Նախիջևանով կապ հաստատել ստեղծել Ադրբեջանի ու Թուրքիայի միջև՝ կենսագործելու համար պանթուրքիզմի վաղուցվա ծրագիրը:

Ահա թե ինչու խիստ անհրաժեշտություն է առաջացել հեղինակային մեր խմբի կողմից (գիտ. ղեկավար՝ պ.գ.դ., պրոֆեսոր Է. Մինասյան, անդամներ՝ պ.գ.թ., պրոֆ. Ա. Վարդանյան, պ.գ.թ. Վ. Հարությունյան ու Է. Հայրապետյան) ներկայացնելու Արցախի Հանրապետության 30-ամյակի ամբողջական պատմությունը, Արցախ-Սփյուռք առնչություններն ու սերտ կապերը, հատկապես սփյուռքահայ բարեգործական, հասարակական կազմակերպությունների ու անհատ բարերարների ներդրումները: Արցախում և հատկապես թշնամու կողմից բռնազավթած է տարածքներում: Հետազոտության իրականացումը հնարավոր դարձավ ԱՀ կառավարության կողմից ֆինանսավորվող Արցախի գիտական կենտրոնում անցկացված «Արցախ-Սփյուռք» առնչությունները XX դարի վերջին և XXI դարի սկզբին» գիտական թեմայի շրջանակում (ծածկագիր SOS 19AA005): Թեմայի ուսումնասիրության կարևորությունը բացատրվում է նաև նրանով, որ Արցախի 30-ամյա պատմության մեջ Սփյուռքի մեր հայրենակիցների կատարած ներդրումներն ու մեծածավալ աշխատանքները մնայուն հետք են թողել հատկապես Ստեփանակերտում և նրա հարա-

կից այն շրջանների բնակավայրերի պատմության մեջ, որոնք արցախահայերի վերահսկողության տակ են, իսկ մյուս՝ թշնամուն անցած շրջաններում թեև կատարվել էր հսկայական աշխատանքներ, սակայն յուրացվել են ադրբեջանցիների կողմից: Մեր նպատակն է ցույց տալ հայոց հինավուրց հողում հայի արարման հետքի կարևորությունը, որը վաղ թե ուշ կվերադառնա նրա իսկական տերերին: Այսպիսի ուսումնասիրության հրատապությունը պայմանավորված է նաև Արցախի Հանրապետության 30-ամյա պատմության ամբողջական վերհանման համար, քանի որ այն կարող է որպես ուղեցույց ծառայել ուսանողներին, հետազոտողներին թեման ավելի խորացնելու և ուսումնասիրությունը համապարփակ դարձնելու նպատակով:

Սփյուռքը XX դարավերջին կրեց զգալի փոփոխություններ: Դրանք հետևանք էին Խորհրդային Միությունում ընթացող գործընթացների: 1988-1992 թթ. հայերի դեմ Ադրբեջանի իշխանությունների կազմակերպած հալածանքների ու սպանությունների հետևանքով տեղի ողջ հայ բնակչությունը (շուրջ 400 հազ.) հարկադրաբար արտագաղթեց Հայաստան, Ռուսաստան, եվրոպական և արտասահմանյան այլ երկրներ: Շարունակվեցին նաև ներսփյուռքյան տեղաշարժերը Արևելքի երկրներից դեպի Արևմուտքի երկրներ: Իրաքում և հատկապես Սիրիայում երկարատև ու ծանր զինված բախումների պատճառով տեղի հայության զգալի մասը ստիպված եղավ արտագաղթել և հաստատվել տարբեր երկրներում, այդ թվում՝ նաև Հայաստանում:

Սփյուռքահայությունը զգալի աճ ունեցավ, երբ 1990-ական թթ. սկսվեց նախադեպը չունեցող զանգվածային արտագաղթը Հայաստանից, Ադրբեջանի հայաբնակ վայրերից ու Արցախից: Փաստորեն՝ Սփյուռքում իրավիճակը փոխվեց այն բանից հետո, երբ 1990-ական թթ. երբեմնի դասական հայկական համայնքները համալրվեցին 1988-1990 թթ. Սումգայիթի ու Բաքվի հրեշավոր

վայրագություններից, Հայոց ցեղասպանությունից հետո արտերկրում հաստատված, ինչպես նաև Հայաստանից արտագաղթած հայերը զգալի աշխուժություն մտցրին սփյուռքահայերի կյանքում: Ավելի քան 1 մլն արտագաղթածների մեծ մասը բնակություն հաստատեց Ռուսաստանում, ինչպես նաև ԱՄՆ-ում և այլ երկրներում:

Սփյուռքահայերի հիմնական զանգվածը ներկայումս բնակվում է Ռուսաստանում (շուրջ 2,5 մլն), ԱՄՆ-ում (շուրջ 1,5 մլն), Ֆրանսիայում (շուրջ 500 հազար): Խոշոր համայնքներ գոյություն ունեն Վրաստանում, Ուկրաինայում, Արգենտինայում, Կանադայում, Ավստրալիայում և այլ երկրներում:

Ինչպես Արևելքի երկրներից Արևմուտքի երկրների ներգաղթած հայերը, այնպես էլ Հայաստանից, Ադրբեջանի հայկական բնակավայրերից ու Արցախից, Ռուսաստան, Ուկրաինա, Բելառուս և այլուր գաղթածները նպաստեցին ազգային կյանքի աշխուժացմանը: Դրան մեծապես նպաստեց այն, որ Խորհրդային Միության փլուզումից հետո նորանկախ պետությունները թույլատրել էին ազգային փոքրամասնությունների ինքնակազմակերպումն ու ազգամշակութային գործունեությունը:

Հայկական նոր համայնքներ ձևավորվեցին գրեթե բոլոր հայաբնակ վայրերում, վերաբացվեցին կամ հիմնվեցին հայկական եկեղեցիներ (օրինակ՝ Սուրբ Կատարինեն՝ Սանկտ Պետերբուրգում, Սուրբ Գրիգոր Լուսավորիչը՝ Օդեսայում), կիրակնօրյա հայկական դպրոցներ, մշակույթային, ուսանողական, բարեսիրական և այլ կազմակերպություններ, սկսեցին հրատարակվել պարբերականներ (օրինակ՝ «Արմյանսկի վեստնիկը»՝ Կիևում, «Երկրամասը»՝ Կրասնոդարում, «Անիվը»՝ Մինսկում և այլն):

Սփյուռքի, նրա ազգային քաղաքական ուժերի համար անակնկալ եղավ 1988 թ. Հայաստանում սկիզբ առած ժողովրդական շարժման այդչափ զանգվածային և վճռական բնույթը: Շատ

շուտով, սակայն, համոզվելով տեղի ունեցող գործընթացների անդառնելիության մեջ՝ Սփյուռքի հայությունը հնարավոր բոլոր միջոցներով աջակցեց Հայաստանի անկախացմանը, ինքնիշխան պետության կայացմանը։

Նոր պայմաններում Սփյուռքի բոլոր կարևոր կազմակերպությունները շտապեցին Հայաստան՝ սկսելով գործել յուրաքանչյուրն իր ոլորտում։ Արդեն 1990-1991 թթ. իրենց կառույցները հիմնեցին երեք հայ ազգային կուսակցություններ՝ ՀՅԴ, ՌԱԿ և ՍԴՀԿ, ինչպես նաև որոշ բարեսիրական միություններ։

Հայ ժողովրդի երկու հատվածների միջև հարաբերությունները առավել արդյունավետ դարձնելու նպատակով 1999 թվականից Երևանում պարբերաբար հրավիրվել են Հայաստան-Սփյուռք խորհրդաժողովները։ Խորհրդաժողովների ընթացքում սփյուռքահայ տարբեր կազմակերպությունների ու համայնքների ներկայացուցիչները ՀՀ ղեկավարության հետ քննարկել են համազգային նշանակության հարցեր։ Նման քննարկումների արդյունքներից էր, օրինակ, 2007 թ. ՀՀ խորհրդարանի ընդունած օրենքը երկքաղաքացիության մասին, որը հնարավորություն է տալիս սփյուռքահայերին դառնալու ՀՀ քաղաքացի՝ չհրաժարվելով այլ երկրի քաղաքացիությունից։ 2008 թ. ստեղծվեց Սփյուռքի նախարարությունը, որը 2019 թ. փոխարինվեց ՀՀ վարչապետի աշխատակազմի Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակով։

Սփյուռքի հետ տարվող իր աշխատանքներում Հայաստանը առանձնահատուկ կարևորություն է տալիս երիտասարդությանը։ 1999 թվականից Հայաստանում կազմակերպվել են համահայկական մարզական խաղեր՝ աշխարհի տարբեր քաղաքներ ներկայացնող հավաքական թիմերի մասնակցությամբ։ 2009 թ. մեկնարկեց «Արի տուն» ծրագիրը, որի շնորհիվ ավելի քան 2000 հայազգի երեխաներ աշխարհի 36 երկրներից արդեն այցելել են Հայաստան

ու Արցախի հանրապետություն, եղել պատմամշակույթային վայրերում, ծանոթացել մշակութային ավանդույթներին։ «Իմ Հայաստան» փառատոնի շրջանակում Հայաստանի ու Արցախի քաղաքներում կազմակերպվել են տարբեր երկրներից ժամանած պարային, երգչախմբային և այլ համույթների ու անհատ կատարողների համերգներ, ինչպես նաև գրողների ու լրագրողների համաժողովներ, Սփյուռքի հայկական դպրոցների ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ և այլ միջոցառումներ։ Այս և նման այլ ծրագրերին մասնակցող հազարավոր երիտասարդների նորահաստատ բարեկամությունը Հայաստանի, Արցախի ու Սփյուռքի իրենց հասակակիցների հետ աննախադեպ երևույթ էր հայ իրականության համար։

Հայաստանի ու Արցախի անկախացումից հետո, երբ երկիրը հայտնվեց համընդհանուր ճգնաժամի մեջ, Սփյուռքի օգնությունը ծառայեցվեց հիմնական խնդրի՝ Հայաստանի ու Արցախի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացմանը։ Սկսեցին ավանների, հիվանդանոցների, դպրոցների, ճանապարհների կառուցում, համատեղ ձեռնարկությունների հիմնում, գործարանների վերագործարկում և այլն։

1992 թ. ՀՀ նախագահի հրամանագրով ստեղծվեց «Հայաստան» համահայկական հիմնադրամը, որի մասնաճյուղերը գործում են մի քանի տասնյակ երկրներում։ Հիմնադրամը Հայաստանի ու Արցախի Հանրապետություններում իրականացնում է մեծ թվով ծրագրեր, որոնցից մի քանիսն ունեն ռազմավարական նշանակություն՝ ճանապարհների ու կամուրջների շինարարություն սահմանային գոտում, էլեկտրահաղորդման գծերի ու ենթակայանների, ջրատարների կառուցում և այլն։

««Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից Արցախի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման ծրա-

գրերի կենսագործումը XX դարավերջին և XXI դարասկզբին» գիտական թեմայի հետազոտությանն է նվիրված Է. Մինայանի զեկուցումը, որը ընթերցվել է «Նորակազմ (չճանաչված) պետությունները պատերազմից հետո, խնդիրներն ու դրանց լուծման ուղիները» միջազգային գիտաժողովում, որը կայացել է Ստեփանակերտում 2021 թ. հունիսի 12-ին և այն ներառված է սույն կոլեկտիվ մենագրության մեջ: Այստեղ վերլուծելով հիմնադրամի ներդրումներն ու գործունեությունը Արցախի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի կենսագործման ոլորտում՝ ընդգծվել են ծրագրի լայն ընդգրկման բնույթն ու արդյունավետ իրագործումը, որի շնորհիվ հատկապես XXI դարասկզբին Արցախի որոշ շրջանների սոցիալ-տնտեսական կյանքը վերելք ապրեց: Նշված զեկուցման մեջ հանգամանորեն բացահայտված են Արցախի Հանրապետությունում նրանց աջակցությամբ կյանքի կոչված կարևոր նշանակություն ունեցող այնպիսի սոցիալական ծրագրեր, ինչպիսիք են հիվանդանոցների, դպրոցների, մանկապարտեզների կառուցումը, արցախահայության սոցիալական պայմանների բարելավումը, անապահով ընտանիքների սոցիալական աջակցության իրագործումը և այլն: Միաժամանակ հատուկ ուշադրություն է դարձվել նրանց նվիրաբերությամբ ու ֆինանսական լուրջ աջակցությամբ հիմնադրված ու վերակառուցված գյուղերին ու քաղաքներին, արցախահայության համար մեծ կարևորություն ունեցող ճանապարհների, գազատարների, ջրագծերի և այլնի շահագործմանը: Մեծ կարևորություն է տրվել կրթամշակույթային ոլորտի զարգացմանն ուղղված ներդրումներին և այդ ուղղությամբ արձանագրված նշանակալի ձեռքբերումներին:

Ակնհայտ է՝ Հայաստանի հետ համագործակցողների շարքում հատկապես առանձնանում են համասփյուռքյան բարեսիրական կազմակերպությունները: ՀԲԸՄ ամենախոշոր ծրագրերից էին 1991 թ. Հայաստանի ամերիկյան համալսարանի հիմնումն ու

Հայաստանի ֆիլարմոնիկ նվագախմբի ֆինանսավորումը՝ սկսած 1992 թվականից։ 1993 թվականից գործում են մանկապատենական հայորդյաց տները, բարեգործական ճաշարանները և այլն։ 2004 թվականից ՀԲԸՄ-ն Արցախում վերակառուցել է գյուղեր ու դպրոցներ, իսկ 2004 թ.՝ հիմնել Արցախի կամերային նվագախումբը։

1991 թվականից բազմապիսի գործունեություն է ծավալել նաև ՀՕՄ-ը, նույն ՀՕՖ-ը Արցախում ու Հայաստանի Հանրապետությունում, հատկապես երկրաշարժից տուժած շրջանների հինգ գյուղերում մոտ կառուցել է 200 տուն, բնակիչներին ապահովել սննդամթերքով, դեղորայքով, բժշկական սարքավորումներով, հագուստով, իրականացվել է շուրջ 8000 որբերի ու զոհված ազատամարտիկների երեխաների խնամատարություն և այլն։ Այս առումով բավական հետաքրքիր բովանդակություն ու վերլուծություններ են պարունակում ՀՕՖ հայ կրթական հիմնարկության կատարած աշխատանքները Արցախի Հանրապետության սոցիալ-տնտեսական, առողջապահության ու կրթության ոլորտի զարգացման գործում։ Մենագրության մեջ վերլուծվում է վերոհիշյալ կազմակերպությունների գործունեությունը որպես Սփյուռքի ու Արցախի միասնության, հոգեհարազատության հավաստիացում։

Անհատ բարերարների շարքում առանձնանում է ամերիկահայ Քրք Քըրքորյանը, որի «Լինսի» հիմնադրամի տրամադրված միջոցներով (շուրջ 220 միլիոն դոլար) միայն աղետի գոտում կառուցվել է 49 շենք՝ 3700 բնակարանով, հիմնանորոգվել են 240 կմ երկարությամբ ճանապարհներ, դպրոցներ, մշակույթային հաստատություններ Հայաստանի ու Արցախի Հանրապետություններում։

Խոշոր ներդրողներից է Էդուարդո Էռնեկյանը (Արգենտինա), որը լայնածավալ ծրագիր է իրականացրել ՀՀ-ում՝ կառուցելով

«Զվարթնոց» օդանավակայանի նոր համալիրը, Արցախում զբաղվել է գյուղմթերքների արտադրությամբ ու մշակմամբ և այլն։

Հայաստանի և Արցախի Հանրապետությունների հարաբերությունները Սփյուռքի հետ աստիճանաբար խորանում են՝ մի կողմից ավելի շոշափելի դարձնելով սփյուռքահայերի մասնակցությունը երկրի սոցիալ-տնտեսական զարգացմանը, մյուս կողմից՝ նոր լիցք հաղորդելով սփյուռքահայերի ազգային ինքնության պահպանման գործին։

Սփյուռքահայությունը, որը յոթանասուն տարի շարունակ փափագել էր իր երազած ազատ ու անկախ Հայաստանի գաղափարը, հնարավորություն ունենալով ազատորեն գալու հայրենիք՝ բախվեց ժամանակի դաժան իրողությանը։ Հայտնի է, որ 1990-ական թթ. սկզբներին դժվարին փուլ էր հայոց նորանկախ երկրի համար, քանի որ փլուզվել էին երկրի պետական, քաղաքական համակարգերը, չկային բիզնես ներդրումների համար անհրաժեշտ միջավայր, շուկայական տնտեսությանը համապատասխանող օրենքներ, բանկային, հարկային ու մաքսային համակարգեր, որոնք աստիճանաբար էին ստեղծվում։ Երկիրը գտնվում էր տնտեսական, հատկապես էներգետիկ խոր ճգնաժամի մեջ. տարածքի 40 %-ը երկրաշարժից հետո ավերվել էր, կես միլիոն մարդ մնացել էր անօթևան՝ զրկվելով նաև ունեցվածքից։ Ադրբեջանից գաղթած շուրջ 450 հազարի հասնող ահաբեկված փախստականները հասել էին Հայաստան, որն ի վիճակի չէր ամբողջությամբ լուծել նրանց հիմնախնդիրները։ Այս ամենից բացի՝ Լեռնային Ղարաբաղի պարտադրված պատերազմը Ադրբեջանի կողմից վտանգել էր մեր ժողովրդի արցախյան հատվածի անվտանգությունը։ Ահա այս ծանր իրավիճակում Սփյուռքը հիասթափվելու առիթներ ունեցավ, սակայն հայրենիքին աջակցելու համար միավորվեց, և այդ օգնությունը չուշացավ։

Առաջին գործող կազմակերպությունը, որի մասին վերը նշվել է ստեղծվեց 1992 թ. և գործում է առ այսօր, «Հայաստան» համահայկական հիմնադրամն է: Հիմնադրամի միջոցով միլիոնավոր դոլարների ֆինանսական օգնություն ցուցաբերվեց հայկական երկու հանրապետություններին՝ Հայաստանի Հանրապետությանն ու Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետությանը, ինչն էլ նպաստեց հայրենաշինության կարևոր գործին, և համահայկական միջոցներով լուծվեցին կենսական նշանակության մի շարք խնդիրներ:

1990-ական թթ. սկզբից սկսած՝ ԽՍՀՄ տարածքում բնակվող հայությունը կանգնեց, այսպես կոչված, սփյուռքացման գործընթացի առջև, ինչի արդյունքում նախկին խորհրդային պետությունների գրեթե մեծ մասում, ԱՊՀ երկրներում աստիճանաբար հիմնադրվեցին ընդհանուր ու տեղային բնույթի համայնքային հասարակական կազմակերպություններ՝ հայության տարբեր հատվածների համար հավաքական կենսագործունեության միջավայր ձևավորելու համար: Չնայած առաջին շրջափուլում հայրենիք-Սփյուռք հարաբերությունները որոշակի տեղատվություն ունեցան սփյուռքյան քաղաքական կազմակերպությունների՝ հայրենիքում ունեցած հիմնականում քաղաքական խնդիրների պատճառով, սակայն դրանք չկարողացան խափանել հայրենիք-Սփյուռք, այդ թվում՝ Արցախ ու Սփյուռք համախմբման ու կապերի ամրապնդման անկասանելի ընթացքը: XX դարավերջին և XXI դարասկզբին տեղի ունեցան Հայաստան-Սփյուռք երեք խորհրդաժողովները (1999, 2002 և 2006 թթ.), որոնց նպատակն էր մշակել ու իրագործել հայության առաջ ծառայած խնդիրների լուծման համատեղ ձևաչափերն ու հայրենիք-Սփյուռք հարաբերությունների համակարգման մեխանիզմները: 2005 թ. սահմանադրական հանրաքվեի արդյունքում Հայաստանի երրորդ հանրապե-

տություն ներդրվեց երկքաղաքացիության ինստիտուտը, որը հայրենիք-Սփյուռք հարաբերությունների էլ ավելի սերտացման և սփյուռքահայության ինտեգրման կարևոր գործոն էր:

2008 թ. ստեղծվեց ՀՀ սփյուռքի նախարարությունը, որը նոր շրջափուլ էր Հայաստան-Սփյուռք հարաբերություններում, քանի որ պետական մակարդակով կառուցվածքային նոր ձև տրվեց Հայաստան և Արցախ-Սփյուռք գործակցության զարգացմանը՝ նպաստելով երկկողմ ինտեգրմանը և հայրենիք-Սփյուռք ու Արցախ-Սփյուռք հարաբերությունների էլ ավելի զարգացմանն ու ամրապնդմանը: Այս շրջափուլում ավանդական դարձան Հայաստան-Սփյուռք համաժողովները (2011, 2014, 2017 թթ.), բիզնես համաժողովները, համահայկական խաղերը, որոնց սկզբը դրվել էր 1999 թ. և շարունակվել հետագայում՝ 2001, 2003, 2007, 2011, 2014 և 2015 թթ.:

ՀՀ սփյուռքի նախարարության անմիջական նախաձեռնությամբ մշակվեցին և իրագործվեցին հայրենիք-Սփյուռք, այդ թվում՝ Արցախ-Սփյուռք հարաբերությունների ավելի սերտացման ու որակական նոր կապերի ամրապնդման ուղղությամբ մեծածավալ ծրագրեր: Ներդրվեցին կառուցվածքային ու կառուցակարգային նոր ձևաչափեր: Սփյուռքը աստիճանաբար դարձավ հայաստանակենտրոն: Համահայկական մի շարք կազմակերպություններ գործակցության հուշագրեր, համաձայնագրեր ստորագրեցին նախարարության հետ, կազմակերպվեցին բազմաթիվ հանդիպումներ, և իրականացվեցին մեծածավալ միջոցառումներ համայնքներում: Համատեղ աշխատանքներն աստիճանաբար ակտիվացան: Ուրախալի է այն փաստը, որ բազմաթիվ ծրագրերի կայացման գործում մեծ ներդրում ունեցան սփյուռքյան կառույցներն ու անհատները, ընդլայնվեցին նախարարության ծրագրերին մասնակցողների թիվն ու աշխարհագրությունը:

XXI դարի երկու տասնամյակներում Արցախում կրթական ոլորտի ծրագրերի իրականացման գործում սփյուռահայ բարերարների ու բարեգործական կազմակերպությունների ներդրումներին և ծավալած գործունեությանն են վերաբերում մենագրության երկրորդ գլխի երկրորդ ու երրորդ ենթագլուխները: Նրանում բազմաթիվ փաստերի վերլուծությամբ հանգամանորեն բացահայտված են դպրոցաշինության ուղղությամբ իրականացված մեծածավալ աշխատանքները, դպրոցների, ուսումնական այլ հաստատությունների, մանկապարտեզների հիմնադրման ու կահավորման ուղղությամբ կազմակերպությունների ու անհատ բարերարների կատարած արդյունավետ գործունեությունը: Ուշադրություն է դարձվել ոչ միայն մայրաքաղաք Ստեփանակերում, այլև Արցախի մյուս շրջաններում իրականացված լայնածավալ ծրագրերին:

ԱՄՆ-ում հիմնադրված Հայ կրթական հիմնարկության ջանքերով Ստեփանակերտում ու հարակից շրջաններում իրականացված կրթական ծրագրերը վերաբերվում են երեխաների կրթության գործի կազմակերպման, ուսման նպաստավոր պայմանների ստեղծման, դպրոցների կառուցման, վերանորոգման, ուսուցիչների վերապատրաստման և այլ ուղղություններով: Բազմաթիվ փաստերով վերլուծվում են «Ամերիկյան հայ ավետարանչական ընկերության (ԱՀԱԸ)» հայրենանվեր գործունեությունը Արցախում Ստեփանակերտում, Շուշիում ու Ասկերանում գործող ընկերակցության գրասենյակների միջոցով իրականացված ծրագրերը՝ սոցիալական, առողջապահական, կրթական, մշակութային, ինչպես նաև քրիստոնեական կրթության և դաստիարակության ոլորտներում:

Մենագրությունում անդրադարձ է կատարվում XX դարավերջին և XXI դարի երկու տասնամյակներում Արցախի Հանրապետության առողջապահական ոլորտի ծրագրերի իրականացման գործում հիմնադրամների, սփյուռքահայ բարեգործական

կազմակերպությունների և անհատ բարերարների իրականացրած ներդրումներին ու ծավալած գործունեությանը: Այստեղ բազմաթիվ փաստերի վերլուծության հիման վրա հեղինակների կատարած եզրակացությունում արձանագրվում է, որ Արցախի Հանրապետության առողջապահական ոլորտի ծրագրերի լուծման գործում անգնահատելի է հիմնադրամների, սփյուռքահայ բարեգործական կազմակերպությունների և անհատ բարերաների օգնությունը: Նրանց հովանավորությամբ և Արցախի Հանրապետության կառավարության համաֆինանսավորմամբ կյանքի են կոչվել տասնյակ բուժկետեր, հիվանդանոցներ, ձեռք են բերվել դեղորայք, ժամանակակից բուժսարքավորումներ, իրականացվել է բուժանձնակազմի վերապատրաստում: Ազգանվեր այդ օգնության շնորհիվ լուրջ հաջողություններ են ձեռք բերվել Արցախի Հանրապետության առողջապահության ոլորտում:

Մենագրությունում համապատասխան սկզբնաղբյուրների, բազմաթիվ փաստաթղթերի ու նյութերի վերլուծությամբ անդրադարձ է կատարվում «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից Արցախի Հանրապետության տնտեսության մեջ կատարած մեծածավալ ներդրումներին ու գործունեությանը հատկապես գյուղատնտեսության ոլորտի զարգացման բնագավառում: Վերլուծվում և ներկայացվում են ճանապարհների կառուցման ու վերանորոգման, գյուղացիությանը պարարտանյութերով և զանազան քիմիկատներով ու այլ պարագաներով աջակցության, ջրատար խողովակաշարերի անցկացման, Արցախի սահմանամերձ շրջաններում ենթակառուցվածքների ստեղծման, «Մեկ շենք ու երեք ծառայություն» սկզբունքով բազմագործառույթային համայքների կառուցման և բազում այլ ծրագրերի կենսագործման ուղղությամբ ծավալված աշխատանքները: Բացահայտվում է «Լինսի» հիմնադրամի ցուցաբերած մեծ աջակցությունը:

Արցախի տնտեսության մեջ կատարված ներդրումները անգնահատելի նշանակություն ունեցան Արցախի բնակչության սոցիալական վիճակի բարելավման գործում:

Առանձնացված ներկայացվել են «Ջինիշյան հիշատակի», «Իզմիրլյան», «Գաֆեսճյան ընտանիք» հիմնադրամների, ինչպես նաև «Թուֆենկյան» բարեգործական հիմնադրամի անմիջական մասնակցությամբ Արցախում իրականացված տնտեսական զարգացման և բարեգործական բազում ծրագրերը, որոնց շնորհիվ հաջողվեց Արցախում ապահովել տնտեսական աճ ու լուծել սոցիալական բազում խնդիրներ:

Այսպիսով՝ վերոնշյալ մենագրությունում բազմաթիվ սկզբնաղբյուրների, փաստաթղթային նյութերի վերլուծությամբ և դրանց համակողմանի քննությամբ բացահայտվել է XX դարավերջին և XXI դարասկզբի երկու տասնամյակներում համահայկական հիմնադրամների, Սփյուռքի հասարակական ու բարեգործական կազմակերպությունների ու անհատ բարերաների կատարած մեծ դերակատարումը Արցախի Հանրապետության սոցիալ-տնտեսական ու մշակութային ոլորտների զարգացման գործում:

Այսպիսով՝ XX դարավերջին և XXI դարասկզբի Արցախ-Սփյուռք առնչությունների ուսումնասիրությանը նվիրված սույն աշխատությունը գալիս է լրացնելու Արցախի անկախության շրջանի պատմության այս ոլորտի բացը: Փորձել ենք ամբողջացնել անկախության շրջանում Արցախի Հանրապետություն-Սփյուռք հարաբերությունները՝ հասցնելով մինչև 2020 թ. մեծ աղետը՝ Արցախյան 44-օրյա պատերազմը:

Աշխատության մեջ քննության են առնվել XX դարավերջին ու XXI դարասկզբին Արցախի Հանրապետություն-Սփյուռք սոցիալ-տնտեսական, ինչպես նաև մշակութային առնչությունները: Ներկայացվել է Հայկական սփյուռքի ընդհանուր բնութագիրը՝ պայ-

մանավորված աշխարհաքաղաքական փոփոխություններով: Միաժամանակ հայրենիք-Սփյուռք, այդ թվում՝ Արցախ-Սփյուռք հարաբերությունները արտացոլվել են Սփյուռքի առանձին կազմակերպությունների ու միությունների ձևաչափով, բացահայտվել են այդ առնչություններում Սփյուռքի տարատեսակ ու բազմաբնույթ գործոնի առանձնահատկությունները, վեր են հանվել նրա ծավալած գործունեության հիմնական ուղղություններն ու նշանակությունը: Փորձ է արվել ներկայացնելու սփյուռքյան բազմաթիվ կազմակերպությունների, այդ թվում՝ հայ ավանդական քաղաքական կուսակցությունների ու համասփյուռքյան տարբեր կազմակերպությունների գործունեությունը հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդման, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու արցախյան հիմնախնդրի լուծման ուղղությամբ: Ուսումնասիրության շրջանակում հանգամանորեն ներկայացվել են Արցախի Հանրապետություն-Սփյուռք համազգային այլ միջոցառումների դերն ու նշանակությունը ՀՀ-Սփյուռք հարաբերությունների նոր փուլի անցման գործում:

Լուսաբանվել է Արցախ Հանրապետություն-Սփյուռք առնչությունների հետագա ծավալման ու զարգացման անհրաժեշտությունը: Աշխատությունում համապատասխան փաստերով երևան են հանված նաև Սփյուռքի ներդրումները Արցախի տնտեսության մեջ, հիմնադրամների, սփյուռքյան համահայկական բարեգործական կազմակերպությունների, միությունների, տարբեր կազմակերպությունների, ինչպես նաև անհատ բարեգործների գործունեության դերն ու նշանակությունը Արցախի սոցիալ-տնտեսական զարգացման ու հայրենիք-Սփյուռք կապերի հետագա ամրապնդման գործում: Հույսով ենք, որ հետազոտվող թեման կլրացնի XX դարավերջին և XXI դարասկզբին հայրենիք-Սփյուռք, այդ թվում՝ Արցախ-Սփյուռք առնչությունների ուսումնասիրության ուղղությամբ հայոց պատմության մեջ առկա բացը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ԱՐՑԱԽ-ՍՓՅՈՒՌՔ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ XX ԴԱՐԱՎԵՐՋԻՆ ԵՎ XXI ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՍՆԱՄՅԱԿՆԵՐՈՒՄ

ՀՀ անկախությունն իր հետ բերեց սոցիալ-տնտեսական, կրթամշակութային և այլ ոլորտների բազում հիմնախնդիրներ, որոնց լուծման համար խիստ անհրաժեշտություն էր առաջացել ստեղծելու համահայկական հիմնադրամ: Համայն հայության ջանքերով հավաքագրված միջոցները անհրաժեշտ էին Հայաստանի Հանրապետության և անկախ Արցախի բազմաթիվ խնդիրների լուծման համար: Խորհրդային Միության կազմում Հայաստանը օգտվում էր խորհրդային կայսրության սոցիալական և տնտեսական միջոցներից, նրա բարիքներից և կարծես հիմնականում լուրջ խնդիրներ չուներ այս ոլորտներում կենտրոնական միջոցների առկայության պայմաններում, որոնք բաժանվում էին խորհրդային հանրապետությունների միջև: Սակայն անկախությունն իր հետ բերեց նոր հիմնախնդիրներ, որոնց եթե ավելացնենք ավերիչ երկրաշարժի և Ադրբեջանի ու Թուրքիայի կողմից տնտեսական շրջափակման, ինչպես նաև ադրբեջանա-արցախյան պատերազմի ծանր հետևանքները, անհրաժեշտություն էր առաջացել նման հիմնադրամի ստեղծումը: Ահա թե ինչու Երևանում 1992 թ. մարտին ՀՀ նախագահի հրամանագրով ստեղծվեց «Հայաստան» համահայկական հիմնադրամը (ՀՀՀ)՝ որպես հայկական բարեսիրական կազմակերպություն[24]: Հիմնադրամի նպա-

[24] Տե՛ս «Հայ Սփյուռք» հանրագիտարան, Եր., 2003, էջ 688:

տակն էր համայն հայության ներուժի համախմբմամբ, գործադրմամբ աջակցել հայրենիքի զարգացմանն ու բարգավաճմանը: Հիմնական խնդիրներից էին ՀՀ և ԼՂՀ տնտեսությունների զարգացմանն օժանդակելը, նրանց ենթակառուցվածքային խնդիրների լուծումը համայն հայության դրամական նվիրատվությունները համախմբելու միջոցով: «Հայաստան» համահայկական հիմնադրամի գլխավոր խնդիրներից են 1988 թ. Սպիտակի երկրաշարժի հետևանքները հաղթահարելը, գիտական, կրթամշակութային ու առողջապահական համակարգերի բարելավմանն ու կատարելագործմանը նպաստելը, համազգային կարևորություն ունեցող այլ ծրագրերի իրականացմանը աջակցելը: Հիմնադրամը երկու տասնյակից ավելի մասնաճյուղեր ունի արտերկրի հայ համայնքներում: Այդ միջոցները հավաքվում են հայության կամավոր տուրքերից, անհատ անձանց, ձեռնարկությունների ու կազմակերպությունների հատկացումներից, տարատեսակ միջոցառումներից (ամենամյա հեռախոսամարաթոններ, հեծանվարշավներ, ցուցահանդեսներ և տոնավաճառներ), նվիրատվություններից և այլն: Հիմնադրամի ղեկավար մարմինը հոգաբարձուների խորհուրդն է, որն ի պաշտոնե գլխավորում է ՀՀ նախագահը, խորհրդի անդամներ են վարչապետը, ՀՀ արտաքին գործերի, ֆինանսների, էկոնոմիկայի նախարարները, Կենտրոնական բանկի նախագահը, Ամենայն հայոց և Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսները, Հայ կաթողիկե և Հայ ավետարանական եկեղեցիների հովվապետերը, ՀԲԸՄ-ի, ՀՕՄ-ի, Ամերիկայի հայկական համագումարի, հայ ավանդական կուսակցությունների ներկայացուցիչները, արտերկրի հայ բարերարներ: Հիմնադրամի աշխատանքներում ակտիվ մասնակցություն և մեծ ներդրում ունեն նրա 22 տեղական մարմինները, որոնք ներկայումս գործում են աշխարհի 19 երկրներում: Վերջին յոթ տեղական մարմինները բացվել են 2009-2011 թթ. ընթացքում: Դրանք գործում են ԱՄՆ-ից մինչև Սիրիա, Ուրուգվայ, Ռումինիա, Ռուսաստանի Դաշնություն և այլուր: Հիմնադրամն իր

գործունեության ընթացքում իրագործել է բազմազան ծրագրեր ՀՀ-ում ու ԼՂՀ-ում: 1992-2003 թթ. հիմնադրամը իրականացրել է 100-ից ավելի ծրագրեր՝ 80 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով: Կառուցվել են 210 բնակելի շենք ու առանձնատուն 960 ընտանիքների համար, 40 դպրոց ու կրթական հաստատություն, 13 առողջարանական հիմնարկություն, ավտոճանապարհներ (250 կմ), ջրատար խողովակաշարներ (131 կմ), էլեկտրական հաղորդման գծեր՝ 60 կմ ընդհանուր երկարությամբ[25]:

2005 թվականից հիմնադրամը սկսեց ավելի շատ զբաղվել Հայաստանի ու Արցախի տարածքային զարգացման ծրագրի մշակմամբ ու կենսագործմամբ: 1995 թվականից նպաստներ է վճարում ԼՂՀ զոհված և առաջին կարգի հաշմանդամ ազատամարտիկների երեխաներին: «Հայաստան» համահայկական հիմնադրամը ծավալել է, անշուշտ, մեծածավալ գործունեություն: Իր հիմնադրման տակավին երրորդ տարում էներգետիկայի, բնակարանաշինության, ճանապարհաշինության բնագավառներում իրականացրել է ավելի քան 2.5 մլն դոլարի աշխատանքներ[26]: «Հայաստան» համահայկական հիմնադրամը Արցախում սկսել է գործել 1993 թվականից, երբ դեռ շարունակվում էր պատերազմը, և իրականացրել է բազում ծրագրեր հանրապետության գրեթե բոլոր շրջաններում: Լայնածավալ հումանիտար օգնություն է տրամադրվել ԼՂՀ կառավարությանը՝ պատերազմից ավերված բնակավայրերը մաքրելու, գարնան ու աշնան գյուղատնտեսական աշխատանքները կազմակերպելու, սերմացու, թունաքիմիկատներ և վառելիք ձեռք բերելու համար: 1996-1997 թթ. 2520000 ԱՄՆ դոլար գումար է ներդրվել՝ Լեռնային Ղարաբաղում գյուղատնտեսական աշխատանքներ կազմակերպելու նպատակով[27]:

---

[25] Տե՛ս նույն տեղում:

[26] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 5 մարտի, 1994:

[27] Տե՛ս Մինասյան Է., Վարդանյան Ա., Հայրենիք-Սփյուռք առնչությունները ՀՀ անկախության տարիներին, Ստեփանակերտ (1991-2009 թթ.), 2010, էջ 107-108:

1995 թ. հիմնադրամը ձեռնարկել է ԼՂՀ-ում ճանապարհաշինության, ջրագծերի, ոռոգման ջրատարների վերանորոգման ու կառուցման նպատակով ազգային տուրքի մարաթոնների կազմակերպում[28]: Այդ ձեռնարկումը առավել համակարգված ընթացել է 1998 թվականից, երբ 24-ժամյա հեռուստամարաթոններն սկսեցին ամենամյա բնույթ կրել՝ ընդգրկելով Հայաստանն ու ողջ Սփյուռքը: Գերազանցապես հենց դրա շնորհիվ էր, որ արդեն 1999 թ. շահագործման հանձնվեց Գորիս–Ստեփանակերտ ավտոճանապարհը (65 կմ): Արտասահմանում բնակվող շուրջ 200 հազար հայեր հիմնադրամի կատարած ակտիվ աշխատանքի շնորհիվ իրենց անմիջական ներդրումն ունեցան հիմնադրամի նախաձեռնած ճանապարհաշինության հայրենանվեր աշխատանքների գործում[29]: Իսկ նույն 1999 թ. նոյեմբերին Լոս Անջելոսում «Հայաստան» համահայկական հիմնադրամի նախաձեռնությամբ անցկացված հեռուստամարաթոնի ընթացքում հավաքված ավելի քան 5 մլն դոլար[30] հանգանակությամբ էլ Արցախում սկսվեց «Հյուսիս-հարավ» նոր ավտոճանապարհի (շուրջ 170 կմ) շինարարությունը[31], որի 30 կիլոմետրը շահագործման էր հանձնվել 2001 թ. նոյեմբերին[32]: «Հայաստան» համահայկական հիմնադրամն էլ ավելի մեծ եռանդով էր շարունակում Արցախի շենացման ուղղությամբ իր ազգանպաստ գործունեությունը հետագա ժամանակաշրջանում:

2013 թ. տվյալներով հիմնադրամի իրագործած ծրագրերը գերազանցում են 235 մլն ԱՄՆ դոլարի սահմանը: 2013 թ. հեռուստամարաթոնի արդյունքում հավաքագրված գումարները հիմնականում ուղղվեցին Վարդենիս–Մարտակերտ ավտոմայրուղու կառուցմանը, ինչպես նաև հոգաբարձուների խորհրդի կողմից մշակված նոր ծրագրերի իրագործմանը: Հիմնադրամի իրագործած

---

[28] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 28 մարտի, 1996:
[29] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 28 սեպտեմբերի, 1999:
[30] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 28 հունվար, 2000:
[31] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 12 նոյեմբերի, 1999:
[32] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 17 նոյեմբերի, 2001:

ծրագրերի շնորհիվ կառուցվեցին ավելի քան 470 կմ ճանապարհ Հայաստանում ու Արցախում, 212 կմ ջրազտման ու ջրամատակարարման համակարգեր, ինչպես նաև 144 կմ բնական գազատարներ, վերակառուցվեցին 218 դպրոց ու մանկապարտեզ, կահավորվեցին 410 տուն և բնակարան, 34 առողջապահական հաստատություններ, 21 մարզական ու մշակութային կենտրոններ: Իրականացվել են ավելի քան 85 կրթական, մշակութային և գիտական ծրագրեր: Այդ ծրագրերի իրագործման շնորհիվ 2004 թ. ավարտվեց Արցախի 160 կմ ձգվող «Հյուսիս-հարավ» ավտոմայրուղու շինարարության հիմնական մասը: 2005 թ. հեռուստամարաթոնում ընդհանուր նվիրատվության չափը հասնում էր 7.8 մլն դոլարի, որը ծախսվեց ԼՂՀ Մարտակերտի շրջանի վերակառուցման համար[33], իսկ 2006 թ. հեռուստամարաթոնում հանգանակված 13.7 մլն դոլարը նպատակաուղղվեց ԼՂՀ Հադրութի շրջանի վերականգնմանը[34]: 2007-2008 թթ. հիմնադրամը ձեռնամուխ եղավ Հայաստանի ու Արցախի գյուղերում սոցիալական ենթակառուցվածքների վերականգնմանը: 2009 թ. հեռուսատամարաթոնը, որն անցկացվեց «Մեր Շուշին» խորագրի ներքո, արձանագրեց 15.9 մլն դոլարի նվիրատվություն ու նվիրատվության խոստում: Ստացված գումարները գլխավորապես ուղղվեցին Շուշիում սոցիալական ու տնտեսական ենթակառուցվածքների՝ ջրագծերի, դպրոցների, ճանապարհների և բնակելի շենքերի տանիքների վերանորոգման աշխատանքներին[35]:

2005 թ. ավարտին հասցվեց նաև ԼՂՀ Մարտակերտի շրջանի տարածքային զարգացման ծրագիրը, Լեռնային Ղարաբաղի Հադրութի շրջանային հիվանդանոցը, 2006 թ. կառուցվին մի շարք դպրոցներ, նոր ջրագծեր, բաշխիչ ցանցեր, անցկացվեց բնական

---

[33] Տե՛ս «Հեռուստամարաթոն 2005», http://www.hi,madram.org/index.php?id=223-26&lang=2:

[34] Տե՛ս նույն տեղում:

[35] Տե՛ս «Ազատ Արցախ», 21 մարտի, 2009:

գազամուղ: 2007 թ. նոյեմբերին ավարտին հասցվեց նաև գյուղատնտեսական զարգացման ծրագիրը, որը նախատեսում էր Արցախի նոր գյուղական դպրոցների, խմելու ջրի համակարգերի կառուցումը, իսկ ագրարային զարգացման ծրագրերի կենսագործմամբ առողջապահական սարքավորումներ տրվեցին բոլոր գյուղական շրջաններին: Արցախի գյուղերում վերականգնվեցին մի շարք ենթակառուցվածքներ, այդ թվում՝ Շուշիում հասարակական ու տնտեսական ենթակառուցվածները:

2009 թ. կառուցվեցին ջրագծեր, ճանապարհներ, վերանորոգվեցին բնակելի շենքերի տանիքները, լուծվեցին Արցախի գյուղերում խմելու և ոռոգման ջրի խնդիրները, իսկ 2010 թ. ավարտին հասցվեց Արցախի սահմանամերձ գյուղերի զարգացման համապարփակ ծրագիրը: Ջրամատակարարման ցանցեր, ջրավազաններ, մաքրիչ և մղիչ կայաններ են կառուցվել Մարտունու, Ասկերանի, Քաշաթաղի շրջաններում ու Շուշիում: Գերմանիայի հայության ֆինանսավորմամբ ջրագիծ է կառուցվել Մարտակերտի շրջանի Ակնաբերդ գյուղում: 2009 թ. շահագործման են հանձնվել Հադրութի շրջանի Մեծ Թաղլար, Ազոխ, Դրախտիկ գյուղերի ջրատարները: Հիմնադրամի Ֆրանսիայի տեղական մարմինը ջրամատակարարման համակարգ է կառուցել Ասկերանի շրջանում[36]: Առաջնահերթ է համարվել Շուշի քաղաքի ջրամատակարարման հարցը: Շուշիի «Վերածնունդ» հիմնադրամը իրականացրել է Շուշի ջրագծի կառուցումը, իսկ «Հայաստան» համահայկական հիմնադրամը զբաղվել է ջրի ներքին ցանցի հարցերով: 2-2,5 մլն դոլար է հատկացվել նաև Շուշիի բնակելի շենքերի տանիքների ու դպրոցների նորոգման համար[37]: Կանադահայության մասնակցությամբ հիմնադրամը ավարտին է հասցրել Ստեփանակերտի օղակաձև ջրատարի և երկու ջրամբարների շինարարությունը:

---

[36] Տե՛ս Մինասյան Է., Վարդանյան Ա., նշվ. աշխ., էջ 108:

[37] Տե՛ս նույն տեղում, էջ 109:

Սա Ստեփանակերտի ջրամատակարարման հիմական ցանցն է, որը խմելու ջրով է ապահովվում քաղաքը[38]:

2009 թ. նոյեմբերի 26-ին տեղի ունեցավ «Հայաստան» համահայկական հիմնադրամի դրամահավաք միջոցառումը՝ «Հեռուստամարաթոն-2009-ը», որի ընթացքում հավաքվեց 15.875.043 ԱՄՆ դոլար: Գումարի 70 %-ը տրամադրվեց Շուշի քաղաքին, մնացածը՝ Հայաստանի Հանրապետության ու Արցախի այլ շրջաններին[39]: «Հայաստան» համահայկական հիմնադրամի ուժերով շահագործման են հանձնվել «Շուշի-Կարմիր շուկա» բարձր լարման էլեկտրահաղորդման գիծը՝ Շուշիում ու Կարմիր շուկայում տեղադրված ենթակայաններով, որոնք էլեկտրականությամբ են ապահովում Մարտունի շրջկենտրոնն ու հարակից գյուղերը: Հիմնադրամը Արցախում կառուցել է 60 կմ ընդհանուր երկարությամբ երեք էլեկտրահաղորդման գծեր և «Ստեփանակերտ» գլխավոր ենթակայանը: Գորիսում կառուցվել է ռադիոհեռուստատեսային վերահաղորդիչ կայան, որն ապահովում է Հայաստանի հարավային շրջանների ու Արցախի կապը: Մարտակերտի շրջանի չորս գյուղերի համար կառուցվել է գազատար խողովաշար: Կազմակերպության միջոցներով հիմնովին վերակառուցվել են պատերազմից խիստ տուժած Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղի 67, և վերականգնվել են Հաթերք գյուղի 143 տներ[40]:

Հիմնադրամի կողմից իրականացվել են ծրագրեր նաև ԼՂՀ առողջապահության ոլորտում: ԱՄՆ Արևելյան Արփի տեղական մարմնի ֆինանսավորմամբ կառուցվել են Ստեփանակերտի քաղաքային պոլիկլինիկան ու ախտորոշման կենտրոնը[41], իսկ ԱՄՆ արևմտյան շրջանի հայության միջոցներով հիմնադրամը նորոգել

---

[38] Տե՛ս նույն տեղում:
[39] Տե՛ս նույն տեղում:
[40] Տե՛ս նույն տեղում, էջ 110:
[41] Տե՛ս նույն տեղում:

է Հադրութ քաղաքի կենտրոնական հիվանդանոցի շենքը: Ֆրանսիայի հանձնախմբի կողմից վերանորոգվել են Շուշի քաղաքի հիվանդանոցի կաթսայատունն ու ջերմատար ցանցը: 2010 թ. ավարտվել է Հանրապետական հիվանդանոցի կառուցումը Ստեփանակերտում: Կազմակերպությունը չի բավարարել միայն հիվանդանոցների կառուցմամբ ու նորոգմամբ: Շինարարական աշխատանքների ավարտից հետո դրանք նաև կահավորվել են, հագեցվել ժամանակակից բժշկական սարքավորումներով[42]: Հիմնադրամը նախաձեռնել է «Նպաստներ՝ զոհված և առաջին կարգի հաշմանդամ ազատամարտիկների երեխաներին» ծրագիր, որի իրականացումը սկսվել է 1995 թ. հունվարից և շարունակվել մինչև 2012 թվականը՝ նպաստառու երեխաների չափահաս դառնալը[43]: Բացի ռազմավարական ու կենսական կարևորություն ունեցող ծրագրերից՝ հիմնադրամը Արցախում իրականացնում է դպրոցաշինության ծրագիր: Հիմնադրամի միջոցներով են կառուցվել Ստեփանակերտի ֆիզիկամաթեմատիկական գիշերօթիկ դպրոցի ուսումնական մասնաշենքն ու հանրակացարանը, որոնք շահագործման են հանձնվել դեռևս 1999 թ. ապրիլին: Այսպիսով՝ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի հաստատած Արցախի վերածննդի ծրագրով հեռուստամարաթոններում հանգանած գումարները համապատասխանաբար ուղղվեցին Արցախյան պատերազմի հետևանքով առավել մեծ վնաս կրած ԼՂՀ շրջանների՝ Մարտակերտի և Հադրութի վերականգնմանն ու զարգացմանը:

2006 թ. սկսվեցին և մինչև այժմ շարունակվում են Մարտակերտի շրջանի վերականգնման աշխատանքները, որոնք ներառում են միաժամանակ մի քանի ոլորտ՝ գյուղատնտեսություն, ջրամատակարարում, առողջապահություն, դպրոցաշինություն և այլն: Նմանօրինակ ծրագիր հիմնադրամը իրագործեց նաև ԼՂՀ

---

[42] Տե՛ս նույն տեղում:

[43] Տե՛ս նույն տեղում:

Մարտունու շրջանում: Պատահական չէ, որ իր գործունեության տարիներին հիմնադրամը ճանաչվել ու սիրվել է ողջ հայության կողմից, քանի որ նրա ծրագրերը միշտ եղել են արդիական ու սպասված: Ի սկզբանե լինելով հայոց պետականության նեցուկը՝ հիմնադրամը շարունակում է հավատարիմ մնալ իր առաքելությանը՝ աշխարհասփյուռ հայության միասնական ջանքերն ուղղելով մեր երկրի վերակառուցմանն ու ամրապնդմանը: Մարտակերտի շրջանի Վերին Հոռաթաղ գյուղից է սկսվել Արցախի մեծ բարեկամ բարոնուհի Քերոլայն Քոքսի մարդասիրական առաքելությունը: Նրա նախաձեռնությամբ ու նվիրատվությամբ այնտեղ գործում է նորակառույց դպրոց: Բարոնուհու կազմակերպչական աշխատանքի արդյունքը եղավ հիմնադրամի Տորոնտոյի գրասենյակի միջոցներով Մարտակերտի շրջանի Մատաղիս գյուղի դպրոցի կառուցումը[44]: Դպրոց է բացվել նաև նույն շրջանի Դրմբոն գյուղում: Վերակառուցվել է Հադրութի շրջանի Տող գյուղի դպրոցը, որը դարձել է այդ տարածքի արվեստի կենտրոն: 2009 թ. վերջին շահագործման են հանձնվել Մարտունու շրջանի Սպիտակաշեն, Ճարտար, իսկ 2010 թ.՝ նույն շրջանի Գիշի և Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղի դպրոցները: Ֆրանսիայի հանձնախմբի կողմից համակարգիչներ են տրամադրվել Մարտակերտի շրջանի Նոր Մեյսուլա, Կոճողոտ, Հադրութի շրջանի Թողուտ, Տող գյուղերի դպրոցներին[45]:

1992-2008 թթ. հիմնադրամը ՀՀ-ում և ԼՂՀ-ում իրականացրել է 100-ից ավելի ծրագրեր: Կառուցվել են 210 բնակելի շենք և առանձնատուն՝ 960 ընտանիքների համար, 40 դպրոց և կրթական հաստատություն, 13 առողջապահական հիմնարկություն, ավտոճանապարհներ (250 կմ), ջրատար խողովակաշարներ (131 կմ), 60 կմ ընդհանուր երկարությամբ էլեկտրական հաղորդման գծեր:

---

[44] Տե՛ս «Ազատ Արցախ», 7 հոկտեմբերի, 2007:

[45] Տե՛ս Մինասյան Է., Վարդանյան Ա., նշվ. աշխ., էջ 110:

1995 թվականից մինչ այժմ նպաստ է տրամադրվել ԼՂՀ զոհված և առաջին կարգի հաշմանդամ ազատամարտիկների երեխաներին[46]: 2010-2011 թթ. հեռուստամարաթոնների հավաքված գումարները ուղղորդվեց ԼՂՀ սահմանամերձ շրջանների ենթակառուցվածքների զարգացմանը: 2010 թ. հեռուստամարաթոնի ընթացքում հավաքվեց 20.8 մլն դոլար, որի հիմնական մասը ուղղվեց ԼՂՀ սահմանամերձ շրջաններում ենթակառուցվածքների զարգացմանը, մասնավորապես ջրամատակարարման խնդիրների լուծմանը[47]: 2011 թ. հեռուստամարաթոնի 12.2 մլն դոլարը ևս օգտագործվեց ՀՀ և ԼՂՀ սահմանամերձ շրջաններում նախորդ տարի սկզբնավորված համալիր ծրագրերի իրականացմանը[48]: Քանի որ 2011 թ. Սիրիայում տեղի ունեցող դեպքերի հետևանքով աստիճանաբար սկսվեց սիրիահայերի ներգաղթը ՀՀ, իսկ մյուս կողմից դեռ ավարտին չէին հասցվել 2010-2011 թթ. գերակա ծրագրերը, 2012 թ. հեռուսատամարաթոնի ընթացքում հավաքված 21.4 մլն դոլարի հիմնական մասը ԼՂՀ գյուղական շրջաններում համայնքային կենտրոնների կառուցմանն ու ՀՀ տեղափոխված սիրիահայության հրատապ խնդիրների լուծմանը[49]: 2013 թ. հիմնադրամը սկսեց ՀՀ-ն ԼՂՀ-ին կապող երկրորդ՝ շուրջ 116 կմ երկարությամբ «Վարդենիս–Մարտակերտ ավտոճանապարհի կառուցման ծրագիրը»: 2013-2014 թթ. «Դեպի Արցախ» կարգախոսով անցկացվող հեռուստամարաթոնների ընթացքում հավաքված գումարները հիմնականում հատկացվեցին այդ աշխատանքների իրականացմանը: 2013 թ. հեռուստամարաթոնի ժամանակ արձանագրվեց 22.6 մլն դոլարի նվիրատվություն ու նվիրատվության խոստում:

---

[46] Տե՛ս նույն տեղում:

[47] Տե՛ս «Հեռուստամարաթոն 2010-Ջուրը կյանք է», http://himnadram.org/index.php?-id=23543lang=2:

[48] Տե՛ս «Հեռուստամարաթոն 2011», http://himnadram.org/index.php?id=23801lang=2:

[49] Տե՛ս «Հեռուստամարաթոն 2012», http://himnadram.org/index.php?id=23990lang=2:

Այդ միջոցներն ուղղվեցին ավտոճանապարհի հողային աշխատանքների իրականացմանը[50]:

«Հայաստան» համահայկական հիմնադրամը 2014 թ. մեծածավալ ծրագրեր իրագործեց: Նրա գլխավոր նշանակետը դարձյալ ՀՀ-ն և ԼՂՀ-ն իրար կապող Վարդենիս–Մարտակերտ ավտոճանապարհի ասֆալտապատումն էր ու հարդարումը, որն ուներ ռազմավարական, ռազմատնտեսական կարևոր նշանակություն: 2014 թ. հեռուստամարաթոնի նվիրատվությունները (12.4 մլն դոլար) ուղղվեցին ոչ միայն Վարդենիս–Մարտակերտ ավտոճանապարհի ասֆալտապատմանն ու հարդարմանը, այլ նաև բարեբարների կողմից ընտրված հատուկ ծրագրերին ԼՂՀ-ում[51]:

«Շատ դժվարին գործ է: Բավական բարդ տեղանքում մոտ 120 կմ ճանապարհ պիտի կառուցվի, ինչը նյութական մեծ ծախս ու մասնագիտական արհեստավարժ մոտեցում է պահանջում»[52],– նշում է հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի վերստուգիչ հանձնախմբի անդամ Վահե Ջազմադարյանը: Վերջին երկու տարիներին «Հայաստան» համահայկական հիմնադրամի ամենամյա հեռուստամարաթոններն ամբողջությամբ նվիրվեցին «Վարդենիս–Մարտակերտ ավտոճանապարհի վերակառուցման ծրագրին», որոնցում ներգրավվեցին մոտ երկու տասնյակ նախագծային ու շինարարական կազմակերպություններ: Նրանց ջանքերով գրեթե հաջողվել է հասնել ճանապարհի ավարտական փուլին: Ճանապարհի վերակառուցումը հնարավորություն է տալիս զարգացնելու նաև զբոսաշրջությունը: Վարդենիսից մինչև Մարտակերտ ճանապարհին պատահած մարդկանցից յուրաքանչյուրի հետ խոսելիս երախտագիտության ու օրհնանքի խոսքեր են հնչում, խոսքեր, որոնք ուղղված են Մերձավոր ու Միջին Արևելքի

---

[50] Տե՛ս «Հեռուստամարաթոն 2013», http://himnadram.org/index.php?id=24169lang=2:

[51] Տե՛ս «Հեռուստամարաթոն 2014», http://himnadram.org/index.php?id=24350lang=2:

[52] «Հայաստան» համահայկական հիմնադրամ, 2014, Երևան, 2015, էջ 14:

երկրներում, ԱՄՆ-ում և Բրազիլիայում ապրող մեր հայրենակիցներին, որոնց նվիրատվություններով վերակառուցվել է 2017 թ. շահագործման հանձնված մայրուղին[53]: Համահայկական հիմնադրամը, 2013 թվականից սկսած, ԼՂՀ-ում և ՀՀ-ում «Մեր գյուղը» ծրագրի շրջանակում սկսեց բազմագործառութային համայնքային կենտրոնների կառուցումը՝ «Մեկ շենք ու երեք ծառայություն» սկզբունքով: Դա հնարավորություն է տալիս լուծելու գյուղական բնակավայրերի համար մի շարք կարևոր խնդիրներ, երբ նույն շենքում տեղավորվում են համայնքի ղեկավարի գրասենյակը, հանդիսությունների տունն ու համակարգչային սրահը, մի այլ դեպքում՝ վարչական ծառայության կողքին՝ բուժկետն ու գրադարանը: ԼՂՀ գրեթե բոլոր շրջաններում կառուցվել են ընդհանուր թվով տասը համայնքային կենտրոններ[54]: Այդ ծրագրերին որպես համաֆինանսավորող կողմ մասնակցել է նաև ԼՂՀ կառավարությունը: Նման կենտրոններ կառուցվեցին ԼՂՀ Նոր Մատաղիս, Ակնաղբյուր, Շող, Մուշկապատ, Կարմիր շուկա, Ղավարդ, Քարինտակ, Խաչմաչ գյուղերում: Այդ համայնքային կենտրոններից վեցը կառուցվել է Ֆրանսիայի, երկուսը՝ Կանադայի, մեկը՝ Արգենտինայի հայության նվիրատվություններով[55]: Հիմնադրամի կողմից նոր ծրագրեր իրագործվեցին Արցախի գյուղերում ու քաղաքներում: Կառուցվեցին ու վերանորոգվեցին մի շարք դպրոցներ, մանկապարտեզներ, քոլեջներ (Քարինտակի, Շուշիի, Սոսի, Չափարի և այլն), Իվանյանի մանկապարտեզը, Ստեփանակերտի երաժշտական քոլեջը և այլն[56]: Հիմնադրամը 2014 թ. նյութական աջակցություն տրամադրեց Սիրիայի, մասնավորապես Քեսապի հայությանը, բնակարաններ տրամադրվեցին գյումրեցիներին, նպաստներ՝ ազատամարտիկների ընտանիքներին և այլն: Հիմնադրամը

[53] Տե՛ս նույն տեղում, էջ 17:

[54] Տե՛ս «Հայաստան» համահայկական հիմնադրամ. 2014, էջ 24:

[55] Տե՛ս նույն տեղում, էջ 27:

[56] Տե՛ս նույն տեղում:

2000 թվականից իրականացնում է «Բողոսյան» հիմնադրամի մրցանակաբաշխությունը, որի շրջանակում նախագահն ամենամյա մրցանակ է շնորհում գիտության ու մշակույթի գործիչներից յուրաքանչյուրին իր բնագավառում ցուցաբերած ակնառու նվաճումների համար: Հիմնադրամը մեծ ավանդ ունի Հայոց ցեղասպանության հիշատակման ու ճանաչման գործում: Իր գոյության առաջին տարիներից հիմնադրամը ակտիվ աշխատանքներ տարավ Հայոց ցեղասպանություն ուսումնասիրության հաստատությունների ստեղծման գործում:

2014-2016 թթ. «Հայաստան» համահայկական հիմնադրամի ծրագրերին մասնակցեցին բոլոր տեղական մարմինները՝ օգտագործելով իրենց համայնքների անդամներին այդ կարևոր գործին մասնակից դարձնելու հնարավոր բոլոր միջոցները: Աշխարհի տարբեր երկրներում (սկսած ԱՄՆ-ից, Հարավային Ամերիկայի երկրներից, Եվրոպայից, Փարիզից, Բելգիայից և վերջացրած Լիբանանով, Կանադայով, Մեծ Բրիտանիայով ու Իրանով) կազմակերպվող տարատեսակ միջոցառումները, համայնքի անդամների ուշադրությունը որոշակի ծրագրերի վրա սևեռելուց բացի, նաև ունեն ամփոփիչ ու հաշվետու նշանակություն: Սովորաբար հենց այս միջոցառումների ընթացքում են տեղական մարմինները ամփոփում տարվա ընթացքում կատարած իրենց աշխատանքներն ու տոնական մթնոլորտում հաշվետվություն տալիս իրականացված ծրագրերի մասին: «Հայաստան» համահայկական հիմնադրամի կազմակերպած 2015 թ. միջոցառումների շրջանակում իրականացվեց ԼՂՀ Ասկերանի շրջանի Պատարա, Խաչմաչ և այլ գյուղերում, Մարտունու Մուշկապատ, Կարմիր շուկա և Թաղավարդ գյուղերում համայնքային կենտրոնների ու Շուշիի Եզնիկ Մոզյանի անվան արհեստագործական ուսումնարանի բացումը[57]: 2015 թ. «Մեր տունը» խորագրով հեռուստամարաթոնն արձանագրեց 10.4

[57] Տե՛ս «Հայաստան» համահայկական հիմնադրամ, էջ 57:

մլն դոլարի նվիրատվություն ու նվիրատվության խոստում[58]: Հավաքված գումարը նպատակաուղղվեց ԼՂՀ-ում բազմազավակ ընտանիքներին բնակարաններով ապահովելու ծրագրին: Զուգահեռաբար կյանքի են կոչվում բարերարների կողմից ընտրված հատուկ ծրագրերը[59]: Ինչ վերաբերում է 2016 թ. հեռուստամարաթոնին, ապա այն անցավ Քառօրյա պատերազմի հետևանքների վերացման տրամաբանությամբ՝ «Իմ Արցախը» կարգախոսով: Հավաքված 15.4 մլն դոլարը նախատեսվում էր փոխանցել Քառօրյա պատերազմից տուժած բնակավայրերի վերականգնմանը, ինչպես նաև Արցախի բազմազավակ ընտանիքների համար առանձնատների կառուցմանը[60]:

2016 թ. ընթացքում հիմնադրամի ջանքերով իրականացվեցին այնպիսի կարևորագույն ծրագրեր, ինչպիսիք են Վարդենիս–Մարտակերտ ավտոճանապարհի կառուցման ավարտը, Գերովան գյուղի, Ասկերանի շրջանի համայնքային կենտրոնների բացումը, Ստեփանակերտի ուռուցքաբանական կենտրոնի, մայրաքաղաքի թիվ 9 դպրոցի վերանորոգումը և այլն[61]:

Ակնհայտ է, որ հիմնադրամի իրականացրած ծրագրերը մեծ կարևորություն ունեն ՀՀ և ԼՂՀ սոցիալ-տնտեսական կյանքը զարգացնելու առումով: Հատկանշական է, որ առավել մեծ չափով գումարներ հավաքվել են հատկապես այն հեռուստամարաթոններում, որոնք անցկացվել են սահմանամերձ շրջանների կամ Արցախի հիմնախնդիրները կարգավորելու նպատակով:

Այսպիսով՝ 2016 թ. դրությամբ Հայաստանի Հանրապետությունում ու Արցախում իրագործված ծրագրերի ընդհանուր գումարը կազմում էր ավելի քան 235.800.000 ԱՄՆ դոլար: Սակայն եթե հաշվի առնենք հիմնադրամի կողմից իրականացված,

---

[58] Տե՛ս «Հեռուստամարաթոն 2015», http://himnadram.org/index.php?id=24515lang=2:

[59] Տե՛ս «Մեր մասին», http://himnadram.org/index.php?id=2&id=2:

[60] Տե՛ս «Հայաստան» համահայկական հիմնադրամ, էջ 45:

[61] Տե՛ս նույն տեղում:

ավարտված ծրագրերը ու դրանց կենսագործման համար օգտագործված գումարները, աշխատատեղերը, որոնք բացվել են այդ ծրագրերի շնորհիվ, համայնքները, որոնք հետզհետե զարգանում են, ապա չենք կարող չհաշվել ու չնշել այն մարդկանց, որոնց կյանքը փոխվել է բացված նոր ճանապարհների, նոր կառույցների ու այն օգնության շնորհիվ, որի կարիքը նրանք շատ ունեն:

«Հայաստան» համահայկական հիմնադրամի 25-ամյա հոբելյանի կապակցությամբ խոսելով նրա կատարած մեծածավալ աշխատանքների մասին՝ հիմնադրամի գործադիր տնօրեն Արա Վարդանյանը նշեց. «25-ամյա երիտասարդ, ավյունով լի համահայկական այս կառույցը տարեցտարի ավելի զորեղ ու համազգային է դառնում շնորհիվ Հայաստանի, Արցախի ու Սփյուռքի մեր հայրենակիցների վստահության ու հայրենիքն ավելի ամուր ու ապահով դարձնելու գաղափարի շուրջ համախմբվածության: Հպարտությամբ պետք է նշել, որ մեր նվիրատուների թիվն արդեն գերազանցում է 700.000-ը, իսկ հայրենիքում արված ամբողջ ներդրումները՝ 330 մլն դոլարը (ավելի քան 1100 խոշոր ծրագիր), ինչի շնորհիվ շուրջ 500.000 մարդ Հայաստանի Հանրապետությունում ու Արցախում մշտապես օգտվում է բարեկարգ ու հարմարավետ դպրոցից, հիվանդանոցից, ճանապարհից, ջրագծից: Ընդլայնվել է նաև մեր գործունեության աշխարհագրությունը. ԱՄՆ-ից մինչև Ավստրալիա գործում է 25 տեղական մարմին»[62]: Հայրենիքին շոշափելի աջակցություն ցուցաբերեցին մի շարք այլ հիմնադրամներ: Դրանցից կարելի է առանձնացնել ՀՀ տնտեսությանը մեծ աջակցություն ցուցաբերած, ամերիկահայ նշանավոր ազգային բարերար, երջանակահիշատակ Քըրք Քրքորյանի կողմից 1989 թ. հիմնադրված «Լինսի» հիմնադրամը (Liney Foundation), որի միջոցով հիմնադրամը մեծագումար հատկացումներ էր կատարում հо-

[62] Տե՛ս «Հայաստան» համահայկական հիմնադրամ. 2016, Երևան, 2017, էջ 40:

գուտ Հայաստանի Հանրապետության, Արցախի ու Սփյուռքի, օգնում էր սփյուռքահայ դպրոցներին ու վարժարաններին, Կիլիկայի թեմի ազգային առաջնորդարանին, հայոց եկեղեցու Արևմտյան թեմին (ԱՄՆ) և այլն:

«Լինսի» հիմնադրամը նաև մեծագումար նվիրատվություններ էր կատարում կրթության ու առողջապահության ասպարեզում: 1993 թ. «Հայաստան» համահայկական հիմնադրամի հավաքած 7 մլն դոլար գումարը եռապատկվել է Ք. Քրքորյանի շնորհիվ:

Այսօր արդեն կարելի է փաստել, որ «Լինսի» հիմնադրամի իրականացրած ծրագրերն անգնահատելի նշանակություն ունեցան ոչ միայն Հայաստանի Հանրապետության, այլև Արցախի կյանքում: Դրանց շնորհիվ ՀՀ-ում ու ԼՂՀ-ում 15-20 հազար մարդ ուղղակիորեն ընդգրկվեց շինարարական աշխատանքներում՝ չհաշված հարակից ոլորտների աշխատուժը: Երջանկահիշատակ, ՀՀ ազգային հերոս Ք. Քրքորյանը յուրաքանչյուր հայի հպարտությունն է և վայելում է ազգի խորին հարգանքը:

Հայրենանվեր գործունեություն է իրականացնում 1921 թ. Նյու Յորքում հիմնադրված «Հովարդ Կարագյոզյան հիշատակի ընկերակցությունը», որը պաշտոնապես Հայաստանում գրանցվել է 1992 թ. «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպություն (“Howard Karagyozyan” Medical Benevolent Non-Governmental Organization) անվանմամբ[63], շատ հաճախ անվանվում է «Հովարդ Կարագյոզյան» մանկական հիմադրամ: Կազմակերպությունն այսօր ակտիվ գործունեություն է ծավալում հատկապես Հայաստանի Հանրապետութունում, Արցախում, Սիրիայում ու Լիբանանում: Հաստատության նպատակը հայ կարիքավոր մանուկների առողջության, խնամքի և կրթության կազմակերպումն է, նրանց մտավոր, ֆիզիկական ու մշակու-

[63] Տե՛ս Պետրոսյան Ք., նշվ. աշխ., էջ 86-87:

թային զարգացմանը նպաստելը: Միայն 1992-2001 թթ. կազմակերպությունը 3 մլն դոլար է ներդրել հայաստանյան ծրագրերի իրականացման համար,[64] որի հիմնական մասը՝ Արցախում: 1993 թվականից հիմնադրամը Ստեփանակերտում հիմնել է 5 մանկական ատամնաբուժարան ու ակնաբուժարան: Կազմակերպությունն աջակցություն է ցուցաբերում նաև Արցախում գործող հիվանդանոցներին, մանկատներին, դպրոցներին, մանկական ճամբարներին: Այն իրականացնում է շենքերի կառուցման, վերանորոգման, ինչպես նաև համապատասխան կահույքով ու սարքավորումներով ապահովման ծրագրեր: Կազմակերպությունը զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների ընտանիքների համար իրականացնում է բնակարանային ապահովման ծրագիր: Լոս Անջելեսում 1992 թ. փետրվարից գործում էր «Հայաստանի մանկատների հիմնադրամ» (ՀՄՀ) կազմակերպությունը, որի պատասխանատու տնօրենն էր Ժենյա Ռեզայե-Այդինյանը:

Հիմնադրամը Հայաստանի Հանրապետությունում ուներ իր բաժանմունքը: Գործելով ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության ենթակայությամբ՝ ՀՄՀ-ն տարին երկու անգամ՝ աշնանն ու գարնանը, կազմակերպում էր դրամաբաշխում Արցախի մանկատներին ու ծերանոցներին, զոհված ու վիրավոր ազատամարտիկների երեխաներին:

1992 թ. դեկտեմբերից ՀՄՀ-ն իրագործում էր «Մեկ հայրենիք, մեկ ընտանիք» ծրագիրը զոհված ազատամարտիկների ընտանիքների, նաև երկրաշարժից տուժած երկկողմանի, միակողմանի ծնողազուրկ, հաշմանդամ երեխաների համար: Ծրագրի շրջանակում հիմնադրամը հովանավորեց 1500 ընտանիքի և Հայաստանի գրեթե բոլոր մանկատներին ու ծերանոցների մեծ մասին[65]:

---

[64] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 174:

[65] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 22 մայիսի, 1996:

Ծրագրի շնորհիվ գրեթե 400 անհատ հովանավորներ ԱՄՆ-ից, Կիպրոսից, Եգիպտոսից և այլ վայրերից աջակցում էին 580 ազատամարտիկների երեխաներին: 1992-1998 թթ. ՀՄՖ ֆինանսական ֆոնդից օգտվել է 30 հազար մարդ,[66] որի մեծ մասը նպատակաուղղվել է Արցախին: 1996 թ. մայիսին ԱՄՆ-ում Վարդան Ջինիշյանը, ի հիշատակ իր ծնողների, հիմնել է «Ջինիշյան հիշատակի ծրագիր» (ՋՀԾ, Jinishian Memorial Foundation) բարեգործական կազմակերպությունը: Ստեղծման օրվանից այն իր ծառայություններն ուղղել է Լիբանանի, Սիրիայի, Իրանի, Իրաքի, Երուսաղեմի, Թուրքիայի և հակամարտությունների ու անկայության շրջաններում գտնվող այլ երկրների կարիքավոր հայերին՝ օգնություն ցուցաբերելով բնակարանի, սննդի, հագուստի և բժշկական խնամքի հարցերում: ՋՀԾ-ն իր գործունեությունը Հայաստանում ծավալեց 1993 թ. սեպտեմբերից՝ «Ջինիշյան հիշատակի հիմնադրամ» (ՋՀՀ) անվանմամբ: Որպես հիմնադրամ՝ այն պաշտոնապես գրանցվել է 1991 թ.[67]: Հայաստանում ՋՀՀ գործող խորհրդատվական մարմնի անդամներն էին Հայ առաքելական, Հայ ավետարանական, Հայ կաթողիկե եկեղեցիների ներկայացուցիչները: Հիմնադրամի գործունեության հիմնական ուղղություններն էին համայնքների, գործարարության զարգացումը, բնակարանաշինությունը, մարդասիրական օգնությունը, առողջապահության ոլորտը և հոգևոր վերելքը: Արցախում ՋՀՀ-ն կառուցեց և վերանորոգեց բնակելի շենքեր, վերականգնվեցին ջրագծեր: Հիմնադրամը հոգատարություն ցուցաբերեց սոցիալապես ծանր վիճակում գտնվող ընտանիքների նկատմամբ:

«Իզմիրլյան» հիմնադրամը հիմնվել է 1990 թ. Ժնևում: Նպատակն է նպաստել աշխարհասփյուռ հայերի կյանքի բարելավմանը, Հայաստանի Հանրապետության ու Արցախի բարգավաճմանն

---

[66] Տե՛ս «Փարոս», 15 հուլիսի, 1998:

[67] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 176-177:

ու հզորացմանը[68]: Այն էականորեն օժանդակել է Արցախի տնտեսության վերականգնմանը: Հետագայում հիմնադրամն առավելապես ձեռնարկել է զարգացմանն ուղղված ծրագրեր՝ խթանելու համար լրացուցիչ աշխատատեղերի ստեղծումն ու Հայաստանում ընդհանուր գործարար միջավայրի բարելավումը:

Հիմնադրամը Հայաստանում ու Արցախում իրականացնում է մի շարք ծրագրեր նաև առողջապահության, կրթության, գիտության ու սոցիալական աջակցության ոլորտներում: 2013 թ. «Իզմիրլյան» հիմնադրամի 12 մլն ԱՄՆ դոլար նվիրատվությամբ հիմնանորոգվել և վերաբացվել են «Իզմիրլյան» բժշկական հաստատությունը, Սուրբ Ներսես Մեծ գիտաբժշկական կենտրոնը[69]: Հիմնադրամն աջակցություն է ցուցաբերում ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտին, տրամադրում օգնություն ազատամարտիկների երեխաներին, ինչպես նաև իրականացնում է բանակին հոգեբանի աջակցության ծրագրեր: Հիմնադրամի աջակցությամբ են գործում ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանը, Երևանի Մարի Իզմիրլյանի անվան մանկատունը, Արցախի Չլդրան գյուղի Տիգրան Իզմիրլյան անվան դպրոցը[70]:

1990-ական թթ. երկրորդ կեսին Հայաստանում բարեսիրական ու մշակութային լայն գործունեություն ծավալեց «Գաֆեսճյան ընտանիք» հիմնադրամը (ԳԸՀ, Cafesjian Family Foundation), որը հիմնվել է 1996 թ. հունիսին Նյու Յորքում ամերիկահայ հայտնի գործարար Ջերարդ Գաֆեսճյանի կողմից: Այն ուներ 30 մլն դոլար նախնական դրամագլուխ[71]: Հիմնադրամը սեփական բարեգործա-

---

[68] Տե՛ս «Հայկական Սփյուռք» տարեգիրք, ՀՀ սփյուռքի նախարարարություն (հեղ. խմբի ղեկավար՝ Հ. Հակոբյան և այլք), Երևան, 2013, էջ 135:

[69] Տե՛ս Ավետիսյան Ա. և ուրիշներ, նշվ. աշխ., էջ 142:

[70] Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 176:

[71] Տե՛ս «Ազգ», 5 նոյեմբերի, 1998:

կան ծրագրերի հետ մեկտեղ ֆինանսական միջոցներ էր տրամադրում հայկական բարեգործական կազմակերպություններին: «Գաֆեսճյան ընտանիք» հիմնադրամը միլիոնավոր դոլարներ է ծախսել Հայաստանի Հանրապետության և Արցախի ջերմային էներգիայի աղբյուրների, արևային սկավառակների ու մարտկոցների արտադրման, ԶԼՄ-ների, ֆինանսական ծառայությունների, անշարժ գույքի զարգացման, համակարգչային ծրագրերի ու հեռահաղորդակցության ոլորտներում ծրագրերի զարգացման ու իրականացման համար: Նպատակ ունենալով բարեգործական ծրագրեր իրականացնել Հայաստանի Հանրապետությունում, այնուհետև՝ Արցախում՝ 1999 թ. Երևանում ամերիկահայ գործարար ու բարերար Ջեյմս Թուֆենկյանը հիմնադրել է «Թուֆենկյան» հիմնադրամի մայր գրասենյակը[72]: «Թուֆենկյան» բարեգործական հիմնադրամն իր անմիջական մասնակցությամբ տարբեր ծրագրեր է իրականացրել ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ Արցախում: Հատկանշական է, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունն իր սոցիալ-տնտեսական, մշակութային և այլ ոլորտների զարգացման համար զրկված էր միջազգային ֆինանսական կազմակերպություններից վարկեր ստանալու հնարավորությունից, ուստի անգնահատելի է սփյուռքահայ բարեգործական, մշակութային, եկեղեցական կազմակերպությունների և հիմնադրամների, ինչպես նաև առանձին բարերարների օգնությունը: Այդ գործում մեծ ավանդ ունի «Թուֆենկյան» բարեգործական հիմնադրամը:

Հիմնադրամը աշխատանքներ կատարեց նաև արդեն վերաբնակեցված գյուղերի ամրապնդման ու զարգացման ուղղությամբ: Այն իրականացրել է խաղողի այգիների վերականգնման ծրագիր Քաշաթաղի Այգեհովիտ և Ուռեկան գյուղերում: Այգիները վերա-

[72] Տե՛ս Ավետիսյան Ս. և ուրիշներ, նշվ. աշխ., էջ 140-141:

կանգնելուց հետո, ըստ կազմած պայմանագրի, դրանք վերադարձվել են համայնքի անդամներին: 2006 թ. 35 հա խաղողի այգիներից ստացվել է առաջին բերքը՝ 12 տոննա խաղող, իսկ 2008 թ. ստացվել է մոտ 400 տոննա խաղողի բերք: Այս տարածաշրջանում նախատեսվում է կառուցվել է խաղողի սկզբնական վերամշակման գործարան565[73]: Հիմնադրամի միջոցներով Քաշաթաղի Այգեհովիտ գյուղում կառուցվել է ալրաղաց, որը սպասարկել է շրջակա մոտ 20 գյուղերի բնակիչների, իսկ Իշխանաձոր գյուղում կառուցվել է բուժամբուլատորիա, որը սպասարկել է 2000 բնակչի: Ամբուլատորիան կահավորված է, ուներ իր բաժանմունքները՝ ատամնաբուժական, մանկաբարձական, բուժքույրական անձնակազմով, շտապօգնության մեքենայով: Հիմնադրամի նախաձեռնությամբ բուժամբուլատորիայի աշխատակիցները դասընթացների են մասնակցել Ստեփանակերտի ծննդատանը և ախտորոշիչ կենտրոնում[74]:

Գյուղերի տնտեսական վերելքը խթանելու նպատակով «Թուֆենկյան» հիմնադրամը տրամադրել է ցածր տոկոսադրույթով վարկեր: Վարկերի համար տրամադրված գումարը ետ ստանալով՝ այն օգտագործվում է հետագա ծրագրերի ընդլայնման համար: «Թուֆենկյան» հիմնադրամի Արցախի մասնաճյուղի միջոցով իրագործվել են նաև կրթամշակութային ծրագրեր: Հիմնադրամը Շուշիի պատմաերկրագիտական թանգարանի հովանավորն է. 2005 թ. մայիսի 9-ին այստեղ բացվեց նոր բաժին՝ նվիրված Շուշիի ազատագրման ռազմական գործողությանը[75]: Արդեն չորրորդ տարին է՝ հիմնադրամն իրականացրել է «Տաղանդավոր երիտասարդներին՝ ֆինանսական աջակցություն» ծրագիրը[76]: Այն

[73] Տե՛ս նույն տեղում:
[74] Տե՛ս նույն տեղում:
[75] Տե՛ս նույն տեղում, էջ 97:
[76] Տե՛ս նույն տեղում:

կոչված էր օժանդակելու ԼՂՀ շնորհաշատ երեխաներին և երիտասարդներին՝ հետագայում նրանց տաղանդը բացահայտելու և զարգացնելու նպատակով: Տաղանդավոր երիտասարդների ընտրության հարցում հիմնադրամը համագործակցել է ԼՂՀ մշակույթի, կրթության և գիտության նախարարությունների, ինչպես նաև Սպորտի կոմիտեի հետ: Ծրագրում ընդգրկվել են ավելի քան 70 տաղանդավոր երեխաներ և երիտասարդներ: Ներկայումս, Ստեփանակերտից բացի, ծրագրում ներառվել են Մարտունու և Հադրութի շրջանները, իսկ 2008 թ. սեպտեմբերից՝ Մարտակերտի շրջանը: Հիմնադրամի օժանդակությամբ իրագործվեց Շուշիի երեք երգչախմբերի լազերային սկավառակի ձայնագրությունը, որը մեծ ընդունելության է արժանացել արտասահմանում: Քաշաթաղի շրջանի բոլոր գյուղերում երկու փուլով անցկացվել են համակարգչային դասընթացներ ուսուցիչների, աշակերտների և գյուղի երիտասարդության համար[77]:

Վերջին տասնամյակի ընթացքում հիմնադրամը խոշորածավալ ներդրումներ է իրականացրել հյուրանոցային բիզնեսում: Խոսքը «Tufenkyan Heritage» հյուրանոցների մասին է[78]: Հայաստանի գեղեցկությամբ և հնադարյա պատմությամբ տպավորված՝ Ջեյմս Թուֆենկյանը, օգտվելով սեփական բիզնեսի հաջողություններից, հիմնեց հայկական ավանդական ոճի հյուրանոցներ: Դրանց առանձնահատկությունն այն է, որ հայկական արհեստներն ու ազգային ավանդույթները կիրառվել են հյուրանոցների ձևավորման և ծառայությունների մատուցման մեջ: Զբոսաշրջության ոլորտի առաջատարներից մեկի՝ «TripAdvisor»-ի կայքում Թուֆենկյանի հյուրանոցներից տպավորված արտասահմանցիները նշել են, որ իրենց հատկապես գրավել է հյուրանոցների հայկական մթնոլորտը, ազգային ոգով կատարված դիզայնն ու հար-

[77] Տե՛ս նույն տեղում:
[78] Տե՛ս Ավետիսյան Ս. և ուրիշներ, էջ 115:

դարանքը՝ սկսած զորգազործության նմուշներից մինչև ձեռակերտ ազգային գործիքներ: Արդյունքում Արցախում ստեղծվել են հյուրանոցային համալիրներ, ինչպես նաև հանգստյան տներ՝ ապահովված արդիական պայմաններով և անհրաժեշտ ծառայություններով[79]:

«Փյունիկ» մարդկային ռեսուրսների զարգացման համահայկական հիմնադրամը (“Pyunik” Pan-Armenian Human Resources Development Foundation) Երևանում պաշտոնապես գործունեություն է ծավալել 2008 թվականից՝ աջակցելով նաև ՀՀ սփյուռքի նախարարության ծրագրերի իրականացմանը, ընդ որում՝ հիմնադիրների կողմից ՀՀ-ում, ԼՂՀ-ում, Լիբանանում և Սիրիայում բարեգործական ծրագրեր իրականացվել են դեռևս 1998 թվականից[80]: Հանրակրթությանն աջակցելու նպատակով «Փյունիկ» հիմնադրամը Հայաստանի, Արցախի և Ջավախքի բազմաթիվ դպրոցների նվիրել է 600 հավաքածու լաբորատոր սարքավորումներ, 450-ից ավելի համակարգիչներ: Կարևոր է մանկական խաղահրապարակների արդիականացման ծրագիրը: Առաջին անգամ դպրոցների համար ստեղծվել է հայատառ գլուբուս: ՀՀ-ում և Արցախում հիմնադրամի հովանավորությամբ տպագրվել են գրքեր, պատկերագրքեր, վճարվել են անապահով ուսանողների ուսման վարձը, ուսանողներն աջակցություն են ստացել՝ արտերկրում ուսումը շարունակելու համար, կազմակերպվել են փառատոներ, տարաբնույթ միջոցառումներ[81]:

2015 թ. հիմնադրամի միջոցներով վերանորոգվել և վերակառուցվել են Կոմիտասի տուն-թանգարանը, Հայոց ցեղասպանության թանգարանը, իսկ ԼՂՀ-ում կառուցվել է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի մասնաճյուղը[82]:

---

[79] Տե՛ս Մինասյան Է., Վարդանյան Ա., նշվ. աշխ., էջ 116:
[80] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 180:
[81] Տե՛ս նույն տեղում:
[82] Տե՛ս նույն տեղում:

Ընդհանուր առմամբ՝ «Փյունիկ» հիմնադրամը 1998 թվականից առ այսօր 100 մլն ԱՄՆ դոլարի ներդրումներ և բարեգործական ձեռնարկներ է իրականացրել ՀՀ-ում և Արցախում[83]: «Հայաստան-Արցախ» հիմնադրամը (AAF, Armenia Artsakh Fund), որի նպատակն է աջակցել Հայաստանի և Արցախի բնակչությանը, կազմավորվել է 2015 թ. դեկտեմբերի 1-ին Գլենդելում (ԱՄՆ): Հիմնադրամը օժանդակություն է ցուցաբերել Հայաստանի Հանրապետության և Արցախի հիվանդանոցներին, պոլիկլինիկաներին, դպրոցներին, մանկատներին և բարեգործական տարբեր հաստատություններին՝ նրանց տրամադրելով կենսական անհրաժեշտության դեղորայք, պատվաստանյութեր, մանկական սնունդ, բժշկական, գյուղատնտեսական սարքավորումներ, համակարգիչներ, ձմեռային հագուստ և այլն: «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» (IDeA, Initiatives for Development of Armenia Foundation) հիմնադրամի ուշադրության կենտրոնում են եղել այն ծրագրերը, որոնք կենտրոնացվել են ՀՀ-ում և Արցախում: Դրանք նպաստել են հատկապես Արցախի սոցիալ-տնտեսական զարգացմանն ու բարեկեցությանը:

2009 թ. ՀՕՖ-ը ԼՂՀ բուժհիմնարկներին տրամադրեց 250 արկղ տարբեր տեսակի բժշկական պարագաններ՝ ներարկիչներ, թթվածնային փողակներ, անզգայացման դիմակներ, հիվանդների խնամքի համար անհրաժեշտ այլ պիտույքներ, նաև մանկական վիտամիններ: ԼՂՀ առողջապահական համակարգում ծրագրեր իրականացնելու առումով նշանակալից էր 2005 թվականը: Բացի 37 բուժկետերի վերանորոգումից և նրանց բուժսարքավորումներով համալրելու գործընթացից՝ Հայաստանի ամերիկյան համալսարանի առողջապահության ծառայությունների և ուսումնասիրությունների կենտրոնի հետ համատեղ իրականացվեց Մարտունու,

[83] Տե՛ս նույն տեղում, էջ 401:

Մարտակերտի, Ասկերանի և Հադրութի շրջանների բուժանձնակազմի վերապատրաստումը, որն ընդգրկեց հիշյալ շրջանների 296 բուժշաշխատողներին: Լեռնային Ղարաբաղի բոլոր բնակավայրերի բուժկետերի պատասխանատուներն ու բուժաշխատողները՝ 113 մարդ, վերապատրաստվեցին նաև «Մանկական հիվանդությունների ինտեգրացված վարում» ծրագրով: Մինչև տարեվերջ Հադրութի շրջանում հնարավոր եղավ վերականգնել 15, իսկ Մարտակերտի շրջանում՝ շուրջ 240 բնակելի շենքեր[84]: Իրենց գործունեության տարիների ընթացքում «Հայ օգնության ֆոնդը» Հայաստանում և Արցախում իրականացրել է շուրջ 270 մլն ԱՄՆ դոլարի մարդասիրական օգնության և զարգաց ման ծրագրեր[85]: Հայանպաստ գործունեությամբ է զբաղվում ամերիկահայ գործարար Սեմ Սիմոնյանը, ով «Սիմոնյան» կրթական հիմնադրամի հիմնադիրն ու նախագահն է: Բարերարը Հայաստանի ամերիկյան համալսարանի հոգաբարձուների խորհրդի անդամ է, 2000 թվականից՝ ՀԲԸՄ կենտրոնական վարչության անդամ, նաև ՀԲԸՄ փոխնախագահն է: Ս. Սիմոնյանը նաև ԱՄՆ «Էփիջի Լէբս Էյէմ» (Epygi Labs AM) ընկերության հիմնադիրն է, որի մասնաճյուղը Հայաստանում բացվել է 1997 թ.[86]:

Այսպիսով՝ չափազանց մեծ է հիմնադրամների դերը նորանկախ Հայաստանի և Արցախի սոցիալ-տնտեսական կյանքում: Իրագործելով լայնածավալ մարդասիրական ծրագրեր՝ հիմնադրամներն աջակցեցին հասարակության գրեթե բոլոր շերտերին, ընդլայնեցին ու կատարելագործեցին իրենց գործունեության

---

[84] Տե՛ս Ավետիսյան Ս., Գրիգորյան Ա., Բաբաջանյան Ս., Կիրակոսյան Ա., Սփյուռքի ներդրումները ՀՀ տնտեսության մեջ, զարգացման հետևանքները, Երևան, 2015, էջ 124:

[85] Տե՛ս նույն տեղում:

[86] Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 398:

ձևերն ու մեթոդները՝ հետագա տարիների համար մշակելով նորերը: Հայաստանի Հանրապետության և Արցախի ծանրագույն սոցիալ-տնտեսական ժամանակահատվածում հիմնադրամները բացառիկ դեր ունեցան թե՛ պետությանը, թե՛ բնակչությանը բազմաբնույթ և լայնածավալ օգնություն ցուցաբերելու հարցում: Նրանց գործունեությունը զգալիորեն մեղմեց տնտեսական ճգնաժամը և դյուրացրեց դրա հաղթահարումը: Կարծում ենք՝ հիմնադրամների գործունեության բացակայության դեպքում սոցիալ-տնտեսական ճգնաժամի հետևանքները շատ ավելի ծանր և անկանխատեսելի կլինեին: Հարկ է նշել, որ աջակցությունը հատկապես Արցախին բարոյահոգեբանական նշանակալի դեր է խաղացել, քանի որ սոցիալ-տնտեսական դժվար վիճակում հայտնված արցախցի քաղաքացիների մեջ, ըստ էության, բարձր էր պահում հավատն ապագայի հանդեպ:

«Սիմոնյան» կրթական հիմնադրամը Հայաստանի կրթական և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ոլորտում կարևոր դերակատարություն ունի: Հիմնադրամի՝ շուրջ 45 մլն ԱՄՆ դոլարի ներդրմամբ 2011 թ. Երևանում բացվեց «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնը, որը 12-18 տարեկան հազարավոր պատանիների ու աղջիկների համար կազմակերպում է արտադպրոցական ուսուցում՝ կարևոր ներդրում ունենալով նորագույն տեխնոլոգիաների ոլորտում հայ երիտասարդ մասնագետների պատրաստման գործում: Այսօր Թումո կենտրոն է գործում նաև Ստեփանակերտում: Ուրախալի է, որ մասնաճյուղեր են ստեղծվելու նաև այլ երկրներում[87]:

[87] Տե՛ս նույն տեղում:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ, ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՈՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ԲԱՐԵՐԱՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ XX ԴԱՐԱՎԵՐՋԻՆ ԵՎ XXI ԴԱՐԱՍԿԶԲԻ ԵՐԿՈՒ ՏԱՍՆԱՄՅԱԿՆԵՐՈՒՄ

«Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ)», «Թուֆենկյան» հիմնադրամի և համասփյուռքյան այլ հիմնադրամների, բարեգործական ու հասարակական կազմակերպությունների գործունեությունը Արցախում սոցիալական ծրագրերի կենսագործման ուղղությամբ

«ՀԲԸՄ»-ը հիմնադրամը հիմնադրվել է Եգիպտոսի մայրաքաղաք Կահիրեում XX դարասկզբին՝ նպատակ ունենալով աջակցել համայն հայության խնդիրներին, մասնավորապես իրականացնել հայապահպանության, սոցիալական, առողջապահական, կրթական, երիտասարդական, մշակութային, ինչպես նաև եկեղեցաշինական ծրագրեր: Միությունը գրասենյակներ ունի աշխարհի 30-ից ավելի երկրներում: Մեր ուսումնասիրած ժամանակահատվածում բարեգործական միության նախագահը Ալեք Մանուկյանին փոխարինած նրա դուստր Լուիզ-Սիմոն Մանուկյանն էր, ում 2002թ. փոխարինեց մինչ այժմ Միության նախագահ Պերճ Սեդրակյանը:

1988թ. աղետալի երկրաշարժից, Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախացումից հետո տասնյակ սփյուռքահայ բարեգործական կազմակերպություններ անգնահատելի օգնություն կազմակերպեցին հայաստանաբնակ հայրենակիցներին և արցախահայությանը՝ նպաստելով

ՀՀ և ԼՂՀ սոցիալ-տնտնսական, մշակութային զարգացմանը: Ներկայումս այդ կազմակերպություններից շատերը շարունակում են Հայաստանում և Արցախում մարդասիրական ու բարեգործական գործունեությունը: Բարեգործական կազմակերպություններն իրականացնում են բազմաբնույթ ծրագրեր՝ սոցիալական, առողջապահական, հոգևոր, մշակութային, կրթական, շինարարական և այլ բնագավառներում: Անգնահատելիորեն մեծ է Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ-ի) դերը Հայաստան-Սփյուռք-Արցախ փոխհարաբերությունների զարգացման ու ամրապնդման, համազգային խնդիրների իրականացման գործում:

ՀԲԸՄ-ն Հայաստան եկավ 1988 թ.՝ ավերիչ երկրաշարժից տուժածներին օգնություն ցուցաբերելու նպատակով: Կազմակերպվեց օգնություն՝ սննդի, հագուստի, դեղորայքի, բժշկական սարքավորումների: Միության գործունեությունը Հայաստանում ավելի նպատակային օգտագործելու համար 1990 թ. Երևանում բացվեց ՀԲԸՄ գրասենյակը: ՀԲԸՄ-ի Հայաստանի ներկայացուցչության տնօրենը Աշոտ Ղազարյանն էր, իսկ Արցախում ծրագրերի համակարգողը Սասուն Բաղդասարյանն էր:

Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո ՀԲԸՄ-ն ֆինանսավորել է մի շարք երկարաժամկետ մարդասիրական, շինարարական, կրթական, մշակութային և կրոնական ծրագրեր: Հայաստանի Հանրապետությանը 1998-2010 թթ.՝ 12 տարիների ընթացքում, ՀԲԸ Միությունը հատկացրել է 60 մլն դոլար՝ նոր ծրագրեր իրականացնելու համար[88]:

Ելնելով արցախահայության սոցիալ-տնտեսական կացության թելադրանքից՝ Հայկական բարեգործական ընդհանուր միությունն իր ընդհանուր ծառայությունների ոլորտում ընդգրկել է նաև Արցախը՝ փորձելով աջակցել այն հարցերի լուծմանը,

[88] AGBU NEWS, NOVEMBER 2010, p. 31:

որոնք երկրի համար ռազմավարական նշանակություն ունեն: Արցախում իրագործվող սոցիալական ծրագրերից շատերի հեղինակն ու պատասխանատուն ՀԲԸՄ-ի Ֆրանսիայի մասնաճյուղն է: Վերջինս մեծ ուշադրություն էր դարձնում Արցախի սոցիալական, վերաբնակեցման՝ ռազմավարական մեծ նշանակություն ունեցող ծրագրերին: ՀԲԸՄ–ի Ֆրանսիայի մասնաճյուղի անդամ, ֆրանսահայ բարերար Լևոն Քեբաբջյանի խոսքերով՝ կազմակերպությունն իր գոյության տարիների ընթացքում առաջնային նպատակն է համարել հայության արմատների ամրապնդումն իր հողում: Իսկ հողի պահապանը գյուղացին է: Ուրեմն պիտի ամեն կերպ թեթևացնենք նախևառաջ գյուղացու հոգսը[89]:

ՀԲԸՄ Ֆրանսիայի մասնաճյուղի նախաձեռնությամբ 2002թ. սկսվեց Արցախի Հանրապետության Հադրութի շրջանի Նորաշեն գյուղի վերակառուցումը: Հետագայում այս ձեռնարկը վերածվեց ՀԲԸ Միության Արցախի վերաբնակեցման ընդհանուր ծրագրի, որի նպատակն էր վերականգնել և վերաբնակեցնել 1988-1994թթ. ավերված ու լքված հայկական գյուղերը: Կարճ ժամանակում Նորաշենում կառուցվեց 22 տուն և մանկապարտեզ, ավելի ուշ՝ նաև բուժկետ[90] Գյուղի մանկապարտեզը ծառայեց ոչ միայն Նորաշենի, այլ նաև հարևան Այգեստան գյուղի բնակիչների երեխաներին:

Ֆրանսիայի մասնաճյուղի երկրորդ ծրագիրը նպատակաուղղված էր այրիներին և նրանց երեխաներին: Նրանց կեցության ծախսերը հոգալու համար յուրաքանչյուր ընտանիքին տրամադրվեց երկու կթան կով և երկու հորթ[91]: Օգնություն կազմակերպվեց տնամերձ տնտեսության կարգավորման գործում: Նման օգնություն ցուցաբերվեց նաև Մարտակերտի շրջանի 124 ընտանիքների[92]:

---

[89] «Ազգ», 8 մայիսի 2001:
[90] ՀԲԸՄ ծրագրերը Հայաստանում 2009-2010, Երևան, 2011, էջ 7:
[91] AGBU NEWS, OCTOBER 2002, p.11.
[92] «Ազատ Արցախ», 29 ապրիլի 2003:

Արցախահայությանը օգնելու նպատակով, նոր ծրագրերի իրականացման և դրանք ավելի արդյունավետ դարձնելու համար 2004թ. սեպտեմբերին Ստեփանակերտում բացվեց Հայկական բարեգործական ընդհանուր միության գրասենյակը: 2004 թ. հոկտեմբերին ՀԲԸՄ-ի ավելի քան 100 անդամներ այցելեցին Արցախ: Նրանց նպատակն էր ոչ միայն շրջագայել Արցախի Հանրապետությունում, այլ նաև տեսնել, թե ինչպես են կատարվել իրենց կողմից ֆինանսավորված սոցիալական ծրագրերը և հստակեցնել հետագա անելիքները: «Արցախը հայ ժողովրդի ազգային հպարտությունն է և ինքնության խորհրդանիշը,- նշում է ՀԲԸՄ յոթերորդ նախագահ Պերճ Սեդրակյանը,- և ՀԲԸՄ պատվիրակների այցելությունը Ղարաբաղ զբոսաշրջային այց չէ, այլ նոր ծրագրերի և Արցախը միասնականորեն վերակառուցելու նախապայման»[93]:

2006 թ. սեպտեմբերին ՀԲԸՄ Ֆրանսիայի մասնաճյուղի հովանավորությամբ բացվեց Նորաշեն գյուղի 8-ամյա դպրոցի նորակառույց շենքը՝ 80 աշակերտի համար: Կրթօջախն ուներ ութ դասասենյակ, միջոցառումների ընդարձակ սրահ, ուսուցչանոց, տնօրենի առանձնասենյակ և համակարգչային սենյակներ[94]:

ՀԲԸՄ Լոս Անջելեսի, Լոնդոնի, Մոնրեալի, Տորոնտոյի ու Սիդնեյի մասնաճյուղերն իրենց մասնակցությունն են բերել Արցախի վերակառուցման սոցիալական ծրագրերին: Նրանց ակտիվ օժանդակությամբ ավարտվեցին նաև Նորաշեն գյուղի Բարեշեն և Ջրակն թաղամասերի 13 տների կառուցման աշխատանքները: 2019թ. Արցախում ՀԲԸՄ-ի կառուցած 35 տներում, ընդհանուր առմամբ, ապրում էին շուրջ 150 բնակիչներ, այդ թվում՝ երիտասարդ ընտանիքներ[95]: Սահմանամերձ գյուղերի վերաբնակեցումը, սոցիալական ծրագրերի իրագործումը համազգային ռազմավարական նշանակություն ունեցող կարևորագույն խնդիր էր:

---

[93] «Հայաստանի Հանրապետություն», 5 հոկտեմբերի 2004:
[94] «Ազատ Արցախ», 12 սեպտեմբերի 2006:
[95] ՀԲԸՄ ծրագրերը Հայաստանում 2009-2010, էջ 7:

Արցախի վերականգման և զարգացման, սոցիալական ծրագրի իրականացման գործում իր մեծ ավանդն ուներ Լուիզ-Սիմոն Մանուկյանը: Վերջինս, լինելով ՀԲԸՄ նախագահ (1989-2002), իր անձնական խոշոր նվիրատվություններով հեռուստամարաթոնների ժամանակ մասնակցեց թե՛ Գորիս-Ստեփանակերտ ավտոմայրուղու և թե՛ «Արցախի ողնաշարի» շինարարության ֆինանսավորմանը: Ստեփանակերտում նրա կողմից հիմնանորոգվեց Ալեք Մանուկյան փողոցը, ծերանոցը վերանորոգվեց: Լուիզ-Սիմոն Մանուկյանի տրամադրած միջոցներով 2003թ. ամռանը Ստեփանակերտում շահագործման հանձնվեց բազմահարկ բնակելի երկու շենք: Նորակառույցն ուներ 50 բնակարան, որոնց մեծ մասը բաժանվել է արցախյան պատերազմում զոհված ազատամարտիկների ընտանիքներին և վետարաններին[96]:

Կրթությունը ՀԲԸՄ-ի կարևոր առաքելություններից է: Միության միջոցներով կառուցվել է Ստեփանակերտի Շախմատի դպրոցը, 2006թ. շահագործման հանձնվեց Ստեփանակերտի Եղիշե Չարենցի անվան թիվ 7 դպրոցը, որի ծախսերը ամբողջությամբ հոգացել էր Լուիզ-Սիմոն Մանուկյանը:

ՀԲԸ Միությունն իր բարերարների նվիրատվությունների միջոցով աջակցում էր Արցախի կրթական հաստատություններին՝ բազմաթիվ ծրագրերի իրականացման, մասնագետների վերապատրաստման համար: ՀԲԸՄ Արցախյան ծրագրերի համակարգող Սասուն Բաղդասարյանը նշում էր, որ մասնագետների վերապատրաստումն իրականացվում էր OLPC («Համակարգիչ յուրաքանչյուր աշակերտին») ծրագրի շրջանակներում, որը նախաձեռնել էր արգենտինահայ բարերար Էդուարդո Էռնեկյանը՝ ՀԲԸՄ աջակցությամբ, և որը հաջողությամբ իրագործվում է աշխարհի

---

[96] Մինասյան Է., Վարդանյան Ա., Հայրենիք-Սփյուռք առնչությունները ՀՀ անկախության տարիներին (1991-2009 թթ.), Ստեփանակերտ 2010, էջ 51:

զարգացող մի շարք երկրներում[97]: Նախատեսվում էր տարրական դասարաններում սովորող երեխաներին մեկական համակարգիչ նվիրել, և դասի արդյունավետությունը բարձրացնել, նրանց գիտելիքները հարստացնել: Ծրագրի առաջին փուլում ընդգրկվել էին Ստեփանակերտի և Շուշիի դպրոցները: Տարրական դասարանների ուսուցիչների վերապատրաստման դասընթացներն սկսվեցին 2011թ. սեպտեմբերի 6-ին, որին մասնակցում էին 160 դասվարներ և ինֆորմատիկայի ուսուցիչներ: Պարապմունքները վարում էին Արգենտինայից և Ուրուգվայից ժամանած մասնագետները[98]:

Նոր ուսումնական ռազմավարությունը (ՆՈՒՌ), որն Արցախում ներդրվեց ՀԲԸՄ-ի աջակցությամբ 2011 թ. արգենտինահայ բարերար Էդուարդո Էռնեկյանի հովանավորությամբ, մեկ աշակերտին՝ մեկ համակարգիչ ծրագրով, առաջին փուլում ընդգրկեց Ստեփանակերտի և Շուշիի (այդ թվում՝ Քարինտակ գյուղի) դպրոցները: 1-4-րդ դասարանցիներն ապահովվեցին XO տիպի համակարգիչներով՝ որպես ուսումնական գործիք, իսկ դասվարներն էլ անցան համապատասխան վերապատրաստումներ: Կրթական ծրագիրը նպատակ էր հետապնդում տեղեկատվական նոր տեխնոլոգիաների օգտագործմամբ հետաքրքիր, արդիական և ավելի արդյունավետ դարձնել ուսումնական գործընթացը: Այնուհետև XO համակարգիչներով աշխատելու ուղղությամբ վերապատրաստվեցին 5-րդ դասարանում դասավանդող ուսուցիչները:

2014 թ. ուս. տարվանից ծրագրի աշխարհագրությունն ընդլայնելու նպատակով առաջին անգամ XO տիպի համակարգիչներ բաժանվեցին շրջկենտրոնների դպրոցների տարրական դասարաններին: Բացի դրանից՝ Ստեփանակերտի և Շուշիի դպրոցներում նոր տեսակի համակարգիչներ բաժանվեցին 6-րդ դասարանցիներին: Դրանք «Intel» կազմակերպության կողմից հատուկ

---

[97] «Ազատ Արցախ», 22 ապրիլի 2011:

[98] «Ազատ Արցախ», 10 սեպտեմբերի 2011:

դպրոցականների համար ստեղծված նոր սերնդի նեթբուքներ էին, որոնք ունեին ավելի մեծ հնարավորություններ, տեխնիկապես հզոր էին ХО-ներից և ավելի արդյունավետ էին ուսումնական գործընթացում օգտագործելու համար: ՆՈՒՌ ծրագրի պատասխանատուները Ստեփանակերտի դպրոցների համար ձեռք բերեցին նաև պրոյեկտորներ, որոնք դպրոցներին բաժանվեցին նեթբուքների հետ: Դպրոցներին չորս տարվա ընթացքում բաժանվել են 7200 նեթբուքեր[99]: Մինչև 2020թ. 12.000 աշակերտ ապահովվել է լափթոփներով, ինչի շնորհիվ ստեղծվել են հավասար հնարավորություններ բոլորի համար, ու նոր տեխնոլոգիաները ներգրավվել էին դպրոցական ամենօրյա դասերում[100], ծրագրի կենսագործումը թողեց իր դրական ազդեցությունը: Անժխտելի փաստ թէ, որ հենց այդ ծրագրերին ուսուցիչների ու աշակերտների մասնակցության փորձառությունը ստացած անձնական համակարգիչները հատկապես շրջաններում 2019թ.-ից հիմք հանդիսացան ու նպաստեցին կորոնավիրուսի պայմաններում հեռավար դասապրոցեսներին պատրաստ լինելուն:

ՀԲԸ Միությունը ֆինանսավորում էր նաև ԱՀ կառավարության պաշտոնյաների, այդ թվում՝ Արցախի արտաքին գործերի նախարարության աշխատակիցների վերապատրաստման ծրագրերը[101]: Այն իրականացվել է «Ամերիկացիներն Արցախի համար» կազմակերպության հետ համատեղ:

Միությունը ծրագրեր է իրականացնում նաև մշակույթի բնագավառում: Արցախի կամերային նվագախումբը ստեղծվեց 2004 թ.՝ շնորհիվ ՀԲԸՄ ֆինանսավորման: Նվագախմբի մեծագույն նվաճումը դասական երաժշտության հանդեպ հետաքրքրության

---

[99] «Ազատ Արցախ», 25 հոկտեմբերի 2014:

[100] Ազատ Արցախ, 28 մայիսի, 2020:

[101] «Յուշարար Միութիւն», 1 ապրիլի 2009, էջ 20:

աճին նպաստելն է: Գեղարվեստական ղեկավար Գևորգ Մուրադյանի գլխավորությամբ՝ 12 հայաստանցի երաժիշտներ հիմք դրեցին այս նվագախմբին, որին միացան նաև 6 երաժիշտներ Արցախից: Նվագախմբի երաժիշտներն աշխատում են նաև երիտասարդների հետ և, գործակցելով Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցում բացված քոլեջի հետ, պատրաստում են նվագախմբի ապագա երաժիշտներ: Հանդիսանալով լավագույններից մեկը Հարավային Կովկասում՝ նվագախումբն ստանում է արտասահմանյան հյուրախաղերի բազմաթիվ հրավերներ[102]: Միությունը մեծ ուշադրություն է դարձնում Արցախում մշակութային կյանքի զարգացմանը: Նրա հովանավորությամբ և ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ Ստեփանակերտում 2010 թ. կազմակերպվեց Հայաստանի ֆիլհարմոնիկ և Արցախի կամերային նվագախմբերի միացյալ համերգ՝ ավստրիացի հայտնի խմբավար Էռնեստ Հոետզլիի ղեկավարությամբ: Ծրագիրն ընդգրկում էր աշխարհահռչակ կոմպոզիտորներ Շնիտկեի, Մոցարտի, Կոմիտասի, Շտրաուսի և այլոց ստեղծագործությունները[103]:

ՀԲԸ Միության հայաստանյան երիտասարդական ծրագրերում իր առանձնահատուկ տեղն ունի «Բացահայտի՛ր Հայաստանը» դաստիարակչական, հայրենաճանաչության ծրագիրը: Այս ծրագրով ՀԲԸ Միությունը, 2003թ.-ից սկսած, ամեն տարի ամառային ամիսներին իրականացնում է 15-18 տարեկան սփյուռքահայ դպրոցականներից կազմված խմբերի 20 օրյա այցը Մայր հայրենիք: Ծրագրի նպատակն է սփյուռքահայ երիտասարդներին ծանոթացնել ոչ միայն հայրենի երկրի տեսարժան վայրերին, պատմամշակութային արժեքներին, այլ նաև նրանց հաղորդակից

---

[102] ՀԲԸՄ ծրագրերը Հայաստանում 2007-2008, Երևան, 2009, էջ 5:
[103] AGBU NEWS, NOVEMBER 2010, p.73.

դարձնել Արցախի կրթամշակութային կյանքին, առկա սոցիալական խնդիրներին ու դժվարություններին: Ծրագրի պարտադիր մաս են կազմել դեպի Արցախ կազմակերպվող եռօրյա այցելությունները: 2010թ. օգոստոսին Կանադայից, Ֆրանսիայից, Հունաստանից, Լիբանանից, Արաբական Միացյալ Էմիրություններից, Անգլիայից, Բելգիայից, Միացյալ Նահանգներից 31 երիտասարդներ մասնակցեցին ծրագրին: Արցախում նրանք այցելեցին ՀԲԸՄ կողմից կառուցված Նորաշեն գյուղ, եղան Գանձասարում և Շուշիում, հյուրընկալվեցին արցախցիների ընտանիքում, ծանոթացան նրանց կենցաղին: Արցախում երիտասարդները նոր գրքերով համալրեցին Ստեփանակերտի Մանկական հանրային գրադարանի օտարալեզու գրականության տաղավարը, որը հիմնվել էր «Բացահայտի՛ր Հայաստանը» ծրագրի 2009 թ. մասնակիցների կողմից[104]: 2004 թ. բազմապիսի գործունեություն է ծավալվել Արցախում: ՀԲԸՄ-ն ոչ միայն Արցախի գյուղերում տների կառուցման, սննդամթերքի, դեղորայքի, բժշկական սարքավորումների, հագուստի և այլնի առաքում է իրականացնում, այլև կազմակերպում է բազմաթիվ որբերի ու զոհված ազատամարտիկների երեխաների խնամատարությունը և այլն:

ՀԲԸՄ նախաձեռնությամբ կազմակերպվել են նաև սփյուռքահայ երիտասարդ մասնագետների խմբերի այցելություններ Արցախ: Նման կարգի միջոցառումները ազգային ինքնաճանաչման ու ազգային հպարտության հնարավորություն են ստեղծում հայ երիտասարդների համար, նպաստում հայրենի Արցախի հետ նրանց կապերի ամրապնդմանը և ազգապահպանման գործին:

2013 թ. հուլիսին ՀԲԸՄ երկարամյա բարերար և Միության Հոգաբարձուների խորհրդի անդամ Նազար Նազարյանի կողմից ԱՀ առողջապահության նախարարության հանրապետական բժշկա-

---

[104] Նույն տեղում, էջ 49:

կան կենտրոնին նվիրաբերվեց TOSHIBA մակնիշի APLIO XV մոդելի գերձայնային բազմաֆունկցիոնալ սարք, որը հնարավորություն է տալիս իրականացնելու գունավոր դոպլեր, սրտանոթային, վահանաձև գեղձի, որովայնային, պրոկտոլոգիական, գինեկոլոգիական և նեոնատալ հետազոտություններ: Սարքով օրական հետազոտվում էր մոտ քսան հիվանդ[105]:

2013 թ. ՀԲԸՄ-ը և Հայաստանի Ամերիկյան համալսարանը մեկնարկեցին նոր համատեղ կրթական ծրագիր՝ աշխուժացնելով աշխատանքային շուկան Արցախում: ՀԲԸՄ-ի առաջարկով կենսագործվեց անգլերենի ուսուցման վեց մակարդակ, ինչպես նաև հավաստագիր շնորհող չորս տարբեր դասընթացներ՝ Ռազմավարական բիզնես-կառավարում, Գործադիր առաջնորդություն, Հանրային քաղաքականության մշակում և կառավարում, Զբոսաշրջություն և հյուրասիրության կառավարում: Այս ծրագիրը բավական լավ ընդունելություն գտավ արցախցիների կողմից և պահանջված է առ այսօր[106]:

ՀԲԸՄ նախաձեռնությամբ ու աջակցությամբ 2014 թ. հոկտեմբերին Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատում տեղի ունեցավ Արցախի կամերային նվագախմբի հերթական համերգը, որը նվիրված էր մեծանուն կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանի ծննդյան 75-ամյակին[107]:

ՀԲԸՄ ամենավառ նախաձեռնություններից մեկը 2015 թ. Ստեփանակերտում Թումո կրեատիվ տեխնոլոգիաների կենտրոնի հիմնադրումն էր, որն իրականություն դարձավ ԱՀ կառավարության աջակցությամբ: Արդեն հինգ տարի է՝ Արցախի դպրոցականների համար այն այլընտրանքային կրթություն ստանալու և

---

[105] ՀԲԸՄ Հայաստանի լրատու, 2013, թիվ 26, էջ 21:
[106] «Ազատ Արցախ», 28 մայիսի 2020:
[107] Հայկական Սփյուռք, Տարեգիրք 2014, Երևան, 2015, էջ 110:

հետագայում մասնագիտական առաջընթաց արձանագրելու լավագույն հնարավորություն է ստեղծել: Դրան զուգահեռ Կենտրոնը մեծապես նպաստել է Արցախում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացմանը[108]:

Այդ տարիներին ՀԲԸՄ-ն տարբեր բարեգործական ծրագրեր է իրականացրել սոցիալական խոցելի խմբերի համար: Սահմանափակ կարողություններ ունեցող արցախահայ բազմաթիվ երեխաներ միության աջակցությամբ տարբեր կազմակերպությունների միջոցով ստացել են մեծ քանակությամբ տաք հագուստ, այդ թվում՝ աշնանային ու ձմեռային բաճկոններ: Արցախում վերաբնակված սիրիահայերի համար իրականացվել է «Հուսո դաշտեր» կոչվող ծրագիրը, որի շրջանակներում սերմացու, թունանյութեր, նաև՝ երեք միավոր գյուղատնտեսական տեխնիկա է տրամադրվել նրանց[109]:

2016 թ. մայիսին ՀԲԸՄ «Օգնենք Արցախին» դրամահավաք արշավով ՀԲԸՄ անձնակազմը այցելություններ ու օժանդակություն կազմակերպեց Ապրիլյան պատերազմի օրերին ծանր վիրավորված և զոհված տղաների ընտանիքներին: Նրանք այցելեցին նաև Ստեփանակերտի զինվորական հիվանդանոց, ինչպես նաև Մարտակերտի, Մարտունու ու Հադրութի շրջանների զոհված զինծառայողների ընտանիքներին՝ նրանց տրամադրելով 1000-ական ԱՄՆ դոլարի նյութական աջակցություն[110]: Նույն տարվա սեպտեմբերի 2-ին Արցախի Հանրապետության հռչակման 25-րդ տարեդարձին նվիրված ձեռնարկների մեջ տեղի ունեցավ կարևորագույն միջոցառում: ՀԲԸՄ բարերարներ լիբանանահայ Լևոն և Արթուր Նազարյանների առատաձեռն նվիրատվության շնորհիվ

---

108 «Ազատ Արցախ», 28 մայիսի 2020:

109 Տե՛ս նույն տեղում:

110 Հայկական Սփյուռք, Տարեգիրք 2016, Երևան, 2017, էջ 107:

տեղի ունեցավ Շուշիի ուսանողական հանրակացարանային համալիրի բացման հանդիսավոր արարողությունը[111]:

2018 թ. մարտի 15-ին Արցախում ՀԲԸՄ իրականացրած սոցիալ-տնտեսական լայնամասշտաբ ծրագրերի համար ՀԲԸՄ նախագահ Պերճ Սեդրակյանը Արցախի նախագահ Բակո Սահակյանի կողմից պարգևատրվեց ԱՀ բարձրագույն պարգևով՝ «Մեսրոպ Մաշտոց» շքանշանով: Բ. Սահակյանը նշեց, որ ԱՀ զարգացման ողջ ընթացքում ՀԲԸՄ-ն ամենատարբեր եղանակներով ի ցույց է դրել իր հուսալի աջակցությունը տարաբնույթ սոցիալական ծրագրեր իրականացնելիս՝ սկսած տուժածներին և զինծառայողներին ցուցաբերվող արտակարգ բուժօգնությունից, դասընթացների միջոցով կրթությունը զարգացնելուց, ստեղծարար տեխնոլոգիաներից ու մասնագիտացված ուսուցումից մինչև աջակցություն գյուղատնտեսական և մշակութային նախաձեռնություններին՝ կայուն սոցիալ-տնտեսական ապագա ձևավորելուն աջակցելու նպատակով[112]: Իր շնորհակալական խոսքում Պ. Սեդրակյանը հույս հայտնեց, որ «նույն ոգին, որը 30 տարի առաջ ծնունդ տվեց ազատագրական շարժմանը, կարող է վերածնվել՝ հանուն Արցախի ամրապնդումը շարունակելու և երկրի ինքնորոշումն ապահովելու»[113]: Նա շեշտեց, որ «թեև ծանրակշիռ օժանդակություն է ցուցաբերվել Արցախի սոցիալ-տնտեսական կյանքը զարգացնելու համար, սակայն դա բավարար չէ: Այսուհետ պետք է ավելին անել՝ կյանքի կոչելով նորանոր ծրագրեր հատկապես Արցախում զբոսաշրջության զարգացման համար»[114]:

2018 թ. ՀԲԸՄ-ն պաշտոնապես հիմնեց «ՀԲԸՄ-ն հանուն Արցախի» հիմնադրամը: Այն լավագույնս արտացոլում է Արցախում

---

[111] Տե՛ս նույն տեղում:

[112] «Խօսնակ» պաշտոնաթերթ ՀԲԸՄ և Լիբանանի շրջանակի, 61-րդ տարի, թիւ 3, մարտ 2018, էջ 3:

[113] Նույն տեղում, էջ 4:

[114] Նույն տեղում:

իրագործվող սոցիալ-տնտեսական ծրագրերի փոխկապակցվածությունը՝ հանուն ազգային վերածննդի՝ սկսած 2016 թ. ապրիլի քառօրյա պատերազմի ժամանակ շտապ բուժօգնության տրամադրումից մինչև նորարարների գալիք սերնդի կրթում ստեղծարար տեխնոլոգիաների ԹՈՒՄՈ կենտրոնի հետ համագործակցության միջոցով, արժանավոր ուսանողներին համալսարանական կրթաթոշակների տրամադրում, աջակցություն զինված ուժերի սպաների կրթությանը ծառայության պայմաններում: Մշակութային ասպարեզում հիմնադրամը շարունակում է աջակցել Արցախի կամերային նվագախմբին, որն իր համաշխարհային շրջագայություններով ու հասած հաջողություններով ուղի է հարթել Արցախի նոր երաժշտական դպրոցի համար[115]: 2019 թ. ապրիլին ՀԲԸՄ նախաձեռնությամբ Արցախում հանդիսավորությամբ նշվեց Արցախի պետական կամերային նվագախմբի 15-ամյակը:

Հիմնադրամը 2018 թ. սկսեց երկու նոր կարևոր ծրագրերի իրագործումը՝ ՀԲԸՄ «Հուսո դաշտերը» և ՀԲԸՄ «Ձիթենու այգիները»: Երկուսն էլ կենսագործվեցին՝ որպես արցախահայությանը և սիրիահայ ընտանիքներին գյուղատնտեսության մեջ ներգրավելու միջոց՝ երկրի սոցիալ-տնտեսական կյանքը աշխուժացնելու, բնակչությանը տեղում պահելու և տարածաշրջանային առևտրի հնարավորություններ ստեղծելու նպատակով[116]:

2019 թ.-ից հիմնադրամը ներդրեց երկու նոր ծրագիր՝ ՀԲԸՄ «Կին ձեռներեցներ» և ՀԲԸՄ «Սովորի՛ր և վաստակի՛ր» ծրագրերը, որոնք նպատակ ունեն խթանելու Արցախի սոցիալ-տնտեսական զարգացումը, նվազեցնելու աղքատությունը և բարելավելու բնակչության սոցիալական վիճակը[117]: ՀԲԸՄ-ի «Կին ձեռներեցներ» ծրագիրը Արցախում իրականացվել է «Ֆրութֆուլ Արմենիա» բարեգործական հիմնադրամի հետ համատեղ՝ կատարելագործելու

---

[115] Armenian General Benevolent Union, August 2019, էջ 76:

[116] Նույն տեղում:

[117] Նույն տեղում, էջ 76, 92:

համար Ստեփանակերտում և շրջաններում ապրող կանանց ձեռնարկատիրական հմտությունները և օգնելու, որպեսզի նրանք հաջողեն գործգործության, կարի արտադրության և այլ ոլորտներում[118]: ՀԲԸՄ «Սովորի՛ր և վաստակի՛ր» ծրագիրն ունի հետևյալ ուղղությունները՝ Ձեռներեցություն՝ համակողմանի աջակցություն, Անգլերենի ուսուցում, Զբոսաշրջության և հյուրընկալության մենեջմենթ, Հանրային կառավարում և քաղաքականություն, Ինստիտուցիոնալ զարգացում և աջակցություն՝ տվյալների վրա հիմնված քաղաքականության մշակում: 2020 թ. հունվարից ԱՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարության և ՀԲԸՄ կողմից ծրագրով նախատեսված դասընթացները, համավարակի պայմաններից ելնելով, ստիպված կազմակերպվել են օնլայն տարբերակով[119]:

Հայկական բարեգործական ընդհանուր միության իրականացրած բազմազան ծրագրերը նպաստեցին Արցախի զարգացմանը սոցիալական, կրթական, մշակութային և այլ բնագավառներում: Այդ ծրագրերը կարևոր գործոն են ազգի գոյատևման և հետագա հաջողությունների համար:

Արցախում սոցիալական ծրագրերի իրագործման մեջ մեծ ավանդ ունի «Թուֆենկյան» բարեգործական հիմնադրամը: Հիմնադրամը ստեղծվել է 1988 թ. Նյու-Յորքում՝ ամերիկահայ գործարար և բարերար Ջեյմս Թուֆենկյանի կողմից: Նպատակ ունենալով բարեգործական ծրագրեր իրականացնել հայրենիքում՝ 1999թ. Երևանում հիմնադրվեց «Թուֆենկյան» հիմնադրամի գրասենյակ, որի գործադիր տնօրենը Անդրանիկ Գասպարյանն էր, տարածաշրջանային տնօրենը՝ Մարի Մաթոսյանը:

Հիմնադրամի գլխավոր նպատակն է շենացնել և հզորացնել Հայրենիքը, հիմնական խնդիրներն են՝ աջակցել խոցելի և մեկու-

---

[118] Նույն տեղում, էջ 92:

[119] «Ազատ Արցախ», 28 մայիսի 2020:

սացված ընտանիքներին, նպաստել քաղաքացիական հասարակության վերականգնմանը և մշակութային ու հոգևոր վերածննդին, իրականացնել բնապահպանական ծրագրեր, օժանդակել Արցախի Հանրապետությունում սոցիալական ծրագրերի կենսագործմանը և սահմանամերձ շրջանների զարգացմանը: Հիմնադրամը ՀՀ-ում իրականացրել է 50-ից ավելի ծրագիր՝ աղքատության դեմ պայքարի, կրթության զարգացման, բնապահպանության և ազգային, քաղաքացիական, մշակութային արժեքներ արմատավորելու ուղղությամբ: Նրա ուշադրության կենտրոնում են նաև պատմա-ճարտարապետական հուշարձանների պահպանումը և վերականգնումը[120]:

Արցախին օգնելու նպատակով 2003 թ. բացվել է «Թուֆենկյան» հիմնադրամի Ստեփանակերտի գրասենյակը, որի միջոցով իրականացվել են վերաբնակեցման, առողջապահական, կրթամշակութային և մեծածավալ սոցիալական, բարեգործական ծրագրեր:

Հիմնադրամի տնօրեն Ջեյմս Թուֆենկյանի կարծիքով՝ «վերաբնակեցման խնդիրը ոչ միայն ԱՀ իշխանությունների, այլև սփյուռքի բարեգործական կազմակերպությունների, Արցախի ճակատագրով մտահոգ համայն հայության մտահոգություններից մեկը պետք է դառնա: Մեր կառույցը նպաստում է երկրում կրթամշակութային մի շարք ծրագրերի իրականացմանը, աջակցում տաղանդավոր երեխաների զարգացմանը՝ ցուցաբերելով բարոյական և նյութական օժանդակություն»[121]:

Այդ ուղղությամբ կատարած առաջին խոշոր քայլերից մեկը Հադրութի շրջանի նորակառույց Առաջամուղ գյուղի հովանավորչական ծրագիրն էր, որը համահունչ էր ԱՀ իշխանությունների վարած քաղաքականությանը: Առաջամուղը կառուցվել էր ԹԲՀ-ի

---

[120] Հայկական Սփյուռք, Տարեգիրք-2009, Երևան, 2010, էջ 134:

[121] «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 5 սեպտեմբերի 2007:

հանգանակած միջոցներով: Գյուղում կառուցված տասնինը տուն բնակեցված էր: Բնակիչների մի մասը փախստական էին Ադրբեջանից, մի մասն այնտեղ էր տեղափոխվել Հայաստանից, մյուս մասն էլ՝ Արցախի տարբեր բնակավայրերից, որոնց տները 1991-1994 թթ. պատերազմի տարիներին ավերվել էին[122]: Գյուղն ապահովված էր էլեկտրականությամբ, կոյուղու և խմելու ջրի համակարգերով: Կառուցվել էր գյուղապետարանի շենք և բուժկետ: Վերաբնակիչներին աշխատատեղերով ապահովելու համար ստեղծվել էր 5 հեկտար նռան այգի: 2017 թ.-ին հիմնադրամը շահագործման էր հանձնել վեց նոր բնակելի տուն:

Առաջամուղ գյուղը 2008 թ. կազմավորվել էր որպես առանձին համայնք՝ իր մեջ ներառելով Առաջամուղ և Արաքսավան բնակավայրերը: Արաքսավան գյուղը հիմնադրվել էր 2014թ.: Առաջամուղ համայնքի կազմում ընդգրկվելը նոր հեռանկարներ էր բացել նրա զարգացման համար: Հովիտը ձգվում է մոտ 110 կմ՝ ներառելով Քաշաթաղի ու Հադրութի շրջանների հարավային մասերը: Արաքսավան բնակավայրի ռազմավարական նշանակության ծրագրերն Արցախի կառավարության կողմից սկսեցին իրականություն դառնալ 2012 թ.-ից: Բնակավայր եկած մարդկանց բնակեցնելու նպատակով կառուցվել է 35 ժամանակավոր կացարան: Կառուցվել էին 30 կմ երկարություն, 10 կվատտ բարձր լարման հզորության էլեկտրական գծեր, վերանորոգվել էին 40 կմ-ի հասնող ջրանցքներ, մելիորատիվ աշխատանքներ իրականացնելու նպատակով մաքրվել էին 1000 հեկտարից ավելի վարելահողեր, ինչը հնարավորություն է տալիս մենատնտեսներին զբաղվելու ինչպես բանջարանոցային, այնպես էլ հացահատիկային մշակաբույսերի աճեցմամբ[123]: Մենատնտեսներին հնարավորություն էր տրվել նաև զբաղվելու այգեգործությամբ ու անասնապահությամբ:

---

[122] Նույն տեղում:

[123] «Ազատ Արցախ», 11 հունիսի 2016:

Արցախի Հանրապետության իշխանությունների, «Թուֆենկյան» հիմնադրամի այս ծրագիրն ուներ ռազմավարական կարևոր նշանակություն, որի նպատակն էր ամրապնդել հանրապետության հարավային սահմանը: Սակայն նման ծրագրերը անհնար էր իրականացնել միայն Արցախի պետական բյուջեի միջոցներով: Անհրաժեշտ էր ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ Սփյուռքի մեր հայրենակիցների աջակցությունը:

Վերաբնակեցման ծրագրի շրջանակներում 2008 թվականից ԹԲՀ-ի կողմից իրագործվել է Քաշաթաղի շրջանի վերաբնակիչների տների վերանորոգման համար շինանյութի տրամադրման և դրանց նպատակային օգտագործման վերահսկման ծրագիրը: 2008-2013 թթ. Քաշաթաղի շրջանի 7 համայնքների 47 ընտանիքներին տրամադրվել են համապատասխան շինանյութեր[124]: Հերիկ և Հակ համայնքներում հիմնադրամի կողմից տուն էր տրամադրվել երկու վերաբնակիչ ընտանիքների[125]: Երկու տուն տրվել է «Արցախի վիրավոր զինծառայողներին բնակարանային հարմարավետ պայմաններով ապահովելու» ծրագրի շրջանակներում: Հիմնանորոգվել է Աղավնատուն համայնքում ապրող բազմազավակ ընտանիքին հատկացված տունը[126]: Առանց զարգացած ենթակառուցվածքների ու վերաբնակիչների համար տարրական կենսապայմանների ստեղծման հնարավոր չէր պահել գյուղը: Բնակիչների կենսապայմանները բավարարելու համար ԹԲՀ-ն, համագործակցելով ԱՀ կառավարության հետ, մի շարք գյուղերում կառուցել է խմելու ջրագծեր՝ գյուղացիներին ապահովելով մշտական ջրով: Հիմնադրամի ֆինանսավորմամբ վերանորոգվել էր Քաշաթաղի շրջանի Քարեգահ և Այգեհովիտ գյուղերի գյուղամիջյան ճանապարհը[127]:

---

[124] Վարդանյան Ա., «Թուֆենկյան» բարեգործական հիմնադրամի (ԹԲՀ) գործունեությունը Արցախում, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, Բ (գիտական հոդվածների ժողովածու), Երևան, 2013, էջ 78:

[125] «Ազատ Արցախ», 4 հոկտեմբերի 2018:

[126] «Մերան» ԼՂՀ Քաշաթաղի շրջանային թերթ, թիվ 20 (141), հոկտեմբեր, 2015:

[127] ԱՀ պետական արխիվ, ֆ. 180, ց. 1, կ-11, պ. մ. 50, թ. 12, 51:

Սիրիայում ընթացող պատերազմի հետևանքով մեծ կորուստներ կրեցին մեր հայրենակիցները, որոնցից շատերը ստիպված էին հեռանալ երկրից՝ ապաստան փնտրելով Մայր Հայրենիքում: Սիրիահայերի մի քանի ընտանիք հաստատվեց ԱՀ Կովսական քաղաքում: 2011 թ. Հիմնադրամը ԱՀ կառավարության հետ համատեղ վերանորոգեց Կովսականի բազմաբնակարան մի շենք և 7 բնակարան տրամադրեցին Սիրիայից տեղափոխված մեր հայրենակիցներին[128]: ԹԲՀ-ը սիրիահայերի համար շահագործման է հանձնել մի քանի տներ Գետամեջ և Վան գյուղերում, վերանորոգվել են Իշխանաձոր գյուղում հաստատված սիրիահայ և լիբանանահայ ընտանիքների բնակարանները: Բերձորում, Իշխանաձորում և Կովսականում հաստատված հողագործ սիրիահայերին ԱՀ կառավարության կողմից տրամադրվում էին վարկեր:

Հիմնադրամը աշխատանքներ է տարել վերաբնակեցված գյուղերի ամրապնդման և զարգացման ուղղությամբ: Նրա կողմից իրականացվում էր խաղողի այգիների վերականգնման ծրագիր Հարավային Քաշաթաղի Այգեհովիտ և Ուռեկան գյուղերում: Այգիները վերականգնելուց և ծախսերը փակելուց հետո, ըստ կազմած պայմանագրի, դրանք վերադարձվելու էին համայնքի անդամներին: Այգիներում աշխատող գյուղացիները ստանում էին աշխատավարձ: Հիմնադրամի միջոցներով Քաշաթաղի Այգեհովիտ գյուղում կառուցվել էր ալրաղաց, որը սպասարկում էր շրջակա մոտ 20 գյուղերի բնակիչների[129]: Հարավային Քաշաթաղում շարունակվում էին 2005 ու 2007 թթ. սկիզբ առած «Ալրաղաց» և «Տեխնիկական բազա» սոցիալ-տնտեսական ծրագրերը, որոնք խթան հանդիսացան հատկապես հացահատիկային արտադրության բնագավառի զարգացման համար[130]:

---

[128] Նյութը տրամադրել է Ստեփանակերտի «Թուֆենկյան» հիմնադրամի գրասենյակը:

[129] «Ազատ Արցախ», 5 հուլիսի 2005:

[130] Հայկական Սփյուռք. Տարեգիրք-2009, էջ 135:

Հադրութի շրջանի Առաջամուղ գյուղի վերաբնակիչներին աշխատատեղերով ապահովելու նպատակով ԹԲՀ 2005 թ. ստեղծվել էր 5 հա նռան այգի: 2018 թ. այգիներից ստացվել էր 18 տոննա նուռ[131]: Երիցվանք գյուղի վերաբնակիչներին աշխատատեղերով ապահովելու նպատակով 2013 թ. հիմնվել էր 7 հեկտար նռան այգի, կառուցվել էր երկու ջերմոցային տնտեսություն՝ յուրաքանչյուրը 240 մ^2 մակերեսով[132]: Նույն շրջանի Վան գյուղի բնակչության հիմնական զբաղմունքը հողագործություն էր: Մեծ մասը զբաղվում էր ձմերուկի մշակությամբ: ԹԲՀ-ի միջոցներով համայնքում 2018 թ. գարնանը հիմնվել էր 5 հա արքայանարնջի այգի, տնկվել շուրջ 2500 տնկի[133]: Շրջանի Մոշաթաղ և հարևան Ծիծեռնավանք գյուղական համայնքի Տանձուտ գյուղերում չորս բազմազավակ ընտանիքի հատկացվել էր ընդհանուր 18 մեղվաընտանիք[134]: Հիմնադրամը վերաբնակիչներին տրամադրում էր նաև ցածր տոկոսադրույքով վարկեր: Վարկերի համար տրամադրված գումարները ետ ստանալով՝ օգտագործվել են հետագա սոցիալական ծրագրերի ընդլայնման համար:

Քաշաթաղի շրջանում հիմնադրամն իրականացնում է առողջապահական ծրագրեր: 2005 թ. Իշխանաձոր գյուղում կառուցվել էր բժշկական համալիր, որը կարող էր սպասարկել 2000 բնակչի[135]: Բուժհամալիրը կահավորված էր, ուներ իր բաժանմունքները՝ ատամնաբուժական, մանկաբարձական, բուժքույրական անձնակազմով, «շտապ օգնության» մեքենայով: Հիմնադրամի նախաձեռ-

---

131 Նյութը տրամադրել է Ստեփանակերտի «Թուֆենկյան» հիմնադրամի գրասենյակը:

132 Նյութը տրամադրել է Ստեփանակերտի «Թուֆենկյան» հիմնադրամի գրասենյակը:

133 «Ազատ Արցախ», 6 հոկտեմբերի 2018:

134 «Ազատ Արցախ», 8 օգոստոսի 2018:

135 ԱՀ պետական արխիվ, ֆ. 180, գ. 1, կ-11, պ. մ. 50, թ. 37, 71:

նությամբ համալիրի աշխատակիցները դասընթացների էին մասնակցել Ստեփանակերտի ծննդատանը և ախտորոշիչ կենտրոնում[136]: 2009 թ. Քաշաթաղի հյուսիսային և հարավային բուժկետերին, հիվանդանոցներին, Առողջապահության նախարարությանը ԹԲՀ-ի կողմից տրամադրվել են «Վարդանանց ասպետներ» և IMEC կազմակերպություններից ստացված բժշկական պարագաներ, սարքավորումներ, կահույք: Նույն թվականին հիմնադրամի հովանավորությամբ բուժկետ էր բացվել Հյուսիսային Քաշաթաղի Մշենի գյուղում[137]: Հիմնադրամի կողմից կառուցվել էին Աղավնատուն համայնքի, հիմնանորոգվել և կահավորվել էին Մոշաթաղի բուժկետերը:

2015 թ. հիմնադրամի մասնակցությամբ Քաշաթաղի շրջանում իրականացված բարեգործություններից էր Խաչգետիկ գյուղում կառուցված բուժկետը: Այս կարևոր կառույցն իրականություն դարձավ «Թուֆենկյան» հիմնադրամի, Երևանում գործող «One Armenia» կազմակերպության և Լոնդոնում գործող «Հայկական կենտրոն տրեստ» կառույցի միջոցով[138]:

«Թուֆենկյան» հիմնադրամի ԱՀ գրասենյակը մշակել էր մի ծրագիր, համաձայն որի՝ շինանյութեր էին տրամադրվել գյուղացիներին՝ իրենց տները վերանորոգելու համար: Հիմնադրամը վերանորոգել էր ավելի քան 30 տուն, նախակրթական դպրոց Հակ, Խոջանց և Գետափ գյուղերում: Այդ գյուղերում բնակիչների կենսապայմանները բավարարելու համար հիմնադրամը, համագործակցելով ԱՀ կառավարության հետ, կառուցել էր խմելու ջրագծեր՝ գյուղացիներին ապահովելով մշտական ջրով[139]:

---

[136] Մինասյան Է., Վարդանյան Ա., Հայրենիք-Սփյուռք առնչությունները ՀՀ անկախության տարիներին (1991-2009 թթ.), հոդվածների ժողովածու, էջ 95:

[137] Հայկական սփյուռք տարեգիրք 2009, Երևան, 2010, էջ 135:

[138] Մերան, թիվ 20 (141), հոկտեմբեր 2015:

[139] Հայկական Սփյուռք. Տարեգիրք-2010, Երևան, 2011, էջ 124-125:

ԱՀ կառավարության հետ համատեղ խմելու ջրագիծ կառուցվեց Քարոտան, Վարդաբաց և Կումայրի գյուղերում: Գյուղերի տնտեսական վերելքը խթանելու նպատակով «Թուֆենկյան» հիմնադրամը տրամադրել էր ցածր տոկոսադրույքով վարկեր: Վարկերի համար տրամադրված գումարը ետ ստանալով՝ այն օգտագործվում էր հետագա ծրագրերի ընդլայնման համար:

ԱՀ առողջապահության նախարարության հետ համագործակցելով՝ ԹԲՀ կազմակերպել էր շարժական կլինիկայի ուղևորություններ դեպի Քաշաթաղի հարավային բոլոր գյուղերը, անցկացրել հետազոտություններ: Անվճար տրվել էր դեղորայք: Ծրագիրը շարունակվել էր ավելի ընդլայնված՝ ընդգրկելով ամբողջ Քաշաթաղը և Քարվաճառը: Առողջապահության նախարարությունը տրամադրել է դիագնոստիկայի բեռնատար[140]: Կազմակերպվել էին նաև «Birthlink» մանկաբարձների որակավորման դասընթացներ Քաշաթաղի շրջանի բոլոր համայնքների բուժքույրերի համար:

ԹԲՀ կազմակերպել էր շարժական կլինիկայի ուղևորություններ նաև Շահումյանի շրջանում: 2010 թ. սեպտեմբերին Քարվաճառ էին այցելել տարբեր բժշկական մասնագետներից կազմված խմբեր, ովքեր իրենց հետ բերել էին համապատասխան բժշկական սարքավորումներ: Տեղի բնակչությունն ուներ նմանատիպ միջոցառումների կարիք և գոհ էր, որ կարողանում էր հետազոտվել շրջանում և ստիպված չէր լինում բժշկական հետազոտման և ախտորոշում ստանալու համար մեկնել Ստեփանակերտ, Մարտակերտ կամ ՀՀ՝ Վարդենիս քաղաք: Այս ծրագրերը որոշակիորեն թեթևացնում էին բնակիչների այդ հոգսերը[141]:

---

[140] Հայկական Սփյուռք. Տարեգիրք-2010, էջ 124:

[141] «Նոր Շահումյան», ԼՂՀ Շահումյանի շրջվարչակազմի պաշտոնաթերթ, թիվ 17 (88), 1-15 սեպտեմբեր, 2010:

«Թուֆենկյան» հիմնադրամի Արցախի գրասենյակի միջոցով իրագործվում են նաև կրթամշակութային ծրագրեր: 2007 թ. ամռանը Առաջամուղ գյուղում շահագործման հանձնվեց 80 տեղանոց դպրոցը, որի շինարարության և կահավորման ծախսերը հոգացել էին «Թուֆենկյան» հիմնադրամը և «Հայ կրթական հիմնադրամը»[142]: 2017 թ. հիմնադրամի կողմից ընդլայնվել էր գյուղի դպրոցի շենքը՝ ավելացել էր չորս նոր դասասենյակ: Հիմնադրամի ֆինանսավորմամբ նորոգվել էր Քաշաթաղի շրջանի Աղավնատուն համայնքի դպրոցի շենքը, վերանորոգվել Հոչանց և Գետափ գյուղերի դպրոցները: Հակ գյուղի դպրոցը վերանորոգվել էր ԱՄՆ-ում գործող «Հայրենասեր» բարեգործական հասարակական կազմակերպության հետ համատեղ:

«Թուֆենկյան» հիմնադրամի կողմից Քաշաթաղի շրջանի բոլոր գյուղերում երկու փուլով անցկացվել էին համակարգչային դասընթացներ ուսուցիչների, աշակերտների և գյուղի երիտասարդության համար: Շահումյանի շրջանի համայնքներում համակարգչային գրագիտությունը զարգացնելու նպատակով «Թուֆենկյան» հիմնադրամը, նվիրելով վեց նոթբուք և ինը համակարգչային բլոկ, երկու տարի շարունակ ֆինանսավորել էր դասընթացները[143]:

Հիմնադրամը Շուշիի պատմաերկրագիտական թանգարանի հովանավորն էր: Նրա միջոցներով վերանորոգվել էր թանգարանը, ձեռք բերվել նոր ցուցանմուշներ ու կահույք: 2005 թ. մայիսի 9-ին այստեղ բացվեց նոր բաժին՝ նվիրված Շուշիի ազատագրման ռազմագործողությանը: Նոր բաժինը հովանավորվել էր ի հիշատակ ազգային-հասարակական գործիչ, բոստոնահայ Վահե Մարուխյանի վերջինիս ընտանիքի կողմից: 2004 թվականից սկսած՝

---

[142] «Լուսարար», 16 օգոստոսի, 2007:

[143] «Նոր Շահումյան», թիվ 6 (149), 16-31 մարտի, 2013:

ԹԲՀ-ի կողմից իրականացվում էր «Տաղանդավոր երիտասարդներին ֆինանսական աջակցություն» ծրագիրը: Այն նախատեսված էր օժանդակելու ԱՀ շնորհաշատ երեխաներին ու երիտասարդներին՝ հետագայում նրանց տաղանդը բացահայտելու և զարգացնելու նպատակով: Տաղանդավոր երիտասարդների ընտրության հարցում հիմնադրամը համագործակցում էր ԱՀ մշակույթի, կրթության և գիտության նախարարության, ինչպես նաև Սպորտի կոմիտեի հետ: Ծրագրում ընդգրկված էին երեխաներ Ստեփանակերտից, Մարտունու, Հադրութի ու Մարտակերտի շրջաններից: ԹԲՀ օժանդակությամբ իրագործվել էր Շուշիի երեք երգչախմբերի լազերային սկավառակի ձայնագրությունը, որը մեծ ընդունելության է արժանացել արտասահմանում[144]: Հիմնադրամը մեծ ուշադրություն էր դարձնում Քաշաթաղի հայկական հուշարձանների պահպանմանը: Նրա ֆինանսական աջակցությամբ 2009 թ. վերանորոգվել էր XVII դարի Սուրբ Մինաս եկեղեցին Հակ գյուղում, 2010 թ.՝ XVII դարի Միրիկ եկեղեցու տանիքը[145]:

Բարձր գնահատելով «Թուֆենկյան» հիմնադրամի սոցիալական ծրագրերի կենսագործման ուղղությամբ բազմաբնույթ գործունեությունը Քաշաթաղի շրջանում, ինչպես նաև զանազան կազմակերպությունների ու հիմնադրամների ակտիվ մասնակցությունն ու աջակցությունը՝ ԱՀ նախագահ Բակո Սահակյանը նշել է. «Հավատացած եմ, որ համատեղ ուժերով մենք կշենացնենք Արցախի այս գողտրիկ հատվածը, որն ունի համահայկական նշանակություն: Առանց Քաշաթաղի շրջանի հնարավոր չէ Լեռնային Ղարաբաղի՝ որպես անկախ պետության լիարժեք զարգացումն ու անվտանգ գոյատևումը: Սա պետք է հիշենք բոլորս և սրանով առաջնորդվենք մեր բոլոր ձեռնարկներում»[146]:

---

[144] «Ազատ Արցախ», 5 հուլիսի 2005:
[145] Հայկական Սփյուռք. Տարեգիրք-2010, էջ 125:
[146] «Ազատ Արցախ», 29 մարտի 2008:

Քաշաթաղի շրջանի անապահով ընտանիքներին օգնում էին նաև Արցախում, ՀՀ-ում և Սփյուռքում գործող բարեգործական հիմնադրամները՝ «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքներին», Լիբանանում գործող «Արցախ ֆոնդը», «ԱՐԻ» ծրագիրը, «Թուֆենկյանը», «Քաշաթաղը», «Դիակոնիան», «ԱԳԱՊԵ»-ն և այլն: 2018 թ. «Հայրենասերի» կողմից Մուշ գյուղում կառուցվեց դպրոցական նոր շենք, որը ծառայում է նաև հարևան Ալաշկերտ համայնքի դպրոցականներին: Դպրոցը կոչվում է 2016 թ. ապրիլի 2-ին հերոսաբար մարտիրոսված սպա Արմենակ Ուրֆանյանի անունով: 2017 թ. «Թուֆենկյան» հիմնադրամի ֆինանսավորմամբ «Հայրենասեր» կազմակերպությունը Հակ գյուղում հիմնանորոգեց դպրոցի շենքը[147]:

Քաշաթաղի շրջանի հարավային թևում գտնվող Իշխանաձոր գյուղում 2016-2017 թթ. Արցախի Հանրապետության կառավարության օժանդակությամբ և «Քաշաթաղ» բարեգործական հիմնադրամի ֆինանսավորմամբ կառուցվել էր 1 ութբնակարանոց շենք, 22 բնակելի առանձնատուն: Գյուղի կայացման համար իրենց ներդրումն էին ունեցել նաև բարեգործական կազմակերպությունները: «Թուֆենկյան» բարեգործական հիմնադրամը, «Հայրենասեր» հասարակական կազմակերպությունը նույնպես նպաստել են բնակարանաշինությանը, դպրոցաշինությանը, այլ ծրագրերի իրականացմանը[148]:

1992 թ. Լիբանանում ստեղծվեց «Արցախի օժանդակություն» մարմինը, որի նպատակն էր օգնել մարտնչող Արցախին: 2006 թ. հիմնվեց «Արցախ ֆոնդը, որը գործում է ժողովրդի հատկացումներով և միտված է արցախահայության սոցիալական կենսական խնդիրների հնարավորինս լուծմանը: «Նոր Կեանք, Նոր Յոյս»

---

[147] «Մերան», թիվ 1-2, 2018:

[148] «Մերան», թիվ 3-4, 2018:

ծրագրով «Արցախ ֆոնդը» հանրապետության շրջաններում իրականացնում էր 3 և ավելի երեխա ունեցող ընտանիքներին 150.000 դրամի արժեքով անասունների կամ մեղվաընտանիքների հատկացում: Ծրագիրը գործում էր նաև Քաշաթաղի շրջանում: 2018 թ. օգոստոսի 26-ից հերթական անգամ շրջանում էր «Արցախ ֆոնդի» Արցախյան տարածքների համակարգող Մարալ Մահսերեճյանը: «Արցախ ֆոնդն» օժանդակեց 2016թ. հունիսի 1-ից մինչև 2017թ. հունիսի 3-ին ծնված 3-րդ, նաև ավելի երեխա ունեցող ընտանիքներին: Քաշաթաղի, Շահումյանի, Մարտակերտի, Մարտունու և Ասկերանի շրջաններից օժանդակություն էր ստացել ընդհանուր 105 ընտանիք, որից 73-ը՝ Քաշաթաղում: 2017 թ. Քաշաթաղի շրջանում 124 ընտանիք էր ստացել օժանդակություն: Շրջանում ծրագրում 2018 թ. ընդգրկված են եղել հյուսիսային 3 մասերում՝ 15 գյուղական համայնք ու Բերձորը, հարավային մասում՝ Կովսականի, Միջնավանի քաղաքային և 12 գյուղական համայնքներ[149]:

2018 թ. սեպտեմբերի 24-ին «Թուֆենկյանը» հերթական բարեգործությունն իրականացրեց Բերձոր քաղաքում՝ բնակելի տուն նվիրելով սիրիահայ Ցեզար Թաթլեյան և մարտակերտցի Լուսինե Առուշանյան ընտանիքին: Միջոցառմանը ներկա էին «Թուֆենկյան» հիմնադրամի գործադիր տնօրեն Ռաֆֆի Դուդակյանը, Արցախի ծրագրերի կառավարիչ Էդվին Գրիգորյանը, հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամներ, համակիրներ, օժանդակողներ, Քաշաթաղի շրջվարչակազմի ղեկավարի օգնական Ստեփան Սարգսյանը, աշխատակազմի ղեկավար Դավիթ Դավթյանը, քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի վարիչ Հովհաննես Հակոբյանը: Ռաֆֆի Դուդակյանը տեղեկացրեց, որ 2018 թ. ընթացքում Արցախում վիրավոր զինծառայողներին բնակարանային հարմարավետ պայմաններով ապահովելու ծրագրի շրջանակում շահագործման է հանձնվել 5 տուն, իսկ «Արցախ Ֆոնդ»

[149] «Մերան», թիվ 17, 2018:

կազմակերպության ԱՄՆ մասնաճյուղի համաֆինանսավորմամբ՝ 6 տուն էլ Առաջամուղում: Եվս 2 տուն հանձնվել էր զոհված զինվորականի ընտանիքի Քաշաթաղի շրջանի Գետամեջ ու Վան գյուղերում[150]:

2017 թ. Քաշաթաղի շրջանի Իշխանաձոր գյուղի նորակառույց Ազատամարտիկների թաղամասում կառուցվել է 11 բնակելի տուն ԱՀ կառավարության և «Քաշաթաղ» բարեգործական հիմնադրամի միջոցներով: 2 բնակելի տուն կառուցվել է «Թուֆենկյան» հիմնադրամի կողմից: Բազմազավակ 2 ընտանիքի համար բնակելի տուն է կառուցվել ԱՀ կառավարության կողմից: «Հայրենասեր» ՀԿ-ի հովանավորությամբ նոր թաղամասում կառուցվեց մարզադաշտ, որը կրում էր 2016 թ. ապրիլի սկզբին հերոսաբար նահատակված Անդրանիկ Զոհրաբյանի անունը: 2017 թ. աշնանից սկսած՝ համայնքի տարածքում կառուցվեց ևս 60 առանձնատուն ԱՀ կառավարության և «Քաշաթաղ» ԲՀ-ի միջոցներով[151]:

2017 թ. կեսերից Քաշաթաղի հարավային արաքսամերձ Միջնավան քաղաքում կառուցվել էր ութսենյականոց բնակելի միհարկանի շենք, հիմնանորոգվել քաղաքապետարանի շենքը: Բազմաբնակարան շենքի կառուցումն ու քաղաքապետարանի հիմնանորոգումը իրականացվել են «Քաշաթաղ» բարեգործական հիմնադրամի ֆինանսավորմամբ և ԱՀ կառավարության օժանդակությամբ[152]:

Քաշաթաղի շրջկենտրոն Բերձորում և մոտակայքում մոտ 20 պուրակ ու այգի էր հիմնվել ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի նախկին դեկան, Արցախյան շարժման առաջամարտիկ, «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքներին» հիմնադրամի նախագահ Գուրգեն Մելիքյանի կողմից և օժանդակությամբ:

---

150 «Մերան», թիվ 18, 2018:
151 «Մերան», թիվ 6, 2018:
152 «Մերան», թիվ 6, 2018:

Շրջանի կազմավորման առաջին օրվանից բարերարն սկսեց տարբեր բնագավառներում օժանդակել է քաշաթաղցիներին՝ բազմազավակ ընտանիքներին տրամադրելով խոշոր եղջերավոր անասուններ, և դրան զուգահեռ իրականացնում էր ծառատունկ[153]:

ԱՄՆ միացյալ մեթոդիստական եկեղեցու Արևմտյան և Հյուսիսային Կարոլինայի թեմերի համատեղ «ԱԳԱՊԵ» կրոնաբարեգործական կազմակերպությունը 1993 թվականից Հայ առաքելական եկեղեցու հրավերով գործում է Հայաստանում և Արցախում՝ համագործակցելով Արցախի թեմի հետ: «ԱԳԱՊԵ» կազմակերպությունն իր գործունեությունը Քաշաթաղում սկսել էր շրջանի կազմավորման սկզբից: 2018 թ. հոկտեմբերի 13-ին Բերձորում՝ «ԱԳԱՊԵ»-ի տարածքում, կայացավ տոնական միջոցառում՝ նվիրված կազմակերպության 25-ամյա տարեդարձին: Բերձորի Սուրբ Համբարձման եկեղեցու կառուցման աշխատանքներին ֆինանսական աջակցություն է ցուցաբերել նաև «ԱԳԱՊԵ»-ն: 1998 թ. «ԱԳԱՊԵ»-ի ֆինանսավորմամբ և հովանավորությամբ կառուցվեց քրիստոնեական դաստիարակության մանկական կենտրոնը, որի նպատակն էր երեխաներին ընդգրկել արվեստի, սպորտի և այլ խմբակներում: 2015 թվականից կազմակերպությունը Սուրբծննդյան և Ամանորի տոների առթիվ շրջանի բոլոր երեխաներին հատկացնում էր նվերներ, կազմակերպում տոնական միջոցառումներ Բերձորում և այլ համայնքներում[154]:

2018 թ. «Թուֆենկյան» հիմնադրամի կողմից նորոգվել են XVII դարում կառուցված մի շարք եկեղեցիներ՝ Հակի Սուրբ Մինասը, Միրիկի Սուրբ Աստվածածինը, Հոչանցի Սուրբ Ստեփանոսը: Շրջանի կայացման ու զարգացման գործում, բացի պետական հատկացումներից, կարևորվում էին Սփյուռքում և ներսում գործող բարեգործական կառույցները, որոնցից էին «Թուֆենկյան»,

---

[153] «Մերան», թիվ 5, 2018:
[154] «Մերան», թիվ 19, 2018:

«Հայրենասերը», «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքներին» հիմնադրամները, որոնք, բացի սոցիալական ծրագրեր իրականացնելուց, յուրաքանչյուր տարի 2-3 անգամ ծառատունկ էին կազմակերպում Բերձորում և հարակից տարածքներում, նրանց թվում էին նաև «Թեքեյանը», «Քաշաթաղը», «Արցախ-ֆոնդը», «Հայ կրթականը», «Հայրենիքը», ՀԲԸՄ-ն և այլն: Լիբանանում գործող «ԱՐԻ» հիմնադրամի ֆինանսավորմամբ ու ԱՀ կառավարության օժանդակությամբ Աղավնո գյուղում կառուցվել էր 50 բնակելի առանձնատուն, ծրագիրը շարունակական էր[155]:

2018 թ. նոյեմբերի 4-ին Քաշաթաղի շրջվարչակազմի կողմից իրականացվեց ծառատունկ արդեն Աղավնո գյուղի նորաշեն Արիավան թաղամասում, որի շինարարությունը մեկնարկել էր 2014 թ. մի քանի տասնյակ սփյուռքահայերի «Արցախ ռութս ինվեսթմենթ» (ԱՌԻ-ARI) ընկերության ներդրումների ու Արցախի Հանրապետության կառավարության համագործակցության շնորհիվ: Մոտ 50 բնակելի նոր կառուցված տների բակերում տնկվեց 15-ական մրգատու ծառ՝ տանձենի, խնձորենի, կեռասենի, ծիրանենի և այլն[156]:

2018 թ. հուլիսից «Հայրենասեր» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից հիմնանորոգվել ու ընդլայնվել էր Մոշաթաղի դպրոցի շենքը: «Հայրենասերը» ստանձնել էր նաև ԱՀ ԱԻՊԾ Քաշաթաղի շրջանային արտակարգ իրավիճակների բաժնի շենքի կառուցումը: «Թուֆենկյան» բարեգործական հիմնադրամի կողմից վերանորոգվել էր Մոշաթաղի համայնքապետարանի շենքը: Հիմնադրամը հիմնանորոգել է Հոչանց գյուղի XVII դարի Սուրբ Ստեփանոս եկեղեցին: 2018 թ. բնակարանային պայմանները բարելավելու ծրագրով Քաշաթաղի շրջանի 70 ընտանիքի հատկացվել էր շինանյութ[157]:

---

[155] «Մերան», թիվ 23-24, 2018:
[156] «Մերան», թիվ 21, 2018:
[157] «Մերան», թիվ 23-24, 2018:

2019 թ. տարեվերջին Իշխանաձոր համայնքի բազմազավակ թվով 11 ընտանիք Ամանորի հիանալի նվերներ ստացավ՝ հեռուստացույցներ, սառնարաններ և լվացքի մեքենաներ, որոնք ձեռք էին բերվել ՀՀ և Սփյուռքի մեր հայրենակից բարերարների միջոցներով[158]:

Արցախի Հանրապետության պետական նախարար Գրիգորի Մարտիրոսյանը 2019 թ. մարտի 18-ին Լիբանանի Հանրապետություն կատարած աշխատանքային այցի շրջանակում Արցախի կառավարության անունից երկու համաձայնագիր էր ստորագրել՝ «Արցախ ռութս ինվեսթմենթ-ԱՐԻ» («Artsakh Roots Investment–ARI»)» ներդրումային հիմնադրամի հետ Քաշաթաղի շրջանի Աղավնո համայնքում («Արիավան» թաղամաս) տասը և Շահումյանի շրջկենտրոն Քարվաճառ քաղաքում («Միդնեյ» թաղամաս) տասնհինգ տներ կառուցելու մասին[159]:

2018 թ. «Թուֆենկյան» բարեգործական հիմնադրամն ստանձնել էր Քաշաթաղի Հոչանց գյուղի Սուրբ Ստեփանոս եկեղեցու հիմնանորոգումն ու տարածքի բարեկարգումը: Ընթացքում հողի տակից գտնվել էին 10-ից ավելի տապանաքարեր, խաչքարի բեկորներ: Հիմնանորոգման ընթացքում եկեղեցին ստացավ իր նախկին տեսքը: 2019 թ. հունիսի 23-ին Հայ առաքելական եկեղեցու (ՀԱԵ) Արցախի թեմի առաջնորդ Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանի ձեռամբ կատարվեց Հոչանցի Սուրբ Ստեփանոս եկեղեցու վերաօծման կարգ[160]:

2018 թ. Հայ օգնության ֆոնդը (ՀՕՖ), համագործակցելով ՀՀ և ԱՀ առողջապահության նախարարությունների հետ, Արցախի գյուղական համայնքների բուժքույրերի համար անցկացրել է 12-

---

[158] «Մերան», թիվ 3-4, 2019:
[159] «Մերան», թիվ 6, 2019:
[160] «Մերան», թիվ 12, 2019:

օրյա վերապատրաստման դասընթացներ: 2018 թ. դասընթացները կայացել էին հուլիս ամսին: 2019 թ. օգոստոսի 12-ից դասընթացներ էին սկսվել Քաշաթաղի շրջանի գյուղական համայնքների բուժքույրերի համար՝ շրջկենտրոն Բերձորում և արաքսամերձ Կովսականում[161]:

2020 թ. սկզբին «Դեպի Հայք» (Birthright Armenia) կազմակերպության 90 հոգանոց երիտասարդ սփյուռքահայերի խումբը այցելեց Բերձոր: Նպատակն էր Քաշաթաղն ավելի ճանաչելի դարձնել մեր սփյուռքահայ հայրենակիցներին և արտաքին աշխարհին: Նախաձեռնությունը միանշանակ հաջողվեց: Դա արդեն երրորդ նման այցելությունն էր Բերձոր[162]:

2020 թ. գարնանը Մայքլ եւ Սյուզան Կյոզալյանների Բոսթոնի տանը տեղի ունեցած հավաքույթի նպատակն էր «Թուֆենկյան» հիմնադրամի աշխատանքներին ծանոթանալն ու աջակցելը: Այս նպատակով եղան բազմաթիվ նվիրատվություններ, ֆինանսական աջակցություն, որը Ջեյմս Թուֆենկյանի առաջարկով հատկացվեց Քաշաթաղի Վան համայնքի դպրոցի վերանորոգման համար[163]:

Արցախում սոցիալական ծրագրերի իրականացնող բազմաթիվ բարեգործական հիմնադրամների և հասարակական կազմակերպությունների մեջ իր ուրույն տեղն ունի նաև «Տաշիր» բարեգործական հիմնադրամը՝ ի դեմս հիմնադրամի նախագահ, ռուսաստանաբնակ գործարար Սամվել Կարապետյանի: Նրա կատարած մեծածավալ ներդրումների արդյունքում Ստեփանակերտում կառուցվեց հիվանդանոց: Բազմազավակ ընտանիքներին 2016 թվականից տրամադրվեց ֆինանսական աջակցություն: Սո-

---

[161] «Մերան», թիվ 15-16, 2019:
[162] «Մերան», թիվ 20, 2020:
[163] «Մերան», թիվ 23-24, 2020:

ցիալական այս ծրագիրը նախատեսում էր 4000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ հատկացնել այն ընտանիքներին, որոնք ունենում էին չորրորդ երեխան: Այս նախաձեռնության շնորհիվ աճեց արցախյան ընտանիքներում ծնված չորրորդ երեխաների թիվը: Եթե մինչև 2016 թվականը Արցախյան ընտանիքներում ծնվող չորրորդ երեխաների թիվը տարեկան հասնում էր 150-ի, ապա՝ նշյալ ծրագրի մեկնարկից հետո՝ 2016 թ., արդեն արձանագրվեց չորրորդ երեխայի 213 ծնունդ, 2017 թ.՝ 230, իսկ 2018 թ.՝ 241: Արդյունքում ընտանիքներում ծնված չորրորդ երեխաների թիվն աճեց 25 տոկոսով, որը լուրջ խթան է Արցախի ժողովրդագրական վիճակի բարելավման համար[164]:

Այպիսով՝ ՀԲԸՄ, «Թուֆենկյան», Հայ օգնության ֆոնդ, Հայ օգնության միություն, «Տաշիր», «Արցախ ֆոնդ», «Քաշաթաղ» բարեգործական հիմնադրամ, «Հայրենասեր» հասարակական կազմակերպություն և այլ բարեգործական հիմնադրամներ ու հասարակական կազմակերպություններ շարունակում են իրենց հայրենանվեր գործունեությունը՝ նպաստելով Արցախի Հանրապետության զարգացմանը՝ սոցիալ-տնտեսական, կրթական, մշակութային և այլ բնագավառներում: «Սփյուռքի հայությունը կապրի Հայաստանի սիրով ու կապրի անոր ապագայի համար,– ասել է Ալեք Մանուկյանը,– այլապես ինչ իմաստ պիտի ունենար մեր ազգապահպանումի ամբողջ պայքարը, եթե մենք չունենայինք վախճանական նպատակ մը: Մենք համոզված ենք, թե առանց հայրենիքի չի կարող գոյատևել սփյուռքը»[165]:

---

[164] «Ազատ Արցախ», 30 մայիսի, 2019:

[165] Համազասպյան Վ., Ալեք Մանուկյան, Երևան, 1994, էջ 24, տե՛ս նաև Մինասյան Է., Վարդանյան Ա., Հայրենիք-Սփյուռք առնչությունները ՀՀ անկախության տարիներին (1991-2009 թթ.), Ստեփանակերտ, 2010, էջ 67-68:

Հայ կրթական հիմնարկության ներդրումը հայրենիքում կրթական ոլորտի ծրագրերի իրականացման գործում

Հայ կրթական հիմնարկությունը (ՀԿՀ, անգլերեն՝ Armenian Educational Foundation) հիմնվել է 1950 թ. Լոս Անջելեսում՝ ԱՄՆ և սփյուռքի այլ գաղութների հայկական դպրոցներին և ուսանողներին նյութական օգնություն ցույց տալու, հայկական դպրոցների ստեղծմանն օժանդակելու, հայագիտական կազմակերպություններին աջակցելու, կրթության համար հատկացված կտակները գործադրելու նպատակով: Հիմնադիրներն են ամերիկահայ համայնքի ներկայացուցիչներ Արշակ Տիգրանյանը՝ Հերի Քարեյանը, Բեն Ղազարյանը, Մարդ Փիլոյանը, Ալեք Փիլիպոսը, Արպակսատ Սեդրակյանը[166]: ՀԿՀ-ն գտնվում է ԱՄՆ Կալիֆոռնիա նահանգի Գլենդել քաղաքում:

ՀԿՀ նյութական աղբյուրներն են նվիրատվությունները՝ կտակված ժառանգությունները, ավանդները և անդամավճարները: Հիմնարկությանը պատկանող դրամագլխի մեծ մասը գոյացել է կտակների և ավանդների ձևով մնայուն նվիրատվություններից, ինչպես նաև պարզ նվիրատվություններից: Այս ամենը հնարավորություն են ընձեռել ՀԿՀ-ին կազմակերպելու սփյուռքահայ երիտասարդության կրթության, ինչպես նաև հայկական դպրոցներին նյութական օժանդակություն տրամադրելու գործը:

Սփյուռքահայ երիտասարդության ազգային ինքնության պահպանման, հայեցի կրթության և դաստիարակման նպատակով ՀԿՀ-ն կառուցել և աշխարհի տարբեր երկրներում նյութական օժանդակություն է տրամադրել հայկական բազմաթիվ ամենօրյա վարժարանների: Հիմնարկության կառուցած առաջին երկու դպրոցներն են՝ «Լևոն և Սոֆյա Հակոբյան» հայկական վարժարանը

[166] «Հայ Սփյուռք» հանրագիտարան, Երևան, 2003, էջ 62:

Աթենքում (Հունաստան) և «Լևոն և Սոֆյա Հակոբյան» քոլեջը Բուրջ Համուդում (Լիբանան): Հիմնարկությունը նաև մասնակցություն է ունեցել Կալիֆոռնիայում առաջին երկու հայկական ամենօրյա դպրոցների հիմնադրության ու կառուցման աշխատանքներում, դրանք են՝ Սրբոց Նահատակաց Ֆերրահյան տարրական և միջնակարգ վարժարանը և Մեսրոպյան վարժարանը[167]:

Տարիների ընթացքում ՀԿՀ-ի կողմից օժանդակություն ստացած ամենօրյա վարժարաններից և նախակրթարաններից են՝

- Ռոզ և Ալեք Փիլիպոս հայկական վարժարան – Հոլիվուդ, Կալիֆոռնիա,
- Վահան և Անուշ Շամլյան հայկական վարժարան – Գլենդել, Կալիֆոռնիա,
- Արի Կիրակոս Մինասյան հայկական վարժարան – Սանթա Աննա-Կալիֆոռնիա,
- Ամերիկահայ միջազգային քոլեջ – Լա Վերն, Կալիֆոռնիա,
- Հայկական համայնքային վարժարան – Ֆրեզնո, Կալիֆոռնիա,
- Քրուզյան Զաքարյան Վասպուրական հայկական վարժարան – Սան Ֆրանսիսկո, Կալիֆոռնիա,
- Շարլոթ և Էլիզ Մերտինյան վարժարան – Շերմըն Օաքս, Կալիֆոռնիա,
- Արշակ Տիգրանյան հայկական վարժարան – Լոս Անջելես, Կալիֆոռնիա,
- Հայ քույրերի վարժարան - Ֆիլադելֆիա, Փենսիլվանիա,
- Ս. Սահակ և Ս. Մեսրոպ հայկական վարժարան – Փրովիդենս, Ռոդ Այլընդ,
- Ս. Գրիգոր Լուսավորիչ հայկական վարժարան – Վուդսայդ, Նյու Յորք,
- Ս. Ստեփանոս ամենօրյա վարժարան – Վաթերթաուն, Մասաչուսեթ,

---

[167] Հայ կրթական հիմնարկություն, Գլենդել, 2005, էջ 10-11:

- Ս. Հակոբ հայկական ամենօրյա վարժարան – Մոնթրեալ, Կանադա,
- Քոլոլյան-Բաբայան հայկական վարժարան – Օնթարիո, Կանադա,
- Ս.Խաչ հայկական ամենօրյա վարժարան – Օնթարիո, Կանադա,
- Նշան Փալանջյան ճեմարան – Բեյրութ, Լիբանան,
- Գալուստ Կյուլպենկյան երկրորդական վարժարան – Անճար, Լիբանան[168]:

Հիմնարկության նպատակներն իրագործելու համար ստեղծված «Սոֆիա Հակոբյան» հիմնադրամը հովանավորել են Բերկլիի և Լոս Անջելեսի համալսարանների հայագիտական ամբիոնները[169]:

Հայ կրթական հիմնարկությունը Հայաստանում սկսել է գործել 1988 թ. Սպիտակի աղետալի երկրաշարժից հետո: 1994 թ. բացվեց ՀԿՀ մասնաճյուղը Երևանում: Նրա գործունեության հիմնական ուղղություններից էին հայրենիքում կրթական ծրագրերի միջոցով երեխաների կրթության գործի կազմակերպումն ու ուսման նպաստավոր պայմանների ստեղծումը, դպրոցների կառուցումն ու վերանորոգումը: ՀԿՀ առաջին խոշոր ձեռնարկումը Շիրակի մարզի Կրաշեն գյուղի տարրական դպրոցի և մանկապարտեզի վերակառուցումն էր: Սավի և Ռալֆ Թուֆենքյանների նվիրատվությամբ վերակառուցվեցին նաև Գյումրու թիվ 5 և Ռիչարդ Թուֆենքյան դպրոցները[170]:

Հետագա տարիներին ՀԿՀ մասնաճյուղի միջոցով Հայաստանում վերանորոգվել և կառուցվել են տասնյակ դպրոցներ (տե՛ս աղյուսակը):

---

[168] Armenian Educational Foundation, Glendale, 2005, p. 3.
[169] «Հայ Սփյուռք» հանրագիտարան, էջ 62:
[170] Armenian Educational Foundation, p.4.

Հայ կրթական հիմնարկության կողմից ՀՀ-ում ն որոգված և կառուցված դպրոցներ[171]

Ք. ԵՐԵՎԱՆ		46	գ. Աքորի
1	Վ Սարոյանի անվ.	47	գ. Աթան
2	Մ. Իշխանի անվ.	48	գ. Քարինջ
3	Եր. պետ. կոնս., դահլիճ.	49	գ. Մարց
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ		50	գ. Ահնիձոր
4	գ. Փարպի	51	գ. Հագվի
5	գ. Արագած	ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ	
6	գ. Օրգով	52	գ. Բջնի
7	գ. Մուղնի	53	գ. Գառնի թ.1
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ		54	գ. Գողթ
8	գ. Վեր. Արտաշատ	55	գ. Պռոշյան
9	գ. Բերդիկ	ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ	
10	գ. Պ. Սևակ	56	գ. Կրաշեն
11	գ. Սուրենավան	57	ք. Գյումրի Ռ. Թուֆ.
12	գ. Խոր Վիրապ	58	ք. Գյումրի թ. 41
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ		59	գ. Սարատակ
13	գ. Նոր Արտագերս	60	գ. Աղին
14	գ. Տալվորիկ	ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ	
15	Վաղարշապատ թ. 12	61	ք. Գորիս ուս. դպր.
16	Վաղարշապատ թ. 9	62	գ. Կարճևան
17	գ. Արաքս	63	գ. Ծավ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ		64	գ. Վաչագան
18	գ. Այրք	65	գ. Աղվանի
19	գ. Ակունք	66	գ. Նորաշենիկ
20	գ. Աստղաձոր	ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ	
21	գ. Անտառամեջ	67	գ. Արենի
22	գ. Արծվանիստ	68	գ. Մարտիրոս

[171] Նյութը մեզ է տրամադրել ՀՀ-ում ՀԿՀ մասնաճյուղի գրասենյակը:

23	գ. Գեղաքար	69	գ. Փոռ
24	գ. Նորատուս թ.1	70	գ. Եղեգիս
25	գ. Լուսակունք	71	գ. Արին
26	գ. Վարդենիկ Ռ. Հ	72	գ. Մոզրով
27	ք. Սևան թ.1	ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ	
28	գ. Սարուխան	73	գ. Իծաքար
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ		74	գ. Լուսահովիտ
29	գ. Քարաձոր	75	գ. Նորաշեն
30	գ.Լորուտ	76	գ. Ակնադրյուր
31	գ. Թեղուտ	77	գ. Ենոքավան
32	գ. Դսեղ	78	գ. Թովուզ
33	գ. Դարպաս	79	գ. Չորաթան
34	ք. Ալավերդի թ.12	80	գ. Ներքին Գոշ
35	ք. Վանաձոր թ. 29	81	ք. Դիլիջան թ.1 հատուկ. դպ.
36	գ. Դեբեդ	82	ք. Դիլիջան մանկ. առողջար.
37	գ. Դսեղ Հ. Թ. տուն		
38	ք. Ալավերդի հ. 11		
39	գ. Արծնի		
40	գ. Մեծ Այրում		
41	ք. Վանաձոր թ. 23		
42	գ. Այգեհատ		
43	գ. Հաղպատ		
44	գ. Մղարթ		
45	գ. Եղեգնուտ		

Ադրբեջանա-ղարաբաղյան առաջին պատերազմը ծանր հարված էր հասցրել Արցախի Հանրապետությանը: Արցախում մեծ թիվ էին կազմում այն դպրոցները, որոնք ունեին վերանորոգման կարիք: Կարևորելով մատաղ սերնդի կրթության գործը՝ Հայ կրթական հիմնարկությունը 1999 թվականից սկսեց գործել ԱՀ-ում:

ՀԿՀ-ն 2000-ական թվականներից ի վեր Արցախում վերանորոգել կամ հիմնանորոգել է շուրջ 59 դպրոց[172]:

Հայ կրթական հիմնարկության ՀՀ մասնաճյուղի և հովանավորների ֆինանսավորմամբ իրականացվել են ԱՀ Մարտունու շրջանի ք. Ճարտար, Թաղավարդ, Խերխան, Մսմնա, Կավահան, Պառավաթումբ, Խնուշինակ, Կաղարծի գյուղերի և Մարտունի քաղաքի[173]՝ ավելի ուշ Զարդանաշեն, Ավդուռ, Հացի, Քարահունջ, Վարանդա, Մյուրիշեն, Ննգի գյուղերի դպրոցների վերանորոգումը:

Հայ կրթական հիմնարկության կողմից Արցախում վերանորոգված և կառուցված դպրոցների ցանկ[174]

		ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆ	
Ք. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ		14	գ. Զագլիկ
1	Ռ. Թուֆենքյան թ. 3	15	գ. Ծաղկաշեն
2	Ստեփանակերտ թ. 4	16	գ. Ծմակահող
		17	գ. Աղաբեկալանջ
ԱՍԿԵՐԱՆԻ ՇՐՋԱՆ		18	գ. Գառնաքար
3	գ. Հիլիս	ՇՈՒՇԻԻ ՇՐՋԱՆ	
4	գ. Սղնախ	19	գ. Բերդաձոր
5	գ. Խնածախ	20	Շուշի երաժշտակ.
6	գ. Դահրավ	21	գ. Քարին Տակ
7	գ. Ջրաղացներ	22	գ. Հին Շեն
8	գ. Հարավ	ՔԱՐՎԱՃԱՌԻ ՇՐՋԱՆ	
9	գ. Մաղաթաշեն	23	գ. Չարեքթար
10	գ. Ծաղկաշատ	24	գ. Զուար
ՀԱԴՐՈՒԹԻ ՇՐՋԱՆ		25	գ. Եղեգնուտ
11	գ. Մեծ Թաղեր	26	գ. Դաղիվանք

172 ՀՀ-ում ՀԿՀ մասնաճյուղի գրասենյակ:

173 ԼՂՀ պետական արխիվ, ֆ.180, ց.1, կ-11, պ.մ.50, թ. 25, 65-66:

174 ՀՀ-ում ՀԿՀ մասնաճյուղի գրասենյակ:

12	գ. Ջրակուս	27	գ. Նոր Մանաշիդ
13	գ. Առաջամուղ	ՔԱՇԱԹԱՂԻ ՇՐՋԱՆ	
		28	ք. Կովսական
		29	գ. Հայթաղ
		30	գ. Մովսեսաշեն
		31	գ. Հարար
		32	գ. Աղավնատուն
		33	գ. Հիմնաշեն
		34	գ. Հակ
		35	գ. Դիցմայրի
		36	գ. Հակարի/Մարաթուկ
		37	գ. Կերեն
		38	գ. Զորախաչ
		39	ք. Բերձոր, գիշերօթիկ
		40	գ. Տիգրանավան
		41	գ. Վարդուտ
		42	գ. Քարեգահ
		43	գ. Մշենի

Հայ կրթական հիմնարկությունն իրականացրել է նաև Քաշաթաղի շրջանի Վարդուտ գյուղի դպրոցի, Շուշի քաղաքի երաժշտական դպրոցի[175] և Մարտակերտի շրջանի Գառնաքար գյուղի դպրոցի բակերի բարեկարգման աշխատանքները: Բացի այդ ամենից՝ հիմնարկությունը Արցախում կառուցված և վերանորոգված դպրոցներին տարեկան մեկ անգամ տրամադրում է գրենական պիտույքներով լի ծանրոցներ:

[175] ԼՂՀ պետական արխիվ, ֆ.180, ց.1, կ-11, պ.մ.50, թ. 55-56:

2020 թ. սեպտեմբերի 24-ին ՀԿՀ ջանքերով Շուշի քաղաքի Խաչատուր Աբովյանի անվան միջնակարգ հոսքային դպրոցի 214 աշակերտներ ստացան բջջային հեռախոսներ: Նպատակը «Covid-19» համավարակով պայմանավորված՝ ուսման ձևաչափի հնարավոր փոփոխության դեպքում հեռավար ուսման գործընթացի արդյունավետ և դյուրին կազմակերպումն է[176]:

Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված 44-օրյա պատերազմի հետևանքով նշված բնակավայրերի գյուղերի շուրջ կեսից ավելին մնացել են Ադրբեջանի վերահսկողության տակ:

Դպրոցների վերանորոգման, հիմնանորոգման, բարեկարգման աշխատանքներից բացի՝ Հայ կրթական հիմնարկությունը մեծ ուշադրություն է դարձնում ուսուցիչների կրթական և մասնագիտական մակարդակների բարձրացմանը: 2014 թ. նոյեմբերին հիմնարկության նախաձեռնությամբ և ֆինանսական աջակցությամբ «Գյումրու տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» գիտակրթական հիմնադրամը Մարտունու թիվ 2 հիմնական դպրոցում շրջանի Մյուրիշենի, Ավդուռի, Հացի, Ննգու, Կաղարծու, Վարանդայի հանրակրթական դպրոցների «Ինֆորմատիկա» առարկան դասավանդող ուսուցիչների համար իրականացրել է վերապատրաստման դասընթացներ, որոնց նպատակն էր իրազեկել ոլորտում տեղի ունեցող փոփոխությունների, նորամուծությունների մասին, բարձրացնել ուսուցիչների մասնագիտական մակարդակը: Դասընթացին ուսուցիչներին ավելի շատ հնարավորություն էր տրվում զարգացնելու գործնական հմտություններ առանձնապես նոր ծրագրերի կիրառման մեջ, ինչը հետագայում թույլ կտա կատարելագործել «Ինֆորմատիկա» առարկայի դասավանդման մեթոդիկան պրակտիկայում[177]: Ընդհանուր առմամբ, 2014 թ. ՀԿՀ աջակցությամբ «Գյումրու տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի» մասնագետները Ասկերանի, Մարտակերտի

---

[176] ՀՀ-ում ՀԿՀ մասնաճյուղի գրասենյակ:

[177] «Ազատ Արցախ», 27 նոյեմբերի, 2014:

և Մարտունու շրջաններում վերապատրաստել են «Ինֆորմատիկա» առարկայի 50 ուսուցիչների[178]: 2014 թվականից ի վեր ՀԿՀ-ն Արցախի շուրջ 25 դպրոցներում իրականացրել է ինֆորմատիկայի ուսուցիչների վերապատրաստումներ, ինչպես նաև դասընթացներն անցած ուսուցիչների դպրոցներին նվիրաբերել է նոր համակարգիչներ՝ նպատակ ունենալով զարգացնել ՏՏ ոլորտը Արցախում: 2017 թվականից «Արմաթի» հետ համագործակցության արդյունքում ՀԿՀ-ն Հայաստանում ու Արցախում հիմնել է 20 «Արմաթ» լաբորատորիաներ[179]: Հիմնարկությունն Արցախում հիմնել է 8 «Արմաթ» ինժեներական լաբորատորիաներ՝ թիրախավորելով այն դպրոցները, որոնք ավելի վաղ վերանորոգվել կամ հիմնանորոգվել են ՀԿՀ-ի կողմից[180]:

Կարևորելով տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) դերը Արցախի սոցիալ-տնտեսական զարգացման գործում՝ ՀԿՀ-ն մեծ աշխատանք է կատարել Արցախի պետական համալսարանում ՏՏ մասնագիտությամբ կրթություն կազմակերպելու ուղղությամբ: 2012 թ. բուհում բացվեց «Կառավարման տեղեկատվական համակարգեր» և «Հեռահաղորդակցություն» մասնագիտությամբ բաժին, որտեղ ուսանողները սովորում են անվճար, մի մասը՝ պետպատվերով, մի մասի վարձավճարը փոխհատուցում է ՀԿՀ-ն: Բացի այդ՝ հիմնարկության կողմից ուղարկված մասնագետները հաճախ են լինում համալսարանում, դասավանդում մասնագիտական առարկաներ, որն էլ նպաստում է նրան, որ ուսանողները լրիվությամբ տիրապետեն ոլորտի նորություններին, առաջնահերթ ուղղություններին[181]:

Վերոնշյալներից բացի՝ 2012 թվականի ամռանը ՀԿՀ-ի հետ համագործակցությամբ կանադահայ բարերար, բժիշկ սրտաբան,

---

178 «Ազատ Արցախ», 11 հունիսի, 2015:
179 ՀԿՀ Գլենդելի գրասենյակ:
180 «Ազատ Արցախ», 6 ապրիլի, 2019:
181 «Ազատ Արցախ»,11 հունիսի, 2015:

Ալբերտ Մելիք-Ղասեմյանի ֆինանսական միջոցներով Ստեփանակերտում շահագործման հանձնվեցին Արցախի պետական համալսարանի հանրակացարանի վերանորոգված ու կահավորված 4-րդ և 5-րդ հարկերը՝ ավելի քան հինգ տասնյակ ուսանողների համար: Չորրորդ հարկը նվիրված է բարերարի եղբոր՝ Սերգեյ Մելիք-Ղասեմյանի, իսկ հինգերորդը՝ քրոջ Ժուլիետ Մելիք-Ղասեմյանի հիշատակին[182]:

Հայ կրթական հիմնարկությունը ֆինանսական օգնություն է տրամադրում տարբեր երկրներում սովորող հայ ուսանողներին և ուսումնական հաստատություններին: 1995 թվականից հայ ուսանողների բազմաթիվ ծրագրերի իրականացման համար հիմնարկության կողմից նվիրաբերվել է 10 800 000 դոլար[183]: ՀԿՀ բազմաթիվ ծրագրերից մեկը Արցախի համալսարաններում, ինչպես նաև Հայաստանում սովորող արցախցի ուսանողներին կրթաթոշակի տրամադրումն է՝ տվյալ ուստարվա ուսման վարձի չափով: Կրթաթոշակի տրամադրման չափանիշներն են՝ անապահով ընտանիքների, միայնակ ծնողների երեխաները, Արցախյան ազատամարտիկների զավակները և բարձր առաջադիմություն ունեցողները: Քանի դեռ ուսանողը պահպանում է բարձր առաջադիմություն, նրա ֆինանսական կարգավիճակը չի փոխվում, և նա, կատարելով համապատասխան համայնքային ծառայություն, շարունակում է ՀԿՀ-ի կողմից հաջորդ ուսումնական տարվա համար նույնպես կրթաթոշակ ստանալ:

Այս յուրահատուկ ծրագիրը մեկնարկել է 2007 թ. 22 անձանց կրթաթոշակով, 2013-2014 թթ. կրթաթոշակ ստացողների թիվը հասել է 52-ի: 2014-2015թթ. ՀԿՀ-ն տրամադրել է կրթաթոշակ 78, իսկ 2015-2016 թթ.՝ 120 ուսանողների: Կրթաթոշակի ծրագիրը հաջողությամբ իրականացվում է մեծահոգի հովանավորների շնորհիվ,

---

182 «Ազատ Արցախ», 7 հուլիսի, 2012:

183 ՀԿՀ Գլենդելի գրասենյակ:

որոնք տարեկան 1000-ական դոլար են նվիրաբերում յուրաքանչյուր ուսանողի համար[184]: Կան հովանավորներ, որոնք ֆինանսավորում են կրթաթոշակի ծրագրում ներառված մի քանի ուսանողների: 2015-2020 թթ. ՀԿՀ 2 մլն դոլարի կրթաթոշակ է տրամադրել Հայաստանի, Արցախի և սփյուռքի ուսումնական հաստատություններում սովորող հայ ուսանողներին[185]: 2020-2021 ուստարվա համար ՀԿՀ-ն տրամադրել է կրթաթոշակ 30 ուսանողների՝ ամբողջական ուսման վարձի տեսքով[186]: Այս ծրագրի շնորհիվ հարյուրից ավելի արցախցի երիտասարդներ կարողացել են ստանալ բարձրագույն կրթություն և իրենց ներդրումն ունենալ հայրենիքի բարգավաճման գործում:

Կրթական ծրագրերից բացի՝ ՀԿՀ-ն իրականացնում է նաև մշակութային ծրագիր: 2012 թվականից հիմնարկությունը հովանավորում է աստունքի համահայկական փառատոնի անցկացումը Շուշիում: Առաջին փառատոնի մասնակիցները Հայաստանից, Արցախից ու Ջավախքից էին: Երկրորդ տարում՝ 2013 թ., միացան նաև Իրանից, երրորդում՝ Լիբանանից, ԱՄՆ-ից[187], իսկ 2015 թ.անցկացված չորրորդ փառատոնին մասնակցելու էին եկել Ուկրաինայից, Բելառուսից, Իրանից, ԱՄՆ-ից: Նման այցելություններն ու միջոցառումները նպաստում են հայության համախմբման ու պահպանման գործին, հնարավորություն են ընձեռում հայ երեխաներին ծանոթանալու մայր հայրենիքի փոքր հատվածի՝ Արցախ աշխարհի առօրյա կյանքին, պատմամշակութային հուշարձաններին՝ կապվելով նրանց հետ:

Հայ կրթական հիմնարկությունն այսօր էլ շարունակում է իր ազգանվեր գործունեությունը հայրենիքում:

---

184 Armenian Educational Foundation. Scholarship Program, March2016, pp. 1-2.

185 ՀԿՀ Գլենդելի գրասենյակ:

186 ՀՀ-ում ՀԿՀ մասնաճյուղի գրասենյակ:

187 «Ազատ Արցախ», 20 օգոստոսի, 2015:

Սփյուռքահայ բարերարների և բարեգործական կազմակերպությունների ներդրումներն Արցախում կրթական ոլորտի ծրագրերի իրականացման գործում XXI դարի երկու տասնամյակներում

Արցախի Հանրապետությունը, լինելով չճանաչված պետություն, իր սոցիալական ծրագրերի՝ առողջապահական, գիտակրթական, մշակութային և այլ ոլորտների զարգացման համար զրկված էր միջազգային ֆինանսական կազմակերպություններից վարկեր ստանալու հնարավորությունից: Ուստի այդ առումով միանգամայն անգնահատելի է սփյուռքահայ բարեգործական կազմակերպությունների, անհատների և հիմնադրամների օգնությունը: Հատկապես XXI դարի առաջին տասնամյակներին նրանց օգնությամբ Արցախում կյանքի կոչվեցին ռազմավարական նշանակություն ունեցող շատ սոցիալական ծրագրեր՝ սկսած հիվանդանոցների ու դպրոցների կառուցումից մինչև բնակչության սոցիալական պայմանների բարելավումը: Սփյուռքահայ բարերարները իրենց առանձին նվիրատվություններով համահայկական հիմնադրամների, այլ կազմակերպությունների և Արցախի կառավարության հետ համագործակցությամբ Արցախում իրականացրել են սոցիալական բազմաբնույթ ծրագրեր, այդ թվում՝ կրթամշակութային ոլորտում: Դեռևս 1994 թ. Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղում արգենտինահայ բարերարներ Հովսեփ և Քրիստինե Թախթաների կողմից կառուցվեց դպրոց: Շուրջ երկու տասնամյակ անց Վաղուհասում կառուցվեց նոր դպրոց՝ երկու մասնաշենքով, 240 աշակերտի համար[188]: Ամերիկահայ Վաչե և Ռիտա Հովսեփյանները իրենց վաղամեռիկ 20-ամյա դստեր՝ Անիթայի ա-

[188] Հիմնադրամ 1999, Ֆինանսական և ծրագրային հաշվետվություն, Երևան, 2000, էջ 22:

նունով հիմնեցին «Անիթա Հովսեփյան» հիմնադրամ, որի միջոցներով 1998 թ. ԼՂՀ Մարտունու շրջանի Աշան գյուղում կառուցվեց Անիթա անունը կրող միջնակարգ դպրոցը: «Անիթա Հովսեփյան» հիմնադրամի ներկայացուցիչներ տեր և տիկին Ցոլակ և Գոհար Հովսեփյանների աջակցությամբ 2010 թ. սեպտեմբերին շահագործման հանձնվեց դպրոցին կից կառուցված Ցոլակ և Գոհար Հովսեփյանների անվան մարզադահլիճն ու Խաչիկ Տեր-Մկրտչյանի անվան գրադարանը[189]:

1997 թվականից Շուշիում գործում էր Դանիել Ղազարյանի անվան հանրակրթական երաժշտական դպրոցը, որը հիմնադրվել է ամերիկահայ հայտնի երգիչ, գեղանկարիչ, բարեգործ Կարեն Ղարիբյանի նախաձեռնությամբ, սփյուռքի մեր հայրենակիցների բարոյական և նյութական աջակցությամբ: Դպրոցը բացվեց 30 աշակերտով, իսկ 2012 թ. ուներ 12 դասարան՝ մոտ 120 աշակերտ: Սկսած 2010 թվականից՝ դպրոցը պետության կողմից ֆինանսավորվեց 50 տոկոսով (աշխատավարձի մասով, իսկ հաջորդ տարի՝ 70 տոկոսով)[190]: ԱՀ կառավարության որոշմամբ 2013 թ. հունվարից դպրոցի ֆինասնավորումը (աշխատավարձի մասով) կատարվել է պետբյուջեի հաշվին, բացի դրանից՝ կառավարությունը դպրոցին նվիրել է լաբորատորիաներ՝ կենսաբանություն, քիմիա, ֆիզիկա առարկաների համար:

Ֆրանսահայ բարերարներ Կարպիս և Նիկոլ Նիկողոսյան ամուսինները 2002 թ. Մարտունու շրջանի Շեխեր գյուղում կառուցեցին երկհարկանի դպրոցի շենք՝ ի հիշատակ Կարպիսի հոր և մոր՝ Նիկողոս և Էրմինե Նիկողոսյանների: Դպրոցը նախատեսված էր 132 աշակերտի համար[191]: Ավելի ուշ դպրոցին կից շահագործման հանձնվեց սպորտդահլիճը:

---

[189] «Հայաստան» համահայկական հիմնադրամ 2011, տարեկան հաշվետվություն, Երևան, 2012, էջ 25:

[190] Ազատ Արցախ», 14 հոկտոմբեր, 2010:

[191] Վարդանյան Ա., Սփյուռքահայ բարերարների ներդրումը ԼՂՀ-ում կրթամշակութային ծրագրերի իրականացման գործում, Մեսրոպ Մաշտոց համալսարանի

Հադրութի շրջանի Վարդաշատ գյուղի դպրոցի վերանորոգման աշխատանքները 2003 թ. իրականացվել է բարերար Վարուժան Քչիքյանի ֆինանսավորմամբ[192], իսկ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի Էդիկ Էրմյանի միջոցներով նորոգվել է Մարտակերտ քաղաքի մանկական կրոնադաստիարակչական կենտրոնի շենքը[193]:

Քաշաթաղի շրջանի Լեռնահովիտ համայնքի դպրոցի շենքը վերակառուցվել է ԱՄՆ-ում գործող «Հայրենասեր» կազմակերպության համանախագահներ, ամուսիններ Նելլի Մարտիրոսյանի և Ստեփան Սարգսյանի ջանքերով: Շենքն ամբողջությամբ վերափոխվել է և աչքի է ընկնում իր գեղեցկությամբ, հարմարավետությամբ[194]:

Ստեփանակերտի թիվ 11 եռահարկ դպրոցի շինարարության նվիրատուներն էին ամերիկահայ բարերար Ջերարդ Թրփանջյանը, «Հայաստան» համահայկական հիմնադրամի ԱՄՆ արևմտյան շրջանի տեղական մարմինը[195]: Կրթօջախը շահագործման է հանձնվել 2010 թ. ամռանը:

Սփյուռքահայ բարերարներն ու բարեգործական կազմակերպությունները մեծ ուշադրություն էին դարձնում դպրոցաշինության աշխատանքներին՝ նպաստելով արցախահայության նոր սերնդի կրթության կազմակերպմանը բարեկեցիկ պայմաններում:

Ռուսաստանաբնակ բարերար Սերգեյ Սարկիսովի տրամադրած ֆինանսական միջոցներով (շուրջ 3 մլն դոլար) կառուցվեց և շահագործման հանձնվեց Ստեփանակերտի Ալ. Գրիբոյեդովի անվան թիվ 3 միջնակարգ դպրոցը[196]: Նրա եղբայր Նիկոլայ Սարկի-

---

«Լրատու», գիտական հոդվածների պարբերական ժողովածու, Ստեփանակերտ, «Դիզակ պլյուս» հրատ, 2013, հ. 2 /15/, էջ 136:

[192] Նույն տեղում:

[193] Նույն տեղում, էջ 137:

[194] Նույն տեղում:

[195] «Ազատ Արցախ», 18 սեպտեմբերի, 2014:

[196] Նույն տեղում, 21 մայիսի, 2009:

սովի միջոցներով հաջորդ տարի՝ 2014 թ. հոկտեմբերի 13-ին, շահագործման հանձնվեց Ստեփանակերտի թիվ 1 հիմնական դպրոցի մասնաշենքը: Դպրոցի շինարարության վրա ծախսվել է 1 մլրդ 600 մլն դրամ, մեկ աշակերտական տեղի համար ծախսվել է 520 ԱՄՆ դոլար: 2019 թ. դրությամբ դպրոցում ուսանում էին շուրջ 1300 աշակերտ[197]:

Ռուսաստանի հայ բարերարների նվիրաբերած միջոցներով հիմնովին նորոգվեց Շուշիի Խաչատուր Աբովյանի անվան դպրոցի շենքը: Սա, ի թիվս կարևորագույն այլ ձեռնարկների, «Մեր Շուշին» ծրագրի հիմնական բաղադրիչներից էր: Դպրոցը եռահարկ կառույց էր, ուներ չորս մասնաշենք, որոնք նախատեսված էին 1200 աշակերտի համար[198]:

2012 թ. ամռանը կանադահայ բարերար, բժիշկ սրտաբան Ալբերտ Մելիք-Ղասումյանի ֆինանսական միջոցներով Սեփանակերտում շահագործման հանձնվեցին Արցախի պետական համալսարանի հանրակացարանի վերանորոգված ու կահավորված 4-րդ և 5-րդ հարկերը՝ ավելի քան հինգ տասնյակ ուսանողների համար: Չորրորդ հարկը նվիրված է բարերարի եղբոր՝ Սերգեյ Մելիք-Ղասումյանի, իսկ հինգերորդը՝ քրոջ՝ Ժուլիետ Մելիք-Ղուսամյանի հիշատակին[199]:

Մոսկվաբնակ բարերար Կոստանդին Մանուկյանի ֆինանսական աջակցությամբ 2015 թ. ապրիլին շահագործման հանձնվեց Ստեփանակերտի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի եռահարկ շենքը:

Ֆրանսահայ Եզնիկ Մոզյանի կտակով Շուշիում կառուցվել է արհեստագործական ուսումնարան, որը նախատեսված էր 225 ուսանողի համար: Ուսումնարանը մոտ չորս հազար քառակուսի

---

[197] Նույն տեղում, 4 մայիսի, 2013:

[198] Նույն տեղում, 14 հոկտեմբերի, 2014:

[199] «Հայաստան» համահայկական հիմնադրամ 2011, տարեկան հաշվետվություն, էջ 20:

մետր մակերեսով երկհարկանի շինություն էր: Այն ուներ հանրակրթական առարկաների և արհեստների ուսուցման համար անհրաժեշտ բոլոր հարմարությունները[200]: Ուսումնարանն իր գործունեությունը սկսել էր 2015 թ., իսկ բարերար Լևոն Նազարյանի ընտանիքը հովանավորել է ուսումնարանի հանրակացարանի շենքի վերակառուցումը[201]:

Ծնողազուրկ կամ սոցիալապես անապահով ընտանիքներում ապրող երեխաների խնդիրները լուծելու նպատակով Շուշիում կառուցվել է նոր գիշերօթիկ դպրոց: Եռահարկ շինությունը, որում ապրում էին արցախցի ութսուն երեխաներ, կառուցվել է ամերիկահայ անվանի բարերար Հրայր Հովնանյանի նվիրատվությամբ ու Արցախի կառավարության համաֆինանսավորմամբ[202]:

2016 թ. Մարտակերտի շրջանի Վանք գյուղում կառուցվել է Սուվորովի և Մադաթովի անվան զինվորական ուսումնարանը՝ մեծ բարերար Լևոն Հայրապետյանի ֆինանսավորմամբ:

Երեսուն տարվա կենսագրություն ունի Ստեփանակերտի թիվ 6 հիմնական դպրոցը: Երկար ժամանակ կրթօջախը գործել է մանկապարտեզի շենքում և սպասում էր այն երանելի օրվան, թե երբ կդառնար արդի պայմաններին համահունչ դպրոց: 2014 թ. հոկտեմբերի 14-ին տեղի ունեցավ նորակառույց, ժամանակակից հարմարություններով դպրոցական շենքի բացումը: Այն կառուցվել է Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանի ֆինանսական աջակցությամբ: Բարերարը դպրոցի բացմանն էլ արժեքավոր նվեր մատուցեց՝ համակարգչային դասարանը համալրելով 20 համակարգչով[203]:

---

200 «Ազատ Արցախ», 7 հուլիսի, 2012:

201 «Հայաստան» համահայկական հիմնադրամ 2013, տարեկան հաշվետվություն, Երևան, 2014, էջ 20:

202 «Ազատ Արցախ», 3 հուլիսի, 2014:

203 «Հայաստան» համահայկական հիմնադրամ 2011, տարեկան հաշվետվություն, էջ 36:

Ռուսաստանցի հայ բարերար Արմեն Շահազիզյանն իր միջոցներով 2013 թ. սկսեց Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվան երաժշտական քոլեջի վերակառուցման աշխատանքները՝ արտաքին ու ներքին պատերի ամրացում, սալիկապատում, ինժեներական գծերի նորացում: Երաժշտական քոլեջը 127 ուսանող ուներ, որոնք սովորում էին տասը բաժիններում[204]:

Անհատ բարերարների ու բարեգործական հասարակական կազմակերպությունների շնորհիվ դպրոցաշինության գործը նոր թափ ստացավ հատկապես XXI դարի առաջին երկու տասնամյակներում: Այդ տարիներին նոր դպրոցներ կառուցվեցին և հիմնովին վերանորոգվեցին հատկապես ռազմավարական նշանակություն ունեցող Քաշաթաղի և Քարվաճառի շրջաններում:

2017 թ. «Հայրենասեր» բարեգործական, հասարակական կազմակերպության ֆինանսավորմամբ և Քաշաթաղի շրջվարչակազմի օժանդակությամբ Մուշի վարչական տարածքում դպրոցական նոր շենք կառուցվեց և անվանակոչվեց ի պատիվ Ապրիլյան քառօրյայում հերոսաբար նահատակված կապիտան Արմենակ Ուրֆանյանի[205]:

Քաշաթաղի շրջանում Իշխանաձոր գյուղը հարավային մասում է՝ Հագարուի և Որոտանի ներքին ավազանում, և կենտրոնի դեր է կատարել: Այստեղ երեք տարի անընդմեջ բնակարանաշինական աշխատանքներ են կատարվել: 2017 թ. ամռանը Արցախի Հանրապետության կառավարության հատկացումներով, շրջվարչակազմի և «Հայրենասեր» բարեգործական ՀԿ-ի օժանդակությամբ հիմնանորոգվեց դպրոցի եռահարկ շենքը[206]:

---

[204] «Ազատ Արցախ», 16 հոկտեմբերի, 2014:

[205] «Հայաստան» համահայկական հիմնադրամ. տարեկան հաշվետվություն, 2013, էջ14:

[206] «Մերան», 2018, թիվ 3-4, էջ 5:

2018 թ. «Հայրենասեր» բարեգործական, հասարակական կազմակերպության կողմից Մուշ գյուղում կառուցվեց նոր դպրոցական շենք, որը ծառայել է նաև հարևան Ալաշկերտ համայնքի դպրոցականներին: Դպրոցը անվանակոչվել է 2016 թ. ապրիլի 2–ին հերոսաբար մարտիրոսված Հայոց բանակի սպա Արմենակ Ուրֆանյանի անունով: 2017 թ. «Թուֆենկյան» հիմնադրամի ֆինանսավորմամբ «Հայրենասեր» կազմակերպությունը Հակ գյուղում հիմնանորոգեց դպրոցի շենքը[207]:

Քաշաթաղի շրջկենտրոն Բերձորի թիվ 1 միջնակարգ դպրոցը 12 տարի համագործակցել է «Թեքեյան» մշակութային միության հետ և անվանակոչվել է արևմտահայ բանաստեղծ Վահան Թեքեյանի անունով: «Թեքեյան» մշակութային միությունը (ԹՄՄ) մշակութային-կրթական կազմակերպություն է, հիմնվել է 1947 թ. Բեյրութում: 2015-2018 թթ. միությունը դպրոցում նորոգել է դասասենյակներ, մինչ այդ օժանդակել այլ հարցերում, նյութապես աջակցել կրթօջախի աշխատակիցներին: 2018 թ. ապրիլի 21-ին ԹՄՄ ներկայացուցիչները՝ Փարիզում գործող «Արշակ Չոպանյան» ինստիտուտի տնօրեն Վարուժան Սիրապյանը և միության Կանադայի ու Ամերիկայի հայաստանյան ներկայացուցիչ Գայանե Մուրադյանը, այցելեցին Բերձոր և դպրոցում ներկա եղան արդեն 4-րդ նորոգված դասասենյակի բացմանն ու անվանակոչության արարողությանը: Նորոգված դասասենյակն անվանակոչվեց ի պատիվ Սարգիս Հացպանյանի[208]:

2018 թ. հուլիս ամսվա սկզբից «Հայրենասեր» բարեգործական, հասարակական կազմակերպության կողմից սկսվեցին Քաշաթաղի շրջանի Մոշաթաղի գյուղական համայնքի միջնակարգ դպրոցի շենքի վերակառուցումն ու ընդլայնումը: Կազմակերպության կողմից վերջին մի քանի տարիների ընթացքում Քաշաթաղի շրջանում

---

[207] «Մերան», 2018, թիվ 6, էջ 2:

[208] «Մերան», 2018, թիվ 1-2, էջ 2:

իրականացվել են հայրենանվեր մի շարք աշխատանքներ, որոնցում հատկապես մեծ էր ուշադրությունը դպրոցաշինության բնագավառին: Մոշաթաղի երկհարկանի դպրոցը հինգերորդն է, որ վերականգնվել է հիմնականում «Հայրենասերի» ֆինանսավորմամբ[209]:

Քաշաթաղի շրջվարչակազմի ղեկավար Ստեփան Սարգսյանի հետևողականության արդյունքում ՀՀ կրթության և գիտության ու Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությունների համաձայնությամբ և ԱՄՆ-ում գործող «Անուշավան և Օֆիկ Աբրահամեան» կրթական հիմնադրամի հովանավորությամբ Բերձորում բացվեց գյուղատնտեսական քոլեջ: 2019 թ. սեպտեմբերի 22-ին Բերձորում հյուրընկալվեցին հիմնադրամի նախագահ ու փոխնախագահ, բարերարներ տեր և տիկին Անուշավան և Օֆիկ Աբրահամեանները, հոգաբարձուների խորհրդի անդամ Հակոբ Պողոսյանը և հայաստանյան ներկայացուցիչ Նորիկ Թունյանը[210]:

2018 թ. «Հայրենասեր» բարեգործական հասարակական կազմակերպության ֆինանսական օժանդակությամբ սկսվեց Քաշաթաղի շրջանի Մոշաթաղ գյուղի դպրոցի շենքի հիմնանորոգումը: «Հայրենասերը», բացի ներքին հիմնանորոգումից, ձեռնարկեց նոր սենյակների ավելացումն ու նորոգումը, տարածքի բարեկարգումը: «Հայրենասերի» կողմից կառուցված կամ նորոգված դպրոցները շրջանում յոթն էին. դրանցից Հերիկի դպրոցը Ռոբերտ Աբաջյանի անունով է կոչվել, Մուշի դպրոցը՝ Արմենակ Ուրֆանյանի: Մոշաթաղի դպրոցն անվանակոչվել է Ապրիլյան քառօրյայի անմահ հերոսներից գյումրեցի ավագ-լեյտենանտ Մերուժան Ստեփանյա-

---

[209] «Մերան», 2018, թիվ 7-8, էջ 4:
[210] «Մերան», 2018, թիվ 19, էջ 3:

նի անունով: 2019 թ. սեպտեմբերի 16-ին մարդաշատ էր Մոշաթաղի դպրոցի բակը: Կայացավ նորոգված դպրոցական շենքի բացման հանդիսավոր արարողությունը[211]:

«Թուֆենկյան» բարեգործական հիմնադրամը, որը դպրոցաշինական և այլ բարեգործական մեծ ծրագրեր է իրականացրել Քաշաթաղի շրջանում, ստանձնեց Տանձուտի դպրոցի հիմնանորոգումը՝ Արցախի Հանրապետության կառավարության համաֆինանսավորմամբ: 2018 թ. Տանձուտի դպրոցն անվանվեց հերոս, Ապրիլյան պատերազմում 9-րդ պաշտպանական շրջանի մարտական դիրքերից մեկի պաշտպանության ժամանակ մարտիրոսված հրաձգային ջոկի հրամանատար, սերժանտ Ադամ Սահակյանի անունով[212]:

ԱՄՆ Բոստոն քաղաքում երկար տարիների վաստակ ունեցող բարերար Նենսի Գյոզալյանը 2020 թ. սկզբին «Թուֆենկյան» հիմնադրամի միջոցով 50 հազար դոլար նվիրեց Քաշաթաղի Վան համայնքի դպրոցի նորոգության համար[213]:

«Ռոզ և Ալեք Փիլիպոս» ամենօրյա վարժարանը գործում է ԱՄՆ Լոս Անջելես քաղաքում: Հիմնվել է 1969 թ. Հայաստանյայց առաքելական եկեղեցու Հոլիվուդի հոգաբարձության նախաձեռնությամբ և Փիլիպոս ամուսինների նվիրատվությամբ: Յուրաքանչյուր տարի կրթօջախի 11-րդ դասարանների աշակերտները, տնօրենի ու ուսուցիչների ուղեկցությամբ, գալիս են մայր հայրենիք և անպայման այցելում Արցախ: Ինչպես 2018 թ., այնպես էլ 2019 թ., նրանց առաջին կանգառն Արցախում Բերձորն էր: Հանդիպման վերջում «Ռոզ և Ալեք Փիլիպոս» կրթօջախի կողմից 600 ԱՄՆ դոլար հատկացվեց Բերձորի արվեստի դպրոցին: Կրթօջախի կողմից ֆինանսական օժանդակություն է հատկացվել նաև ռազմական

---

[211] «Մերան», 2019, թիվ 18, էջ 3, տե՛ս նաև «Մերան», 2019, թիվ 21-22, էջ 3:

[212] «Մերան», 2019, թիվ 18, էջ 1-3:

[213] «Մերան», 2020, թիվ 21-22, էջ 2-4:

գործողությունների ժամանակ նահատակված զինվորականների և կամավորականների ընտանիքներին: 1500-ական ԱՄՆ դոլար հատկացրին Տիգրանավանից 2018 թ. սահմանում զոհված ժամկետային զինծառայող Արցախ Հովսեփյանի և Ապրիլյան պատերազմի ժամանակ նահատակված կամավորական Համլետ Հաջոյանի (Աղավնատուն) ընտանիքներին: Բերձորում՝ Ազատամարտիկներին նվիրված պուրակում, 2016 թ. սեպտեմբերի 2-ին նահատակված բերձորցի զինվոր Արայիկ Օրդուբեկյանի հիշատակի խաչքարը նույնպես «Ռոզ և Ալեք Փիլիպոս» դպրոցի օժանդակությամբ է կանգնեցվել[214]:

Քաշաթաղի շրջանում բնակարանաշինության, դպրոցաշինության, մշակույթի և այլ ոլորտների կայացման գործում իրենց դերն ու նշանակությունն ունեն «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքներին», «Արցախֆոնդ», «ԱՐԻ», «Հայրենասեր», «Թուֆենկյան» և այլ բարեգործական հիմնադրամներ ու հասարակական կազմակերպություններ: Վերջին տարիներին «Հայրենասեր» բարեգործական ՀԿ-ի կողմից շրջանում կառուցվել են 6 դպրոց, մեկ մարզադաշտ, իրականացվել են այլ ծրագրեր: 12 տարուց ավելի իր գործունեությունը շրջանում ծավալում էր «Թուֆենկյան» բարեգործական հիմնադրամը: Առաջին անգամ հիմնադրամը շրջանի դպրոցներին նվիրեց գեղարվեստական գրքեր, այնուհետև շարունակվեց աջակցությունը երիտասարդ շրջանի կայացման գործում՝ դպրոցաշինություն, բնակարանաշինություն, եկեղեցիների հիմնանորոգում: «Թուֆենկյան» բարեգործական հիմնադրամը հարավային շրջանի Կովսական քաղաքում՝ մանկապարտեզի հարևանությամբ, սկսեց կառուցել նոր մարզադաշտ, որի բացումը կայացավ 2019 թ. հունիսի 20-ին[215]:

---

[214] «Մերան», 2020, թիվ 23-24, էջ 5:
[215] «Մերան», 2019, թիվ 9-10, էջ 6:

2019 թ. սեպտեմբերի 15-ին տեղի ունեցավ Շահումյանի շրջանի Նոր Էրքեջ համայնքի միջնակարգ դպրոցի բացման հանդիսավոր արարողությունը, որը իրականացվել էր ծնունդով էրքեջցի ռուսաստանաբնակ բարերար Գևորգ Բարսեղյանի հովանավորությամբ։ Դպրոցի տնօրեն Ա. Հովհաննիսյանը Նոր Էրքեջի միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվի անունից շնորհակալություն հայտնեց բարերարին, հանձնեց նվեր և շնորհակալագիր՝ ազգային ոգին բարձր պահելու և մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործում մեծ ներդրում ունենալու համար[216]։

Քաշաթաղի շրջանի կայացման ու զարգացման գործում, բացի անհատ բարերարների հատկացումներից, կարևոր ներդրում են ունեցել Սփյուռքում և Հայրենիքում գործող բարեգործական կառույցները, որոնցից են «Թուֆենկյանը», «Հայրենասերը»։ «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքներին» հիմնադրամը, որը, բացի սոցիալական ծրագրեր իրականացնելուց, ամեն տարի 2-3 անգամ ծառատունկ է կազմակերպել Բերձորում եւ հարակից տարածքներում։ Կարեւոր դեր են ունեցել նաև «Թեքեյանը», «Քաշաթաղը», «Արցախ-ֆոնդը» և այլ հիմնադրամներ։ Լիբանանում գործող «ԱՐԻ» հիմնադրամի ֆինանսավորմամբ ու ԱՀ կառավարության օժանդակությամբ 2018 թ. Աղավնո գյուղում կառուցվել է 50 բնակելի առանձնատուն, ծրագիրը շարունակական էր։ Ինչպես նշվել է, դպրոցաշինության գործում վերջին տարիներին մեծ էր «Հայրենասերի» դերը, որի ֆինանսական հատկացումներով ու օժանդակությամբ կառուցվել, հիմնանորոգվել, ընդլայնվել են Լեռնահովիտի, Հերիկի, Վուրգավանի, Հակի, Մուշի, Մոշաթաղի, Միրիկի և այլ համայնքների դպրոցական շենքերը։

---

[216] «Մերան», 2019, թիվ 12, էջ 1։

Շրջանի դերը մեծ էր Արցախի Հանրապետության կայացման գործում: Շրջկենտրոն Բերձորը համագործակցության և բարեկամության հռչակագիր ուներ ԱՄՆ Հայլենդ եւ Ֆրանսիայի Ալֆորվիլ քաղաքների հետ, Կովսական քաղաքը՝ Լիբանանի Այնճարի հետ: Համագործակցության հռչակագիր է ստորագրվել Քաշաթաղի և Երևանի Նոր Նորքի, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների, Վայոց ձորի ու Սյունիքի մարզերի միջև[217]:

Սփյուռքի հայ բարերարները մեծ ուշադրություն դարձրին ոչ միայն դպրոցաշինությանը, այլև կահավորմանը, ինչպես նաև ժամանակակից համակարգչային դասարանների բացմանը:

Արցախի դպրոցներում համակարգչային դասարանների բացման գործում եռանդուն գործունեություն ծավալեցին իտալահայ բարերարներ տեր ու տիկին Սարո և Սիրան Խուդավերդիները: Նրանց նվիրատվությամբ 2012 թ. ժամանակակից համակարգչային դասարան է բացվել Ստեփանակերտի թիվ 5 հիմնական դպրոցում, Սիրան Խուդավերդիի հոր՝ դոկտոր Կարապետ Բորանյանի հիշատակին[218]:

2020 թ. մարտի 9-ին Ստեփանակերտի արհեստագործական ուսումնարանում «Քրիստոնյաները կարիքի մեջ» միջազգային բարեգործական կազմակերպության իտալացի բարերարների աջակցությամբ բացվեց ու սկսեց գործել երկու նոր արհեստանոց՝ փայտամշակման ու կարի: Կազմակերպությունը դրանով ընդարձակեց իր կրթական ու մշակութային ծրագրերը Արցախում: Ուսումնարանը, ըստ էության, վերածվեց դպրոց-քոլեջի, որտեղ ուսուցանվում են ոչ միայն կարի արտադրություն, փայտամշակման գործ, այլև հյուրանոցային տնտեսություն և հրուշակագործություն: Դրանով պատրաստվում են լայն պրոֆիլի մասնագետ-

---

[217] «Նոր Շահումյան» երկշաբաթաթերթ, 1-17 սեպտեմբերի, 2019, էջ 3:
[218] «Մերան», 2020, թիվ 23-24, էջ 2:

ներ Իտալիայի դպրոց-քոլեջների նմանությամբ, որն ավելի արդյունավետ կրթություն է, քանի որ այդպիսի մասնագետներն աշխատաշուկայում ավելի պահանջված են[219]:

Ստեփանակերտի թիվ 2 հիմնական դպրոցի համակարգչային կաբինետը կահավորել է մեծ բարերար Արա Աբրահամյանը, իսկ աշխարհագրության կաբինետը՝ ամերիկահայ թոշակառու ամուսիններ Կարողլանյանները:

2002 թ. սեպտեմբերին ֆրանսահայ բարերար Սամվել Շնորհոքյանի կողմից մարդասիրական օգնության կարգով ուղարկված գրենական պիտույքներով ու դպրոցական այլ իրերով լի 300 աշակերտական պայուսակները բաշխվեցին Մարտակերտի շրջանի Վանք գյուղի դպրոցահասակ երեխաներ ունեցող ընտանիքներին[220]:

Նոր ուսումնական ռազմավարությունը (ՆՈՒՌ), որն Արցախում ներդրվեց 2011 թ. արգենտինահայ բարերար Էդուարդո Էռնեկյանի հովանավորությամբ, մեկ աշակերտին՝ մեկ համակարգիչ ծրագրով, առաջին փուլում ընդգրկեց Ստեփանակերտի և Շուշիի (այդ թվում՝ Քարինտակ գյուղի) դպրոցները: 1-4-րդ դասարանցիներն ապահովվեցին «XO» տիպի համակարգիչներով՝ որպես ուսումնական գործիք, իսկ դասվարներն էլ անցան համապատասխան վերապատրաստումներ: Կրթական ծրագիրը նպատակ էր հետապնդում տեղեկատվական նոր տեխնոլոգիաների օգտագործմամբ հետաքրքիր, արդիական և ավելի արդյունավետ դարձնել ուսումնական գործընթացը: Այնուհետև «XO» համակարգիչներով աշխատելու ուղղությամբ վերապատրաստվեցին 5-րդ դասարանում դասավանդող ուսուցիչները:

2014 թ. ուստարվանից ծրագրի աշխարհագրությունն ընդլայնելու նպատակով առաջին անգամ «XO» տիպի համակարգիչներ

---

[219] «Ազատ Արցախ», 21 մարտի, 2013:

[220] «Ազատ Արցախ», 13 փետրվարի, 2020:

բաժանվեցին շրջկենտրոնների դպրոցների տարրական դասարաններին: Բացի դրանից՝ Ստեփանակերտի և Շուշիի դպրոցներում նոր տեսակի համակարգիչներ բաժանվեցին 6-րդ դասարանցիներին: Դրանք «Intel» կազմակերպության կողմից հատուկ դպրոցականների համար ստեղծված նոր սերնդի նեթբուքներ էին, որոնք ունեին ավելի մեծ հնարավորություններ, տեխնիկապես հզոր էին «XO»-ներից և ավելի արդյունավետ՝ ուսումնական գործընթացում օգտագործելու համար: «ՆՈՒՌ» ծրագրի պատասխանատուները Ստեփանակերտի դպրոցների համար ձեռք բերեցին նաև պրոյեկտորներ, որոնք դպրոցներին բաժանվեցին նեթբուքների հետ: Դպրոցներին չորս տարվա ընթացքում բաժանվել են 7200 նեթբուքներ[221]:

2020 թ. հունվարի 21-ին ՀՀ առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության (ԱՏՁՄ) նախաձեռնությամբ և Բաքվի ջարդերը վերապրած, ամերիկաբնակ հայ գրող ու բարերար Աննա Աստվածատրյան-Թերքոտի հովանավորությամբ Ստեփանակերտի Ա. Սախարովի անվան թիվ 8 միջնակարգ հոսքային դպրոցում բացվեց Արցախում հերթական «Արմաթ» ինժեներական լաբորատորիան[222]:

«XXI դարի դպրոցը դժվար է պատկերացնել՝ առանց տեխնիկական կրթության, և «Արմաթ» լաբորատորիայի մուտքը շատ կարևոր փոփոխություններ է բերում դպրոց»,– բացման արարողության ժամանակ ասել է Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանը: Ըստ նախարարի՝ դա Արցախում բացված 27-րդ «Արմաթն» էր, որոնցից 5-ը՝ Ստեփանակերտում, 22-ը՝ շրջաններում, ընդ որում՝ 15-ը՝ գյուղական բնակավայրերի դպրոցներում: «Դա նշանակում

---

221 Վարդանյան Ա., նշվ. աշխ., էջ 138:

222 «Ազատ Արցախ», 25 հոկտեմբերի, 2014:

է, որ նախարարությունն անչափ կարևորում է տեխնիկական կրթության հասանելիությունը բոլորի համար և փորձում է չկենտրոնանալ միայն Ստեփանակերտի վրա»[223],– հայտարարել է Ն. Աղաբալյանը՝ հավելելով, որ այդ բոլոր ծրագրերը կյանքի են կոչվել ԱՏՁՄ-ի հետ նախարարության համագործակցության շրջանակում և բարերարների աջակցությամբ: Մյուս «Արմաթ»-ները տեղադրվել են Հայ կրթական հիմնարկության, «Յունիբանկի», «Բեյզ Մեթըլս» ընկերության, «Արցախբանկի», «Շեն» կազմակերպության, անհատ բարերարների աջակցությամբ և Կովսականում՝ ՀՀ նախագահի կողմից: Նախարարը վստահություն հայտնեց, որ այս անունների շարքը դեռ կլրացվի, և լաբորատորիաներ կտեղադրվեն նաև մյուս դպրոցներում: Ն. Աղաբալյանը հատուկ շնորհակալություն հայտնեց բարերար Ա. Աստվածատրյանին, որը հայերի նկատմամբ ադրբեջանցիների վայրագությունների պատասխանն այս ձևով է տալիս՝ վերահաստատելով, որ հայը ոչ միայն Արցախում շարունակում է ապրել, այլև նայում է առաջ ու քայլում է աշխարհի, մարդկության հետ համաքայլ[224]: Իր հերթին Աննա Աստվածատրյանն ասաց, որ ջարդերից փրկված և արտերկրում հաստատված մեր հայրենակիցները պատրաստ են բարոյապես ու ֆինանսապես աջակցություն ցուցաբերել Արցախին: «Ես ցանկացա մի ծրագիր իրականացնել Արցախում՝ ցանկանալով փաստել նրա ապագան, իսկ ապագան երեխաներն են»[225]: Դրանում իրեն ուղղորդել է Արցախի արտաքին գործերի նախարարությունը, որն առաջարկել է այդ ծրագիրն իրականացնել թիվ 8 դպրոցում, որը ժամանակին ընդունել է Բաքվի փախստականներին: «Ես տեսնում եմ, որ այստեղ խաչվում են անցյալն ու ապագան, և շատ ուրախ

---

[223] «Ազատ Արցախ», 15 հունվարի, 2020:

[224] Նույն տեղում:

[225] «Ազատ Արցախ», 15 հունվարի, 2020, էջ 6:

եմ տեսնել այստեղ շատ շնորհալի երեխաների»[226],– ասաց Ա. Աստվածատրյանը՝ վստահեցնելով, որ շարունակելու է աջակցել Արցախին ինչով կարող է:

2019 թ. Շահումյանի շրջանի դպրոցները համալրվեցին մարզագույքով: Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանի 16 համայնքների դպրոցների համար 2019 թ. ամռանը տրամադրվել է շուրջ 30 անուն մարզագույք: Դրանց թվում էին՝ ֆուտբոլի, բասկետբոլի, վոլեյբոլի, հանդբոլի գնդակներ, շախմատներ, բասկետբոլի օղակներ, վոլեյբոլի ցանցեր, թենիսի գնդաթիեր և ցանցեր, հանտելներ, սպորտային բազմատեսակ պարագաներ, որոնք անհրաժեշտ էին դպրոցներում ֆիզկուլտուրայի պարապմունքների համար: Մարզագույքը շրջանի դպրոցներին տրամադրվել էր «Ողջ մնալու արվեստ» ռազմահայրենասիրական հասարակական կազմակերպության կողմից՝ բարերար Վովա Վարդանովի գլխավորությամբ: Մարզագույքի բաշխումը կատարվել էր շրջանի՝ Քարվաճառի բոլոր 16 դպրոցների միջև՝ ըստ աշակերտների թվի: Սպորտային այդ գույքից բաժին էր հասել նաև Քարվաճառում գտնվող «Խաչեն» մարզադպրոցին, որը հավասարապես օգտագործվել է թե՛ ֆիզկուլտուրայի ժամերին, թե՛ սպորտային խմբակի պարապմունքների ժամանակ[227]:

Հաշվի առնելով երեխաների նախադպրոցական կրթության կարևորությունը՝ սփյուռքահայ բարերարները մեծ ուշադրություն են դարձրել մանկապարտեզների շինարարությանն ու կահավորմանը:

Բարերար Էդիկ Ղուլյանի ֆինանսական աջակցությամբ կառուցվել և շահագործման է հանձնվել Մարտակերտի շրջանի Վանք գյուղի 120-տեղանոց մանկապարտեզը:

---

[226] Նույն տեղում:

[227] Նույն տեղում:

Բարերար Արմեն Թոփուզյանի հովանավորությամբ կառուցվել է ժամանակակից խաղահրապարակ Քաշաթաղի շրջանի Քարեգահ համայնքում, վերանորոգվել է Այգեստանի մանկապարտեզի շենքը՝ բարերար Ժանետ Ուոլշի ֆինանսական աջակցությամբ: Հայ օգնության միության միջոցով Արցախի մանկապարտեզներին նվիրատվություն է փոխանցել ամերիկահայ բարերար, ՀՕՄ-ուհի Զասիկ Բունիաթյանը, որի նվիրատվությունը տրամադրվել է բոլոր մանկապարտեզների սաներին ու աշխատակիցներին[228]:

Ֆրանսահայ բարերարների նվիրատվությամբ մանկապարտեզ է կառուցվել Մարտունու շրջանի Սոս համայնքում, որտեղ 2013 թ. դրությամբ նախադպրոցական կրթություն էին ստանում ավելի քան հիսուն երեխաներ[229]: Մանկապարտեզների կառուցումն ու կահավորումը կարևոր էին ոչ միայն երեխաների համար, այլ նաև նպաստում էին տեղերում բնակչության համար աշխատատեղերի ստեղծմանը:

ԱՄՆ քաղաքացիներ Ջորջ և Քերոլայն Նաջարյանները Մարտակերտի շրջանում կատարել են մի շարք մարդասիրական դրամաբաշխություններ: Շրջկենտրոնի մանկապարտեզին հատկացրել են 145 հազար դրամ, Մարաղա գյուղի 65 երեխաների՝ 15 հազարական դրամ, իսկ Ստեփանակերտում բնակվող երեք հաշմանդամ երեխաների ծնողներին տրամադրվել է 290 հազար դրամ՝ նրանց հետագա բուժումը ՀՀ-ում և ՌԴ-ում կազմակերպելու համար[230]:

Սփյուռքահայ բարերարները մեծ ուշադրություն են դարձրել երեխաների ամառային հանգստի կազմակերպմանը: 2005 թվականից Շուշիի «Նարեկացի» արվեստի միության կենտրոնում գոր-

---

228 «Նոր Շահումյան» երկշաբաթաթերթ, 1-17 հուլիսի, 2020, էջ 2:

229 «Ապառաժ», 9-16 հունվարի, 2008:

230 «Հայաստան» համահայկական հիմնադրամ. տարեկան հաշվետվություն, 2013, էջ 18:

ծում էր «Արամ Մանուկյան» ամառային ճամբարը, որի կազմակերպիչներն էին կանադահայ հասարակական-մշակութային գործիչ, բանաստեղծ Հայդուկ Շամլեանը և նրա կինը՝ մանկավարժ Աիդա Շամլեան-Դավիդեանը: Շուշեցի երեխաների համար այստեղ կազմակերպվում էին հայրենասիրության և քաղաքացիական պարտքի զգացումի մասին դասեր ու մարզական պարապմունքներ[231]:

2018 թ. փետրվարի 3-ին «Երեխաների խնամքի և պաշտպանության» Բերձորի թիվ 2 գիշերօթիկ հաստատություն այցելեցին բարերարներ Արմեն Վլադիմիրի Բաբայանը՝ Մոսկվայից, և Ժիրայր Սերժիկի Մանուչարյանը՝ Ղրիմի Սևաստոպոլ քաղաքից: Արտերկրում բնակվող մեր հայրենակիցները փոքրիկների համար նվերներ էին բերել՝ խաղալիքներ, հագուստ, նստարաններ, սեղաններ և այլ անհրաժեշտ իրեր[232]:

2019 թ. հունվարի 13-ին Բերձորում գործող ԱՄՆ Միացյալ Մեթոդիստական եկեղեցու Արևմտյան և Հյուսիսային Կարոլինայի թեմերի համատեղ կրոնաբարեգործական «Ագապե» կազմակերպությունը հերթական անգամ Բերձորի և հարակից բնակավայրերի երեխաների համար իրականացրեց ամանորյա տոնական միջոցառում: Երգ ու պարով, հումորային համարներով ու խաղերով տեղի ունեցած հանդեսից հետո բոլոր երեխաները տուն գնացին նվերներով լեցուն արկղիկներով: Հանդեսի ժամանակ երգերի գեղեցիկ կատարումներով ելույթ ունեցան աշակերտուհիներ Լիլիթ Ավագյանը, Գոհար Գասպարյանը, այլ երեխաներ: Ներկաներին ողջունեց և տոների առթիվ շնորհավորեց «ԱԳԱՊԵ»-ի Հայաստանյան մասնաճյուղի տնօրեն Նարա Մելքոնյանը՝ մաղթելով բարին ու ամենակարևորը՝ խաղաղություն ողջ աշխարհին:

---

[231] Վարդանյան Ա., նշվ. աշխ., էջ 138:
[232] «Ազատ Արցախ», 20 հուլիսի, 2013:

Երաժշտական մասն ապահովեցին Բերձորի «Բերձոր» ժողգործիքների համույթի երաժիշտներ Արամայիս Եսայանն ու Արթուր Մովսեսյանը: Բարերար Ն. Մելքոնյանը տեղեկացրեց, որ իրենց կազմակերպությունը 5000 և ավելի տուփ նվերներ է հատկացրել շրջանի բոլոր երեխաներին: Տոնական նվերները նախատեսված ու ձևավորված էին ըստ տարիքային խմբերի ու սեռերի: Նորածինների համար նախատեսված նվերները հիմնականում անհրաժեշտ պարագաներ էին: Յուրաքանչյուր նորածին ստացավ 3-5 տուփ նվեր: Կազմակերպությունը Բերձորում գործել է Քաշաթաղի շրջանի կազմավորման սկզբներից և տարիների ընթացքում բազում բարեգործական ծրագրեր է իրականացրել: Կազմակերպությունը երեխաների համար նաև անվճար դասընթացներ է իրականացրել՝ կարուձև, գոբելենագործություն, ասեղնագործություն, համակարգչային, նաև անգլերենի ուսուցում և այլն: Դասավանդող ուսուցիչները վարձատրվել են «ԱԳԱՊԵ»-ի կողմից[233]:

Արցախի աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգում գործող երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 և թիվ 2 գիշերօթիկ հաստատությունների սաների համար ամերիկահայ Գրիգոր Հակոբյանի աջակցությամբ ամռանը կազմակերպվել են էքսկուրսիաներ դեպի Արցախի տարբեր տեսարժան վայրեր[234]:

ԱՄՆ Ֆրեզնոյի Սուրբ երրորդություն եկեղեցու հոգաբարձության և երիտասարդական միությունը Իշխանաձորի երեխաներին 70 զույգ ձմեռային կոշիկ, 60 հատ բաճկոն է ուղարկել: Կովսականի տարածքային հիվանդանոցի վարիչ Լուսինե Սարգսյանը տեղեկացրեց, որ այդ կազմակերպության բարեգործական գործունեությունն արդեն 5 տարվա պատմություն ունի[235]:

---

[233] «Մերան», 2018, թիվ 3-4, էջ 7:
[234] «Մերան», 2019, թիվ 1-2, էջ 4:
[235] «Ազատ Արցախ», 28 օգոստոսի, 2014:

Բարեգործական միջոցներով Կովսականի մանկապարտեզի հարևանությամբ 2019 թ. «Թուֆենկյան» հիմնադրամը հիմնեց խաղահրապարակ[236]:

Կապանի ոսկու կոմբինատի տնօրեն, կանադահայ Հրաչ Զաբրայանի հովանավորությամբ Քաշաթաղի շրջանի Կովսական քաղաքի Թաթուլ Կրպեյանի անվան միջնակարգ դպրոցի հարևանությամբ կառուցվել է ռազմամարզական խաղահրապարակ՝ տարբեր մարզասարքերով, որտեղ, աշակերտներից բացի, մարզվել են նաև քաղաքի երիտասարդները[237]:

Մեկ հոդվածի շրջանակում դժվար է թվարկել բոլոր հիմնադրամների, սփյուռքահայ բարեգործական կազմակերպությունների և անհատ բարերարների կատարած հայրենանվեր, շնորհակալ ամբողջ աշխատանքը, Արցախի կրթական ոլորտին նրանց ցույց տված աջակցությունը:

Այսպիսով՝ սփյուռքահայ բարերարները և բարեգործական կազմակերպությունները միշտ էլ աչքի են ընկել իրենց հայրենանվեր, ազգանպաստ գործունեությամբ: Արցախում նրանց բարեգործական գործունեությունը վկայում է Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդման ու զարգացման մասին:

---

236 «Մերան», 2019, թիվ 3-4, էջ 8:

237 «Մերան», 2020, թիվ 20, էջ 2:

Հիմնադրամների, սփյուռքահայ բարեգործական հասարակական կազմակերպությունների և անհատ բարերարների ներդրումը առողջապահական ոլորտի ծրագրերի իրականացման գործում

Ադրբեջանա-ղարաբաղյան առաջին պատերազմը ծանր հարված էր հասցրել Արցախի Հանրապետությանը: ԱՀ-ում տուժել էր 149 բնակավայր, լրիվ կամ մասամբ ավերվել են 11647 անհատական տներ, 226 բազմաբնակարան բնակելի շենքեր, 17 ստացիոնար բուժհիմնարկներ և 71 բուժկետեր, 196 ուսումնական և մշակութային օջախներ[238], 8000 արդյունաբերական, գյուղատնտեսական և սոցիալական նշանակության օբյեկտներ: Երեք անգամ կրճատվել էին ցանքսերը, 5 անգամ անասնագլխաքանակը[239]: Իրենց մշտական բնակավայրերից բռնագաղթել են ավելի քան 80 հազար բնակիչներ, որից 39 հազարը՝ միայն Մարտակերտի շրջանից[240]:

Հետպատերազմյան տարիներին հնարավորություն ստեղծվեց զբաղվելու պատերազմից խիստ տուժած բնակավայրերի վերաբնակեցման, ավերված տնտեսության, առողջապահական, կրթական, մշակութային օջախների և այլ ոլորտների վերականգման ու զարգացման հարցերով: Պատերազմից տուժած երիտասարդ հանրապետությունը հնարավորություն չուներ սուղ պետական միջոցներով լուծելու իր առջև ծառացած խնդիրները և լինելով չճանաչված պետություն՝ զրկված էր միջազգային ֆինանսական կազմակերպություններից վարկեր ստանալու հնարավորությունից: Այդ առումով անգնահատելի է հիմնադրամների, սփյուռքահայ բարեգործական կազմակերպությունների և միությունների,

---

238 ԱՀ պետական արխիվ, ֆ. 180., ց.1, կ-9, պ.մ. 42, թ. 222:

239 Բալայան Վ., Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության, Ստեփանակերտ, 2012, էջ 333:

240 ԱՀ պետական արխիվ, ֆ. 180, ց.1, կ-9, պ.մ. 42, թ. 222:

ինչպես նաև առանձին բարերար մեր հայրենակիցների օգնությունը: Նրանց աջակցությամբ կյանքի են կոչվել ռազմավարական նշանակություն ունեցող շատ ծրագրեր, ոտքի են կանգնել գյուղեր ու քաղաքներ, կառուցվել և շահագործման են հանձնվել ճանապարհներ, գազատարներ, ջրագծեր, հիվանդանոցներ, դպրոցներ, մանկապարտեզներ և այլն: Այդ գործում մեծ ավանդ ունի «Հայաստան» համահայկական հիմնադրամը: Հիմնադրամը ստեղծվել է Հայաստանի, Արցախի և Սփյուռքի մեր հայրենակիցների ջանքերով 1992 թ. մարտի 3-ին Երևանում որպես հայկական բարեսիրական կառույց: Նրա գլխավոր խնդիրն է համայն հայության ուժերի միասնական գործադրմամբ օժանդակել ՀՀ և Արցախի զարգացմանն ու բարգավաճմանը: «Հայաստան» համահայկական հիմնադրամն իր ծրագրերն իրականացնում է 25 տեղական մարմինների միջոցով, որոնք գործում են աշխարհի 22 երկրներում[241]:

Հիմնադրամն Արցախում սկսել է գործել 1993 թվականից, երբ դեռ շարունակվում էր պատերազմը, և իրականացրել է բազում ծրագրեր հանրապետության գրեթե բոլոր շրջաններում: Հետպատերազմյան տարիներին նրա նախաձեռնությամբ և միջոցներով, բացի լայնածավալ հումանիտար օգնությունից, Արցախում կյանքի են կոչվել ռազմավարական նշանակություն ունեցող բազմաթիվ ու բազմաբնույթ ծրագրեր, կառուցվել և շահագործման են հանձնվել ճանապարհներ, ջրագծեր, գազատարներ, էլեկտրագծեր, շենքեր, բնակարաններ, դպրոցներ, մանկապարտեզներ, մշակույթի օջախներ և այլն: 2009 թ. Ստեփանակերտում բացվել է հիմնադրամի գրասենյակ, որն ակտիվորեն նպաստում է Արցախում իրագործվող ծրագրերի կենսագործմանը: Իրագործվող ծրագրերն իրականացվում են Արցախի կառավարության համաֆինանսավորմամբ:

---

[241] «Հայաստան» համահայկական հիմնադրամ 2016, Երևան, 2017, էջ 10:

Մեծ է հիմնադրամի ներդրումը Արցախի Հանրապետության առողջապահական ոլորտի ծրագրերի իրականացման գործում: Նրա ֆինանսավորմամբ իրականացվել է Մարտակերտի շրջանի Գառնաքար, Մաղավուզ, Դրմբոն, Վաղուհաս գյուղերի բուժկետերի վերանորոգման և Ղազարահող գյուղի բուժկետի կառուցման աշխատանքները[242]: Հիմնադրամի ԱՄՆ Արևելյան Արփի տեղական մարմնի ֆինանսավորմամբ կառուցվել են Ստեփանակերտի քաղաքային պոլիկլինիկան ու ախտորոշման կենտրոնը, իսկ ԱՄՆ արևմտյան շրջանի հայության միջոցներով հիմնադրամը նորոգել է Հադրութ քաղաքի կենտրոնական հիվանդանոցի շենքը, նվիրել շտապօգնության ավտոմեքենաներ[243]: ԱՄՆ արևմտյան շրջանի տեղական մարմինը բուժական սարքավորումներ է հատկացրել Մարտակերտի շրջանի Վանք գյուղի հիվանդանոցին: Ֆրանսիայի հանձնախմբի կողմից վերանորոգվել են Շուշի քաղաքի հիվանդանոցի կաթսայատունը և ջերմատար ցանցը[244]: Հիմնադրամի ֆինանսավորմամբ իրականացվել են Շուշի քաղաքի «Ձեռք ձեռքի» հասարակական կազմակերպության ատամնաբուժարանի մասնակի վերանորոգման և կահավորման աշխատանքները:

Արցախի Մարտունու շրջանը շուրջ 25 հազար բնակիչ ունի: Մարտունի քաղաքում, շրջանի մեծ ու փոքր գյուղերում ապրող մարդիկ անցած տարիներին բուժօգնություն էին ստանում 1965 թ. կառուցված երկհարկանի մի շենքում, որը հինգ տասնյակ տարիների ընթացքում գրեթե չէր նորոգվել: Հիմնադրամի ԱՄՆ արևե-

---

[242] ԱՀ պետական արխիվ , ֆ. 180, ց. 1, կ-17, պ.մ. 95, թ.4:

[243] Մինասյան Է., Վարդանյան Ա., Հայրենիք-Սփյուռք առնչությունները ՀՀ անկախության տարիներին (1991-2009 թթ.), Ստեփանակերտ, 2010, էջ 109:

[244] Աբրահամյան Հ., Վարդանյան Ա., «Հայաստան» հիմնադրամի ներդրումը ԼՂՀ զարգացման գործում, Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու, 2012, N 1(12), էջ 10:

լյան շրջանի տեղական մարմնի և ԼՂՀ կառավարության համատեղ ֆինանսավորմամբ կառուցվեց նոր հիվանդանոց: Նորակառույց բուժհաստատությունն ունի պոլիկլինիկա, ախտորոշիչ կենտրոն, հակահամաճարակային, շտապ օգնության, վիրաբուժական, թերապևտիկ բաժանմունքներ և ծննդատուն[245]:

Հիմնադրամի ու Արցախի կառավարության ջանքերով շահագործման է հանձնվել Կովսական քաղաքի հիվանդանոցի շենքը, որտեղ գործում է նաև «Մոր և մանկան» առողջության պահպանման կենտրոնը: Շահագործման է հանձնվել նաև Բերձորի բազմաֆունկցիոնալ հիվանդանոցը:

Հիմնադրամի Տորոնտոյի տեղական մարմինը շտապ օգնության մեքենաներ է նվիրել Դադիվանք և Մարաղա գյուղերի բուժկետերին[246]:

«Հայաստան» համահայկական հիմնադրամի Ֆրանսիայի տեղական մարմնի և Արցախի կառավարության համաֆինանսավորմամբ 2019 թ. աշնանը սկսվել էր Քարվաճառ շրջկենտրոնի շրջանային բուժմիավորման նոր մասնաշենքի շինարարությունը: Հիմնանորոգվելու էր նաև բուժմիավորման առկա մասնաշենքը: Նոր կառուցվող մասնաշենքում նախատեսվում էր ունենալ վիրաբուժական, վերակենդացման բլոկներ, ծննդասենյակ, ատամնաբուժարան: Հիմնանորոգման և կառուցապատման շինարարական աշխատանքները նախատեսվում էր ավարտել 2021 թ. վերջին[247]:

«Միացյալ հայկական ֆոնդ» (ՄՀՖ, անգլերեն՝ United Armenian Fund) բարեգործական կազմակերպությունը հիմնադրվել է 1989-ի նոյեմբերի 7-ին Լոս Անջելեսում ամերիկահայ

---

[245] «Հայաստան» համահայկական հիմնադրամ 2013, տարեկան հաշվետվություն, Երևան, 2014, էջ 32:

[246] «Ազատ Արցախ», 25 մայիսի, 2018:

[247] «Ազատ Արցախ», 29 հուլիսի, 2020:

հասարակական գործիչ Հարութ Սասունյանի նախաձեռնությամբ և ԱՄՆ-ում գործող յոթ խոշոր հայկական կազմակերպությունների Ամերիկայի հայկական համագումարի, Հայկական բարեգործական ընդհանուր միության, Հայ օգնության միության, Հայ առաքելական եկեղեցու ԱՄՆ էջմիածնական և անթիլիասական թեմերի առաջնորդարանների, Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության և Քըրք Քրքորյանի «Լինսի հիմնարկի» միացյալ ջանքերով: Նպատակն էր համակարգել և ավելի արդյունավետ դարձնել սփյուռքի օգնությունը 1988 թ. ավերիչ երկրաշարժից տուժած Հայաստանին, հաղթահարել շրջափակման արգելքները օդանավային կանոնավոր առաքումներ կազմակերպելու միջոցով: Սկզբում կազմակերպությունն առանձնակի կարևորություն է տվել դեղորայքի և բժշկական սարքերի մատակարարմանը: Սակայն ժամանակի ընթացքում, ելնելով Հայաստանի և Արցախի տնտեսական կացության թելադրանքից, ընդլայնել է գործունեության ասպարեզը[248]: ՄՀՖ-ն իրականացնում է մարդասիրական, առողջապահական, սոցիալական, շինարարական, գյուղատնտեսական, կրթական և այլ ծրագրեր:

«Միացյալ հայկական ֆոնդն» իր գործունեությունը դադարեցրեց 2015 թ.նոյեմբերի 30-ին: Նրա գործունեությունը շարունակեց «Հայաստան-Արցախ» հիմնադրամը: Այն հիմնադրվել է 2015 թ. դեկտեմբերի 1-ին ԱՄՆ Գլենդել քաղաքում (նախագահ՝ Հարութ Սասունյան): Հիմնադրամի առաքելությունն է շարունակել մարդասիրական այն հսկայական աշխատանքը, որ Միացյալ հայկական հիմնադրամը իրականացրել է վերջին 26 տարիների ընթացքում՝ 720 մլն դոլար արժողությամբ մարդասիրական օգնության տրամադրելով հայրենիքին: Նախատեսվում էր ամեն տարի մար-

[248] Սփյուռքահայ կազմակերպություններ, Երևան, 2002, էջ 133:

դասիրական օժանդակության տրամադրել Հայաստանի ու Արցախի հիվանդանոցներին, պոլիկլինիկաներին, դպրոցներին, մանկատներին և տարբեր բարեգործական հաստատությունների՝ նրանց տրամադրելով կենսական անհրաժեշտության դեղորայք, պատվաստանյութեր, բժշկական սարքավորումներ, մանկական սնունդ, գյուղատնտեսական սարքավորումներ, համակարգիչներ, ձմեռային հագուստ, կոշիկներ, խաղալիքներ, գրքեր և բազմաթիվ այլ ապրանքներ[249]:

2015 թ. դեկտեմբերի 1-ին հիմնադրվելուց ի վեր «Հայաստան Արցախ» հիմնադրամը 18.5 մլն դոլար արժողությամբ մարդասիրական օժանդակություն է տրամադրել Հայաստանի ու Արցախի բնակչությանը: Հիմնադրամի առաքած նպաստը ներառել է հիմնականում անհրաժեշտ դեղորայք քաղցկեղի, սրտի, աղիքների և մտային հիվանդությունների բուժման համար, ինչպես նաև դեղորայք ու բժշկական պարագաներ Ապրիլյան պատերազմում վիրավորվածների խնամքի համար:

Մինչ 2016 թ. հունիսը հիմնադրամի կողմից Արցախի առողջապահության ոլորտին նվիրաբերվել են 71 մլն դրամ արժողությամբ դեղորայք (այդ թվում՝ «Կլոպիդոգրել» դեղը, որը մեծ նշանակություն ունի սիրտ-անոթային համակարգի հիվանդություններով տառապող անձանց համար), բժշկական սարքավորումներ, այլ պարագաներ (մոտ 6.5 տոննա), որոնք բաշխվել են նախարարության ենթակա բուժհաստատություններին[250]: Հաշվի առնելով, որ «Հայաստան-Արցախ» հիմնադրամն այն կազմակերպությունն է, որ հաջորդել է Միացյալ հայկական հիմնադրամին, 1989 թվականից ի վեր զույգ կազմակերպությունների կողմից հայրենիքին տրամադրված նպաստի ընդհանուր արժեքը կազմում է 738,5 միլիոն դոլար: ««Հայաստան Արցախ» հիմնադրամին կանոնավոր

---

249 «Ազատ Արցախ», 8 դեկտեմբերի, 2015:

250 «Ազատ Արցախ», 6 հունիսի, 2016:

կերպով առաջարկվում են միլիոնավոր դոլարների արժողությամբ կյանք փրկող դեղորայք և բժշկական պարագաներ,– նշում է Հարութ Սասունյանը,– երախտապարտ ենք մեր առատաձեռն բարերարներին, որոնց աջակցության շնորհիվ կշարունակենք անհետաձգելի նպաստ տրամադրել Հայաստանի և Արցախի բժշկական կենտրոններին»[251]:

Արցախում մեծածավալ աշխատանքներ է իրականացնում «Թուֆենկյան» բարեգործական հիմնադրամը (ԹԲՀ): Հիմնադրամը (անգլերեն՝ Tufenkyan Foundation) ստեղծվել է 1988 թ. Նյու Յորքում ամերիկահայ գործարար և բարերար Ջեյմս Թուֆենկյանի կողմից: Նպատակ ունենալով բարեգործական ծրագրեր իրականացնել հայրենիքում՝ 1999 թ. Երևանում հիմնադրվեց «Թուֆենկյան» հիմնադրամի գրասենյակ: Հիմնադրամը ՀՀ-ում իրականացրել է մի քանի տասնյակ բարեգործական ծրագրեր:

Արցախին օգնելու նպատակով 2003 թ. բացվել է «Թուֆենկյան» հիմնադրամի Ստեփանակերտի գրասենյակը, որի միջոցով իրականացվել են վերաբնակեցման, սոցիալ-տնտեսական, կրթամշակութային և բարեգործական այլ ծրագրեր:

Քաշաթաղի շրջանում հիմնադրամն իրականացնում էր նաև առողջապահական ծրագրեր: 2005 թ. Իշխանաձոր գյուղում կառուցվել է բժշկական համալիր, որը կարող էր սպասարկել 2000 բնակչի[252]: Բուժհամալիրը կահավորված էր, ուներ իր բաժանմունքները՝ ատամնաբուժական, մանկաբարձական, բուժքույրական անձնակազմով, «շտապօգնության մեքենայով»: Հիմնադրամի նախաձեռնությամբ համալիրի աշխատակիցները դասընթացների էին մասնակցել Ստեփանակերտի ծննդատանը և ախտորոշիչ կենտրոնում[253]: 2009 թ. Քաշաթաղի հյուսիսային և հարավային

---

[251] «Ազատ Արցախ», 3 սեպտեմբերի, 2016:
[252] ԱՀ պետական արխիվ, ֆ.180, ց.1, կ-11, պ.մ.50, թ.37,71:
[253] Մինասյան Է. Վարդանյան Ա., նշվ. աշխ., էջ 96:

բուժկետերին, հիվանդանոցներին, առողջապահության նախարարությանը ԹԲՀ-ի կողմից տրամադրվել են «Վարդանանց ասպետներ» և «iMEC» կազմակերպություններից ստացված բժշկական պարագաներ, սարքավորումներ, կահույք: Նույն թվականին հիմնադրամի հովանավորությամբ բուժկետ էր բացվել Հյուսիսային Քաշաթաղի Մշենի գյուղում: Հիմնադրամի կողմից կառուցվել էին Աղավնուտ համայնքի, հիմնանորոգվել և կահավորվել էին Մոշաթաղի բուժկետերը:

2015 թ. հիմնադրամի մասնակցությամբ Քաշաթաղի շրջանում իրականացրած բարեգործություններից էր Խաչգետիկ գյուղում կառուցված բուժկետը: Այս կարևոր կառույցն իրականություն դարձավ «Թուֆենկյան» հիմնադրամի, Երևանում գործող «One Armenia» կազմակերպության և Լոնդոնում գործող «Հայկական կենտրոն տրեստ» կառույցի միջոցով[254]:

ԱՀ առողջապահության նախարարության հետ համագործակցելով՝ ԹԲՀ-ն կազմակերպել է շարժական կլինիկայի ուղևորություններ դեպի Քաշաթաղի հարավային բոլոր գյուղերը, անցկացրել հետազոտություններ: Անվճար տրվել էր դեղորայք: Ծրագիրը շարունակվել էր ավելի ընդլայնված՝ ընդգրկելով ամբողջ Քաշաթաղն ու Քարվաճառը: Առողջապահության նախարարությունը տրամադրել էր դիագնոստիկայի բեռնատար[255]: Կազմակերպվել էին նաև «Birthink» մանկաբարձների որակավորման դասընթացներ Քաշաթաղի շրջանի բոլոր համայնքների բուժքույրերի համար:

ԹԲՀ-ն կազմակերպել էր շարժական կլինիկայի ուղևորություններ նաև Շահումյանի շրջանում: 2010 թ. սեպտեմբերին

---

[254] Վարդանյան Ա., «Թուֆենկյան» բարեգործական հիմնադրամի (ԹԲՀ) աջակցությունը ԱՀ ազատագրված տարածքների զարգացման գործում, ԱրՊՀ «Գիտական տեղեկագիր», 2018, N 1, էջ 133:

[255] «Հայկական Սփյուռք» տարեգիրք. 2010, Երևան, 2011, էջ 124:

Քարվաճառ էին այցելել տարբեր բժշկական մասնագետներից կազմված խմբեր, որոնք իրենց հետ բերել էին համապատասխան բժշկական սարքավորումներ: Տեղի բնակչությունը ուներ նմանատիպ միջոցառումների կարիք ու զոհ էր, որ կարողանում էր հետազոտվել շրջանում և ստիպված չէր լինում բժշկական հետազոտման ու ախտորոշում ստանալու համար մեկնել Ստեփանակերտ, Մարտակերտ կամ ՀՀ Վարդենիս քաղաք: Այս ծրագրերը որոշակիորեն թեթևացնում էին բնակիչների այդ հոգսերը[256]:

1966 թ. մալիսի 7-ին ԱՄՆ-ում Վարդան Ջինիշլանը, ի հիշատակ ծնողների՝ վերապատվելի տեր և տիկին Հարություն (Հայ ավետարանական եկեղեցու հովիվ) և Կատրին Ջինիշյանների, հիմնել է «Ջինիշյան հիշատակի ծրագիր» (ՋՀԾ) կազմակերպությունը: Հիմնադրման թվականից սկսած՝ ՋՀԾ-ն իր ծառայություններն ուղղել է Լիբանանի, Սիրիայի, Իրանի, Իրաքի, Երուսաղեմի, Թուրքիայի և հակամարտությունների ու անկայությունների շրջաններում գտնվող այդ երկրների կարիքավոր հայերին: ՋՀԾ-ն օգնել է բնակարանի, սննդի, հագուստի և բժշկական խնամքի կարիք ունեցողներին[257]:

Կազմակերպությունն իր աշխատանքները Հայաստանում սկսել է 1993 թ. սեպտեմբերից, 1999 թ.պաշտոնապես գրանցվել որպես «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամ՝ ՋՀՀ (անգլերեն՝ Jinishian Memorial Foundation) բարեգործական կազմակերպություն: ՋՀՀ հիմնական ֆինանսավորման աղբյուրը Ջինիշյան հիշատակի ծրագիրն է: Հայաստանում ՋՀՀ-ն ունի խորհրդատվական մարմին, որի անդամներն են Հայ առաքելական, Հայ ավետարանական, Հայ կաթողիկե եկեղեցիների ներկայացուցիչները: Հիմնադրամը Հայաստանում գործունեություն է ծավալում հիմնականում

---

[256] «Նոր Շահումյան», ԼՂՀ Շահումյանի շրջվարչակազմի պաշտոնաթերթ, թիվ 17(88), 1-15 սեպտեմբերի, 2010:

[257] Հայաստանյայց ավետարանական եկեղեցի, 2003, N2(26), էջ 20:

վեց ուղղություններով՝ համայնքների զարգացում, առողջապահություն, գործարարության զարգացում, օգնություն, հոգևոր վերելք և բնակարանաշինություն[258]:

«Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի առողջապահության ծրագրի շրջանակում ընդգրկված է նաև Արցախը: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության հետ համագործակցությամբ 2009 թ. մայիս-նոյեմբեր ամիսներին իրականացվել է «Համայնքային բուժքույրերի ունակությունների բարձրացման և վերապատրաստման ծրագիր Ղարաբաղում» 1-ին փուլը: 2010 թ. ապրիլին ՋՀՀ-ի և բարոնուհի Քոքսի անվան Ստեփանակերտի վերականգնողական կենտրոնի հետ համատեղ իրականացվել է «Օժանդակություն հաշմանդամներին Ղարաբաղում» ծրագրի 4-րդ փուլը. օգնություն է տրամադրվել ղարաբաղյան պատերազմի 100 հաշմանդամի և 35 քաղաքացու, իսկ նույն թվականի մայիս-դեկտեմբեր ընկած ժամանակահատվածում «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի և ՀՀ առողջապահության նախարարության նախաձեռնությամբ ԼՂՀ-ում իրականացվել է «Համայնքային բուժքույրերի ունակությունների բարձրացում և վերապատրաստում» ծրագրի 2-րդ փուլը, որին մասնակցել է 53 համայնքային բուժքույր[259]: Այս ծրագիրը շարունակվել է հաջորդ տարիներին. 2011 թ.վերապատրաստվել է 55 համայնքային բուժքույր, իսկ 2012 թ.՝ 99-ը: 2012 թ. հունիսի վերջին ավարտվել է դեռևս 2011 թվականից սկսված «Օժանդակություն հաշմանդամներին Ղարաբաղում» ծրագրի 5-րդ փուլը, որի շրջանակում բժշկական օգնություն են ստացել Արցախյան պատերազմի 100 հաշմանդամ վետերաններ[260]:

---

[258] «Հայ Սփյուռք» հանրագիտարան, Երևան, 2003, էջ 722:

[259] «Հայկական Սփյուռք» տարեգիրք. 2010, Երևան, 2011, էջ 136-137:

[260] «Հայկական Սփյուռք» տարեգիրք. 2012, Երևան, 2012, էջ 121-122:

«Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի գործունեությունը առողջապահության ոլորտում ուղղված է նաև հիվանդությունների կանխարգելմանն ու առողջ ապրելակերպի խթանմանը: 2013 թ. հիմնադրամը Երևանում, Լոռիի, Շիրակի, Սյունիքի մարզերում և Ղարաբաղում իրականացրել է «Հաշմանդամության կանխարգելում երեխաների մոտ և արտագնա կլինիկաներ» ծրագիրը, որի նպատակն էր նվազեցնել կոնքազդրային հոդի հաշմանդամությունը երեխաների մոտ և բարելավել հաշմանդամ երեխաների կենսական պայմանները: Նույն թվականին ՋՀՀ-ն իրականացրել է նաև «Ամառային ճամբար - 2013» ծրագիրը, որին մասնակցել են 10-17 տարեկան 156 երեխա Լոռիի, Գեղարքունիքի մարզերից, Երևանից և Ղարաբաղից[261]: Ծրագրին մասնակից երեխաները հիմնականում անապահով ընտանիքներից և մանկատներից էին:

Հիմնադրամի նախաձեռնությամբ 2014 թ. իրականացվել է «Ղարաբաղի հիվանդանոցներում վերականգնողական կենտրոնների ստեղծում» ծրագիրը, որի նպատակն էր բարելավել վերականգնողական ծառայությունները ԼՂՀ Ստեփանակերտի, Հադրութի, Մարտակերտի, Մարտունու հիվանդանոցներում և Ստեփանակերտի վերականգնողական կենտրոնում[262]:

Արցախում առողջապահական ծրագրերի իրականացման գործում իր ուրույն տեղն ունի Հայ օգնության ֆոնդը: Հայ օգնության ֆոնդը (ՀՕՖ, անգլերեն՝ Fund for Armenian Relief) Հայաստանյայց առաքելական եկեղեցու ԱՄՆ արևելյան թեմի բարեգործական կազմակերպություն է: Ստեղծվել է 1998 թ. Սպիտակի երկրաշարժից հետո Նյու-Յորքում՝ ԱՄՆ արևելյան թեմի առաջնորդարանի նախաձեռնությամբ: Նպատակն էր ավելի արդյունավետ դարձնել տեղի հայության և ամերիկյան հասարակության ու տարբեր կազմակերպությունների օգնությունը հայրենիքին: 1993

---

[261] «Հայկական Սփյուռք» տարեգիրք. 2013, Երևան, 2014, էջ 146-147:

[262] «Հայկական Սփյուռք» տարեգիրք. 2014, Երևան, 2015, էջ 124:

թ. փետրվարից գրանցվել է որպես անկախ կառույց՝ հնարավորություն ստանալով գործելու ինքնուրույն[263]: ՀՕՖ-ի կենտրոնական գրասենյակը գտնվում է Նյու Յորքում: Կազմակերպության գրասենյակը Երևանում բացվեց 1991 թվականին:

Սկզբնական շրջանում Հայաստանում ՀՕՖ-ի ծրագրերը մարդասիրական բնույթի էին, իսկ ժամանակ անց կազմակերպությունը նախապատվությունը սկսեց տալ երկրի զարգացմանը նպաստող ծրագրերին՝ ընդգրկելով կյանքի տարբեր բնագավառները՝ շինարարություն, գյուղատնտեսություն, առողջապահություն, գիտություն, կրթություն, մշակույթ և այլն:

Պատերազմից տուժած Արցախին օգնելու նպատակով 1997 թ. Ստեփանակերտում բացվում է ՀՕՖ-ի գրասենյակ, որն իրականացնում է բազմապիսի բարեգործական ծրագրեր հանրապետության գրեթե բոլոր շրջաններում:

ԼՂՀ առողջապահական համակարգում ծրագրեր իրականացնելու առումով նշանակալից էր 2005 թվականը: Բացի 37 բուժկետերի վերանորոգումից և նրանց բուժսարքավորումներով ապահովելու գործընթացից՝ Հայաստանի Ամերիկյան համալսարանի առողջապահության ծառայությունների և ուսումնասիրությունների կենտրոնի հետ իրականացվեց Մարտունու, Մարտակերտի, Ասկերանի և Հադրութի շրջանների բուժանձնակազմի վերապատրաստում և ընդգրկեց հիշյալ շրջանների 296 բուժաշխատողների՝ 46 բժիշկ ու 250 բուժքույր: Լեռնային Ղարաբաղի բոլոր բնակավայրերի բուժկետերի պատասխանատուներն ու բուժաշխատողները (թվով՝ 113) վերապատրաստվեցին նաև «Մանկական հիվանդությունների ինտեգրացված վարում» ծրագրով[264]:

2011 թվականից «Ամերիկահայ առողջապահության մասնագետների կազմակերպության» և ՀՕՖ-ի կողմից իրականացվում է

---

[263] «Հայ Սփյուռք» հանրագիտարան, էջ 686:

[264] Հայ օգնության ֆոնդ, տարեկան տեղեկագիր, 2006, էջ 3:

նաև «Շարունակական բժշկական կրթության ծրագիր» Արցախի բժիշկների համար: Ծրագրի նպատակն էր բարձրացնել բնակչության առողջապահական սպասարկման որակը, մասնագետներին ծանոթացնել տարբեր հիվանդությունների ախտորոշման և բուժման նորագույն մեթոդներին, նպաստել հետազոտման ու բուժման ոլորտում ներդրված նորագույն մեթոդների և տեխնոլոգիաների յուրացմանը: Նշված ծրագրի շրջանակում մինչև 2018 թ. սեպտեմբեր ամիսը Երևանի առաջատար բուժհիմնարկներում Արցախից վերապատրաստվել է մոտ 240 բժիշկ: ՀՕՖ-ի աջակցությամբ Արցախում իրականացվել են նաև արտագնա դասընթացներ բժիշկների համար՝ Երևանի առաջատար մասնագետների մասնակցությամբ:

2018 թվականից մեկնարկել է վերապատրաստման նոր ծրագիր համայնքային բուժքույրերի համար, որի շրջանակում վերապատրաստվել են Մարտակերտի, Հադրութի, Քաշաթաղի և Շահումյանի շրջանների 124 համայնքային բուժքույրեր: Այդ նպատակով դեռ 2018 թ. ապրիլ ամսին ՀՀ առողջապահության նախարարության առողջապահության ազգային ինստիտուտում որպես դասընթացավարներ վերապատրաստվել են նշված շրջանների բուժմիավորումների 4 բժիշկ և 7 բուժքույր: Ծրագիրը շարունակվել է 2 տարի[265]: Վերոհիշյալ դասընթացներն անվճար էին, ՀՕՖ-ի գրասենյակի կողմից մասնակիցներին տրամադրվում էր ֆինանսական աջակցություն՝ տրանսպորտային ու սննդի ծախսերը հոգալու համար:

Հայ օգնության ֆոնդի միջոցներով ԱՀ առողջապահության նախարարության հանրապետական բժշկական կենտրոնի դահլիճում 2019 թ. հուլիսի 1-ին մեկնարկեց 5-րդ համահայկական

---

[265] Վարդանյան Ա., Հայրապետյան Է., Հայ օգնության ֆոնդի ազգօգուտ գործունեությունը Արցախում (1997-2019 թթ.), ԱրՊՀ «Գիտական տեղեկագիր», պրակ 1, Ստեփանակերտ, 2020, էջ 213:

բժշկական համագումարը՝ «Հայաստան-Սփյուռք-Արցախ միաձուլում հանուն առողջության» խորագրով: Նման համագումարների, սիմպոզիումների պատմության ընթացքում թերևս առաջին դեպքն է, երբ Արցախում կազմակերպվել է նաև սատելիտ (տվյալ տարածաշրջանում անհրաժեշտ թեմաներ) սիմպոզիում, որը ներառեց երեխաների ու մեծահասակների առողջության վերաբերյալ արդի խնդիրները: Հայ բժիշկների համագումարի նպատակն էր ծանոթացնել բժշկագիտության վերջին նվաճումներին, ստեղծել հնարավորություններ՝ այդ ամենը ներդնելու ՀՀ-ում ու Արցախում, ինչպես նաև զարգացնելու աշխարհի տարբեր վայրերում գործունեություն ծավալող բժիշկների համագործակցությունը: Համագումարի շրջանակում կազմակերպվել էին նաև բուժքույրերի սիմպոզիումներ Տավուշում, Երևանում, հուլիսի 10-ին՝ համագումար Ստեփանակերտում, որին մասնակցում էին ԱՀ, ՀՀ և ԱՄՆ բուժաշխատողները: Համագումարի նպատակն էր բուժքույրերի մասնագիտական որակավորման բարձրացումը: Ծրագրի շրջանակում Ամերիկահայ բուժքույրերի ասոցիացիան Արցախի «Բուժքույրերի միավորում» հասարակական կազմակերպությանը նվիրել է որոշ բուժպարագաներ, փոխանցել դրանց կիրառման նոր մեթոդները, որպեսզի վերջիններս էլ այդ գիտելիքները փոխանցեն մյուսներին[266]:

«Հովարդ Կարագյոզյան» հաստատությունը (ՀԿՀ, անգլերեն՝ Howard Karagyozyan Medical Benevolent Foundation, կոչվում է նաև «Հովարդ Կարագյոզյան հիշատակի ընկերակցություն») բարեսիրական կազմակերպություն է: Այն 1921 թ. Նյու Յորքում հիմնել են Միհրան և Զապել Կարագյոզյանները՝ ի հիշատակ իրենց վաղամեռիկ որդու Հովարդի և կոչել նրա անունով: Սկզբնապես հաստատության նպատակն է եղել տարբեր երկրներում ապրող հայ

[266] Նույն տեղում, էջ 213-214:

որբ, կարիքավոր մանուկների խնամքի, բուժման և կրթության կազմակերպումը[267]:

1992 թ.հոկտեմբերին հիմնադրվել և պաշտոնական գրանցում է ստացել Հայաստանի «Հովարդ Կարագյոզյան» բարեգործական հասարակական կազմակերպությունը, որի տնօրեն է նշանակվել բժիշկ Կամո Տեր-Պետրոսյանը: Կազմակերպության ծրագրով նախատեսվում էր Երևանում և Հայաստանի տարբեր մարզերում հիմնել միջազգային չափանիշներին համապատասխանող ժամանակակից սարքավորումներով հագեցած ու բարձրորակ մասնագետներով համալրված մանկական ատամնաբուժարաններ՝ հայաստանաբնակ երեխաներին անվճար և որակյալ բուժական օգնություն ցուցաբերելու նպատակով[268]:

1992 թ. ապրիլին Երևանի Նորքի բարձունքում բացվեց Հայաստանի «Հովարդ Կարագյոզյան» կազմակերպության առաջին մանկական ատամնաբուժարանը, որն ընդլայնվելով դարձավ կազմակերպության հայաստանյան կենտրոնը և հետագայում գլխավորեց նաև մասնաճյուղ ատամնաբուժարանների աշխատանքը: Կարճ ժամանակամիջոցում բացվել են Գյումրու (1995 թ.), Գորիսի ու Ստեփանակերտի (1996 թ.), Երևանի «Սեբաստիա» (1998 թ.) և Վանաձորի (2000 թ.) «Կարագյոզյան» մանկական ատամնաբուժարանները[269]:

ԼՂՀ կառավարության անունից առողջապահության նախարարության և ԱՄՆ «Կարագյոզյան» հաստատության միջև կնքված պայմանագրի համաձայն՝ պայմանավորվածություն ձեռք բերվեց հանրապետությունում բարեգործական հիմունքներով

---

[267] The Howard Karagheuzian Commemorative Corporation 75 years of service, New York 1996, p.18.

[268] Հովարդ Կարագյոզյան հիշատակի ընկերակցությունը Հայաստանում (10 տարի), Երևան, 2002, էջ 17-18:

[269] «Հայկական Սփյուռք» տարեգիրք, Երևան, 2009, էջ 143:

մանկական ատամնաբուժական կենտրոնների ստեղծման և նրա գործունեության ապահովման մասին: 1996 թ. գարնանը Ստեփանակերտում հանրապետական ախտորոշման կենտրոնի շենքի առաջին հարկում բացվեց Հայաստանի «Կարագյոզյան» հաստատության մանկական ատամնաբուժարանը, որի կահավորման և հատուկ սարքավորումների ծախսերն իր վրա վերցրեց կազմակերպությունը: Մանկական ատամնաբուժական կենտրոնն Արցախում առաջին բարեգործական բժշկական հիմնարկությունն է, որտեղ սպասարկումն անվճար է և նախատեսված միայն ու միայն երեխաների համար[270]:

2003 թ. «Կարագյոզյան» հաստատության կողմից գնվել է նոր շենք, որը գտնվում է Ստեփանակերտի մանկական հիվանդանոցի և պոլիկլինիկայի հարևանությամբ: Այն կահավորված է, հագեցած է ժամանակակից սարքավորումներով, գործիքներով և բուժանյութերով, ունի 2 ատամնաբուժական, մեկ ակնաբուժական (2003 թ.), ախտահանման, մեկ պանորամիկ ռենտգեն կաբինետ՝ երևակման սենյակով, և գրանցման բաժին: «Հովարդ Կարագյոզյան» բարեգործական հասարակական կազմակերպության Ստեփանակերտի մասնաճյուղ դարմանատան ատամնաբուժական և ակնաբուժականան անվճար որակյալ ծառայություններից օգտվում են Ստեփանակերտ քաղաքի մինչև 14 տարեկան բոլոր երեխաները, ինչպես նաև մերձակա այլ բնակավայրերի հաշմանդամ, երկկողմանի կամ միակողմանի ծնողազուրկ, սոցիալապես անապահով նույն տարիքի երեխաները:

Կազմակերպության ֆինանսավորմամբ իրականացվել է Ստեփանակերտի ներարկման կլինիկայի շինվերակառուցման աշխատանքը: Նրա կողմից կատարվել են ԼՂՀ առողջապահության նախարարության հաշմանդամների վերականգնողական

[270] «ԼՂ Հանրապետություն», 28 մայիսի, 1996:

կենտրոնի շենքի կցակառույցի նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման, ինչպես նաև վերականգնողական կենտրոնի վերակառուցման աշխատանքներ[271]:

«Հովարդ Կարագյոզյան» բարեգործական հասարակական կազմակերպությունը, բացի ատամնաբուժական և ակնաբուժականան անվճար ծառայություններից, իրականացնում է «Վատ լսող երեխաներին լսողական ապարատների անվճար բաշխում»(իրականացվում է 2002 թվականից), «Պարբերական հիվանդությամբ երեխաների դեղորայքի անվճար բաշխում» (իրականացվում է 2003 թվականից), «Սրտի բնածին արատներով մինչև 7 տարեկան երեխաների անվճար վիրահատություններ» (իրականացվում է 2003 թվականից), «Էպիլեպսիայով հիվանդ երեխաներին դեղորայքի անվճար բաշխում» (իրականացվում է 2004 թվականից) ծրագրերը, որոնցից օգտվել են տասնյակ հազարավոր հայ երեխաներ Երևանից, ՀՀ տարբեր մարզերից և ԼՂՀ-ից[272]:

«Հովարդ Կարագյոզյան ընկերակցության» կողմից Արցախում իրականացվող վերոհիշյալ ծրագրերը կրում են շարունակական բնույթ՝ նպաստելով հայ երեխաների առողջության պահպանմանը:

«Ձեռք ձեռքի» (անգլերեն՝ Hand in hand) բարեգործական հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 2004 թ. հոկտեմբերին Ստեփանակերտում՝ Օնտարիոյի հայ-կանադական բժշկական միության (ACMAO, Տորոնտո), Քվեբեկի հայ-կանադական բժշկական միության (AMAO, Մոնրեալ), ԱՄՆ հայ ատամնաբույժների միջազգային ասոցիացիայի (AIDA, Բոստոն), Լիբանանի ատամնաբուժական ասոցիացիայի (ADAL, Բեյրութ), Ֆրանսիայի ատամնաբույժների (UMAF, Փարիզ) ջանքերով՝ արցախահայության առողջական խնդիրները լուծելու նպատակով: Հիմնադիր

---

271 ԱՀ պետական արխիվ, ֆ. 180, ց.1, կ-10, պ.մ. 45, թ.69:

272 ԱՀ պետական արխիվ, ֆ. 180, ց.1, կ-11, պ.մ. 50, թ.33,14:

անդամներն են՝ Զարեհ Ուզունյանը, Ավետիս Բոգոսյանը(Տորոնտո), Բերջ Քիլաջյանը, Արամ Միրաքյանը (Բոստոն), Վիգեն-Գեղամ Տեր-Սարգսյանը(Փարիզ) և այլ նվիրյալ բժիշկներ: Կազմակերպության նախագահն է Բերջ Քիլաջյանը, գործադիր տնօրենն է Վահագն Ղազարյանը:

Մինչ կազմակերպության հիմնադրումը Օնտարիոյի հայ-կանադական բժշկական միության ֆինանսական աջակցությամբ 1998 թվականից Շուշիում գործում էր ատամնաբուժական կլինիկա: Քվեբեկի Հայ-կանադական բժշկական միության հովանավորությամբ 2003թ. ատամնաբուժարան էր բացվել Հադրութ քաղաքում: Օնտարիոյի հայ-կանադական բժշկական միության անդամների 10 ընտանիքների հովանավորությամբ 2004 թ. Ստեփանակերտում բացվեց Կանանց առողջության կլինիկա[273]: Բժշկական այս հաստատությունները կահավորված են, հագեցած ժամանակակից սարքավորումներով, գործիքներով և բուժանյութերով: Կլինիկաների աշխատանքները համակարգելու նպատակով էլ հիմնադրվեց «Ձեռք ձեռքի» հասարակական կազմակերպությունը:

Օնտարիոյի հայ-կանադական բժշկական միության, Բոստոնի հայ ատամնաբույժների միջազգային ասոցիացիայի և Ֆրանսիայի ատամնաբույժների կազմակերպության ֆինանսավորմամբ 2005 թ. հիմնադրվեց Մարտունի քաղաքի ատամնաբուժական կլինիկան: Ատամնաբուժարանի կառուցման և գազաֆիկացման աշխատանքները իրականացրել է «Ձեռք ձեռքի» հասարակական կազմակերպությունը[274]:

Կազմակերպության, «Հայաստան» համահայկական հիմնադրամի Ֆրանսիայի մասնաճյուղի և Արցախի կառավարության աջակցությամբ 2015թ. վերջին ատամնաբուժական կլինիկա բացվեց

---

[273] Նյութը տրամադրել է «Ձեռք ձեռքի» կազմակերպության գործադիր տնօրեն Վահագն Ղազարյանը:

[274] ԱՀ պետական արխիվ, ֆ.180, ց.1, կ-11, պ.մ. 50, թ. 11, 82:

Մարտակերտում: «Ձեռք-ձեռքի» կազմակերպության կլինիկաները բարեգործական հիմունքներով տասնյակ հազարավոր ԼՂՀ քաղաքացիների մատուցում են ինչպես բուժական, այնպես էլ կարիեսի, բերանի խոռոչի հիվանդությունների դեմ կանխարգելիչ ծառայություններ:

Օնտարիոյի Հայ-կանադական բժշկական միության, Բոստոնի Հայ ատամնաբույժների միջազգային ասոցիացիայի և Դոն Միլլս Ռոտարի ակումբի հովանավորությամբ 2006 և 2010 թթ. ստեղծվեցին ժամանակակից սարքավորումներով հագեցած շարժական ատամնաբուժարաններ, որոնց օգնությամբ հետազոտություններ ու բուժումներ են անցկացվում մեծահասակների, հատկապես դպրոցականների շրջանում հանրապետության տարբեր վայրերում:

Ընդլայնելով իր բարեգործական գործունեության շրջանակը՝ կազմակերպությունը մասնակցել է «Ժպիտ» նախագծին: Այս նախագիծը մեկնարկել է 2008 թ. ՀՕՖ-ի «ԳաֆԷսճեան ընտանիք» հիմնադրամի հովանու ներքո գործող «Հույս Հայաստանի» կազմակերպության «Ժպիտ» միջազգային կազմակերպության, Երևանի «Արաբկիր» բժշկական կենտրոնի և «Ձեռք-ձեռքի» կազմակերպության ջանքերով: Նպատակն էր վիրահատական միջամտություն ցուցաբերել Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի՝ «նապաստակի շրթունք» և «գայլի երախ» արատներով շուրջ 50 երեխաների: 2009 թ. ամռանը «Ժպիտ» նախագծի 2-րդ փուլի շրջանակում իրականացվել են վերոնշյալ արատներով 55 երեխայի անվճար վիրահատություններ[275]:

Արցախի Հանրապետությունում առողջապահական ծրագրերի իրականացման գործում մեծ ներդրում ունեն սփյուռքահայ բարերարները: Նրանց աջակցությամբ շահագործման են հանձնվել

[275] «Հայկական Սփյուռք» տարեգիրք, Երևան, 2013, էջ 141-142:

տասնյակ բուժկետեր տարբեր շրջաններում, վերանորոգվել հիվանդանոցներ, կազմակերպվել բուժաշխատողների վերապատրաստում և այլն:

ԼՂՀ Մարտակերտի շրջանի Նոր Կարմիրավան գյուղի բուժկետ-գյուղապետարանի վարչական շենքի կառուցումն իրականացվել է Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի, բարերար Օնիկ Հարությունյանի ֆինանսավորմամբ[276]. Ամերիկահայ բարերար Վաչե Հովսեփյանի, Կալիֆոռնիայի հայ ատամնաբույժների միության և հատկապես բարերար Վիգեն Կարապետյանի հովանավորությամբ Մարտունու շրջանի Աշան գյուղում 2003 թ. բացվեց ատամնաբուժական կլինիկա՝ համալրված բոլոր անհրաժեշտ սարքավորումներով: Կլինիկայում դպրոցականները ստանում են անվճար բուժօգնություն: Սակայն լինելով միակը շրջանի համայնքներում, բացի դպրոցականներից, ատամնաբուժարանի ծառայություններից օգտվում են նաև հարևան գյուղերի բնակիչները[277]:

Ռուսաստանի Դաշնության Կրասնոդար քաղաքում ապրող բարերարներ Համլետ Համբարձումյանի և Վոլոդյա Ավագյանի բարեգործությամբ վերանորոգվեց Մարտունու շրջանի Ճարտար գյուղի տեղամասային հիվանդանոցը[278]:

2013 թ. սեպտեմբերի 24-ին Ստեփանակերտում շահագործման հանձնվեց ԱՀ առողջապահության նախարարության նորակառույց, ժամանակակից պայմաններին համապատասխան Հանրապետական բժշկական կենտրոնը: Այն կառուցվել է Մոսկվայում գործող«Տաշիր» ընկերությունների խմբի նախագահ, մեծ բարերար Սամվել Կարապետյանի ֆինանսական աջակցությամբ:

---

[276] ԱՀ պետական արխիվ, ֆ. 180, ց.1, կ-11, պ.մ.50, թ.85:
[277] «Ազատ Արցախ», 8 սեպտեմբերի, 2011:
[278] Նույն տեղում, 3 հուլիսի, 2014:

Կենտրոնը հագեցած է նոր սերնդի առաջնակարգ բուժսարքավորումներով: Այն նախատեսված է 136 մահճակալի համար, այդ թվում՝ 60-ը թերապևտիկ բաժանմունքում: Առկա է պլանային հիվանդների ընդունարան, շտապ և անհետաձգելի բժշկական օգնության բաժանմունք՝ իր բարձրակարգ բժշկական սարքավորումներով հագեցած երկու ռեանիմոբիլներով, վիրահատական բլոկ, հեմոդիալիզի բաժանմունք, վարչատնտեսական մաս և շենքից դուրս տեղակայված տնտեսական մաս[279]: Հանրապետության նախկին նախագահի առաջարկությամբ հիվանդանոցը կրում է բարերարի ծնողների՝ Սարգիս և Ամալյա Կարապետյանների անունը: 2016 թ. աշնանը Սամվել Կարապետյանի նվիրատվությամբ բժշկական կենտրոնին հարող տարածքում բացվեց ճարտարապետական ուշագրավ լուծումներով պուրակ:

«Հայաստան» համահայկական հիմնադրամի Ֆրանսիայի տեղական մարմնի ատենապետ Պետրոս Թերզյանի աջակցությամբ, ֆրանսահայ բարերար Ռիշար Օհաննիսյանի հովանավորությամբ և Արցախի կառավարության համաֆինանսավորմամբ Ստեփանակերտում՝ Հանրապետական բժշկական կենտրոնի հարևանությամբ 2018 թ. հոկտեմբերի 15-ին բացվեց ուռուցքաբանական դիսպանսերի նոր շենք: Նորակառույց կենտրոնը կրում է Ռիշար Օհաննիսյանի ծնողների՝ Վարդան և Գոհարիկ Օհաննիսյանների անունը[280]: Դիսպանսերը նախատեսված է 35 հիվանդի համար: Այստեղ իրականացվում են ուռուցքաբանության մեջ ընդունված արդի բուժական և ախտորոշիչ բոլոր միջամտությունները՝ բացառությամբ ճառագայթային բուժումի:

Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) անդամ և բարերար Նազար Նազարյանի նվիրատվությամբ Արցախի Հանրապետության բժշկական կենտրոնին տրամադրվել է Toshiba

---

[279] Նույն տեղում, 26 սեպտեմբերի, 2013:

[280] Նույն տեղում, 26 հոկտեմբերի, 2018:

մակնիշի գերձայնային սարք, որը հնարավորություն է տալիս իրականացնելու սրտանոթային, վահանաձև գեղձի, որովայնի և այլ հետազոտություններ[281]:

Մոսկվաբնակ հայ բարերար, «Լուդինգ» ընկերության հիմնադիր-նախագահ Արթուր Վարժապետյանի կողմից Արցախի առողջապահության նախարարությանը տրամադրվեց երկու ռեանիմոբիլ և շտապ օգնության չորս զծային ավտոմեքենաներ[282]:

Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության բժշկական կենտրոնի հետ սերտ կապեր է հաստատել ֆրանսիական «Հայ-մեդ» ասոցիացիան: Կազմակերպության օրթոպեդ Մկրտիչ Կարապետյանը 2012 թվականից այցելում է Արցախ և իր գործընկերներին ներկայացնում վնասվածքաբանության վերջին մոտեցումները, բուժման արդի եղանակները, նվիրաբերում բժշկական պարագաներ: Ամեն անգամ հետազոտվում և բուժօգնություն է ստանում ավելի քան 60 հիվանդ: Անվճար իրականացված վիրահատություններից բացի՝ ֆրանսահայ վնասվածքաբանը հիվանդանոցին նվիրաբերել է մի քանի պրոթեզ[283]:

Ասոցիացիայի նախաձեռնությամբ 2017 թ. ապրիլին կազմակերպվեց «Բաց դռների օր»: Ասոցիացիայի նախագահ անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգ Ժան Միշել Էրքերյանը, ուրոլոգ Շանթ Բալյանը, բուժքույր Վալերի Սայադյանը Ստեփանակերտում և հանրապետության մյուս շրջաններում անվճար իրականացրին հիվանդների ընդունելություններ, խորհրդատվություններ, վիրահատություններ, առողջապահության համակարգի բուժաշխատողներին ներկայացրին ուրոլոգիայի և անեստեզիոլոգիայի ոլորտների նորագույն մեթոդները, բուժօգնության եվրոպական չափանիշները: Այդ ամենին զուգահեռ՝ նրանք, լինելով Արցախի

---

281 «Հայկական Սփյուռք» տարեգիրք 2013, Երևան, 2014, էջ 127:

282 «Ազատ Արցախ», 26 սեպտեմբերի, 2013:

283 Նույն տեղում:

առանձին գյուղերում, ծանոթացել են բուժկետերի աշխատանքներին, տրամադրել նրանց անհրաժեշտ դեղորայք, բժշկական պարագաներ[284]: 2018 թ. ապրիլին Արցախի Հանրապետության բժշկական կենտրոնում, «Արևիկ» մանկական բուժմիավորումում Էրքերյանի գլխավորությամբ Ֆրանսիացի ութ մասնագետները (ուրոլոգ, քիթ-կոկորդ-ականջաբան, էնդոկրինոլոգ, բուժքույր) կատարեցին շուրջ 45 վիրահատություն, իսկ Մարտակերտի շրջանի Դրմբոն, Գետավան, Ղազարահող, Չափար ու Ասկերանի շրջանի Շոշ գյուղերի բուժկետերին տրամադրեցին առաջին բուժօգնության պարագաներ, դեղորայք, անհրաժեշտ բուժօգնություն: Այցի շրջանակում միաժամանակ մասնագիտական աշխատանքներ են իրականացվել վերոնշյալ շրջանների գյուղերի բուժկետերում, որոնք հիմնանորոգվել են «Հայ-մեդ» ընկերության միջոցներով, անվճար կատարվել է ութ վիրահատություն[285]:

ԱՄՆ Կալիֆոռնիա նահանգի Ֆրեզնո քաղաքի հայ համայնքի օժանդակությամբ Հանրապետական բժշկական կենտրոնի պոլիկլինիկական բաժանմունքում, Մոր և մանկան առողջության պահպանման կենտրոնում, «Արևիկ» մանկական բուժմիավորումում և «Դենտեքս Դենտալ գրուպ» ատամնաբուժական կլինիկայում ամերիկացի բժիշկների կողմից կազմակերպվեց «Բաց դռների օր»: Ծրագրի շրջանակում շուրջ 30 բժիշկներ՝ թերապևտներ, ընդհանուր և դիմածնոտային վիրաբույժներ, նեոնատոլոգներ ու մանկաբարձ-գինեկոլոգներ, մանկաբույժներ, ատամնաբույժներ, անցկացրին անվճար խորհրդատվություններ ու հետազոտություններ, կատարեցին վիրահատություններ (հատկապես՝ զինվորների շրջանում): Նրանք բերել էին անհրաժեշտ դեղորայք, սարքավորումներ: Հատկապես կարևոր նշանակություն ուներ ակնահատակի հետազոտման «Ռետինոսկոպ» սարքը, որը գործածվում է

---

[284] «Ազատ Արցախ», 15 ապրիլի, 2017:

[285] Նույն տեղում, 6 ապրիլի, 2018:

շաքարային դիաբեդով տառապող և հիվանդության պատճառով կուրանալու վտանգ ունեցող հիվանդների շրջանում[286]:

Ֆրեզնո քաղաքի բժշկական առաքելության և «Չեվի Չեստ» կազմակերպության մասնագետները 2019 թ. հոկտեմբերի 6-11-ը հերթական անգամ կազմակերպեցին «Բաց դռների օր», որի շրջանակներում ԱՀ առողջապահության նախարարության հանրապետական բժշկական, Մոր և մանկան առողջության պահպանման կենտրոններում, «Արևիկ» մանկական բուժմիավորումում, Քերոլայն Քոքսի անվան վերականգնողական կենտրոնում, «Դենտեքս Դենտալ» ատամնաբուժարանում և Մարտակերտի շրջանային բուժմիավորումում իրականացրին բժշկական անվճար խորհրդատվություններ, հետազոտություններ, վիրահատական միջամտություններ[287]:

«Հայաստան» համահայկական հիմնադրամի և ԱՄՆ «Adventist Health Glendale» բժշկական կենտրոնի հետ Արցախում առաջին անգամ կազմակերպվեց առողջապահական բազմոլորտ նեղ մասնագիտական հիվանդությունների հետազոտման և վիրահատությունների իրականացման ծրագիր: 2018 թ. սեպտեմբերի 30-ից ամերիկահայ և այլազգի բժիշկները կամավորության սկզբունքով իրականացրին հետազոտություններ, ընդհանուր և անոթային վիրաբուժական, ակնաբուժական (մասնավորապես՝ կատարակտի) վիրահատություններ, ծնկան և ուսային հոդերի էնդոպրոթեզավորում, սրտաբանական միջամտություններ և գինեկոլոգիական վիրահատություններ: Չորս օրվա ընթացքում ԱՄՆ բժիշկներն իրականացրին 75 գաստրոսկոպիա և կոլոնոսկոպիա, մինչև 25 ընդհանուր վիրաբուժական միջամտություն, հոդի վնասվածքների 16 վիրահատություն, 16 արթրոսկոպիա, իսկ անգիոգրաֆիկ բաժանմունքում՝ սրտի և գլխուղեղի հետ կապված 13

---

[286] Նույն տեղում, 13 հոկտեմբերի, 2016:

[287] Նույն տեղում, 16 հոկտեմբերի, 2019:

հետազոտություն, ըստ անհրաժեշտության՝ այլ վիրահատություններ: Ամերիկացի առաջատար բժիշկներն իրենց հետ բերել էին բավականին նոր սարքավորումներ, մասնավորապես՝ 4 գաստրոսկոպ-կոլոնոսկոպ, ակնաբուժական «Infinity» մակնիշի ֆակոէմուլսիֆիկացիոն ժամանակակից սարքավորում, որը թույլ է տալիս ավելի արդի մեթոդներով կատարել կատարակտի վիրահատությունը: Բացի դրանից՝ նվիրաբերել են ծնկան հոդի թանկարժեք 16 պրոթեզ, շուրջ 240 հազար ԱՄՆ դոլարի սարքավորում և 80 հազար դոլար արժողությամբ դեղորայք, բժշկական պարագաներ[288]:

Արցախի Հանրապետությունում պարբերաբար կազմակերպվող «Բաց դռների օր» ծրագրի շրջանակում 2019 թ. հոկտեմբերին Արցախ այցելած «Adventist Health Glendale» բժշկական կենտրոնի ավելի քան 50 բժիշկ-մասնագետները Հանրապետական բժշկական կենտրոնում, «Արևիկ» մանկական բուժմիավորումում, ուռուցքաբանական ծառայությունում, Մոր և մանկան առողջության պահպանման կենտրոնում ցուցաբերեցին բարձրակարգ բուժօգնություն՝ բազմապրոֆիլ նեղ մասնագիտությունների մասով: Բացի Ստեփանակերտի բուժհաստատություններից՝ նրանք բուժօգնություն ցուցաբերեցին Քարին տակ, Շոշ, Քռասնի, Գետավան, Թաղասեռ, Սարգսաշեն և այլ համայնքներում: Բժշկական կենտրոնն Արցախի բուժհաստատություններին նվիրատվության կարգով տրամադրել է մեծ քանակի դեղորայք, նորագույն սարքեր, տարբեր պրոթեզներ[289]:

2020 թ. փետրվարին Արցախ այցելած բժշկական կենտրոնի բարձրակարգ բժիշկները, օգտագործելով անգիոգրաֆիկ սարքի բոլոր հնարավորությունները, 10 հիվանդի կատարել են ուղեղի

---

[288] Նույն տեղում, 3 հոկտեմբերի, 2018:

[289] Նույն տեղում, 4 հոկտեմբերի, 2019:

նեյրոինվազիվ միջամտություններ, իսկ 3 հիվանդի տեղադրել են սրտի ռիթմավար[290]:

Շուշիի հիվանդանոցի հետ սերտ կապեր է հաստատել հայտնի սիրիահայ վիրաբույժ ACMA (Հայկական քրիստոնեական բժշկական ասոցիացիա) կազմակերպության նախագահ, պրոֆեսոր Ջանի Հադդաթը (Հովհաննես Դեմիրճյան): Նրա ղեկավարությամբ կազմակերպության անդամները մարդասիրական առաքելությամբ չորս անգամ այցելել են Շուշի: Չորրորդ այցելության ժամանակ Շուշիի հիվանդանոցի գլխավոր բժիշկ Վիգեն Խաչատրյանի հետ միասին կատարվել են 80 հետազոտություններ, ինչպես նաև 30 վիրահատություններ՝ զոբ, լեղապարկ, թութք և ճողվածքներ (գրիժաներ)[291]: 2017 թ. հունիսին «Բաց դռների օր» ծրագրի շրջանակում նրա կողմից կատարվել են շուրջ 100 խորհրդատվություն, 46 վիրահատություն, 41 վիրահատություն՝ Շուշիում, 5-ը՝ Մարտակերտում[292]:

2016 թ. դեկտեմբերին ավստրիահայ բժիշկ-անոթաբան Արա Ուղուրլյանի գլխավորությամբ Ստեփանակերտում էին անոթային երեք վիրաբույժներ, որոնք հանրապետական բժշկական կենտրոնում անվճար հետազոտեցին 50 հիվանդի, իսկ 15-ին վիրահատեցին անոթաբանության ոլորտի արդի մեթոդներով: 2017 թ. երկօրյա այցի ընթացքում Ա. Ուղուրլյանը հասցրել է հետազոտել 20 հաճախորդի, իսկ 13-ին՝ վիրահատել տեղի մասնագետների հետ միասին[293]: 2019 թ. օգոստոսին ճանաչված բժիշկը հերթական բարեգործությունն իրականացրեց բժշկական կենտրոնում: Այս անգամ վիրահատական միջամտությունները կատարվեցին տեղի մասնագետների կողմից Ա. Ուղուրլյանի վերահսկողության

---

[290] Նույն տեղում, 24 փետրվարի, 2020:
[291] Նույն տեղում, 22 նոյեմբերի, 2012:
[292] Նույն տեղում, 22 նոյեմբերի, 2017:
[293] Նույն տեղում, 15 օգոստոսի, 2017:

ներքո[294]: Նման այցելությունները և աջակցությունը նպաստում են առողջապահության ոլորտի մասնագետների որակավորման բարձրացմանը:

Հիմնադրամների, սփյուռքահայ բարեգործական կազմակերպությունների, անհատ բարերարների աջակցության շնորհիվ լուրջ հաջողություններ են գրանցվել Արցախի Հանրապետության առողջապահության ոլորտում: Այս ամենը Հայաստան-Արցախ-Սփյուռք համագործակցության փայլուն օրինակ է:

[294] Նույն տեղում, 29 օգոստոսի, 2019:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ, ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՈՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ԲԱՐԵՐԱՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՈՒՄ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ XX ԴԱՐԱՎԵՐՋԻՆ ԵՎ XXI ԴԱՐԱՍԿԶԲԻ ԵՐԿՈՒ ՏԱՍՆԱՄՅԱԿՆԵՐՈՒՄ

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից Արցախի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի կենսագործումը

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից Արցախում վերականգնվեցին պատերազմի արդյունքում ավերված բնակավայրերը, կազմակերպվեցին գյուղատնտեսական աշխատանքները, գնվեցին գյուղատնտեսության համար անհրաժեշտ սերմացու, վառելիք, քիմիկատներ, վերականգնվեցին բազմաթիվ ոռոգման ցանցեր, կառուցվեց հյուսիս-հարավ ավտոճանապարհը՝ Վարդենիս-Մարտակերտ ավտոմայրուղին, իրականացվեց Արցախի գիտակրթական, մշակութային զարգացման, ջրամատակարարման, տնտեսական և բազմաթիվ սոցիալական խնդիրներ: XXI դարասկզբի առաջին տասնամյակում «Հայաստան» հիմնադրամի ջանքերով ավարտին հասցվեց Արցախի սահմանամերձ գյուղերի զարգացման համապարփակ ծրագիրը, որի բաղկացուցիչ մաս էր կազմում ջրամատակարարման ցանցերի, ջրավազանների, մաքրիչ և մղիչ կայանների կառուցումը Մարտունու, Ասկերանի, Քաշաթաղի շրջաններում, Շուշիում և այլ վայրերում:

Այսպիսով՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից ձեռնարկած միջոցառումները ոչ միայն նպաստեցին Արցախի

սոցիալ-տնտեսական կյանքի որակակական փոփոխություններին այլև նրա բարելավմանն ու հետագա զարգացմանը:

ՀՀ անկախության հռչակումից հետո հանրապետությունը հայտնվեց սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակում: Առաջ եկան բազում հիմնախնդիրներ, որոնց լուծման համար խիստ անհրաժեշտություն էր առաջացել ստեղծելու համահայկական հիմնադրամ: Համայն հայության ջանքերով հավաքագրված միջոցները անհրաժեշտ էին ոչ միայն Հայաստանի Հանրապետության, այլև անկախ Արցախի բազմաթիվ խնդիրների լուծման համար: Խորհրդային Միության կազմում Հայաստանը օգտվում էր խորհրդային կայսրության սոցիալ-տնտեսական բազում բարիքներից և կարծես հիմնականում լուրջ խնդիրներ չուներ այս ոլորտներում կենտրոնական միջոցների առկայության պայմաններում, որոնք բաժանվում էին խորհրդային հանրապետությունների միջև: Սակայն անկախությունն իր հետ բերեց նոր հիմնախնդիրներ, որոնց եթե ավելացնենք ավերիչ երկրաշարժի և Ադրբեջանի ու Թուրքիայի կողմից տնտեսական շրջափակման, ինչպես նաև ադրբեջանա-արցախյան պատերազմի ծանր հետևանքները, ուստի պարզ կդառնա ինչպիսի անհրաժեշտություն էր առաջացել նման հիմնադրամի ստեղծումը: Ահա թե ինչու Երևանում 1992 թ. մարտին ՀՀ նախագահի հրամանագրով ստեղծվեց «Հայաստան» համահայկական հիմնադրամը (ՀՀՀ)՝ որպես հայկական բարեսիրական կազմակերպություն[295]: Հիմնադրամի նպատակն էր համայն հայության ներուժի համախմբմամբ, գործադրմամբ աջակցել հայրենիքի զարգացմանն ու բարգավաճմանը: Հիմնական խնդիրներից էին ՀՀ և ԼՂՀ տնտեսությունների զարգացմանն օժանդակելը, նրանց ենթակառուցվածքային խնդիրների լուծումը համայն հա-

[295] Տե՛ս «Հայ Սփյուռք» հանրագիտարան, Երևան, 2003, էջ 688:

յության դրամական նվիրատվությունները համախմբելու միջոցով: «Հայաստան» համահայկական հիմնադրամի գլխավոր խնդիրներից էր 1988 թ. Սպիտակի երկրաշարժի հետևանքները հաղթահարելը, գիտական, կրթամշակութային ու առողջապահական համակարգերի բարելավմանն ու կատարելագործմանը նպաստելը, համազգային կարևորություն ունեցող այլ ծրագրերի իրականացմանը աջակցելը: Հիմնադրամը երկու տասնյակից ավելի մասնաճյուղեր ունի արտերկրի հայ համայնքներում: Այդ միջոցները հավաքվում են հայության կամավոր տուրքերից, անհատ անձանց, ձեռնարկությունների ու կազմակերպությունների հատկացումներից, տարատեսակ միջոցառումներից (ամենամյա հեռախոսամարաթոններ, հեծանվարշավներ, ցուցահանդեսներ ու տոնավաճառներ), նվիրատվություններից և այլն: Հիմնադրամի ղեկավար մարմինը հոգաբարձուների խորհուրդն է, որն ի պաշտոնե գլխավորում է ՀՀ նախագահը, խորհրդի անդամներ են վարչապետը, ՀՀ արտաքին գործերի, ֆինանսների, էկոնոմիկայի նախարարները, Կենտրոնական բանկի նախագահը, Ամենայն հայոց և Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսները, Հայ կաթողիկե և Հայ ավետարանական եկեղեցիների հովվապետերը, ՀԲԸՄ-ի, ՀՕՄ-ի, Ամերիկայի հայկական համագումարի, հայ ավանդական կուսակցությունների ներկայացուցիչները, արտերկրի հայ բարերարներ: Հիմնադրամի աշխատանքներում ակտիվ մասնակցություն և մեծ ներդրում ունեն նրա 22 տեղական մարմինները, որոնք ներկայումս գործում են աշխարհի 19 երկրներում: Վերջին յոթ տեղական մարմինները բացվել են 2009-2011 թթ. ընթացքում: Դրանք գործում են ԱՄՆ-ից մինչև Սիրիա, Ուրուգվայ, Ռումինա, Ռուսաստանի Դաշնություն և այլուր: Հիմնադրամն իր գործունեության ընթացքում իրագործել է բազմազան ծրագրեր ՀՀ-ում և ԼՂՀ-ում: 1992-2003 թթ. հիմնադրամը իրականացրել է 100-ից ավելի ծրագրեր՝ 80 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով: Կառուցվել են 210 բնակելի

շենք և առանձնատուն 960 ընտանիքների համար, 40 դպրոց և կրթական հաստատություն, 13 առողջարանական հիմնարկություն, ավտոճանապարհներ (250 կմ), ջրատար խողովակաշարներ (131 կմ), էլեկտրական հաղորդման գծեր՝ 60 կմ ընդհանուր երկարությամբ[296]:

2005 թվականից հիմնադրամը սկսեց ավելի շատ զբաղվել Արցախի տարածքային զարգացման ծրագրի մշակմամբ և կենսագործմամբ: 1995 թվականից նպաստներ է վճարում ԼՂՀ զոհված և առաջին կարգի հաշմանդամ ազատամարտիկների երեխաներին: «Հայաստան» համահայկական հիմնադրամը ծավալել է հիրավի մեծածավալ գործունեություն: Իր հիմնադրման տակավին երրորդ տարում էներգետիկայի, բնակարանաշինության, ճանապարհաշինության բնագավառներում իրականացրել է ավելի քան 2.5 մլն դոլարի աշխատանքներ[297]: «Հայաստան» համահայկական հիմնադրամը Արցախում սկսել է գործել 1993 թվականից, երբ դեռ շարունակվում էր պատերազմը, և իրականացրել է բազում ծրագրեր հանրապետության գրեթե բոլոր շրջաններում: Մարդասիրական լայնածավալ օգնություն է տրամադրվել ԼՂՀ կառավարությանը՝ պատերազմից ավերված բնակավայրերը մաքրելու, գարնան և աշնան գյուղատնտեսական աշխատանքները կազմակերպելու, սերմացու, թունաքիմիկատներ և վառելիք ձեռք բերելու համար: 1996-1997 թթ. 2 520 000 ԱՄՆ դոլար գումար է ներդրվել Լեռնային Ղարաբաղում գյուղատնտեսական աշխատանքներ կազմակերպելու նպատակով[298]:

1995 թ. հիմնադրամը ձեռնարկել է ԼՂՀ-ում ճանապարհաշինության, ջրագծերի, ոռոգման ջրատարների վերանորոգման ու

---

[296] Տե՛ս նույն տեղում:

[297] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 5 մարտի, 1994:

[298] Տե՛ս Մինասյան Է., Վարդանյան Ա., Հայրենիք-Սփյուռք առնչությունները ՀՀ անկախության տարիներին, Ստեփանակերտ (1991-2009 թթ.), 2010, էջ 107-108:

կառուցման նպատակով ազգային տուրքի մարաթոնների կազմակերպում[299]: Այդ ձեռնարկումը առավել համակարգված ընթացել է 1998 թվականից, երբ 24-ժամյա հեռուստամարաթոններն սկսեցին ամենամյա բնույթ կրել՝ ընդգրկելով Հայաստանն ու ողջ Սփյուռքը: Գերազանցապես հենց դրա շնորհիվ էր, որ արդեն 1999 թ. շահագործման հանձնվեց Գորիս–Ստեփանակերտ ավտոճանապարհը (65 կմ): Արտասահմանում բնակվող շուրջ 200 հազար հայեր հիմնադրամի կատարած ակտիվ աշխատանքի շնորհիվ իրենց անմիջական ներդրումն ունեցան հիմնադրամի նախաձեռնած ճանապարհաշինության հայրենանվեր աշխատանքների գործում[300]: Իսկ նույն 1999 թ. նոյեմբերին Լոս Անջելոսում «Հայաստան» համահայկական հիմնադրամի նախաձեռնությամբ անցկացված հեռուստամարաթոնի ընթացքում հավաքված ավելի քան 5 մլն դոլար[301] հանգանակությամբ էլ Արցախում սկսվեց «Հյուսիս-հարավ» նոր ավտոճանապարհի (շուրջ 170 կմ) շինարարությունը[302], որի 30 կիլոմետրը շահագործման էր հանձնվել 2001 թ. նոյեմբերին[303]: «Հայաստան» համահայկական հիմնադրամն էլ ավելի մեծ եռանդով էր շարունակում Արցախի շենացման ուղղությամբ իր ազգանպաստ գործունեությունը հետագա ժամանակաշրջանում:

2013 թ. տվյալներով հիմնադրամի իրագործած ծրագրերն գերազանցում են 235 մլն ԱՄՆ դոլարի սահմանը: 2013 թ. հեռուստամարաթոնի արդյունքում հավաքագրված գումարները հիմնականում ուղղվեցին Վարդենիս–Մարտակերտ ավտոմայրուղու կառուցմանը, ինչպես նաև հոգաբարձուների խորհրդի կողմից մշակված նոր ծրագրերի իրագործմանը: Հիմնադրամի իրագործած

---

[299] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 28 մարտի, 1996:
[300] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 28 սեպտեմբերի, 1999:
[301] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 28 հունվար, 2000:
[302] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 12 նոյեմբերի, 1999:
[303] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 17 նոյեմբերի, 2001:

ծրագրերի շնորհիվ կառուցվեցին ավելի քան 470 կմ ճանապարհ Հայաստան Հանրապետությունում և Արցախում, 212 կմ ջրազտման և ջրամատակարարման համակարգեր, ինչպես նաև 144 կմ բնական գազատարներ, վերակառուցվեցին 218 դպրոց և մանկապարտեզ, կահավորվեցին 410 տուն և բնակարան, 34 առողջապահական հաստատություններ, 21 մարզական և մշակութային կենտրոններ: Իրականացվել են ավելի քան 85 կրթական, մշակութային ու գիտական ծրագրեր: Այդ ծրագրերի իրագործման շնորհիվ 2004 թ. ավարտվեց Արցախի 160 կմ ձգվող «Հյուսիս-հարավ» ավտոմայրուղու շինարարության հիմնական մասը: 2005 թ. հեռուստամարաթոնում ընդհանուր նվիրատվության չափը հասնում էր 7.8 մլն դոլարի, որը ծախսվեց ԼՂՀ Մարտակերտի շրջանի վերակառուցման համար[304], իսկ 2006 թ. հեռուստամարաթոնում հանգանակված 13.7 մլն դոլարը նպատակաուղղվեց ԼՂՀ Հադրութի շրջանի վերականգնմանը[305]: 2007-2008 թթ. հիմնադրամը ձեռնամուխ եղավ Հայաստանի և Արցախի Հանրապետության գյուղերում սոցիալական ենթակառուցվածքների վերականգնմանը: 2009 թ. հեռուսատամարաթոնը, որն անցկացվեց «Մեր Շուշին» խորագրի ներքո, արձանագրեց 15.9 մլն դոլարի նվիրատվություն և նվիրատվության խոստում: Ստացված գումարները գլխավորապես ուղղվեցին Շուշիում սոցիալական ու տնտեսական ենթակառուցվածքների՝ ջրագծերի, դպրոցների, ճանապարհների և բնակելի շենքերի տանիքների վերանորոգման աշխատանքներին[306]: 2005 թ. ավարտին հասցվեց նաև ԼՂՀ Մարտակերտի շրջանի տարածքային զարգացման ծրագիրը, Լեռնային Ղարաբաղի Հադրութի շրջանային հիվանդանոցը, 2006 թ. կառուցվին մի շարք դպրոցներ,

---

[304] Տե՛ս «Հեռուստամարաթոն 2005», http://www.hi,madram.org/index.php?id=2232-6&lang=2:

[305] Տե՛ս նույն տեղում:

[306] Տե՛ս «Ազատ Արցախ», 21 մարտի, 2009:

նոր ջրագծեր, բաշխիչ ցանցեր, անցկացվեց բնական գազամուղ: 2007 թ. նոյեմբերին ավարտին հասցվեց նաև գյուղատնտեսական զարգացման ծրագիրը, որը նախատեսում էր Արցախի նոր գյուղական դպրոցների, խմելու ջրի համակարգերի կառուցումը, իսկ ագրարային զարգացման ծրագրերի կենսագործմամբ առողջապահական սարքավորումներ տրվեցին բոլոր գյուղական շրջաններին: Արցախի գյուղերում վերականգնվեցին մի շարք ենթակառուցվածքներ, այդ թվում՝ Շուշիում հասարակական ու տնտեսական ենթակառուցվածները:

2009 թ. կառուցվեցին ջրագծեր, ճանապարհներ, վերանորոգվեցին բնակելի շենքերի տանիքները, լուծվեցին Արցախի գյուղերում խմելու և ոռոգման ջրի խնդիրները, իսկ 2010 թ. ավարտին հասցվեց Արցախի սահմանամերձ գյուղերի զարգացման համապարփակ ծրագիրը: Ջրամատակարարման ցանցեր, ջրավազաններ, մաքրիչ ու մղիչ կայաններ են կառուցվել Մարտունու, Ասկերանի, Քաշաթաղի շրջաններում և Շուշիում: Գերմանիայի հայության ֆինանսավորմամբ ջրագիծ է կառուցվել Մարտակերտի շրջանի Ակնաբերդ գյուղում: 2009 թ. շահագործման էին հանձնվել Հադրութի շրջանի Մեծ Թաղլար, Ազոխ, Դրախտիկ գյուղերի ջրատարները: Հիմնադրամի Ֆրանսիայի տեղական մարմինը ջրամատակարարման համակարգ էր կառուցել Ասկերանի շրջանում[307]: Առաջնահերթ էր համարվել Շուշի քաղաքի ջրամատակարարման հարցը: Շուշիի «Վերածնունդ» հիմնադրամը իրականացրել էր Շուշի ջրագծի կառուցումը, իսկ «Հայաստան» համահայկական հիմնադրամը զբաղվել էր ջրի ներքին ցանցի հարցերով: 2-2,5 մլն դոլար էր հատկացվել նաև Շուշիի բնակելի շենքերի տանիքների և դպրոցների նորոգման համար[308]: Կանադահայության մասնակցությամբ հիմնադրամը ավարտին է հասցրել Ստեփանակերտի

[307] Տե՛ս Մինասյան Է., Վարդանյան Ա., նշվ. աշխ., էջ 108:
[308] Տե՛ս նույն տեղում, էջ 109:

օղակաձև ջրատարի և երկու ջրամբարների շինարարությունը: Սա Ստեփանակերտի ջրամատակարարման հիմական ցանցն է, որը խմելու ջրով է ապահովվում քաղաքը[309]:

2009 թ. նոյեմբերի 26-ին տեղի ունեցավ «Հայաստան» համահայկական հիմնադրամի դրամահավաք միջոցառումը՝ «Հեռուստամարաթոն-2009-ը», որի ընթացքում հավաքվեց 15 875 043 ԱՄՆ դոլար: Գումարի 70 %-ը տրամադրվեց Շուշի քաղաքին, մնացածը՝ Հայաստանի Հանրապետության ու Արցախի այլ շրջաններին[310]: «Հայաստան» համահայկական հիմնադրամի ուժերով շահագործման են հանձնվել «Շուշի-Կարմիր շուկա» բարձր լարման էլեկտրահաղորդման գիծը՝ Շուշիում և Կարմիր շուկայում տեղադրված ենթակայաններով, որոնք էլեկտրականությամբ են ապահովում Մարտունի շրջկենտրոնն ու հարակից գյուղերը: Հիմնադրամը Արցախում կառուցել է 60 կմ ընդհանուր երկարությամբ երեք էլեկտրահաղորդման գծեր և «Ստեփանակերտ» գլխավոր ենթակայանը: Գորիսում կառուցվել է ռադիոհեռուստատեսային վերահաղորդիչ կայան, որն ապահովում է Հայաստանի հարավային շրջանների և Արցախի կապը: Մարտակերտի շրջանի չորս գյուղերի համար կառուցվել է գազատար խողովակաշար: Կազմակերպության միջոցներով հիմնովին վերակառուցվել են պատերազմից խիստ տուժած Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղի 67, վերականգնվել են Հաթերք գյուղի 143 տներ[311]:

Հիմնադրամի կողմից իրականացվել են ծրագրեր նաև ԼՂՀ առողջապահության ոլորտում: Արևելյան Արփի տեղական մարմնի ֆինանսավորմամբ կառուցվել են Ստեփանակերտի քաղաքային պոլիկլինիկան և ախտորոշման կենտրոնը[312], իսկ ԱՄՆ

---

309 Տե՛ս Մինասյան Է., Հայրենիք-Սփյուռք առնչությունները XXI դարասկզին (2001-2017 թթ.), Երևան, 2018, էջ 244:

310 Տե՛ս նույն տեղում:

311 Տե՛ս նույն տեղում:

312 Տե՛ս նույն տեղում:

արևմտյան շրջանի հայության միջոցներով հիմնադրամը նորոգել էր Հադրութ քաղաքի կենտրոնական հիվանդանոցի շենքը: Ֆրանսիայի հանձնախմբի կողմից վերանորոգվել էին Շուշի քաղաքի հիվանդանոցի կաթսայատունը և ջերմատար ցանցը: 2010 թ. ավարտվել է Հանրապետական հիվանդանոցի կառուցումը Ստեփանակերտում: Կազմակերպությունը չի բավարարել միայն հիվանդանոցների կառուցմամբ ու նորոգմամբ: Շինարարական աշխատանքների ավարտից հետո դրանք նաև կահավորվել են, հագեցվել ժամանակակից բժշկական սարքավորումներով[313]: Հիմնադրամն նախաձեռնել է «Նպաստներ՝ զոհված և առաջին կարգի հաշմանդամ ազատամարտիկների երեխաներին» ծրագիր, որի իրականացումը սկսվել է 1995 թ. հունվարից և շարունակվել մինչև 2012 թվականը՝ նպաստառու երեխաների չափահաս դառնալը[314]: Բացի ռազմավարական և կենսական կարևորություն ունեցող ծրագրերից՝ հիմնադրամը Արցախում իրականացնում է դպրոցաշինության ծրագիր: Հիմնադրամի միջոցներով են կառուցվել Ստեփանակերտի ֆիզիկամաթեմատիկական գիշերօթիկ դպրոցի ուսումնական մասնաշենքն ու հանրակացարանը, որոնք շահագործման են հանձնվել դեռևս 1999 թ. ապրիլին: Այսպիսով՝ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի հաստատած Արցախի վերածննդի ծրագրով հեռուստամարաթոններում հանգանած գումարները համապատասխանաբար ուղղվեցին Արցախյան պատերազմի հետևանքով առավել մեծ վնաս կրած ԼՂՀ շրջանների՝ Մարտակերտի և Հադրութի վերականգնմանն ու զարգացմանը:

2006 թ. սկսվեցին ու այժմ շարունակվեցին Մարտակերտի շրջանի վերականգնման աշխատանքները, որոնք ներառեցին միաժամանակ մի քանի ոլորտ՝ գյուղատնտեսություն, ջրամատա-

---

313 Տե՛ս նույն տեղում, էջ 245:

314 Տե՛ս նույն տեղում:

կարարում, առողջապահություն, դպրոցաշինություն և այլն: Նմանօրինակ ծրագիր հիմնադրամը իրագործեց նաև ԼՂՀ Մարտունու շրջանում: Պատահական չէ, որ իր գործունեության տարիներին հիմնադրամը ճանաչվել ու սիրվել է ողջ հայության կողմից, քանի որ նրա ծրագրերը միշտ եղել են արդիական ու սպասված: Ի սկզբանե լինելով հայոց պետականության նեցուկը՝ հիմնադրամը շարունակում է հավատարիմ մնալ իր առաքելությանը՝ աշխարհասփյուռ հայության միասնական ջանքերն ուղղելով մեր երկրի վերակառուցմանն ու ամրապնդմանը: Մարտակերտի շրջանի Վերին Հոռաթաղ գյուղից է սկսվել Արցախի մեծ բարեկամ բարոնուհի Քերոլայն Քոքսի մարդասիրական առաքելությունը: Նրա նախաձեռնությամբ և նվիրատվությամբ այնտեղ գործում է նորակառույց դպրոց: Բարոնուհու կազմակերպչական աշխատանքի արդյունքը եղավ հիմնադրամի Տորոնտոյի գրասենյակի միջոցներով Մարտակերտի շրջանի Մատաղիս գյուղի դպրոցի կառուցումը[315]: Դպրոց է բացվել նաև նույն շրջանի Դրմբոն գյուղում: Վերակառուցվել է Հադրութի շրջանի Տող գյուղի դպրոցը, որը դարձել է այդ տարածքի արվեստի կենտրոն: 2009 թ. վերջին շահագործման են հանձնվել Մարտունու շրջանի Սպիտակաշեն, Ճարտար, իսկ 2010 թ.՝ նույն շրջանի Գիշի և Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղի դպրոցները: Ֆրանսիայի հանձնախմբի կողմից համակարգիչներ են տրամադրվել Մարտակերտի շրջանի Նոր Սեյսուլա, Կոճողոտ, Հադրութի շրջանի Թոդուտ, Տող գյուղերի դպրոցներին[316]:

Ամերիկաբնակ բարերար Ջերարդ Թրփանձյանի հովանավորությամբ շարունակվել են Ստեփանակերտի թիվ 11 դպրոցի կառուցման աշխատանքները: Եռահարկ դպրոցը նախատեսված է 560 աշակերտի համար: Այն բաղկացած է 2 ուսումնական և վարչական մասնաշենքերից, մարզադահլիճից, ինչպես նաև բացօթյա

---

[315] Տե՛ս «Ազատ Արցախ», 7 հոկտեմբերի, 2007:

[316] Տե՛ս Մինասյան Է., Վարդանյան Ա., նշվ. աշխ., էջ 110:

բեմահարթակից ու սպորտհրապարակից: Համալիր կառույցն ունի նաև գրադարան, ճաշարան, բուժկետ, համակարգչային դասարաններ, կաթսայատուն: Շինարարությունը ավարտվել է 2010 թ. օգոստոսին[317]: Կատարված աշխատանքները մայր Հայաստանի, Սփյուռքի և Արցախ աշխարհի միասնության հավաստիացումն են, այսինքն՝ ազգի բոլոր անդամների հավաքական ամբողջության արդյունքը, որի շնորհիվ հայ ժողովուրդը պետք է ապրի և հարատևի: «Անցնող տարիներին,– գրում է Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն,– մենք բոլորս ականատես ենք եղել այն արդյունքներին, որոնք ձեռք են բերվել «Հայաստան» համահայկական հիմնադրամի իրագործած ծրագրերով: Ականատեսն ենք եղել, թե ինչպիսի կարևորության խնդիրներ են վճռվել Արցախում՝ ճանապարհների կառուցմամբ, բնակավայրերի բարեկարգումով, տնտեսական և մշակութային կյանքի վերակառուցման ծրագրերով: Մեր միասնականության արգասիքն են դրանք՝ առ հայրենին մեր սիրո, մերձավորի հանդեպ հոգնածության»[318]:

1992-2008 թթ. հիմնադրամը ՀՀ-ում և Արցախում իրականացրել է 100-ից ավելի ծրագրեր: Կառուցվել են 210 բնակելի շենք և առանձնատուն՝ 960 ընտանիքների համար, 40 դպրոց և կրթական հաստատություն, 13 առողջապահական հիմնարկություն, ավտոճանապարհներ (250 կմ), ջրատար խողովակաշարներ (131 կմ), 60 կմ ընդհանուր երկարությամբ էլեկտրական հաղորդման գծեր: 1995 թվականից մինչ այժմ նպաստ է տրամադրվել Արցախի զոհված և առաջին կարգի հաշմանդամ ազատամարտիկների երեխաներին[319]: 2010-2011 թթ. հեռուստամարաթոնների հավաքված գումարները ուղղորդվեց ԼՂՀ սահմանամերձ շրջանների ենթակա-

---

[317] Տե՛ս նույն տեղում, էջ 111:

[318] Տե՛ս Մինասյան Է., Հայրենիք-Սփյուռք առնչությունները XXI դարասկզին (2001-2017 թթ.), Երևան, 2018, էջ 247:

[319] Տե՛ս նույն տեղում, էջ 248:

ռուցվածքների զարգացմանը: 2010 թ. հեռուստամարաթոնի ընթացքում հավաքվեց 20.8 մլն դոլար, որի հիմնական մասը ուղղվեց ԼՂՀ սահմանամերձ շրջաններում ենթակառուցվածքների զարգացմանը, մասնավորապես ջրամատակարարման խնդիրների լուծմանը[320]: 2011 թ. հեռուստամարաթոնի 12.2 մլն դոլարը ևս օգտագործվեց ՀՀ և ԼՂՀ սահմանամերձ շրջաններում նախորդ տարի սկզբնավորված համալիր ծրագրերի իրականացմանը[321]: Քանի որ 2011 թ. Սիրիայում տեղի ունեցող դեպքերի հետևանքով աստիճանաբար սկսվեց սիրիահայերի ներգաղթը ՀՀ, իսկ մյուս կողմից դեռ ավարտին չէին հասցվել 2010-2011 թթ. գերակա ծրագրերը, 2012 թ. հեռուսատամարաթոնի ընթացքում հավաքված 21.4 մլն դոլարի հիմնական մասը ուղղվեց Արցախի գյուղական շրջաններում համայնքային կենտրոնների կառուցմանը և ՀՀ տեղափոխված սիրիահայության հրատապ խնդիրների լուծմանը[322]: 2013 թ. հիմնադրամը սկսեց ՀՀ-ն և Արցախին կապող երկրորդ՝ շուրջ 116 կմ երկարությամբ «Վարդենիս–Մարտակերտ ավտոճանապարհի կառուցման ծրագիրը»: 2013-2014 թթ. «Դեպի Արցախ» կարգախոսով անցկացվող հեռուստամարաթոնների ընթացքում հավաքված գումարները հիմնականում հատկացվեցին այդ աշխատանքների իրականացմանը: 2013 թ. հեռուստամարաթոնի ժամանակ արձանագրվեց 22.6 մլն դոլարի նվիրատվություն և նվիրատվության խոստում: Այդ միջոցներն ուղղվեցին ավտոճանապարհի հողային աշխատանքների իրականացմանը[323]:

«Հայաստան» համահայկական հիմնադրամը 2014 թ. մեծածավալ ծրագրեր իրագործեց: Նրա գլխավոր նշանակետը դարձյալ

---

[320] Տե՛ս «Հեռուստամարաթոն 2010-Ջուրը կյանք է», http://himnadram.org/index.-php?id=23543lang=2:

[321] Տե՛ս «Հեռուստամարաթոն 2011», http://himnadram.org/index.php?id=23801lang=2:

[322] Տե՛ս «Հեռուստամարաթոն 2012», http://himnadram.org/index.php?id=23990lang=2:

[323] Տե՛ս «Հեռուստամարաթոն 2013», http://himnadram.org/index.php?id=24169lang=2:

ՀՀ-ն և Արցախը իրար կապող Վարդենիս–Մարտակերտ ավտոճանապարհի ասֆալտապատումն էր ու հարդարումը, որն ուներ ռազմավարական, ռազմատնտեսական կարևոր նշանակություն: 2014 թ. հեռուստամարաթոնի նվիրատվությունները (12.4 մլն դոլար) ուղղվեցին ոչ միայն Վարդենիս–Մարտակերտ ավտոճանապարհի ասֆալտապատմանն ու հարդարմանը, այլ նաև բարեբարների կողմից ընտրված հատուկ ծրագրերին Արցախում[324]:

«Շատ դժվարին գործ է: Բավական բարդ տեղանքում մոտ 120 կմ ճանապարհ պիտի կառուցվի, ինչը նյութական մեծ ծախս և մասնագիտական արհեստավարժ մոտեցում է պահանջում»[325],– նշում է հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի վերստուգիչ հանձնախմբի անդամ Վահե Ջազմադարյանը: Վերջին երկու տարիներին «Հայաստան» համահայկական հիմնադրամի ամենամյա հեռուստամարաթոններն ամբողջությամբ նվիրվեցին «Վարդենիս–Մարտակերտ ավտոճանապարհի վերակառուցման ծրագրին», որոնցում ներգրավվեցին մոտ երկու տասնյակ նախագծային և շինարարական կազմակերպություններ: Նրանց ջանքերով հաջողվեց հասնել ճանապարհի ավարտական փուլին: Ճանապարհի վերակառուցումը հնարավորություն էր տալիս նաև զարգացնելու զբոսաշրջությունը: Վարդենիսից մինչև Մարտակերտ ճանապարհին պատահած մարդկանցից յուրաքանչյուրի հետ խոսելիս երախտագիտության և օրհնանքի խոսքեր էին հնչում, խոսքեր, որոնք ուղղված էին Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներում, ԱՄՆ-ում և Բրազիլիայում ապրող մեր հայրենակիցներին, որոնց նվիրատվություններով վերակառուցվել էր 2017 թ. շահագործման հանձնված մայրուղին[326]: Համահայկական հիմ-

---

[324] Տե՛ս «Հեռուստամարաթոն 2014», http://himnadram.org/index.php?id=24350lang=2:

[325] «Հայաստան» համահայկական հիմնադրամ, 2014, Երևան, 2015, էջ 14:

[326] Տե՛ս նույն տեղում, էջ 17:

նադրամը Արցախում և ՀՀ-ում, 2013 թվականից սկսած, «Մեր գյուղը» ծրագրի շրջանակում սկսեց բազմագործառութային համայնքային կենտրոնների կառուցումը՝ «Մեկ շենք ու երեք ծառայություն» սկզբունքով: Դա հնարավորություն էր տալիս լուծելու գյուղական բնակավայրերի համար մի շարք կարևոր խնդիրներ, երբ նույն շենքում տեղավորվում են համայնքի ղեկավարի գրասենյակը, հանդիսությունների տունը և համակարգչային սրահը, մի այլ դեպքում վարչական ծառայության կողքին՝ բուժկետն ու գրադարանը: Արցախի գրեթե բոլոր շրջաններում կառուցվեցին ընդհանուր թվով տասը համայնքային կենտրոններ[327]: Այդ ծրագրերին որպես համաֆինանսավորող կողմ մասնակցել էր նաև Արցախի կառավարությունը: Նման կենտրոններ կառուցվեցին Արցախիի Նոր Մատաղիս, Ակնաղբյուր, Շոշ, Մուշկապատ, Կարմիր շուկա, Քարինտակ, Խաչմաչ գյուղերում: Այդ համայնքային կենտրոններից վեցը կառուցվել էր Ֆրանսիայի, երկուսը՝ Կանադայի, մեկը՝ Արգենտինայի հայության նվիրատվություններով[328]: Հիմնադրամի կողմից նոր ծրագրեր իրագործվեցին Արցախի գյուղերում ու քաղաքներում: Կառուցվեցին և վերանորոգվեցին մի շարք դպրոցներ, մանկապարտեզներ, քոլեջներ (Քարինտակի, Շուշիի, Սոսի, Չափարի և այլն), Իվանյանի մանկապարտեզը, Ստեփանակերտի երաժշտական քոլեջը և այլն[329]: Հիմնադրամը 2014 թ. նյութական աջակցություն տրամադրեց Սիրիայի, մասնավորապես Քեսապի հայությանը, որ բնակարաններ տրամադրվեցին գյումրեցիներին, նպաստներ՝ ազատամարտիկների ընտանիքներին և այլն: Հիմնադրամը 2000 թվականից իրականացնում է «Բողոսյան» հիմնադրամի մրցանակաբաշխությունը, որի շրջանակներում նախագահն ամենամյա մրցանակ է շնորհում գիտության և մշակույթի

[327] Տե՛ս «Հայաստան» համահայկական հիմնադրամ. 2014, էջ 24:
[328] Տե՛ս նույն տեղում, էջ 27:
[329] Տե՛ս նույն տեղում:

գործիչներից յուրաքանչյուրին իր բնագավառում ցուցաբերած ակնառու նվաճումների համար: Հիմնադրամը մեծ ավանդ ունի Հայոց ցեղասպանության հիշատակման ու ճանաչման գործում: Իր գոյության առաջին տարիներից հիմնադրամը ակտիվ աշխատանքներ տարավ Հայոց ցեղասպանություն ուսումնասիրության հաստատությունների ստեղծման գործում:

2014-2016 թթ. «Հայաստան» համահայկական հիմնադրամի ծրագրերին մասնակցեցին բոլոր տեղական մարմինները՝ օգտագործելով իրենց համայնքների անդամներին այդ կարևոր գործին մասնակից դարձնելու հնարավոր բոլոր միջոցները: Աշխարհի տարբեր երկրներում (սկսած ԱՄՆ-ից, Հարավային Ամերիկայի երկրներից, Եվրոպայից, Փարիզից, Բելգիայից և վերջացրած Լիբանանով, Կանադայով, Մեծ Բրիտանիայով և Իրանով) կազմակերպվող տարատեսակ միջոցառումները, համայնքի անդամների ուշադրությունը որոշակի ծրագրերի վրա սևեռելուց բացի, նաև ունեն ամփոփիչ և հաշվետու նշանակություն: Սովորաբար հենց այս միջոցառումների ընթացքում են տեղական մարմինները ամփոփում տարվա ընթացքում կատարած իրենց աշխատանքները և տոնական մթնոլորտում հաշվետվություն տալիս իրականացված ծրագրերի մասին: «Հայաստան» համահայկական հիմնադրամի կազմակերպած 2015 թ. միջոցառումների շրջանակում իրականացվեցին ԼՂՀ Արցախի Ասկերանի շրջանի Պատարա, Խաչմաչ և այլ գյուղերում, Մարտունու Մուշկապատ, Կարմիր շուկա և Թաղավարդ գյուղերում համայնքային կենտրոնների և Շուշիի Եզնիկ Մոզյանի անվան արհեստագործական ուսումնարանի բացումը[330]: 2015 թ. «Մեր տունը» խորագրով հեռուստամարաթոնն արձանագրեց 10.4 մլն դոլարի նվիրատվություն և նվիրատվության խոստում[331]: Հավաքված գումարը նպատակաուղղվեց ԼՂՀ-

[330] Տե՛ս «Հայաստան» համահայկական հիմնադրամ, էջ 57:
[331] Տե՛ս «Հեռուստամարաթոն 2015», http://himnadram.org/index.php?id=24515lang=2:

ում բազմազավակ ընտանիքներին բնակարաններով ապահովելու ծրագրին: Զուգահեռաբար կյանքի են կոչվել բարերարների կողմից ընտրված հատուկ ծրագրերը[332]: Ինչ վերաբերում է 2016 թ. հեռուստամարաթոնին, ապա այն անցավ Քառօրյա պատերազմի հետևանքների վերացման տրամաբանությամբ՝ «Իմ Արցախը» կարգախոսով: Հավաքված 15.4 մլն դոլարը նախատեսվում էր փոխանցել Քառօրյա պատերազմից տուժած բնակավայրերի վերականգնմանը, ինչպես նաև Արցախի բազմազավակ ընտանիքների համար առանձնատների կառուցմանը[333]:

2016 թ. ընթացքում հիմնադրամի ջանքերով իրականացվեցին այնպիսի կարևորագույն ծրագրեր, ինչպիսիք են Վարդենիս–Մարտակերտ ավտոճանապարհի կառուցման ավարտը, Գերովան գյուղի, Ասկերանի շրջանի համայնքային կենտրոնների բացումը, Ստեփանակերտի ուռուցքաբանական կենտրոնի, մայրաքաղաքի թիվ 9 դպրոցի վերանորոգումը և այլն[334]:

Ակնհայտ է, որ հիմնադրամի իրականացրած ծրագրերը մեծ կարևորություն ունեն ՀՀ և Արցախի սոցիալ-տնտեսական կյանքը զարգացնելու առումով: Հատկանշական է, որ առավել մեծ չափով գումարներ հավաքվել են հատկապես այն հեռուստամարաթոններում, որոնք անցկացվել են սահմանամերձ շրջանների կամ Արցախի հիմնախնդիրները կարգավորելու նպատակով:

Այսպիսով՝ 2016 թ. դրությամբ Հայաստանի Հանրապետությունում և Արցախում իրագործված ծրագրերի ընդհանուր գումարը կազմում էր ավելի քան 235 800 000 ԱՄՆ դոլար: Սակայն եթե հաշվի առնենք հիմնադրամի կողմից իրականացված և ավարտված ծրագրերը ու դրանց կենսագործման համար օգտագործված գումարները, աշխատատեղերը, որոնք բացվել են այդ ծրագրերի

---

332 Տե՛ս «Մեր մասին», http://himnadram.org/index.php?id=2&id=2:

333 Տե՛ս «Հայաստան» համահայկական հիմնադրամ, էջ 45:

334 Տե՛ս նույն տեղում:

շնորհիվ, համայնքները, որոնք հետզհետե զարգանում են, ապա չենք կարող չհաշվել ու չնշել այն մարդկանց, որոնց կյանքը փոխվել է բացված նոր ճանապարհների, նոր կառույցների և այն օգնության շնորհիվ, որի կարիքը նրանք շատ ունեն:

«Հայաստան» համահայկական հիմնադրամի 25-ամյա հոբելյանի կապակցությամբ խոսելով նրա կատարած մեծածավալ աշխատանքների մասին՝ հիմնադրամի գործադիր տնօրեն Արա Վարդանյանը նշել է. «25-ամյա երիտասարդ, ավյունով լի համահայկական այս կառույցը տարեցտարի ավելի զորեղ ու համազգային է դառնում շնորհիվ Հայաստանի, Արցախի ու Սփյուռքի մեր հայրենակիցների վստահության և հայրենիքն ավելի ամուր ու ապահով դարձնելու գաղափարի շուրջ համախմբվածության: Հպարտությամբ պետք է նշել, որ մեր նվիրատուների թիվն արդեն գերազանցում է 700 000-ը, իսկ հայրենիքում արված ամբողջ ներդրումները՝ 330 մլն դոլարը (ավելի քան 1100 խոշոր ծրագիր), ինչի շնորհիվ շուրջ 500 000 մարդ Հայաստանի Հանրապետությունում և Արցախում մշտապես օգտվում է բարեկարգ ու հարմարավետ դպրոցից, հիվանդանոցից, ճանապարհից, ջրագծից: Ընդլայնվել է նաև մեր գործունեության աշխարհագրությունը. ԱՄՆ-ից մինչև Ավստրալիա գործում է 25 տեղական մարմին»[335]:

Այսպիսով՝ XX դարի վերջին և XXI դարի սկզբին «Հայաստան» համահայկական հիմնադրամը իր ակտիվ գործունեությամբ Արցախում իրագործած իր սոցիալ-տնտեսական բազաթիվ ծրագրերի շնորհիվ նպաստեց նրա զարգացմանը:

---

[335] Տե՛ս «Հայաստան» համահայկական հիմնադրամ, 2016, Երևան, 2017, էջ 40:

Հայ օգնության ֆոնդի ազգօգուտ գործունեությունը Արցախում

Հայ օգնության ֆոնդը (ՀՕՖ, անգլերեն՝ Fund for Armenian Relief) Հայաստանյայց առաքելական եկեղեցու ԱՄՆ արևելյան թեմի բարեգործական կազմակերպություն է: Սկզբնապես կոչվել է Հայաստանի վերականգնման առաջնորդարանի ֆոնդ, 1992 թվականից՝ Հայ օգնության ֆոնդ: Ստեղծվել է 1988 թ. Սպիտակի աղետալի երկրաշարժից անմիջապես հետո Նյու Յորքում ԱՄՆ արևելյան թեմի առաջնորդարանի (թեմական առաջնորդն էր Թորգոմ արք. Մանուկյանը) նախաձեռնությամբ: Նպատակն էր ավելի արդյունավետ դարձնել տեղի հայության և ամերիկյան հասարակության ու տարբեր կազմակերպությունների օգնությունը: 1993 թ. փետրվարից գրանցվել է որպես անկախ կառույց՝ հնարավորություն ստանալով գործելու ինքնուրույն[336]: ՀՕՖ-ի կենտրոնական գրասենյակը գտնվում է Նյու Յորքում: Կազմակերպության գրասենյակը Երևանում բացվեց 1991 թվականին:

Հայ օգնության ֆոնդն իր գերագույն նպատակն է համարում նպաստել մայր հայրենիքի տնտեսության զարգացմանն ու սոցիալական կյանքի բարելավմանը: «Ամեն մի հայ, աշխարհի որ անկյունում էլ ապրելիս լինի, անմարելի պարտք ունի մայր հայրենիքի հանդեպ,– նշվում է ՀՕՖ-ի նախագահ Խաժակ արք. Պարսամյանի ուղեծրում: –Այս գործը վերջ չունի, այն տեսական է, զի ուղղված է Հայրենիքի ապագային»[337]:

Սկզբնական շրջանում Հայաստանում ՀՕՖ-ի ծրագրերը մարդասիրական բնույթի էին, իսկ ժամանակ անց կազմակերպությու-

---

[336] «Հայ Սփյուռք» հանրագիտարան, Երևան, 2003, էջ 686, Սփյուռքահայ կազմակերպություններ, Երևան, 2002, էջ 66:
[337] «Ազգ», 10 հուլիսի, 1998:

նը նախապատվությունը սկսեց տալ երկրի զարգացմանը նպաստող ծրագրերին՝ ընդգրկելով կյանքի տարբեր բնագավառները՝ շինարարություն, գյուղատնտեսություն, առողջապահություն, գիտություն, կրթություն, մշակույթ և այլն:

Պատերազմը ծանր հարված էր հասցրել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը: ԼՂՀ-ում տուժել է 149 բնակավայր, լրիվ կամ մասամբ ավերվել են 11647 անհատական տներ, 226 բազմաբնակարան բնակելի շենքեր, 17 ստացիոնար բուժիմնարկներ և 71 բուժկետեր, 196 ուսումնական ու մշակութային օջախներ[338], 8000 արդյունաբերական, գյուղատնտեսական և սոցիալական նշանակության օբյեկտներ: Երեք անգամ կրճատվել էին ցանքսերը, 5 անգամ՝ անասնագլխաքանակը: Գյուղատնտեսությանը հասցվել էր շուրջ 2,5 մլրդ դոլարի վնաս[339]:

Պատերազմից հետո հնարավորություն ստեղծվեց զբաղվելու ավերված տնտեսության, առողջապահական, կրթամշակութային օջախների և այլ ոլորտների վերականգնման ու զարգացման հարցերով: Պատերազմից տուժած երիտասարդ հանրապետությունը հնարավորություն չուներ սուղ պետական միջոցներով լուծելու իր առջև ծառացած խնդիրները և լինելով չճանաչված՝ զրկված էր միջազգային կազմակերպություններից վարկեր ստանալու հնարավորությունից: Այդ առումով անգնահատելի է հիմնադրամների, սփյուռքահայ բարեգործական կազմակերպությունների և միությունների օգնությունը:

Պատերազմից խիստ տուժած արցախահայությանը օգնելու նպատակով 1997 թ. դեկտեմբերին Ստեփանակերտում բացվում է Հայ օգնության ֆոնդի գրասենյակ: Այստեղ նախատեսվում է, մար-

---

338 ԼՂՀ պետական արխիվ, ֆ.180, ց.1, կ.9, պ.մ. 42, թ. 222:

339 Բալայան Վ., Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության, Ստեփանակերտ, 2012, էջ 333:

դասիրական օգնությունից բացի, զարկ տալ զարգացման ծրագրերին ու ստեղծել նոր աշխատատեղեր: «Բոլոր ղարաբաղցիները,– նշում է իր ուղերձում ՀՕՖ-ի նախագահ ԱՄՆ արևելյան թեմի առաջնորդ Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը,– նախագահից մինչև շարքային քաղաքացին, միակամ էին իրենց երկիրն ու տնտեսությունը ոտքի կանգնեցնելու և շենացնելու համար: Նրանք սփյուռքահայ իրենց եղբայրներից ու քույրերից ակնկալում են օգնություն հատկապես նոր աշխատատեղեր բացելու և կիսակործան քաղաքացիական ու հոգևոր կառույցների վերականգնման գործում»[340]:

1998 թ. օգոստոսին Հայ օգնության ֆոնդի պատվիրակության՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն կատարած այցի շրջանակներում բժշկական օգնություն տրամադրվեց տեղի բուժհիմնարկներին: Այն ներառում էր շուրջ 250 արկղ տարբեր տեսակի բժշկական պարագաներ՝ ներարկիչներ, թթվածնային փողակներ, անզգայացման դիմակներ, հիվանդների խնամքի համար անհրաժեշտ այլ պիտույքներ, նաև մանկական վիտամիններ: Բեռն ամբողջությամբ հանձնվեց ԼՂՀ առողջապահության նախարարությանը, որի միջոցով էլ բաժանվեց հանրապետության տարբեր շրջանների ու քաղաքների բուժհիմնարկներին[341]:

2002 թ. հոկտեմբերից Հայ օգնության ֆոնդը ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (USAID) ֆինանսավորմամբ ձեռնամուխ եղավ «Մարդասիրական օգնություն Լեռնային Ղարաբաղին» լայնածավալ ծրագրի իրագործմանը, որը կոչված է վերականգնելու պատերազմի հետևանքով մեծապես տուժած Լեռնային Ղարաբաղի բնակավայրերն ու ենթակառուցվածքները:

---

[340] Հայ օգնության ֆոնդ. տարեկան տեղեկագիր 1997, էջ 2, Մինասյան Է., Վարդանյան Ա., Հայրենիք-Սփյուռք առնչությունները ՀՀ անկախության տարիներին (1991-2009 թթ.), հոդվածների ժողովածու, Ստեփանակերտ, 2010, էջ 83:

[341] «Ազգ», 15 օգոստոսի 1998:

Ծրագիրը թույլ է տալիս նաև միջոցներ տրամադրել բուժանձնակազմերի վերապատրաստման դասընթացներ կազմակերպել և անհրաժեշտ բուժարքավորումներ ու դեղամիջոցներ ձեռք բերել: «Մարդասիրական օգնություն Լեռնային Ղարաբաղին» ծրագրին հատկացված գումարի չափը 15 մլն դոլար է, իրականացման ժամկետը՝ 5 տարի: Նախապատրաստական աշխատանքները ավարտելուց հետո՝ 2004 թ., սկսվեց ԼՂՀ Ասկերանի, Մարտակերտի և Հադրութի շրջանների՝ հակամարտությունից տուժած տների, բուժկետերի ու խմելու ջրագծերի շինվերանորոգման գործընթացը[342]:

Ասկերանի շրջանում շինարարական աշխատանքները սկսվեցին 2004 թ. գարնանը: ՀՕՖ-ի ֆինանսավորմամբ իրականացվել են շրջանի Ասկերան քաղաքի, Դաշուշեն, Մխիթարաշեն, Նախիջևանիկ, Շոշ և Վարդաձոր գյուղերում 24 տների վերանորոգման, Խանաբադ, Խրամորթ, Նորագյուղ Սարգսաշեն, Խնձրիստան, Լուսաձոր, Ջրաղացներ, Սղնախ, Վերին Սզնեք, Մոշխիմատ, Մխիթարաշեն և Սառնաղբյուր գյուղերում բնակելի տների և բուժկետերի կառուցման, ինչպես նաև Ավետարանոց, Այգեստան, Շոշ, Մադաթաշեն և Դահրավ գյուղերում հինգ բնակելի տների և բուժկետերի վերանորոգման և կառուցման աշխատանքները[343]: 2004 թ. աշնանը արդեն Ասկերանի շրջանում վերանորոգվել է 52 բնակելի տուն[344]:

ՀՕՖ-ի զարգացման ծրագրում կարևոր տեղ ունեն ջրամատակարարման համակարգերի կառուցման և վերակառուցման աշխատանքները: Այդ աշխատանքները հաջողությամբ են իրականացվել Ասկերանի շրջանի Այգեստան, Կարմիր գյուղ, Լուսաձոր,

---

342 Հայ օգնության ֆոնդ. տարեկան տեղեկագիր, 2003-2004, էջ 4, Մինասյան Է., Վարդանյան Ա., նշվ. աշխ., էջ 83-84:

343 ԼՂՀ պետական արխիվ, ֆ. 180, ց. 1, կ-11, պ.մ.50, թ.82, 86:

344 Նույն տեղում, ֆ. 180, ց. 1, կ-10, պ.մ.45, թ. 3:

Աստղաշեն, Բադարա, Խանցք, Ծաղկաշատ, Հովսեփավան, Ռև[345], Հարավ, Քռասնի, Զրաղացներ, Ավետարանոց, Նախիջևանիկ, Վարդաձոր, Խանաբադ, Մխիթարաշեն գյուղերում և Ասկերան քաղաքում[346]:

2004 թ. հուլիսի 1-ին ՀՕՖ-ը սկսեց Մարտակերտի շրջանի, իսկ նոյեմբերի 1- ին՝ Հադրութի շրջանի տուժած տների, բուժկետերի և խմելու ջրագծերի շինվերանորոգման գործընթացը: Այն ուղեկցվում էր փորձաքննության իրականացմամբ, համապատասխան նախագծերի նախապատրաստմամբ ու արժեքների գնահատմամբ և շինարարական աշխատանքների սկզբնավորումով: Դրա համար հարկ եղավ փոքր գրասենյակներ բացել հիշյալ շրջկենտրոններում՝ կազմելով աշխատանքների կատարման ժամանակացույց[347]:

2005-2006 թթ. վերանորոգվել են Մարտակերտի շրջանի Մարտակերտ քաղաքի 29, Գետավան, Զարդախաչ, Չափար, Հաթերք, Վերին Հոռաթաղ, Կոճողոտ, Պողոսագոմեր գյուղերում՝ 19, Վաղուհաս գյուղում՝ 16 բնակելի տուն: Տներ են վերանորոգվել նաև շրջանի Վարդաձոր, Ծաղկաշեն, Ներքին Հոռաթաղ, Աղաբեկալանջ, Կուսապատ, Մեծ շեն, Մոխրաթաղ, Վարնկաթաղ, Մաղավուզ, Զազլիկ, Տոնաշեն, Մատաղիս գյուղերում[348]: Վերանորոգվել են շրջանի 9 բուժկետ, որոնք համալրվել են անհրաժեշտ սարքավորումներով, կահույքով, դեղորայքով ու բժշկական համապատասխան պարագաներով: Կառուցվել և վերանորոգվել են Մարտակերտ քաղաքի, Կուսապատ, Ծաղկաշեն, Հարությունագոմեր, Հաթերք, Շահմանսուր գյուղերի ջրամատակարարման համակարգերը[349]:

---

345 «Ազատ Արցախ», 18 նոյեմբերի, 2004:

346 ԷՂՀ պետական արխիվ, ֆ. 180, ց. 1, կ-11, պ.մ.50, թ.82:

347 Հայ օգնության ֆոնդ. տարեկան տեղեկագիր, 2003-2004, էջ 4:

348 ԷՂՀ պետական արխիվ, ֆ. 180, ց. 1, կ-11, պ.մ.50, թ.82, 11-12, 75, 86:

349 ԷՂՀ պետական արխիվ, ֆ. 180, ց. 1, կ-11, պ.մ.50, թ.78, 83:

2006 թ. վերջերին հնարավոր եղավ Մարտակերտի շրջանում վերականգնել շուրջ 240, իսկ Հադրութի շրջանում՝ 15 բնակելի տներ: Ընդհանուր առմամբ Հադրութի շրջանում կառուցվել և վերականգնվել են 90 բնակելի տուն և 6 բուժկետ[350], որոնք ապահովվեցին կահույքով ու դեղորայքով: Կազմակերպության կողմից կառուցվել և վերակառուցվել են շրջանի Մեծ Թաղլար, Ազոխ, Դրախտիկ, Հակակու, Մոխրենես, Ջրակոս, Վանք և Առաքել գյուղերի ջրամատակարարման համակարգերը[351]: Նրա ֆինանսավորմամբ իրականացվել են նաև Մարտակերտի շրջանի Ծաղկաշեն գյուղի ջրամատակարարման համակարգի կառուցման աշխատանքները[352]:

ՀՕՖ-ի ծրագրերում կարևոր նշանակություն ուներ նաև ոռոգելի ջրագծերի անցկացումը Մարտակերտի, Ասկերանի և Հադրութի շրջաններում, որը նպաստեց ԼՂՀ այդ տարածքների գյուղատնտեսության զարգացմանը, լուծեց գործազրկության հարցը: ԼՂՀ առողջապահական համակարգում ծրագրեր իրականացնելու առումով նշանակալից էր 2005 թվականը: Բացի 37 բուժկետերի վերանորոգումից և նրանց բուժսարքավորումներով ապահովելու գործընթացից՝ Հայաստանի Ամերիկյան համալսարանի առողջապահության ծառայությունների և ուսումնասիրությունների կենտրոնի հետ համատեղ իրականացվեց Մարտունու, Մարտակերտի, Ասկերանի և Հադրութի շրջանների բուժանձնակազմի վերապատրաստում՝ ընդգրկելով հիշյալ շրջանների 296 բուժաշխատողների՝ 46 բժիշկ ու 250 բուժքույր: Լեռնային Ղարաբաղի բոլոր բնակավայրերի բուժկետերի պատասխանատուներն ու բուժաշխատողները՝ թվով 113 մարդ, վերապատրաստվեցին նաև «Մանկական հիվանդությունների ինտեգրացված վարում» ծրագրով[353]:

---

350 Fund For Armenian Relief(FAR) 2007 Annual Report, p.13.

351 ԼՂՀ պետական արխիվ, ֆ. 180, ց. 1, կ-11, պ.մ.50, թ.74:

352 Նույն տեղում, թ. 14:

353 Հայ օգնության ֆոնդ. տարեկան տեղեկագիր, 2006, էջ 3:

2008 թ. օգոստոսին ավարտելով «Մարդասիրական օգնություն Լեռնային Ղարաբաղին» ծրագիրը՝ ՀՕՖ-ը շարունակեց առողջապահական ծրագրերի շարքը: Դեռ 2004 թ. ՀՕՖ-ի նախաձեռնությամբ և «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի համաֆինանսավորմամբ ստեղծվել էր «Մարզային բժիշկների վերապատրաստում» ծրագիր: 2005 թ. մայիսից սկսած՝ ՀՀ տարբեր մարզերից, Արցախից ու Ջավախքից այս ծրագրով Երևանի առաջատար բուժհաստատություններում («Արաբկիր», «Նորք-Մարաշ», «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոններ, «Մոր և մանկան» առողջության պահպանման գիտահետազոտական կենտրոն, «Դիագնոստիկա» ախտորոշիչ կենտրոն, 1-ին հանրապետական հիվանդանոց և այլն) անվճար հիմունքներով վերապատրաստվում են մարզերի բժիշկները: Այս ծրագիրը ենթադրում է նաև բժշկական տարատեսակ սարքավորումների և բուժպարագաների տրամադրում Երևանի և մարզային բուժհիմնարկներին[354]: «Մարզային բժիշկների վերապատրաստում» ծրագրի շրջանակում 2011 թ. Երևանի առաջատար կլինիկաներում վերապատրաստվել են 48 մարզային բժիշկ ՀՀ տարբեր մարզերից և 37-ը՝ ԼՂՀ-ից ու Ջավախքից[355]: 2013 թ. վերապատրաստվել են 50 բժիշկ ՀՀ մարզերից և 33 բժիշկ ԼՂՀ-ից[356] , իսկ 2014 թ. վերապատրաստվել են 54 բժիշկ՝ ՀՀ մարզերից, 32-ը՝ ԼՂՀ-ից[357]: Սկսած 2011 թվականից՝ «Ամերիկահայ առողջապահության մասնագետների կազմակերպության» և ՀՕՖ-ի կողմից իրականացվում է նաև «Շարունակական բժշկական կրթություն ծրագիր» Արցախի բժիշկների համար: Ծրագրի նպատակն է բարձրացնել բնակչության առողջապահական սպասարկման որակը, մասնագետներին ծանոթացնել տարբեր հիվանդությունների ախտորոշման և բուժման նորագույն մեթոդներին, նպաստել

---

[354] Նույն տեղում, էջ 13:

[355] «Հայկական Սփյուռք» տարեգիրք. 2011, Երևան, 2012, էջ 154:

[356] «Հայկական Սփյուռք» տարեգիրք. 2013, Երևան, 2014, էջ 144:

[357] «Հայկական Սփյուռք» տարեգիրք. 2014, Երևան, 2015, էջ 120:

հետազոտման ու բուժման ոլորտում ներդրված նորագույն մեթոդների ու տեխնոլոգիաների յուրացմանը: Նշված ծրագրի շրջանակներում մինչև 2018 թ. սեպտեմբեր ամիսը Երևանի առաջատար բուժհիմնարկներում Արցախից վերապատրաստվել են մոտ 240 բժիշկ: ՀՕՖ-ի աջակցությամբ Արցախում իրականացվել են նաև արտագնա դասընթացներ բժիշկների համար Երևանի առաջատար մասնագետների մասնակցությամբ:

2018 թվականից մեկնարկել է վերապատրաստման նոր ծրագիր համայնքային բուժքույրերի համար, որի շրջանակում արդեն վերապատրաստվում են Մարտակերտի, Հադրութի, Քաշաթաղի և Շահումյանի շրջանների 124 համայնքային բուժքույրեր: Այդ նպատակով 2018 թ. ապրիլ ամսին ՀՀ առողջապահության նախարարության առողջապահության ազգային ինստիտուտում որպես դասընթացավարներ վերապատրաստվել են նշված շրջանների բուժմիավորումների 4 բժիշկ ու 7 բուժքույր: Ծրագիրը շարունակվելու է 2 տարի ևս՝ ընդգրկելով ԱՀ առողջապահության համակարգի համայնքային բուժքույրերի հիմնական մասը[358]: Վերոհիշյալ դասընթացներն անվճար են, ՀՕՖ-ի գրասենյակի կողմից մասնակիցներին տրամադրվում է ֆինանսական աջակցություն՝ տրանսպորտային ու սննդի ծախսերը հոգալու համար:

Հայ օգնության ֆոնդի միջոցներով ԱՀ առողջապահության նախարարության հանրապետական բժշկական կենտրոնի դահլիճում 2019 թ. հուլիսի 1-ին մեկնարկեց 5-րդ համահայկական բժշկական համագումարը՝ «Հայաստան-Սփյուռք-Արցախ միաձուլում՝ հանուն առողջության» խորագրով: Նման համագումարների, սիմպոզիումների պատմության ընթացքում թերևս առաջին դեպքն է, որ դրա շրջանակում Արցախում կազմակերպվել է նաև

[358] Նույն տեղում:

սատելիտ (տվյալ տարածաշրջանում անհրաժեշտ թեմաներ) սիմ-պոզիում, որը ներառեց երեխաների և մեծահասակների առողջու-թյան վերաբերյալ արդի խնդիրները: Հայ բժիշկների համագումա-րի նպատակն է ծանոթացնել բժշկագիտության վերջին նվաճում-ներին, ստեղծել հնարավորություններ այդ ամենը ներդնելու ՀՀ-ում ու Արցախում, ինչպես նաև զարգացնել աշխարհի տարբեր վայրերում գործունեություն ծավալող բժիշկների համագործակ-ցությունը[359]: Համագումարի շրջանակում կազմակերպվել էին նաև բուժքույրերի սիմպոզիումներ Տավուշում, Երևանում, հուլի-սի 10-ին՝ համագումար Ստեփանակերտում, որին մասնակցում է-ին ԱՀ, ՀՀ և ԱՄՆ բուժաշխատողները: Համագումարի նպատակն էր բուժքույրերի մասնագիտական որակավորման բարձրացումը: Ծրագրի շրջանակում Ամերիկահայ բուժքույրերի ասոցիացիան Արցախի «Բուժքույրերի միավորում» հասարակական կազմակեր-պությանը նվիրել է որոշ բուժպարագաներ, փոխանցել դրանց կի-րառման նոր մեթոդները, որպեսզի վերջիններս էլ այդ գիտելիքնե-րը փոխանցեն մյուսներին[360]:

ՀՕՖ-ի, «Գաֆէսճեան ընտանիք» հիմնադրամի հովանու ներ-քո գործող «Հույս Հայաստանի» կազմակերպության, Երևանի «Արաբկիր» բժշկական կենտրոնի և Ղարաբաղում գործող «Ձեռք ձեռքի» հասարակական կազմակերպության ջանքերով 2008 թ. մեկնարկել է «Ժպիտ» բժշկական նախագիծը, որի նպատակն էր վիրահատական միջամտություն ցուցաբերել Հայաստանի և Լեռ-նային Ղարաբաղի «նապաստակի շրթունք» և «գայլի երախ» արատներով շուրջ 50 երեխաների[361]: 2009թ . հունիսին շարունակ-

[359] «Ազատ Արցախ», 2 հուլիսի, 2019:
[360] «Ազատ Արցախ», 11 հուլիսի, 2019:
[361] «Հայկական Սփյուռք» տարեգիրք. 2008, Երևան, 2009, էջ 141:

վեց «Ժպիտ» նախագծի 2-րդ փուլը, որի շրջանակում իրականացվել են 55 երեխայի անվճար վիրահատություններ[362]: Վերջին տասնամյակում ՀՕՖ-ի և մի շարք գործընկեր կազմակերպությունների ջանքերով ժպիտ է պարգևվել շուրջ 150 երեխաների Հայաստանից, Արցախից ու Ջավախքից, որոնք ծնվել են «նապաստակի շրթունք» և «գայլի երախ» արատներով[363]:

ՀՕՖ-ի կողմից իրականացված վերոհիշյալ ծրագրերը նպաստել են Արցախի Հանրապետության զարգացմանը սոցիալ-տնտեսական, առողջապահական և այլ բնագավառներում ու կարևոր գործոն են հետագա հաջողությունների համար: Կազմակերպության բարեգործական գործունեությունը Սփյուռքի ու Արցախի միասնության հոգեհարազատության հավաստիացումն է:

---

[362] «Հայկական Սփյուռք» տարեգիրք. 2009, Երևան, 2010, էջ 142:
[363] «Հայկական Սփյուռք» տարեգիրք. 2016, Երևան, 2017, էջ 129:

Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության (ԱՀԱԸ) հայրենանվեր գործունեությունը Արցախում

Հայ ժողովրդի ավետարանական մեծագույն կազմակերպությունը՝ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցությունը (ԱՀԱԸ, անգլերեն՝ Armenian Missionary Association of America), հիմնադրվել է Հայ ավետարանական եկեղեցիների կողմից 1918 թ. հունիսի 7-ին ԱՄՆՄասաչուսեթս նահանգի Ուստր քաղաքում: ԱՀԱԸ նպատակն է խոսքով և գործով արտահայտել Հիսուս Քրիստոսի սերը մարդկանց նկատմամբ, օգնել հայ ժողովրդին պահպանելու հավատքը, մշակույթը, ազգային ինքնությունը[364]: ԱՀԱԸ-ն բարեգործական ծրագրեր իրականացնող կազմակերպություն է: Ընկերակցությունն իր ծրագրերն իրականացնում է աշխարհի երկու տասնյակից ավելի երկրներում, և անգնահատելի է նրա դերը Սփյուռքի բարոյական, հոգևոր, կրթական, մշակութային ընդհանրության ձևավորման, հայապահպանության և ազգային ինքնագիտակցության զարգացման գործում:

1988 թ. դեկտեմբերյան երկրաշարժից անմիջապես հետո ԱՀԱԸ-ն կազմակերպել է սննդի, հագուստի տեղափոխումը Հայաստանի աղետյալ շրջաններ: Մի քանի տարի անց՝ 1991 թ., Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության գործունեությունը Հայաստանում էլ ավելի նպատակային օգտագործելու, ընդհանուր գործողությունները կոորդինացնելու համար Երևանում բացվում է ԱՀԱԸ կենտրոնական գրասենյակը և մասնաճյուղեր Գյումրիում, Վանաձորում, Ստեփանավանում, Իջևանում, Սպիտակում, Գորիսում[365]:

---

[364] Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն, Հայաստան, Տեղեկագիր 2017, Երևան, 2018, էջ 7:

[365] «Հայաստանյայց ավետարանական եկեղեցի», 1998, N 3, էջ 22:

Հայ ժողովրդին օգտակար լինելու սկզբունքով ընկերակցությունը համագործակցում է Հայ ավետարանական, Հայ առաքելական, Հայ կաթողիկե եկեղեցիների, ՀՀ սփյուռքի նախարարության, կրթության և գիտության նախարարության, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի, «Թուֆենկյան», «Ջինիշյան», «Հայաստանի մանուկներ», «Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան կլոր սեղան» բարեգործական հիմնադրամների, Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության, «Երեխաների պաշտպանության ցանց» միության, «Հայ օգնության ֆոնդ», «Վորլդ Վիժն Հայաստան», «Հայաստանի ծառատունկ» ծրագրի, «Հեյֆեր Փրոջեքտ Ինթերնեյշնլ» հայկական մասնաճյուղի, «Զարգացման սկզբունքներ», «Շեն» բարեգործական հ/կ, Ֆրանսիայի «Հույս Հայաստանի համար» և այլ կազմակերպությունների հետ: ԱՀԱԸ-ն ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի մշտական անդամ է[366]:

Ելնելով արցախահայության տնտեսական կացության թելադրանքից՝ ԱՀԱԸ առաջին սփյուռքահայ կազմակերպություններից է, որն իր ընդհանուր ծառայությունների ոլորտում ընդգրկեց նաև Արցախը: ԱՀԱԸ-ն Արցախում գործում է 1995 թվականից: Մասնաճյուղը 1998 թ. պաշտոնական գրանցում ստանալուց հետո ավելի արդյունավետ դարձրեց իր ծառայությունը: Ընկերակցությունը գրասենյակներ ունի Ստեփանակերտում, Շուշիում, Ասկերանում ու Մարտակերտում, որոնց միջոցով իրականացրել և իրականացնում է ծրագրեր՝ սոցիալական, առողջապահական, կրթական, մշակութային, քրիստոնեական, դաստիարակության ոլորտներում: Իրականացվում են նաև զարգացման ծրագրեր, որոնց նպատակը տեղի բնակչության համար աշխատատեղերի

[366] Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն, Հայաստան, Տեղեկագիր 2016, Երևան, 2017, էջ 8:

ստեղծումն է: ԱՀԱԸ-ն իր ծրագրերն իրականացնում է՝ համագործակցելով ԼՂՀ կառավարության և տարբեր հասարակական կազմակերպությունների հետ:

1996 թվականից սկսած՝ ընկերակցությունը լայնածավալ ծրագրեր է իրականացրել Մարտակերտի շրջանի Կիչան գյուղում: Կառուցվել է գյուղի բուժկետը, որը ընկերակցության ամենօրյա ուշադրության կենտրոնում է: Տրամադրվում են դեղորայք, գույք և այլն: Կառուցվել և շահագործման է հանձնվել գյուղի ջրամատակարարման համակարգը: Առանձին ջրախողովակներ են անցկացվել կիչանցիների տներում: Գյուղը լիովին ապահովված է խմելու ջրով: Շինարարական աշխատանքներն իրականացվել են կիչանցիների ուժերով: Վերանորոգվել է գյուղի մշակույթի տունը: Ընկերակցությունը 2003 թ. ավարտել է նաև Ասկերանի շրջանի Խաչեն գյուղի ջրամատակարարման համակարգի բարելավման ծրագիրը[367]:

ԱՀԱԸ-ն «Հեյֆեր Հայաստան», «Զարգացման սկզբունքներ» կազմակերպությունների համաֆինանսավորմամբ Հայաստանի մարզերում, սահմանամերձ գյուղերում և Արցախում կարիքավոր ընտանիքների համար իրականացնում է անասնապահության խթանման ծրագիր, ինչը նպաստում է գյուղական համայնքում սոցիալական կարիքների ու հոգսերի թեթևացմանը և խնդիրների լուծմանը: Շահառուներին տրամադրվում են կովեր, անասնաբուժական դեղորայք և անցկացվում են դասընթացներ՝ անասնապահության ու գյուղատնտեսության վերաբերյալ: Այս ծրագրի նպատակն է շահառուների համար ապահովել սննդի և եկամտի կայուն աղբյուր[368]: Արցախի Հանրապետությունում նշյալ՝ «Զարգացման գյուղատնտեսական ծրագիրը» գործում է 2012 թվականից,

---

[367] Մինասյան Է., Վարդանյան Ա., Հայրենիք-Սփյուռք առնչությունները ՀՀ անկախության տարիներին (1991-2009 թթ.), Ստեփանակերտ, 2010, էջ102-103:

[368] Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն, Հայաստան, Տեղեկագիր 2015,Երևան, 2016, էջ 22:

ընդգրկված են 47 ընտանիք[369]: 2019 թ. այդ ծրագրից օգտվում են Ասկերանի շրջանի Ուղտասար և Քռասնի համայնքների 10-ից ավելի ընտանիքներ[370]:

«Բժշկական ծառայություն» ծրագրով ԱՀԱԸ-ն Արցախի Հանրապետության առողջապահության նախարարությանը տրամադրել է շարժական բուժարան: 2002 թ. ընկերակցությունն ավարտել է ԱՀ մանկական հիվանդանոցի սոմատիկ բաժանմունքի վերանորոգման աշխատանքը: Ծրագրին օժանդակել է ամերիկյան «Ագլո» կանանց միջազգային կազմակերպությունը: ԱՀ պաշտպանության նախարարության բուժծառայությանը և առողջապահության նախարարությանը տրամադրվել են բժշկական սարքավորումներ և դեղորայք[371]:

Ընկերակցությունը Ղարաբաղյան գրասենյակների միջոցով իրականացրել է «Զոհված ազատամարտիկների և բազմանդամ ընտանիքների խնամակալության» ծրագիր:

Ծրագրի մեջ ընդգրկված են եղել Ստեփանակերտի, Շուշիի, Ասկերանի և Մարտունու շրջանների 325 ընտանիքներ: Եռամսյակային պարբերականությամբ նշված ընտանիքներն ստացել են սնունդ կամ դրամական օգնություն[372]: Կարիքավոր ընտանիքներին տրվում էր հոլանդական «Դորկաս» միջազգային քրիստոնեական բարեգործական կազմակերպության «Դորկասի արկղներ»:

ԱՀԱԸ ուշադրության կենտրոնում են գտնվում հատկապես երեխաները: Ընկերակցությունն արդեն շուրջ երկու տասնամյակ է՝

---

369 Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության ծրագրերը Արցախում, Ստեփանակերտ, 2017, էջ 4:

370 «Ազատ Արցախ», 23 նոյեմբերի 2019:

371 Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության ծրագրերը Արցախում, Ստեփանակերտ, 2017, էջ 6:

372 Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության ծրագրերը ԼՂՀ-ում, Ստեփանակերտ 2002, էջ 1:

Հայաստանում ու Արցախում իրականացնում է «Երեխաների հովանավորության» ծրագիր: Ծրագրում ընդգրկված են Ստեփանակերտի, Շուշիի, Ասկերանի, Մարտունու, Մարտակերտի, Հադրութի շրջանների շուրջ 200 ընտանիքներ: Եռամսյակային պարբերականությամբ նշված ընտանիքները ստանում են դրամական օգնություն, լուծվում են նաև երեխաների կրթական, ամառային հանգստի խնդիրները, իսկ առողջական խնդիրներ ունեցող երեխաներին օգնում են դեղորայք ձեռք բերելու և բուժում ստանալու հարցում:

Ընկերակցության «Մանկական սննդի» ծրագրի նպատակն է օգնել անապահով ընտանիքների նորածիններին, որոնք զրկված են մայրական կաթով սնվելու հնարավորությունից և ունեն առողջական խնդիրներ: Ծրագիրն իրականացվում է Ստեփանակերտում, Շուշիում, Ասկերանում: Մինչև ինը ամսական 140 երեխաներ յուրաքանչյուր ամիս անվճար ստանում են «Humana» և «Similac» կերակրատեսակներ[373]:

ԱՀԱԸ-ն իր ներդրումն ունի նաև կրթական ծրագրերի իրականացման գործում: ԱՀԱԸ-ն ՀՀ կրթության և գիտության նախարարության, «Հայաստան» համահայկական հիմնադրամի հետ միասին հովանավորեց Ղարաբաղի դպրոցների տարրական դասարանների երեխաների համար հինգ անուն դասագրքերի տպագրության աշխատանքները: ՀՀ կառավարության մարդասիրական օգնության կենտրոնական հանձնաժողովի դիմումի համաձայն՝ 66000 մանկական Աստվածաշունչ տրամադրվեց Հայաստանում, Ղարաբաղում և Վրաստանում ապրող հայ առաջինդասարանցիներին: ԱՀԱԸ-ն ֆինանսավորեց այս ծրագիրը և իրականացրեց այն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ՝ Հայաստանի աստվածաշնչային ընկերության օժանդակությամբ[374]: Բացի դրանից՝ ԱՀԱԸ

---

[373] Ամերիկայի հայ ավետարանչական ծրագրերը Արցախում, Ստեփանակերտ, 2017, էջ 4-5:

[374] «Հայաստանյայց ավետարանական եկեղեցի», 1998, N 3, էջ 23:

Երևանի կենտրոնական գրասենյակը ֆինանսական աջակցություն է ցուցաբերել Ստեփանակերտի թիվ մանկապարտեզին, թիվ 3 միջնակարգ դպրոցին և Շուշիի թիվ 1 դպրոցին[375]:

ԱՀԱԸ-ն, բարձր գնահատելով ուսման կարևորությունը Արցախի բնակչության անապահով խավերի շնորհալի ուսանողների կրթությունը խրախուսելու և այն շարունակելու հարցում նրանց օգնելու նպատակով իրականացնում է «Ուսանողական դրամական նպաստի ծրագիր» ծառայությունը: Դրանից օգտվում են առավել բարձր առաջադիմություն ունեցող ուսանողները:

2016թ. հունվարից Շուշիում և 2017թ. հոկտեմբերից Ասկերանում գործում են երեխաների համայնքահեն ցերեկային «Շող» կենտրոնները: Ծրագրում ընդգրկված են 52 դպրոցահասակ երեխաներ: Կենտրոնի նպատակն է բարձրացնել 6-14 տարեկան կարիքավոր երեխաների կրթական մակարդակը, բացահայտել և զարգացնել նրանց ընդունակությունները, վերհանել երեխաների խնդիրներն ու կենտրոնացնել աշխատանքային թիմի ուժերը՝ դրանք լուծելու համար: Ծրագիրն իրականացվում է ԱՀԱԸ-ի և «Միշըն փասիբլ» հոլանդական կազմակերպության համատեղ ջանքերով[376]: Ընկերակցության Արցախի մասնաճյուղի Ստեփանակերտի գրասենյակում, 1998 թվականից սկսած, կազմակերպվում են նաև անգլերենի ուսուցման անվճար դասընթացներ, որոնց մասնակցում են տասնյակ պատանիներ ու երիտասարդներ:

1996 թվականից իրականացվում է դպրոցահասակ երեխաների «Ամանորյա և սուրբծննդյան ծրագիր»: Ծրագրից օգտվում և Ամանորյա նվերներ են ստանում շուրջ 1200 երեխաներ: Ամեն տարի Նոր տարվա և Սուրբ ծննդի առթիվ Ստեփանակերտում,

---

375 Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1173, ց.3, գ.79, թ..71:

376 Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն, Հայաստան, Տեղեկագիր 2018, Երևան, 2018, էջ 81:

Ասկերանում, Շուշիում, տեղական իշխանությունների հետ համագործակցելով, կազմակերպվում են տոնական հանդեսներ՝ կարիքավոր ընտանիքների երեխաների համար[377]:

Աստվածաշնչային տեսանկյունով քրիստոնեական դաստիարակությունը ոչ միայն ընդհանուր դաստիարակության անբաժան մասն է, այլև ամբողջությունը, որի նպատակն է աստվածաշնչային ուսուցումների հիման վրա դաստիարակել հայ մանուկներին ու պատանիներին: Ընկերակցությունը՝ որպես քրիստոնեական կազմակերպություն, անում է ամեն բան, որ երեխաները, ընդգրկելով ՀԱԸ-ի քրիստոնեական դաստիարակության և գեղարվեստական խմբակներում, կարողանան բացահայտել և զարգացնել իրենց գեղարվեստական նախադրյալներն ու ընդունակությունները և Աստվածաշնչի ուսուցման հիման վրա ստանան համեստ և բարոյական կրթություն: Այս խնդրի իրականացման համար ՀԱԸ քրիստոնեական դաստիարակության բաժինը կազմակերպում է երգի, երաժշտության, քանդակի, նկարչության, դրամատիկական, ձեռնարվեստի ու սպորտային տարբեր խմբակներ[378]: Քրիստոնեական դաստիարակության ծառայություններ են մատուցվում Ասկերանի, Շուշիի, Ստեփանակերտի, Կիչան և Վազգենաշեն գյուղերի կենտրոններում: Այս ծրագրին մասնակցում են շուրջ 300 մանուկներ, 100 պատանիներ և 70 երիտասարդներ[379]: Այդ ծրագրի շրջանակում ընկերակցության գործունեության կարևոր մասն է կազմում Արցախի երեխաների ամառային հանգստի կազմակերպումը՝ նպատակ ունենալով օգնել կարիքավոր ընտանիքների երեխաներին, ապահովել լիարժեք սննդով, ֆիզիկական և քրիստոնեական դաստիարակության լավագույն պայմաններով:

---

377 Նույն տեղում, էջ 7:

378 Մինասյան Է., Վարդանյան Ա., նշվ. աշխ., էջ 104:

379 Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության ծրագրերը ԼՂՀ-ում, Ստեփանակերտ, 2016, էջ 6:

ԱՀԱԸ-ի «Ճամբարային ծրագրի» շրջանակներում 1996 թվականից Ստեփանակերտի «Կարկառ» ճամբարում կազմակերպվել է Արցախի երեխաների ամառային հանգիստը: Հազարավոր երեխաներ, պատանիներ և երիտասարդներ ամեն տարի վայելել են իրենց ամառային հանգիստը գեղատեսիլ այս ճամբարում: 2003 թվականից երեխաները հանգստանում են ԱՀԱԸ Արցախի մասնաճյուղի Շուշիի «Պետրոսյան» ամառային հանգստի ճամբարում: Կազմակերպվում են նաև բակային ճամբարներ՝ հագեցած մշակութային, մարզական, հայրենագիտական, ուսուցողական, կրթական ու քրիստոնեական դաստիարակության բազմաբովանդակ և հետաքրքիր ծրագրերով: Արցախում շուրջ 22 հազար երեխաներ մասնակցել են ամառային ճամբարներին[380]:

Հաշվի առնելով երեխաների նախադպրոցական կրթության և քրիստոնեական դաստիարակության կարևորությունը՝ Ընկերակցությունն ստանձնել է չորս մանկապարտեզների՝ Ստեփանակերտի, Շուշիի, Ասկերանի և Մարտակերտի հովանավորությունը:

Հայ Ավետարանչական ընկերակցության Շուշիի մանկապարտեզը 1999 թվականից հովանավորվում է «Չարլզ և Դորին Բիլեզիքյան» հիմնադրամի կողմից[381]: Տեր և տիկին Բիլեզիքյանների ֆինանսավորմամբ 2012թ. մանկապարտեզի հարակից տարածքում կառուցվել է նաև խաղահրապարակ, որը նախատեսված է ոչ միայն մանկապարտեզի սաների, այլև այդ թաղամասի բոլոր երեխաների համար[382]:

ԱՀԱԸ Ստեփանակերտի Հակոբ և Լիդիա Բաղդիկյանների անվան երկհարկանի մանկապարտեզը 2001թվականից հովանավորվում է Վաչե և Էլբիզ Բաղդիկյանների կողմից:

---

380 Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության ծրագրերը Արցախում, Ստեփանակերտ, 2017, էջ 5:

381 «Հայաստանյայց Ավետարանական եկեղեցի», 2005, N 4, էջ 18:

382 «Ազատ Արցախ», 30 հոկտեմբերի, 2012:

Ընկերակցության կողմից 2002 թ. ֆինանսավորվել է Ասկերան քաղաքի մանկապարտեզի շենքի վերանորոգման և կահավորման ծրագիրը: Մանկապարտեզի հովանավորն է Կանադայի Հայ ավետարանչական ընկերակցությունը[383]: 2018 թ. աշնանից մանկապարտեզն անվանակոչվել է բարերար Հակոբ Բասմաջյանի ծնողների՝ Եփրեմ և Զաբել Բասմաջյանների անունով:

Մարտակերտի մանկապարտեզը 2002 թվականից գտնվում է ԱՀԱԸ հովանավորության ներքո: Այն կրում է վեր. Մովսես Ճանպազյանի անունը: 2018թ. վերանորոգումից հետո նախադպրոցական հաստատությունն ունի ջեռուցման համակարգ, նոր սանհանգույց, ապահովված է կահույքով[384]: Երեխաների համար ստեղծված են բոլոր պայմանները՝ հանգիստը, կրթական ու դաստիարակչական աշխատանքերն իրականացնելու համար: Մանկապարտեզում մեծ ուշադրություն է դարձվում երեխաների նախադպրոցական կրթությանն ու հայեցի դաստիարակությունը: Մանկապարտեզների բացումը նպաստում է նաև տեղերում բնակչության համար աշխատատեղերի ստեղծմանը:

ԱՀԱԸ ֆինանսավորմամբ 2002 թ. իրականացվել են Հադրութ քաղաքի մանկապարտեզի շենքի վերանորոգման աշխատանքները, և մինչև 2016 թվականը մանկապարտեզը գործել է ընկերակցության հովանու ներքո[385]:

Ստեփանակերտի, Շուշիի, Մարտակերտի, Ասկերանի մանկապարտեզներ են հաճախում շուրջ 400 երեխաներ: Նրանք մշտապես մասնակցում են ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության կողմից կազմակերպվող միջոցառումներին,

---

383 ԼՂՀ պետական արխիվ, ֆ.180,ց.1, կ-9,պ.մ.43,թ.31:

384 AMAA NEWS Armenian Missionary Associaton of America, January-February-March 2019 LIII1, Paramus, p.15.

385 ԼՂՀ պետական արխիվ, ֆ.180,ց.1, կ-10, պ.մ.45, թ.8,տես նաև, ֆ.180, ց.1, կ-11, պ.մ.50, թ. 33:

մրցույթներին և բազմիցս արժանացել են պատվոգրերի և շնորհակալագրերի[386]:

Ներկայումս ԱՀԱԸ-ն շարունակում է իր ազգանվեր ծառայությունը արցախահայության համար: Խոսելով կազմակերպության կատարած աշխատանքների մասին՝ ԱՀԱԸ գործադիր տնօրեն Զավեն Խանջյանը նշել է. «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցությունը կարող է հպարտությամբ հայտարարել, որ անկախության առաջին օրերից եղավ Արցախում և իր ծառայությունները սկսեց մատուցել: Արցախը մեր գերխնդիրների կիզակետն է: Արցախի անկախության հզորացումը, խարսխումը գերխնդիր են ազգի համար: Բոլորս պարտավոր ենք հնարավոր ամեն բան անել՝ օգտակար լինելու Արցախին, հզորացնելու Արցախի պետությունը: Շահել ենք պատերազմը, բայց ոչ խաղաղությունը, ինչը տակավին շարունակում է որպես տագնապ մնալ թե՛ Հայաստանի, թե՛ Սփյուռքի, թե՛ Արցախի համար: Մենք պետք է օգտագործենք մեր կարողությունները, որպեսզի շահենք Արցախի խաղաղությունը:

Արցախի ժողովուրդը չի կարող իր հանգիստ, արժանապատիվ կյանքը շարունակել, երբ տակավին խաղաղության ապահովությունը չկա»[387]:

Բարձր գնահատելով ԱՀԱԸ ավելի քան քսանամյա գործունեությունը՝ ընկերակցության 100-ամյա հոբելյանի առիթով Արցախի Հանրապետության նախագահը ԱՀԱԸ գործադիր տնօրեն Զավեն Խանջյանին պարգևատրեց «Երախտագիտություն» մեդալով:

---

[386] Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն, Հայաստան, Տեղեկագիր 2017, էջ 71:

[387] Նույն տեղում, էջ 34:

Հայ օգնության միության գործունեությունը Արցախի Հանրապետությունում XXI դարի երկու տասնամյակներում

Հայ օգնության միությունը (ՀՕՄ) ոչ կառավարական, ոչ դավանական կանանց բարեգործական կազմակերպություն է, 1998 թվականից ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական խորհրդի (Ecosoc) լիիրավ անդամ է: Հիմնադրվել է 1910 թ. ԱՄՆ Նյու Յորք քաղաքում ՀՀԴ գործիչ Է. Ակնունու (Խաչատուր Մալումյան) ջանքերով, ԱՄՆ հայ կանանց տարբեր կազմակերպությունների միավորմամբ և կոչվել է ՀՀԴ Կարմիր խաչ: 1946 թ. պատգամավորական ժողովի որոշմամբ կազմակերպությունը վերանվանվել է Հայ օգնության միություն: Կազմակերպության կենտրոնատեղին Ուոթրթաունում է (Մասսաչուսեթս, ԱՄՆ): ՀՕՄ-ը Հայաստանում գրանցվել է 1991 թ.: Նրա մասնաճյուղերը գործում են ՀՀ տասնյակ քաղաքներում: 1996 թ. Ստեփանակերտում բացվեց Հայ օգնության միության Արցախի մեկուսի մասնաճյուղը, որը իրականացնում է բարեգործական ծրագրեր սոցիալական, առողջապահական և կրթական-դաստիարակչական ոլորտներում:

Հայ օգնության միությունը կանանց բարեգործական կազմակերպություն է, 1998 թ. ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական խորհրդի լիիրավ անդամ է: Հիմնադրվել է 1910 թ. ԱՄՆ Նյու Յորք քաղաքում, ՀՀԴ գործիչ Է. Ակնունու (Խաչատուր Մալումյան) ջանքերով, ԱՄՆ հայ կանանց տարբեր կազմակերպությունների միավորմամբ և կոչվել է ՀՀԴ Կարմիր խաչ: 1946 թ. պատգամավորական ժողովի որոշմամբ կազմակերպությունը վերանվանվել է Հայ օգնության միություն[388]:

«Հայ օգնութեան միութեան խորհրդանշանը կը պարունակե՝

[388] Ծրագիր-կանոնագիր Հայ օգնության միության, բարեփոխուած 1998-ի համահայկական պատգամավորական ժողովին, . հոկտեմբեր, էջ 1:

Սիրտ մը՝ խորհրդանիշ բարեգործութեան և կարեկցութեան

Խաչ մը՝ խորհրդանիշ Հայերու պաշտօնական դաւանանքի՝ Քրիստոնէութեան

Սուր մը՝ խորհրդանիշ զգօնութեան եւ հայրենիքի պաշտպանութեան

(Խաչը սուրին բռնակոթն է)

Արարատ լեռ՝ խորհրդանիշ Հայ Ազգի հայրենի Հայաստանի

Արեւ և ճառագայթներ՝ խորհրդանիշ կրթութեան լոյսին

Ձթենիի ճիւղ՝ խորհրդանիշ խաղաղութեան

Դափնիի ճիւղ՝ խորհրդանիշ մշակոյթի

Երիզ մը՝ որուն վրայ կերեւան« «ՀՕՄ» սկզբնատառերը եւ հիմնադրութեան թուականը «1910»»[389]:

ՀՕՄ-ը՝ որպես անկախ, համահայկական մարդասիրական միություն, 20-ից ավել երկրներում գործող իր միավորներով ու բազմահազար անդամներով, արդեն դար ավել է, ինչ իրականացնում է բազմաթիվ բարեսիրական ծրագրեր կրթության, մշակույթի, առողջապահության, սոցիալական, տնտեսական ոլորտներում: Կազմակերպության կենտրոնատեղին Ուոթըրթաունում է (Մասսաչուսեթս, ԱՄՆ)[390]:

Հայաստանում ՀՕՄ-ը սկսել է աշխատել 1988 թ. աղետալի երկրաշարժից անմիջապես հետո՝ օգնություն կազմակերպելով տուժած շրջանների բնակչությանը: Հայ օգնության միությունը Հայաստանում գրանցվել է 1991 թ. և շուրջ 1500 անդամներով գործում էր ՀՀ տասնյակ քաղաքներում ու գյուղերում: ՀՕՄ-ի առաքելությունն էր օժանդակել կրթական, առողջապահական և բարեգործական այլ ծրագրերի իրականացմանը[391]:

---

389 Նույն տեղում, էջ 23:

390 Նյութը մեզ է տրամադրել ՀՕՄ-ի Արցախի մասնաճյուղի գրասենյակը:

391 Մինասյան Է., Վարդանյան Ա., Հայրենիք-սփյուռք առնչությունները ՀՀ անկախության տարիներին (1991-2009 թթ.), հոդվածների ժողովածու, Ստեփանակերտ, 2010 էջ 88:

Արցախահայությանը օգնելու նպատակով 1996 թ. Ստեփանակերտում բացվում է Հայ օգնության միության Արցախի մեկուսի մասնաճյուղը՝ իրագործելով Ակնունու երազանքը՝ «Դեպի երկիր, միշտ դեպի երկիր»: Մասնաճյուղն ունի 33 անդամ: Օգտվելով մասնավոր բարերարների և ՀՕՄ-ի ԱՄՆ, Արևմտյան, Արևելյան շրջանների, Ավստրալիայի շրջանային վարչության, Հունաստանի «Հայ կապույտ խաչ», Կանադայի մասնաճյուղերի ու Ֆրանսիայի «Կապույտ խաչի» աջակցությունից՝ կազմակերպությունը Արցախում իրականացնում է բարեգործական ծրագրեր սոցիալական, առողջապահական ու կրթական-դաստիարակչական ոլորտներում[392]:

Հայ օգնության միության Արցախի մասնաճյուղի միջոցով 2000 թվականից սկսած իրագործում է «Զոհված զինծառայողների, ազատամարտիկների, և երկկողմանի ծնողազուրկ երեխաների խնամակալության» ծրագիրը: Ծնողազուրկ երեխաները մինչև չափահաս դառնալը անհատ հովանավորների կողմից տարեկան ստանում են 170 ԱՄՆ դոլլար[393]:

ՀՕՄ-ի Արցախի մասնաճյուղը, համագործակցելով Ստեփանակերտի վերականգնողական կենտրոնի հետ, ստանձնել է արցախյան առաջին պատերազմի ժամանակ հրազենով ողնաշարից վիրավորված շուշեցի երեք ազատամարտիկների խնամքը, որոնք անդամալույծ են և շարժվում են սայլակներով: ՀՕՄ-ը կարողացավ լուծել սննդի հետ կապված հարցերը, իսկ բուժման ծախսերը հոգում էր Վերականգնողական կենտրոնը[394]: ՀՕՄ-ը հոգում էր նաև անապահով քաղաքացիների առողջապահական խնդիրները: Նրա հովանավորությամբ Արցախի հաշմանդամների, թոշա-

---

[392] Նույն տեղում, էջ 90:

[393] Նյութը մեզ է տրամադրել ՀՕՄ-ի Արցախի մասնաճյուղի գրասենյակը:

[394] «Մարտիկ», Պաշտպանության բանակի պաշտոնաթերթ, 20-24 մարտի 2000:

կառուների, կարիքավոր և զոհված ազատամարտիկների ընտանիքների անդամներին անվճար ակնոց էր տրամադրում «Սիրուն օպտիկը»:

ՀՕՄ-ն իր ազգօգուտ ծրագրերով կանգնած է նաև հայ զինվորի կողքին: Հայ օգնության միության (ՀՕՄ) Արցախի միավորն իրականացնում էր «Այցելություն դիրքապահ զինվորներին» ծրագիրը, որի՝ բանակի հետ կապված կազմակերպական մասն ապահովում էր ԱՀ ՊՆ ռազմահայրենասիրական դաստիարակության և հասարակական կազմակերպությունների հետ կապերի բաժինը: Նշված ծրագրի շրջանակում ՀՕՄ-ի Արցախի միավորը բերքի տոն էր կազմակերպում Արցախի զորամասերից մեկում: 2019 թ. հոկտեմբերին հօմուհիներն արցախյան մրգեր ու քաղցրեղեն են հասցրել Մարտակերտի շրջանում տեղակայված զորամասերից մեկը[395]: Վերջին այցը եղել է 2020 թ. հունվարի 28-ին: Այցելել են Մեխակավանի զորամաս:

ՀՕՄ-ի կողմից իրականացվում են նաև կրթական ծրագրեր: Արցախի մասնաճյուղի կողմից «Լավագույն ուսանող» ծրագրի շրջանակում, որպես կանոն, մեկ ուսումնական տարվա ընթացքում պարգևատրվում են 18-20 ուսանողներ՝ 100-ական ԱՄՆ դոլար խրախուսական պարգևով: ՀՕՄ-ն աջակցում է այն ուսանողներին, որոնք ուսման մեջ ունեն բարձր առաջադիմություն և սոցիալապես անապահով ընտանիքներից են: ՀՕՄ-ի շրջանակում գործում է նաև «Երեմյան կրթաթոշակ» ծրագիրը: Արցախից ընտրվում է 1 ուսանող՝ հիմնականում ՀՀ բուհերում սովորող, տրամադրվում է 500-1000 ԱՄՆ դոլար՝ ուստարվա ուսման վարձի չափով[396]: Այս ծրագրի շնորհիվ տասնյակ արցախցի երիտասարդներ կարողացել են ստանալ բարձրագույն կրթություն և իրենց ներդրումն ունենալ հայրենիքի բարգավաճմանը:

---

[395] «Ազատ Արցախ», 23 հոկտեմբերի, 2019:

[396] Նյութը մեզ է տրամադրել ՀՕՄ-ի Արցախի մասնաճյուղի գրասենյակը:

Մինչև ադրբեջանա-ղարաբաղյան առաջին պատերազմը Ղարաբաղում գործում էր շուրջ 200 մանկապարտեզ, սակայն պատերազմի պատճառով դրանցից շատերն ավերվեցին: Հաշվի առնելով նախադպրոցական կրթության կարևորությունը՝ ՀՕՄ-ի Արցախի մասնաճյուղը ստանձնել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում մանկապարտեզների հովանավորության գործը: Ստեփանակերտի «Սոսե» մանկապարտեզը գործում է 1998 թ. մայիսից: Այստեղ հաճախում են զոհված ազատամարտիկների, Արցախյան պատերազմի առաջին կարգի հաշմանդամների, երկրորդ կարգի հաշմանդամների (որոնք ունեն երեքից ավելի երեխա կամ աշխատանքով ապահովված չեն) և հինգ և ավելի երեխաներ ունեցող բազմազավակ ընտանիքների երեխաներ:

Կազմակերպության հովանավորությամբ «Սոսե» մանկապարտեզներ են բացվել Շուշիում, Քարին տակ, Ասկերանի շրջանի Այգեստան, Խնձրիստան, Հադրութի շրջանի Մեծ Թաղեր և Տող գյուղերում, Մարտունու շրջանի Ավդուռ, Հաղորտի, Աշան, Շահումյանի շրջանի Ակնաբերդ գյուղերում: Մանկապարտեզներում մեծ ուշադրություն է դարձվում երեխաների նախադպրոցական կրթությանն ու հայեցի դաստիարակությանը: Մանկապարտեզների բացումը նպաստում է նաև տեղերում բնակչության համար աշխատատեղերի ստեղծմանը[397]:

Հայ օգնության միության կենտրոնական վարչությունը ստեղծել էր հանգանակային հանձնախումբ, որի ջանքերով ՀՕՄ-ի աշխարհասփյուռ միավորները և անհատ բարերարները հավաքեցին ավելի քան 1 մլն ԱՄՆ դոլար, որն էլ օգտագործվեց Ստեփանակերտի «Սոսե» մանկապարտեզի նոր շենքի կառուցման համար: Մանկապարտեզի նոր շենքի բացման հանդիսավոր արարողությունը տեղի ունեցավ 2017 թ. սեպտեմբերի 6-ին:

---

[397] Մինասյան Է., Վարդանյան Ա., նշվ. աշխ., էջ 91:

Արցախի Հանրապետության դեմ 2020թ. սեպտեմբերին սանձազերծված 44-օրյա պատերազմի հետևանքով ՀՕՄ-ի կողմից հովանավորվող 8 մանկապարտեզներից 4-ը մնացել է Ադրբեջանի վերահսկողության տակ:

Ներկայումս Հայ օգնության միությունը Արցախի Հանրապետությունում շարունակում է իրականացնել իր առջև դրված բարեգործական ծրագրերը:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ԲԱՐԵՐԱՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱ-ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՈԼՈՐՏԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ XX ԴԱՐԱՎԵՐՋԻՆ ԵՎ XXI ԴԱՐԱՍԿԶԲԻ ԵՐԿՈՒ ՏԱՍՆԱՄՅԱԿՆԵՐՈՒՄ

Համահայկական հիմնադրամների և հասարակական, բարեգործական կազմակերպությունների և անհատ բարերար-ների ներդրումները Արցախի Հանրապետության տնտեսության մեջ և այդ ոլորտի ծրագրերի կենսագործումը

Հայաստանի անկախության հռչակման և հանրապետության կայացման սկզբնական փուլում ՀՀ և ԼՂՀ առջև կանգնած դժվարությունները հաղթահարելու համար Երևանում 1992 թ. մարտին ՀՀ նախագահի հրամանագրով ստեղծվեց «Հայաստան» համահայկական հիմնադրամը (ՀՀՀ)՝ որպես հայկական բարեսիրական կազմակերպություն[398]: Հիմնադրամի նպատակն էր համայն հայության ներուժի համախմբմամբ, գործադրմամբ աջակցել հայրենիքի զարգացմանն ու բարգավաճմանը: Հիմնական խնդիրներից էին ՀՀ և ԼՂՀ տնտեսությունների զարգացմանն օժանդակելը, նրանց ենթակառուցվածքային խնդիրների լուծումը համայն հայության դրամական նվիրատվությունները համախմբելու միջոցով: Հիմնադրամը երկու տասնյակից ավելի մասնաճյուղեր ունի արտերկրի հայ համայնքներում: Այդ միջոցները հավաքվում են

[398] «Հայ Սփյուռք» հանրագիտարան, Երևան, 2003, էջ 688:

հայության կամավոր տուրքերից, անհատ անձանց, ձեռնարկությունների ու կազմակերպությունների հատկացումներից, տարատեսակ միջոցառումներից (ամենամյա հեռախոսամարաթոններ, հեծանվարշավներ, ցուցահանդեսներ և տոնավաճառներ), նվիրատվություններից և այլն: Հիմնադրամի ղեկավար մարմինը հոգաբարձուների խորհուրդն է, որն ի պաշտոնե գլխավորում է ՀՀ նախագահը: Հիմնադրամն իր գործունեության ընթացքում իրագործել է բազմազան ծրագրեր ՀՀ-ում և ԼՂՀ-ում: 1992-2003 թթ. հիմնադրամը իրականացրել է 100-ից ավելի ծրագրեր. 80 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով 960 ընտանիքների համար կառուցվել են 210 բնակելի շենք և առանձնատուն, 40 դպրոց և կրթական հաստատություն, 13 առողջարանական հիմնարկություն, ավտոճանապարհներ (250 կմ), ջրատար խողովակաշարներ (131 կմ), էլեկտրական հաղորդման գծեր՝ 60 կմ ընդհանուր երկարությամբ[399]:

2005 թվականից հիմնադրամը սկսեց ավելի շատ զբաղվել Արցախի տնտեսության, տարածքային զարգացման ծրագրի մշակմամբ և կենսագործմամբ: 1995 թվականից նպաստներ է վճարում ԼՂՀ զոհված և առաջին կարգի հաշմանդամ ազատամարտիկների երեխաներին: «Հայաստան» համահայկական հիմնադրամը ծավալել է, հիրավի, մեծածավալ գործունեություն: Իր հիմնադրման տակավին երրորդ տարում էներգետիկայի, բնակարանաշինության, ճանապարհաշինության բնագավառներում իրականացրել է ավելի քան 2.5 մլն դոլարի աշխատանքներ[400]: «Հայաստան» համահայկական հիմնադրամը Արցախում սկսել է գործել 1993 թվականից, երբ դեռ շարունակվում էր պատերազմը, և իրականացրել է բազում ծրագրեր հանրապետության գրեթե բոլոր շրջաններում: Լայնածավալ հումանիտար օգնություն է տրամադրվել Արցախի

---

399 Նույն տեղում:

400 «Հայաստանի Հանրապետություն», 5 մարտի, 1994:

Հանրապետության կառավարությանը՝ պատերազմից ավերված բնակավայրերը մաքրելու, գարնան և աշնան գյուղատնտեսական աշխատանքները կազմակերպելու, սերմացու, թունաքիմիկատներ և վառելիք ձեռք բերելու համար: 1996-1997 թթ. 2.520.000 ԱՄՆ դոլար գումար է ներդրվել՝ Արցախի Հանրապետությունում գյուղատնտեսական աշխատանքներ կազմակերպելու նպատակով[401]:

1995 թ. հիմնադրամը ձեռնարկել է Արցախում ճանապարհաշինության, ջրագծերի, ոռոգման ջրատարների վերանորոգման ու կառուցման նպատակով ազգային տուրքի մարաթոնների կազմակերպում[402]: Այդ ձեռնարկումը առավել համակարգված ընթացել է 1998 թվականից, երբ 24-ժամյա հեռուստամարաթոններն սկսեցին ամենամյա բնույթ կրել՝ ընդգրկելով Հայաստանն ու ողջ Սփյուռքը: Գերազանցապես հենց դրա շնորհիվ էր, որ արդեն 1999 թ. շահագործման հանձնվեց Գորիս–Ստեփանակերտ ավտոճանապարհը (65 կմ): Արտասահմանում բնակվող շուրջ 200 հազար հայեր, հիմնադրամի կատարած ակտիվ աշխատանքի շնորհիվ, իրենց անմիջական ներդրումն ունեցան հիմնադրամի նախաձեռնած ճանապարհաշինության հայրենանվեր աշխատանքների գործում[403]: Իսկ նույն 1999 թ. նոյեմբերին Լոս Անջելոսում «Հայաստան» համահայկական հիմնադրամի նախաձեռնությամբ անցկացված հեռուստամարաթոնի ընթացքում հավաքված ավելի քան 5 մլն դոլար[404] հանգանակությամբ էլ Արցախում սկսվեց «Հյուսիս-հարավ» նոր ավտոճանապարհի (շուրջ 170 կմ) շինարարությունը[405], որի 30 կիլոմետրը շահագործման էր հանձնվել 2001 թ. նոյեմբերին[406]:

---

401 Մինասյան Է., Վարդանյան Ա., Հայրենիք-Սփյուռք առնչությունները ՀՀ անկախության տարիներին, Ստեփանակերտ (1991-2009 թթ.), 2010, էջ 107-108:

402 «Հայաստանի Հանրապետություն», 28 մարտի, 1996:

403 «Հայաստանի Հանրապետություն», 28 սեպտեմբերի, 1999:

404 «Հայաստանի Հանրապետություն», 28 հունվար, 2000:

405 «Հայաստանի Հանրապետություն», 12 նոյեմբերի, 1999:

406 «Հայաստանի Հանրապետություն», 17 նոյեմբերի, 2001:

«Հայաստան» համահայկական հիմնադրամն էլ ավելի մեծ եռանդով էր շարունակում Արցախի շենացման ուղղությամբ իր ազգանպաստ գործունեությունը հետագա ժամանակաշրջանում:

2013 թ. տվյալներով՝ հիմնադրամի իրագործած ծրագրերն գերազանցում են 235 մլն ԱՄՆ դոլարի սահմանը: 2013 թ. հեռուստամարաթոնի արդյունքում հավաքագրված գումարները հիմնականում ուղղվեցին Վարդենիս–Մարտակերտ ավտոմայրուղու կառուցմանը, ինչպես նաև հոգաբարձուների խորհրդի կողմից մշակված նոր ծրագրերի իրագործմանը: Հիմնադրամի իրագործած ծրագրերի շնորհիվ կառուցվեցին ավելի քան 470 կմ ճանապարհ Հայաստան Հանրապետությունում ու Արցախում, 212 կմ ջրազտման ու ջրամատակարարման համակարգեր, ինչպես նաև 144 կմ բնական գազատարներ, վերակառուցվեցին 218 դպրոց և մանկապարտեզ, կահավորվեցին 410 տուն և բնակարան: 2004 թ. ավարտվեց Արցախի 160 կմ ձգվող «Հյուսիս-հարավ» ավտոմայրուղու շինարարության հիմնական մասը: 2005 թ. հեռուստամարաթոնում ընդհանուր նվիրատվության չափը հասնում էր 7.8 մլն դոլարի, որը ծախսվեց Արցախի Մարտակերտի շրջանի վերակառուցման համար[407], իսկ 2006 թ. հեռուստամարաթոնում հանգանակված 13.7 մլն դոլարը նպատակաուղղվեց Արցախի Հանրապետության Հադրութի շրջանի վերականգնմանը[408]: 2007-2008 թթ. հիմնադրամը ձեռնամուխ եղավ Հայաստանի և Արցախի Հանրապետության գյուղերում ենթակառուցվածքների վերականգնմանը: 2009 թ. հեռուսատամարաթոնը, որն անցկացվեց «Մեր Շուշին» խորագրի ներքո, արձանագրեց 15.9 մլն դոլարի նվիրատվություն և նվիրատվության խոստում: Ստացված գումարները գլխավորապես

---

407 «Հեռուստամարաթոն 2005», http://www.hi,madram.org/index.php?id=22326&-lang=2:

408 Նույն տեղում:

ուղղվեցին Շուշիում սոցիալական ու տնտեսական ենթակառուցվածքների՝ ջրագծերի, ճանապարհների և բնակելի շենքերի տանիքների վերանորոգման աշխատանքներին[409]: 2005 թ. ավարտին հասցվեց նաև ԼՂՀ Մարտակերտի շրջանի տարածքային զարգացման ծրագիրը: 2006 թ. կառուցվին նոր ջրագծեր, բաշխիչ ցանցեր, անցկացվեց բնական գազամուղ: 2007 թ. նոյեմբերին ավարտին հասցվեց նաև գյուղատնտեսական զարգացման ծրագիրը, որը նախատեսում էր Արցախի նոր գյուղական դպրոցների, խմելու ջրի համակարգերի կառուցումը, իսկ ագրարային զարգացման ծրագրերի կենսագործմամբ առողջապահական սարքավորումներ տրվեցին բոլոր գյուղական շրջաններին: Արցախի գյուղերում վերականգնվեցին մի շարք ենթակառուցվածքներ, այդ թվում՝ Շուշիում հասարակական ու տնտեսական ենթակառուցվածքները:

2009 թ. կառուցվեցին ջրագծեր, ճանապարհներ, վերանորոգվեցին բնակելի շենքերի տանիքները, լուծվեցին Արցախի գյուղերում խմելու և ոռոգման ջրի խնդիրները, իսկ 2010 թ. ավարտին հասցվեց Արցախի սահմանամերձ գյուղերի զարգացման համապարփակ ծրագիրը: Ջրամատակարարման ցանցեր, ջրավազաններ, մաքրիչ և մղիչ կայաններ էին կառուցվել Մարտունու, Ասկերանի, Քաշաթաղի շրջաններում ու Շուշիում: Գերմանիայի հայության ֆինանսավորմամբ ջրագիծ է կառուցվել Մարտակերտի շրջանի Ակնաբերդ գյուղում: 2009 թ. շահագործման էին հանձնվել Հադրութի շրջանի Մեծ Թաղլար, Ազոխ, Դրախտիկ գյուղերի ջրատարները: Հիմնադրամի Ֆրանսիայի տեղական մարմինը ջրամատակարարման համակարգ էր կառուցել Ասկերանի շրջանում[410]: Առաջնահերթ էր համարվել Շուշի քաղաքի ջրամատակարարման հարցը: Շուշիի «Վերածնունդ» հիմնադրամը իրականացրել էր Շուշի ջրագծի կառուցումը, իսկ «Հայաստան» համահայկական

---

[409] «Ազատ Արցախ», 21 մարտի, 2009:

[410] Մինասյան Է., Վարդանյան Ա., նշվ. աշխ., էջ 108:

հիմնադրամը զբաղվել էր ջրի ներքին ցանցի հարցերով: 2-2,5 մլն դոլար էր հատկացվել նաև Շուշիի բնակելի շենքերի տանիքների և դպրոցների նորոգման համար[411]: Կանադահայության մասնակցությամբ հիմնադրամը ավարտին է հասցրել Ստեփանակերտի օղակաձև ջրատարի և երկու ջրամբարների շինարարությունը: Սա Ստեփանակերտի ջրամատակարարման հիմնական ցանցն է, որը խմելու ջրով է ապահովում քաղաքը[412]:

2009 թ. նոյեմբերի 26-ին տեղի ունեցավ «Հայաստան» համահայկական հիմնադրամի դրամահավաք միջոցառումը՝ «Հեռուստամարաթոն-2009-ը», որի ընթացքում հավաքվեց 15 875 043 ԱՄՆ դոլար: Գումարի 70 %-ը տրամադրվեց Շուշի քաղաքին, մնացածը՝ Հայաստանի Հանրապետության ու Արցախի այլ շրջաններին[413]: «Հայաստան» համահայկական հիմնադրամի ուժերով շահագործման էին հանձնվել «Շուշի–Կարմիր շուկա» բարձր լարման էլեկտրահաղորդման գիծը՝ Շուշիում և Կարմիր շուկայում տեղադրված ենթակայաններով, որոնք էլեկտրականությամբ են ապահովում Մարտունի շրջկենտրոնն ու հարակից գյուղերը: Հիմնադրամը Արցախում կառուցել է 60 կմ ընդհանուր երկարությամբ երեք էլեկտրահաղորդման գծեր և «Ստեփանակերտ» գլխավոր ենթակայանը: Գորիսում կառուցվել է ռադիոհեռուստատեսային վերահաղորդիչ կայան, որն ապահովում է Հայաստանի հարավային շրջանների և Արցախի կապը: Մարտակերտի շրջանի չորս գյուղերի համար կառուցվել է գազատար խողովակաշար: Կազմակերպության միջոցներով հիմնովին վերակառուցվել են պատերազմից խիստ տուժած Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղի 67, և վերականգնվել են Հաթերք գյուղի 143 տներ[414]:

---

411 Նույն տեղում, էջ 109:

412 Մինասյան Է. Հայրենիք-Սփյուռք առնչությունները XXI դարասկզին (2001-2017 թթ.), Երևան, 2018, էջ 244:

413 Նույն տեղում:

414 Նույն տեղում:

Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի հաստատած Արցախի վերածննդի ծրագրով հեռուստամարաթոններում հանգանակած գումարները համապատասխանաբար ուղղվեցին Արցախյան պատերազմի հետևանքով առավել մեծ վնաս կրած Արցախի շրջանների՝ Մարտակերտի և Հադրութի վերականգնմանն ու զարգացմանը:

2006 թ. սկսվեցին ու շարունակվեցին Մարտակերտի շրջանի վերականգնման աշխատանքները, որոնք ներառեցին գյուղատնտեսությունը, ջրամատակարարումը և այլն: Նմանօրինակ ծրագիր հիմնադրամը իրագործեց նաև ԼՂՀ Մարտունու շրջանում: Պատահական չէ, որ իր գործունեության տարիներին հիմնադրամը ճանաչվել ու սիրվել է ողջ հայության կողմից, քանի որ նրա ծրագրերը միշտ եղել են արդիական ու սպասված: Ի սկզբանե լինելով հայոց պետականության նեցուկը՝ հիմնադրամը շարունակում է հավատարիմ մնալ իր առաքելությանը՝ աշխարհասփյուռ հայության միասնական ջանքերն ուղղելով մեր երկրի վերակառուցմանն ու ամրապնդմանը: Մարտակերտի շրջանի Վերին Հոռաթաղ գյուղից էր սկսվել Արցախի մեծ բարեկամ բարոնուհի Քերոլայն Քոքսի մարդասիրական առաքելությունը: Նրա նախաձեռնությամբ և նվիրատվությամբ այնտեղ գործում էր նորակառույց դպրոց: Բարոնուհու կազմակերպչական աշխատանքի արդյունքը եղավ հիմնադրամի Տորոնտոյի գրասենյակի միջոցներով Մարտակերտի շրջանի Մատաղիս գյուղի դպրոցի կառուցումը[415]: Դպրոց է բացվել նաև նույն շրջանի Դրմբոն գյուղում: Վերակառուցվել է Հադրութի շրջանի Տող գյուղի դպրոցը, որը դարձել է այդ տարածքի արվեստի կենտրոն: 2009 թ. վերջին շահագործման են հանձնվել Մարտունու շրջանի Սպիտակաշեն, Ճարտար, իսկ

[415] «Ազատ Արցախ», 7 հոկտեմբերի, 2007:

2010 թ.՝ նույն շրջանի Գիշի և Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղի դպրոցները[416]:

Ամերիկաբնակ բարերար Ջերարդ Թրփանձյանի հովանավորությամբ շարունակվել են Ստեփանակերտի թիվ 11 դպրոցի կառուցման աշխատանքները: Եռահարկ դպրոցը նախատեսված է 560 աշակերտի համար: Այն բաղկացած է 2 ուսումնական և վարչական մասնաշենքներից, մարզադահլիճից, ինչպես նաև բացօթյա բեմահարթակից ու սպորտհրապարակից: Համալիր կառույցն ունի նաև գրադարան, ճաշարան, բուժկետ, համակարգչային դասարաններ, կաթսայատուն: Շինարարությունը ավարտվել է 2010 թ. օգոստոսին[417]: Կատարված աշխատանքները մայր Հայաստանի, Սփյուռքի և Արցախ աշխարհի միասնության հավաստիացումն են, այսինքն՝ ազգի բոլոր անդամների հավաքական ամբողջության արդյունքը, որի շնորհիվ՝ հայ ժողովուրդը պետք է ապրի և հարատևի: «Անցնող տարիներին,– գրում է Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն,– մենք բոլորս ականատես ենք եղել այն արդյունքներին, որոնք ձեռք են բերվել «Հայաստան» համահայկական հիմնադրամի իրագործած ծրագրերով: Ականատեսն ենք եղել, թե ինչպիսի կարևորության խնդիրներ են վճռվել Արցախում ճանապարհների կառուցմամբ, բնակավայրերի բարեկարգումով, տնտեսական և մշակութային կյանքի վերակառուցման ծրագրերով: Մեր միասնականության արգասիքն են դրանք՝ առ հայրենին մեր սիրո, մերձավորի հանդեպ հոգնածության»[418]:

1992-2008 թթ. հիմնադրամը ՀՀ-ում և Արցախում իրականացրել է 100-ից ավելի ծրագրեր: Կառուցվել են 210 բնակելի շենք և ա-

---

[416] Մինասյան Է., Վարդանյան Ա., նշվ. աշխ., էջ 110:
[417] Նույն տեղում, էջ 111:
[418] Մինասյան Է. Հայրենիք-Սփյուռք առնչությունները XXI դարասկզին (2001-2017 թթ.), Երևան, 2018, էջ 247:

ռանձնատուն՝ 960 ընտանիքների համար, 40 դպրոց, ավտոճանապարհներ (250 կմ), ջրատար խողովակաշարներ (131 կմ), 60 կմ ընդհանուր երկարությամբ էլեկտրական հաղորդման գծեր: 2010-2011 թթ. հեռուստամարաթոնների հավաքված գումարները ուղղորդվեցին ԼՂՀ սահմանամերձ շրջանների ենթակառուցվածքների զարգացմանը: 2010 թ. հեռուստամարաթոնի ընթացքում հավաքվեց 20.8 մլն դոլար, որի հիմնական մասը ուղղվեց ԼՂՀ սահմանամերձ շրջաններում ենթակառուցվածքների զարգացմանը, մասնավորապես ջրամատակարարման խնդիրների լուծմանը[419]: 2011 թ. հեռուստամարաթոնի 12.2 մլն դոլարը ևս օգտագործվեց ՀՀ և ԼՂՀ սահմանամերձ շրջաններում նախորդ տարի սկզբնավորված համալիր ծրագրերի իրականացմանը[420]: Քանի որ 2011 թ. Սիրիայում տեղի ունեցող դեպքերի հետևանքով աստիճանաբար սկսվեց սիրիահայերի ներգաղթը ՀՀ, իսկ մյուս կողմից դեռ ավարտին չէին հասցվել 2010-2011 թթ. գերակա ծրագրերը, 2012 թ. հեռուսատամարաթոնի ընթացքում հավաքված 21.4 մլն դոլարի հիմնական մասը ուղղվեց Արցախի գյուղական շրջաններում համայնքային կենտրոնների կառուցմանը և ՀՀ տեղափոխված սիրիահայության հրատապ խնդիրների լուծմանը[421]: 2013 թ. հիմնադրամը սկսեց ՀՀ-ն Արցախին կապող երկրորդ՝ շուրջ 116 կմ երկարությամբ «Վարդենիս–Մարտակերտ ավտոճանապարհի կառուցման ծրագիրը»: 2013-2014 թթ. «Դեպի Արցախ» կարգախոսով անցկացվող հեռուստամարաթոնների ընթացքում հավաքված գումարները հիմնականում հատկացվեցին այդ աշխատանքների իրականացմանը: 2013 թ. հեռուստամարաթոնի ժամանակ արձանագրվեցին 22.6 մլն դոլարի նվիրատվություն և նվիրատվության

---

419 «Հեռուստամարաթոն 2010-Ջուրը կյանք է», http://himnadram.org/index.php?id=-23543lang=2:

420 «Հեռուստամարաթոն 2011», http://himnadram.org/index.php?id=23801lang=2:

421 «Հեռուստամարաթոն 2012», http://himnadram.org/index.php?id=23990lang=2:

խոստում: Այդ միջոցներն ուղղվեցին ավտոճանապարհի հողային աշխատանքների իրականացմանը[422]:

«Հայաստան» համահայկական հիմնադրամը 2014 թ. մեծածավալ ծրագրեր իրագործեց: Նրա գլխավոր նշանակետը դարձյալ ՀՀ-ն և Արցախը իրար կապող Վարդենիս–Մարտակերտ ավտոճանապարհի ասֆալտապատումն էր ու հարդարումը, որն ուներ ռազմավարական, ռազմատնտեսական կարևոր նշանակություն: 2014 թ. հեռուստամարաթոնի նվիրատվությունները (12.4 մլն դոլար) ուղղվեցին ոչ միայն Վարդենիս–Մարտակերտ ավտոճանապարհի ասֆալտապատմանն ու հարդարմանը, այլ նաև Արցախում բարերարների կողմից ընտրված հատուկ ծրագրերին[423]:

«Շատ դժվարին գործ է: Բավական բարդ տեղանքում մոտ 120 կմ ճանապարհ պիտի կառուցվի, ինչը նյութական մեծ ծախս և մասնագիտական արհեստավարժ մոտեցում է պահանջում»[424],– նշում է հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի վերստուգիչ հանձնախմբի անդամ Վահե Ջազմադարյանը: Վերջին երկու տարիներին «Հայաստան» համահայկական հիմնադրամի ամենամյա հեռուստամարաթոններն ամբողջությամբ նվիրվեցին «Վարդենիս–Մարտակերտ ավտոճանապարհի վերակառուցման ծրագրին», որում ներգրավվեցին մոտ երկու տասնյակ նախագծային և շինարարական կազմակերպություններ: Նրանց ջանքերով հաջողվեց հասնել ճանապարհի ավարտական փուլին: Ճանապարհի վերակառուցումը հնարավորություն էր տալիս նաև զարգացնելու զբոսաշրջությունը: Վարդենիսից մինչև Մարտակերտ ճանապարհին պատահած մարդկանցից յուրաքանչյուրի հետ խոսելիս երախտագիտության և օրհնանքի խոսքեր էին հնչում, խոսքեր, որոնք ուղղված էին Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներում,

---

422 «Հեռուստամարաթոն 2013», http://himnadram.org/index.php?id=24169lang=2:
423 «Հեռուստամարաթոն 2014», http://himnadram.org/index.php?id=24350lang=2:
424 «Հայաստան» համահայկական հիմնադրամ, 2014, Երևան, 2015, էջ 14:

ԱՄՆ-ում և Բրազիլիայում ապրող մեր հայրենակիցներին, որոնց նվիրատվություններով վերակառուցվել էր 2017 թ. շահագործման հանձնված մայրուղին[425]: Համահայկական հիմնադրամը Արցախում և ՀՀ-ում, 2013 թվականից սկսած, «Մեր գյուղը» ծրագրի շրջանակում սկսեց բազմագործառութային համայնքային կենտրոնների կառուցումը՝ «Մեկ շենք ու երեք ծառայություն» սկզբունքով: Դա հնարավորություն էր տալիս լուծելու գյուղական բնակավայրերի համար մի շարք կարևոր խնդիրներ, երբ նույն շենքում տեղավորվում են համայնքի ղեկավարի գրասենյակը, հանդիսությունների տունը և համակարգչային սրահը, մի այլ դեպքում վարչական ծառայության կողքին՝ բուժկետն ու գրադարանը: Արցախի գրեթե բոլոր շրջաններում կառուցվեցին ընդհանուր թվով տասը համայնքային կենտրոններ[426]: Այդ ծրագրերին որպես համաֆինանսավորող կողմ մասնակցել էր նաև Արցախի կառավարությունը: Նման կենտրոններ կառուցվեցին Արցախիի Նոր Մատաղիս, Ակնաղբյուր, Շոշ, Մուշկապատ, Կարմիր շուկա, Քարինտակ, Խաչմաչ գյուղերում: Այդ համայնքային կենտրոններից վեցը կառուցվել էր Ֆրանսիայի, երկուսը՝ Կանադայի, մեկը՝ Արգենտինայի հայության նվիրատվություններով[427]: Հիմնադրամի կողմից նոր ծրագրեր իրագործվեցին Արցախի գյուղերում ու քաղաքներում: Կառուցվեցին և վերանորոգվեցին մի շարք դպրոցներ, մանկապարտեզներ, քոլեջներ (Քարինտակի, Շուշիի, Սոսի, Չափարի և այլն), Իվանյանի մանկապարտեզը, Ստեփանակերտի երաժշտական քոլեջը և այլն[428]:

2014-2016 թթ. «Հայաստան» համահայկական հիմնադրամի ծրագրերին մասնակցեցին բոլոր տեղական մարմինները՝ օգտագործելով իրենց համայնքների անդամներին այդ կարևոր գործին

---

[425] Նույն տեղում, էջ 17:

[426] «Հայաստան» համահայկական հիմնադրամ. 2014, էջ 24:

[427] Նույն տեղում, էջ 27:

[428] Նույն տեղում:

մասնակից դարձնելու հնարավոր բոլոր միջոցները: Աշխարհի տարբեր երկրներում (սկսած ԱՄՆ-ից, Հարավային Ամերիկայի երկրներից, Եվրոպայից, Փարիզից, Բելգիայից և վերջացրած Լիբանանով, Կանադայով, Մեծ Բրիտանիայով և Իրանով) կազմակերպվող տարատեսակ միջոցառումները, համայնքի անդամների ուշադրությունը որոշակի ծրագրերի վրա սևեռելուց բացի, նաև ունեն ամփոփիչ և հաշվետու նշանակություն: Սովորաբար հենց այս միջոցառումների ընթացքում են տեղական մարմինները ամփոփում տարվա ընթացքում կատարած իրենց աշխատանքները և տոնական մթնոլորտում հաշվետվություն տալիս իրականացված ծրագրերի մասին: «Հայաստան» համահայկական հիմնադրամի կազմակերպած 2015 թ. միջոցառումների շրջանակում իրականացվեցին Արցախի Ասկերանի շրջանի Պատարա, Խաչմաչ և այլ գյուղերում, Մարտունու Մուշկապատ, Կարմիր շուկա և Թաղավարդ գյուղերում համայնքային կենտրոնների կառուցումը[429]: 2015 թ. «Մեր տունը» խորագրով հեռուստամարաթոնն արձանագրեց 10.4 մլն դոլարի նվիրատվություն և նվիրատվության խոստում[430]: Հավաքված գումարը նպատակաուղղվեց Արցախի Հանրապետությունում բազմազավակ ընտանիքներին բնակարաններով ապահովելու ծրագրին: Զուգահեռաբար կյանքի են կոչվել բարերարների կողմից ընտրված հատուկ ծրագրերը[431]: Ինչ վերաբերում է 2016 թ. հեռուստամարաթոնին, ապա այն անցավ Քառօրյա պատերազմի հետևանքների վերացման տրամաբանությամբ՝ «Իմ Արցախը» կարգախոսով: Հավաքված 15.4 մլն դոլարը նախատեսվում էր փոխանցել Քառօրյա պատերազմից տուժած բնակավայրերի վերականգնմանը, ինչպես նաև Արցախի բազմազավակ ընտանիքների համար առանձնատների կառուցմանը[432]:

---

429 «Հայաստան» համահայկական հիմնադրամ, էջ 57:

430 «Հեռուստամարաթոն 2015», http://himnadram.org/index.php?id=24515lang=2:

431 «Մեր մասին», http://himnadram.org/index.php?id=2&id=2:

432 «Հայաստան» համահայկական հիմնադրամ, էջ 45:

2016 թ. ընթացքում հիմնադրամի ջանքերով իրականացվեցին այնպիսի կարևորագույն ծրագրեր, ինչպիսիք են Վարդենիս–-Մարտակերտ ավտոճանապարհի կառուցման ավարտը, Գերովան գյուղի, Ասկերանի շրջանի համայնքային կենտրոնների բացումը, Ստեփանակերտի ուռուցքաբանական կենտրոնի կառուցումը և այլն[433]:

Ակնհայտ է, որ հիմնադրամի իրականացրած ծրագրերը մեծ կարևորություն ունեն ՀՀ և Արցախի սոցիալ-տնտեսական կյանքը զարգացնելու առումով: Հատկանշական է, որ առավել մեծ չափով գումարներ հավաքվել են հատկապես այն հեռուստամարաթոններում, որոնք անցկացվել են սահմանամերձ շրջանների կամ Արցախի հիմնախնդիրները կարգավորելու նպատակով:

Այսպիսով՝ 2016 թ. դրությամբ Հայաստանի Հանրապետությունում և Արցախում իրագործված ծրագրերի ընդհանուր գումարը կազմում էր ավելի քան 235 800 000 ԱՄՆ դոլար, որի մեծ մասը ներդրվեց Արցախի տնտեսության մեջ: Սակայն եթե հաշվի առնենք հիմնադրամի կողմից իրականացված և ավարտված ծրագրերը ու դրանց կենսագործման համար օգտագործված գումարները, աշխատատեղերը, որոնք բացվել են այդ ծրագրերի շնորհիվ, համայնքները, որոնք հետզհետե զարգանում են, ապա չենք կարող չհաշվել ու չնշել այն մարդկանց, որոնց կյանքը փոխվել է բացված նոր ճանապարհների, նոր կառույցների և այն օգնության շնորհիվ, որի կարիքը նրանք շատ ունեին:

«Հայաստան» համահայկական հիմնադրամի 25-ամյա հոբելյանի կապակցությամբ խոսելով նրա կատարած մեծածավալ աշխատանքների մասին՝ հիմնադրամի գործադիր տնօրեն Արա Վարդանյանը նշել է. «25-ամյա երիտասարդ, ավյունով լի համա-

[433] Նույն տեղում:

հայկական այս կառույցը տարեցտարի ավելի զորեղ ու համազգային է դառնում շնորհիվ Հայաստանի, Արցախի ու Սփյուռքի մեր հայրենակիցների վստահության և հայրենիքն ավելի ամուր ու ապահով դարձնելու գաղափարի շուրջ համախմբվածության: Հպարտությամբ պետք է նշել, որ մեր նվիրատուների թիվն արդեն գերազանցում է 700000-ը, իսկ հայրենիքում արված ամբողջ ներդրումները՝ 330 մլն դոլարը (ավելի քան 1100 խոշոր ծրագիր), ինչի շնորհիվ շուրջ 500.000 մարդ Հայաստանի Հանրապետությունում և Արցախում մշտապես օգտվում է բարեկարգ ու հարմարավետ դպրոցից, հիվանդանոցից, ճանապարհից, ջրագծից: Ընդլայնվել է նաև մեր գործունեության աշխարհագրությունը. ԱՄՆ-ից մինչև Ավստրալիա գործում է 25 տեղական մարմին»[434]:

2018 թ. «Հայաստան» համահայկական հիմնադրամի և Շուշիի Եզնիկ Մոզյան արհեստագործական ուսումնարանի ջանքերով Արցախի ութ շրջանում, այդ թվում՝ և Շուշիի շրջանի Քարինտակ գյուղում, մեկնարկեց «Արևային Արցախ» արևային ջրատաքացման համակարգերի ներդրման ծրագիրը, որի շնորհիվ Արցախում իրականացվեց լուսավորության արդիականացումը: Ծրագրի շրջանակներում միայն Քարինտակ գյուղի 149 ընտանիքների համար տեղադրվեցին արևային ջրատաքացուցիչ համակարգեր[435]:

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից 2018 թ. իրականացրած ծրագրերից էր Հադրութի շրջանի Տումի համայնքային կենտրոնի շինարարությունը, որն ավարտվեց նույն թվականի աշնանը, իսկ կենտրոնի պաշտոնական բացումը տեղի ունեցավ 2019 թ. հունիսին[436]:

---

[434] «Հայաստան» համահայկական հիմնադրամ. 2016, Երևան, 2017, էջ 40:

[435] «Հայաստան» համահայկական հիմնադրամ 2018, Երևան, 2019, էջ 96:

[436] Նույն տեղում, էջ 109, 113:

Արցախում հիմնադրամի իրականացրած տնտեսական ծրագրերից էր ոռոգման ենթակառուցվածքների կառուցումը: Հայտնի է, որ ոռոգման համակարգի բացակայության պատճառով Արցախում գյուղատնտեսական նշանակության հողերի ընդամենը յոթ տոկոսն էր մշակվում: Ուստի պատահական չէ, որ 2018 թ. «Հայաստան» համահայկական հիմնադրամի հեռուստամարաթոնի հավաքած դրամական միջոցների մի զգալի մասը ուղղվեց Արցախում ոռոգման ենթակառուցվածքների կառուցմանը: Հիմնադրամի հավաքած միջոցներով խորքային հորեր կառուցվեցին Արցախի Մարտունու և Ասկերանի շրջանների 16 գյուղերում[437]: Ծրագրի շրջանակում նախատեսված էր կառուցել ընդհանուր առմամբ 40 խորրքային հորեր և ընդլայնել ոռոգվող հողատարածքները[438]: Սակայն, դժբախտաբար, 2020 թ. սեպտեմբեր-նոյեմբերին սկսված Արցախյան պատերազմում նոյեմբերի 9-ի չարաբաստիկ եռակողմ հայտարարությամբ ոչ միայն կորցրինք Արցախի ազատագրված յոթ շրջանները, այլև Հադրութի շրջանն ու Շուշին, որով հիմնադրամի կողմից Արցախի տնտեսության մեծ մասում իրականացրած ներդրումների արդյունքում կատարած մեծածավալ աշխատանքները մնացին թշնամուն: Նման ճակատագրի արժանացավ նաև Թալիշը, որը ավերվել էր 2016 թ. ապրիլյան պատերազմի ժամանակ: Այն սկսվել էր վերականգնվել 2017 թվականից սկսած, հատկապես 2018 թ., երբ այն վերականգնվեց «Հայաստան» համահայկական հիմնադրամի «Թալիշի վերածնունդ» ծրագրի շրջանակում: Այդ ծրագրին հիմնադրամը մոտ 506 մլն դրամ էր տրամադրել: 2016 թ. ապրիլյան պատերազմից հետո հիմնադրամի տեղական մարմինները Ֆրանսիայից (200 000 եվրո), Կանադայից, Բրազիլիայից, Մեծ Բրիտանիայից, Գերմանիայից, Հունաստանից, ԱՄՆ արևելյան և արևմտյան ափերից օգնության ձեռք մեկնեցին

[437] Նույն տեղում, էջ 125:

[438] Նույն տեղում:

Արցախին[439]: 2016 թ. մայիսին ԱՄՆ արևմտյան ափի գրասենյակը կազմակերպեց «Օգնություն Արցախին» արտահերթ հեռուստամարաթոնը, որի ժամանակ հավաքվեց 1,1 մլն դոլար[440]: Այդ տարվա մարաթոնն ուղղված էր Արցախի տուժած բնակավայրերի վերականգնմանը, խաղաղ բնակչության անվտանգության և պաշտպանությանն ուղղված միջոցառումներին, Արցախի բազմազավակ ընտանիքների համար առանձնատների կառուցմանը, տնտեսության մեջ ներդրումներին: Այդ նպատակով դրամահավաքով հավաքվեց 15 428 777 ԱՄՆ դոլար[441]: Հիմնադրամի միջոցառման բացմանը ներկա էին տեղական մարմինների ներկայացուցիչներ 22 երկրներից, ինչպես նաև ամերիկահայ բարերար Անդրանիկ Բաղդասարյանը, որի նվիրատվության շնորհիվ իրականություն դարձավ «Թալիշի վերածնունդ» ծրագիրը: Ծրագրի շրջանակում 2016-2019 թթ. երեք տարվա ընթացքում իրականացվեցին մի շարք կարևոր աշխատանքներ: Առաջին հերթին վերակառուցվեցին հանդիսությունների սրահն ու գյուղապետարանը, որը ներառում էր ակումբը: Կառուցվեց կենցաղի տունը, գյուղի գլխավոր փողոցի 2,2 կմ երկարությամբ կոյուղին, գյուղի խմելու ջրի ցանցը՝ 4,5 կմ երկարությամբ: Կառուցվել ու վերակառուցվել են տները՝ իրենց նկուղային ապաստարաններով, գլխավոր փողոցի երկայնքով ցանկապատը ու գյուղապետարանի շրջակա տարածքը և այլն[442]:

Հիմնադրամն իրականացրել է շենքերի կառուցման, վերանորոգման, ինչպես նաև համապատասխան կահույքով և սարքավորումներով ապահովման ծրագրեր: Կազմակերպությունը զոհված

---

439 Նույն տեղում, էջ 143:
440 Նույն տեղում, էջ 144:
441 Նույն տեղում:
442 Նույն տեղում:

կամ հաշմանդամ դարձած զինծառայողների ընտանիքների համար իրականացնում է բնակարանային ապահովման ծրագիր: Լոս Անջելեսում 1992 թ. փետրվարից գործում էր «Հայաստանի մանկատների հիմնադրամ» (ՀՄՀ) կազմակերպությունը, որի պատասխանատու տնօրենն էր Ժենյա Ռեզայե-Այդինյանը:

Հիմնադրամը Հայաստանի Հանրապետությունում ուներ իր բաժանմունքը: Գործելով ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության ենթակայությամբ՝ ՀՄՀ-ն տարին երկու անգամ՝ աշնանը և գարնանը, կազմակերպում էր դրամաբաշխում Արցախի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման համար:

Ծրագրի շնորհիվ գրեթե 400 անհատ հովանավորներ ԱՄՆ-ից, Կիպրոսից, Եգիպտոսից և այլ վայրերից աջակցում էին 580 ազատամարտիկների երեխաներին: 1992-1998 թթ. ՀՄՖ-ի ֆինանսական ֆոնդից օգտվել է 30 հազար մարդ[443], որի մեծ մասը՝ Արցախից: 1996 թ. մայիսին ԱՄՆ-ում Վարդան Ջինիշյանը, ի հիշատակ իր ծնողների, հիմնել է «Ջինիշյան հիշատակի ծրագիր» (ՋՀԾ, Jinishian Memorial Foundation) բարեգործական կազմակերպությունը: ՋՀԾ-ն իր գործունեությունը Հայաստանում ծավալեց 1993 թ. սեպտեմբերից «Ջինիշյան հիշատակի հիմնադրամ» (ՋՀՀ) անվանմամբ: Որպես հիմնադրամ՝ այն պաշտոնապես գրանցել է 1991 թ.[444]: Հայաստանում ՋՀՀ-ի գործող խորհրդատվական մարմնի անդամներն էին Հայ առաքելական, Հայ ավետարանական, Հայ կաթողիկե եկեղեցիների ներկայացուցիչները: Հիմնադրամի գործունեության հիմնական ուղղություններն էին՝ համայնքների, գործարարության զարգացումը, բնակարանաշինությունը, մարդասիրական օգնությունը, առողջապահության ոլորտը և հոգևոր

---

[443] «Փարոս», 15 հուլիսի, 1998:

[444] Հակոբյան Հ., Հայկական Սփյուռքը հարափոփոխ աշխարհում, Երևան, 2017, էջ 176-177:

վերելքը: Արցախում ՋՀՀ-ն կառուցեց և վերանորոգեց բնակելի շենքեր, վերականգնվեցին ջրագծեր: «Իզմիրլյան» հիմնադրամը հիմնվել է 1990 թ. Ժնևում: Նպատակն է նպաստել աշխարհասփյուռ հայերի կյանքի բարելավմանը Հայաստանի Հանրապետության և Արցախի բարգավաճմանն ու հզորացմանը[445]: Այն էականորեն օժանդակել է Արցախի տնտեսության վերականգնմանը: Հետագայում հիմնադրամն առավելապես ձեռնարկել է Արցախի տնտեսության զարգացմանն ուղղված ծրագրեր՝ խթանելու համար լրացուցիչ աշխատատեղերի ստեղծումն ու գործարար միջավայրի բարելավումը:

1990-ական թթ. երկրորդ կեսին Հայաստանում բարեսիրական ու մշակութային լայն գործունեություն ծավալեց «Գաֆեսճյան ընտանիք» հիմնադրամը (ԳԸՀ, Cafesjian Family Foundation), որը հիմնվել է 1996 թ. հունիսին Նյու Յորքում ամերիկահայ հայտնի գործարար Ջերարդ Գաֆեսճյանի կողմից: Հիմնադրամն ուներ 30 մլն դոլար նախնական դրամագլուխ[446]: Հիմնադրամը սեփական բարեգործական ծրագրերի հետ մեկտեղ ֆինանսական միջոցներ էր տրամադրում հայկական բարեգործական կազմակերպություններին: «Գաֆեսճյան ընտանիք» հիմնադրամը միլիոնավոր դոլարներ է ծախսել Հայաստանի Հանրապետության և Արցախի ջերմային էներգիայի աղբյուրների, արևային սկավառակների ու մարտկոցների արտադրման, ՋԼՄ-ների, ֆինանսական ծառայությունների, անշարժ գույքի զարգացման, համակարգչային ծրագրերի և հեռահաղորդակցության ոլորտներում ծրագրերի զարգացման և իրականացման համար: Նպատակ ունենալով բարեգործական ծրագրեր իրականացնել Հայաստանի Հանրապետությունում, այնուհետև Արցախում՝ 1999 թ. Երևանում ամերիկահայ

---

445 «Հայկական Սփյուռք» տարեգիրք, ՀՀ սփյուռքի նախարարարություն (հեղ. խմբի ղեկավար՝ Հ. Հակոբյան և այլք), Երևան, 2013, էջ 135:
446 «Ազգ», 5 նոյեմբերի, 1998:

գործարար և բարերար Ջեյմս Թուֆենկյանը հիմնադրել է «Թուֆենկյան» հիմնադրամի մայր գրասենյակը[447]: «Թուֆենկյան» բարեգործական հիմնադրամն իր անմիջական մասնակցությամբ տարբեր ծրագրեր է իրականացրել ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ Արցախում: Հատկանշական է, որ Արցախի Հանրապետությունն իր սոցիալ-տնտեսական և այլ ոլորտների զարգացման համար զրկված էր միջազգային ֆինանսական կազմակերպություններից վարկեր ստանալու հնարավորությունից, ուստի անգնահատելի է սփյուռքահայ բարեգործական կազմակերպությունների ու հիմնադրամների, ինչպես նաև առանձին բարերարների օգնությունը: Այդ գործում մեծ ավանդ ունի «Թուֆենկյան» բարեգործական հիմնադրամը:

Արցախին օգնելու նպատակով 2004 թ. փետրվարին բացվել է «Թուֆենկյան» հիմնադրամի երևանյան գրասենյակի Ստեփանակերտի մասնաճյուղը, որի միջոցով իրականացվել են սոցիալ-տնտեսական և բարեգործական այլ ծրագրեր[448]: Վերաբնակեցումը համազգային, ռազմավարական նշանակություն ունեցող կարևորագույն խնդիր է: Մեծ ուշադրություն դարձնելով դրան՝ «Թուֆենկյան» հիմնադրամը մեծ աշխատանքներ է կատարել Արցախի, մասնավորապես սահմանամերձ շրջանների վերաբնակեցման ուղղությամբ: Ինչպես նշում է «Թուֆենկյան» բարեգործական հիմնադրամի տնօրեն Ջեյմս Թուֆենկյանը, «…վերաբնակեցման խնդիրն ոչ միայն Արցախի Հանրապետության իշխանությունների, այլև Սփյուռքի բարեգործական կազմակերպությունների, Արցախի ճակատագրով մտահոգ համայն հայության մտահոգություններից մեկը պետք է դառնա: Չնայած մեր կառույցը նպաստում է

---

447 Ավետիսյան Ս. Գրիգորյան Ա., Բաբաջանյան Ս., Կիրակոսյան Ա., Սփյուռքի ներդրումները ՀՀ տնտեսության մեջ, զարգացման հետևանքները, Երևան, 2015, էջ 140-141:

448 Նույն տեղում:

նաև երկրում կրթամշակութային մի շարք ծրագրերի իրականացմանը, աջակցում տաղանդավոր երեխաների զարգացմանը՝ ցուցաբերելով բարոյական և նյութական օժանդակություն, սակայն մեր առաջնահերթ խնդիրը մնում է վերաբնակեցման ռազմավարությունը»: Այդ ուղղությամբ կատարված առաջին խոշոր քայլերից մեկը Հադրութի շրջանի նորակառույց Առաջամուղ գյուղի հովանավորման ծրագիրն էր, որը համահունչ էր Արցախի իշխանությունների վարած քաղաքականությանը: Առաջամուղը կառուցվել է «Թուֆենկյան» հիմնադրամի հանգանակած միջոցներով: Գյուղում կառուցված տասնութ տուն բնակեցված էր[449]: Բնակիչների մի մասը փախստականներ էին Ադրբեջանից. մի մասն այնտեղ էր տեղափոխվել Հայաստանից, մյուս մասն էլ՝ Արցախի տարբեր բնակավայրերից, որոնց տները պատերազմի տարիներին ավերվել էին: Նորակառույց տները հարմարավետ էին: Յուրաքանչյուր առանձնատուն ուներ երեք ննջասենյակ, ընդարձակ հյուրասենյակ, ինչպես նաև խոհանոց, բաղինք և սանհանգույց: Լուծված էր շուրջօրյա ջրամատակարարման հարցը: Բոլոր բնակիչներն էլ ունեին իրենց տնամերձ հողամասն ու այգին, օժանդակ տնտեսությունը, ապահովված էին անասուններով ու թռչուններով:

Հիմնադրամը աշխատանքներ կատարեց նաև արդեն վերաբնակեցված գյուղերի ամրապնդման և զարգացման ուղղությամբ: Այն իրականացրել էր խաղողի այգիների վերականգնման ծրագիր Քաշաթաղի Այգեհովիտ և Ուռեկան գյուղերում: Այգիները վերականգնելուց հետո, ըստ կազմած պայմանագրի, դրանք վերադարձվել էին համայնքի անդամներին: 2006 թ. 35 հա խաղողի այգիներից ստացվել էր առաջին բերքը՝ 12 տոննա խաղող, իսկ 2008 թ. ստացվել էր մոտ 400 տոննա խաղողի բերք: Այս տարածաշրջա-

[449] «Հայաստանի Հանրապետություն», 5 սեպտեմբերի, 2007:

նում կառուցվել էր նաև խաղողի սկզբնական վերամշակման գործարան[450]: Հիմնադրամի միջոցներով Քաշաթաղի Այգեհովիտ գյուղում կառուցվել է ալրաղաց, որը սպասարկել էր շրջակա մոտ 20 գյուղերի բնակիչների, իսկ Իշխանաձոր գյուղում կառուցվել էր բուժամբուլատորիա, որը սպասարկել էր 2000 բնակչի:

Գյուղերի տնտեսական վերելքը խթանելու նպատակով «Թուֆենկյան» հիմնադրամը տրամադրել է ցածր տոկոսադրույթով վարկեր: Վարկերի համար տրամադրված գումարը ետ ստանալով՝ այն օգտագործվել է հետագա ծրագրերի ընդլայնման համար: «Թուֆենկյան» հիմնադրամի Արցախի մասնաճյուղի միջոցով իրագործվել են նաև սոցիալ-տնտեսական ոլորտի այլ ծրագրեր ևս:

Վերջին տասնամյակի ընթացքում հիմնադրամը խոշորածավալ ներդրումներ է իրականացրել հյուրանոցային բիզնեսում: Խոսքը «Tufenkyan Heritage» հյուրանոցների մասին է[451]: Զբոսաշրջության ոլորտի առաջատարներից մեկի՝ «TripAdvisor»-ի կայքում Թուֆենկյանի հյուրանոցներից տպավորված արտասահմանցիները նշել են, որ իրենց հատկապես գրավել են հյուրանոցների հայկական մթնոլորտը, ազգային ոգով կատարված դիզայնն ու հարդարանքը՝ սկսած գորգագործության նմուշներից մինչև ձեռակերտ ազգային գործիքներ: Արդյունքում Արցախում ստեղծվել են հյուրանոցային համալիրներ, ինչպես նաև հանգստյան տներ՝ ապահովված արդիական պայմաններով և անհրաժեշտ ծառայություններով[452]:

«Փյունիկ» մարդկային ռեսուրսների զարգացման համահայկական հիմնադրամը (“Pyunik” Pan-Armenian Human Resources Development Foundation) Երևանում պաշտոնապես գործունեություն է ծավալել 2008 թվականից՝ աջակցելով նաև ՀՀ սփյուռքի նախարարության ծրագրերի իրականացմանը:

---

450 Նույն տեղում:

451 Ավետիսյան Ս. և ուրիշներ, էջ 115:

452 Մինասյան Է., Վարդանյան Ա., նշվ. աշխ., էջ 116:

2009 թ. ՀՕՖ-ը (Հայ օգնության ֆոնդը) ոչ միայն Արցախի տնտեսության մեջ ներդրում կատարեց, այլև ԼՂՀ բուժհիմնարկներին տրամադրեց 250 արկղ տարբեր տեսակի բժշկական պարագաններ՝ ներարկիչներ, թթվածնային փողակներ, անզգայացման դիմակներ, հիվանդների խնամքի համար անհրաժեշտ այլ պիտույքներ, նաև մանկական վիտամիններ: Միայն 2005 թ. տարեվերջին Հադրութի շրջանում հնարավոր եղավ վերականգնել 15, իսկ Մարտակերտի շրջանում՝ շուրջ 240 բնակելի շենքեր[453]: Իրենց գործունեության տարիների ընթացքում «Հայ օգնության ֆոնդը» Հայաստանում և Արցախում իրականացրել է շուրջ 270 մլն ԱՄՆ դոլարի մարդասիրական օգնության և զարգացման ծրագրեր[454]: Արցախում հայանպաստ գործունեությամբ է զբաղվում ամերիկահայ գործարար Սեմ Սիմոնյանը, որը «Սիմոնյան» կրթական հիմնադրամի հիմնադիրն ու նախագահն է: Բարերարը Հայաստանի ամերիկյան համալսարանի հոգաբարձուների խորհրդի անդամ է, 2000 թվականից՝ ՀԲԸՄ կենտրոնական վարչության անդամ, նաև ՀԲԸՄ (Հայոց բարեգործական ընդհանուր միություն) փոխնախագահն է: Ս. Սիմոնյանը նաև ԱՄՆ «Էփիջի Լէբս Էյէմ» (Epygi Labs AM) ընկերության հիմնադիրն է, որի մասնաճյուղը Հայաստանում բացվել է 1997 թ.[455]:

Այսպիսով՝ XX դարի վերջին և XXI դարի սկզբին «Հայաստան» համահայկական հիմնադրամն իր ակտիվ գործունեությամբ, բազմաթիվ ծրագրերի շնորհիվ նպաստեց նրա զարգացմանը: Չափազանց մեծ է հիմնադրամների դերը ոչ միայն նորանկախ Հայաստանի, այլև Արցախի սոցիալ-տնտեսական կյանքում: Իրագործելով լայնածավալ մարդասիրական ծրագրեր՝ հիմնադրամներն աջակցեցին հասարակության գրեթե բոլոր շերտերին, ընդլայնեցին

---

[453] Ավետիսյան Ս. և ուրիշներ, նշվ. աշխ., էջ 124:

[454] Նույն տեղում:

[455] Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 398:

ու կատարելագործեցին իրենց գործունեության ձևերն ու մեթոդները՝ հետագա տարիների համար մշակելով նորերը: Հայաստանի Հանրապետության և Արցախի ծանրագույն սոցիալ-տնտեսական ժամանակահատվածում հիմնադրամները բացառիկ դեր ունեցան թե՛ պետությանը, թե՛ բնակչությանը բազմաբնույթ ու լայնածավալ օգնություն ցուցաբերելու հարցում: Նրանց գործունեությունը զգալիորեն մեղմեց տնտեսական ճգնաժամը և դյուրացրեց դրա հաղթահարումը: Կարծում ենք՝ հիմնադրամների գործունեության բացակայության դեպքում սոցիալ-տնտեսական ճգնաժամի հետևանքները շատ ավելի ծանր ու անկանխատեսելի կլինեին: Հարկ է նշել, որ աջակցությունը հատկապես Արցախին բարոյահոգեբանական նշանակալի դեր է խաղացել, քանի որ սոցիալ-տնտեսական դժվար վիճակում հայտնված արցախցիների մեջ, ըստ էության, բարձր էր պահում հավատն ապագայի հանդեպ:

«Թուֆենկյան» հիմնադրամի գործունեությունը Արցախի Հանրապետության տնտեսության զարգացման ծրագրերի իրականացման ուղղությամբ

Արցախում տնտեսական ծրագրերի իրագործման մեջ մեծ ավանդ ունի «Թուֆենկյան» բարեգործական հիմնադրամը: Հիմնադրամը ստեղծվել է 1988 թ. Նյու Յորքում ամերիկահայ գործարար ու բարերար Ջեյմս Թուֆենկյանի կողմից: Թուֆենկյանի նախնիներն Ամերիկա էին գաղթել Արևմտյան Հայաստանից: Ինքը՝ Ջեյմս Թուֆենկյանը, մեծացել էր մի նահանգում, որտեղ խորթ էին հայեցի դաստիարակությունն ու մտածելակերպը: «Հայկականը» նրա մեջ արթնացել էր Նյու Յորքում ուսանելու տարիներին, հայ ընկերների ու հայկական համայնքի հետ շփումներն իրենց դրոշմն են թողել նրա հետագա կենսագրության վրա: Ջ. Թուֆենկյանը մտերիմներին հաճախ էր կրկնում, որ գործերի հաջողության դեպքում հայրենիքում անպայման սեփական գործ կձեռնարկի: Նպատակ ունենալով բարեգործական ծրագրեր իրականացնել հայրենիքում՝ 1999 թ. Երևանում հիմնադրվեց «Թուֆենկյան» հիմնադրամի գրասենյակ, որի գործադիր տնօրենը Անդրանիկ Գասպարյանն էր, տարածաշրջանային տնօրենը՝ Մարի Մաթոսյանը:

Հիմնադրամի գլխավոր նպատակն է շենացնել և հզորացնել հայրենիքը, հիմնական խնդիրներն են՝ աջակցել խոցելի ու մեկուսացված ընտանիքներին, նպաստել քաղաքացիական հասարակության վերականգնմանը և մշակութային ու հոգևոր վերածննդին, իրականացնել բնապահպանական ծրագրեր, օժանդակել Արցախի Հանրապետությունում սոցիալ-տնտեսական ծրագրերի կենսագործմանը և սահմանամերձ շրջանների զարգացմանը: Հիմնադրամը ՀՀ-ում և Արցախում իրականացրել է 80-ից ավելի ծրագիր՝ աղքատության դեմ պայքարի, կրթության զարգացման, բնապահպանության և ազգային, քաղաքացիական, մշակութային

արժեքներ արմատավորելու ուղղությամբ: Նրա ուշադրության կենտրոնում են եղել նաև պատմաճարտարապետական հուշարձանների պահպանումն ու վերականգնումը[456]:

Արցախի սոցիալ-տնտեսական զարգացմանը անմիջականորեն օգնելու նպատակով 2003 թ. բացվել է «Թուֆենկյան» հիմնադրամի Ստեփանակերտի գրասենյակը, որի միջոցով իրականացվել են ոչ միայն սոցիալական՝ առողջապահական, կրթամշակութային, այլև վերաբնակեցման, հատկապես տնտեսական զարգացման ծրագրեր: Ինչպես նշել է հիմնադրամի Ստեփանակերտի գրասենյակի տնօրեն Ա. Գասպարյանը, «ի տարբերություն մյուսների՝ Արցախի գրասենյակի առաքելությունը մի փոքր այլ է, և այն ավելի շատ ունի ռազմավարական նշանակություն: Մեր նպատակը զուտ բարեգործությունը չէ, այլ Արցախի, մասնավորապես սահմանամերձ շրջանների վերաբնակեցումն ու բարգավաճումը: Դրա համար մեր մասնաճյուղի տարեկան բյուջեի մեծ մասը հատկացվում է վերաբնակեցման ծրագրերին: Մենք փորձում ենք հիմք դնել այնպիսի ծրագրերի, որոնք մարդկանց հնարավորություն կտան զարգացնելու տնտեսությունը, դառնալու ինքնուրույն սեփականատեր: Իսկ որպեսզի նրանք ցանկություն ունենան մնալ գյուղում (այն էլ՝ սահմանամերձ), պետք է պայմաններ ստեղծել: Հիմնադրամի ծրագրերով նախատեսվում է ոչ միայն բնակելի տների շինարարություն, այլ նաև ենթակառուցվածքների ստեղծում՝ հոսանք, ճանապարհներ, խմելու և ոռոգման ջուր: Սահմանամերձ գյուղը մեր անվտանգության երաշխիքն է, և պետք է ժողովրդին ամրացնել այնտեղ: Լինելով սահմանամերձ շրջանում՝ ես որոշ բնակավայրերում տեսա ենթակառուցվածքների բացակայություն և աղքատություն: Մենք կփորձենք այնտեղ ապրելու նպաստավոր պայմաններ ստեղծել»[457]:

---

[456] «Հայկական Սփյուռք» տարեգիրք. 2009, Երևան, 2010, էջ 134:
[457] «Ազատ Արցախ», 5 հուլիսի, 2005:

Հիմնադրամի տնօրեն Ջեյմս Թուֆենկյանի կարծիքով «վերաբնակեցման խնդիրը ոչ միայն ԱՀ իշխանությունների, այլև սփյուռքի բարեգործական կազմակերպությունների, Արցախի ճակատագրով մտահոգ համայն հայության մտահոգություններից մեկը պետք է դառնա: Մեր կառույցը նպաստում է երկրում կրթամշակութային մի շարք ծրագրերի իրականացմանը, աջակցում տաղանդավոր երեխաների զարգացմանը՝ ցուցաբերելով բարոյական ու նյութական օժանդակություն»[458]:

Այդ ուղղությամբ կատարած առաջին խոշոր քայլերից մեկը Հադրութի շրջանի նորակառույց Առաջամուղ գյուղի հովանավորչական ծրագիրն էր, որը համահունչ էր ԱՀ իշխանությունների վարած քաղաքականությանը: Նրա հիմքը դրվել էր 2001 թ. կեսերին: Առաջամուղը կառուցվել էր ԹԲՀ-ի հանգանակած միջոցներով: Հիմնադրամի աշխատակիցների խոսքերով «ծրագրի հեղինակները նախատեսել էին ամեն ինչ, որ բնակիչներն իրենց հնարավորինս լավ զգան (դրանք հիմնականում երեքսենյականոց տներ են՝ ցանկապատված տնամերձով և կից շինություններով), տներից յուրաքանչյուրի շինարարության համար նախատեսված է եղել 20 հազար ԱՄՆ դոլար: Առ այսօր բարեգործական ծրագրերի իրականացման համար ուրիշ հովանավորներ հիմնադրամը չի փնտրել, բայց ծրագրերի ծավալը մեծացնելու ու աշխատանքների ընթացքն արագացնելու համար հիմնադրամը համագործակցության է հրավիրել ուրիշ բարերարների: Օրինակ՝ Առաջամուղ գյուղի ծրագրի համար ֆինանսական միջոցներ է հատկացրել ամերիկահայ հայտնի բժիշկ Ալբերտ Կարամանուկյանը»[459]: «Առաջամուղի ծրագիրը, Ա. Գասպարյանի խոսքով, երեք բաղկացուցիչ մաս ունի՝ բնակելի տների շինարարություն (ինչը ծրագրի ոչ թե վերջակետ, այլ հիմք պիտի լինի), ապրելու պայմանների և, որ ավելի

---

[458] «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 5 սեպտեմբերի, 2007:
[459] «Ազատ Արցախ», 5 հուլիսի, 2005:

դժվար է ու կենսական, աշխատատեղերի և վաստակելու հնարավորության ստեղծում: Ծրագրի առաջին երկու բաժնի իրականացումը 2005 թ. ավարտվել է: Հիմնադրամը մոտակա տարիներին կփորձի լուծում տալ ծրագրի երրորդ մասին. որևէ ձևով կօժանդակի հողագործության և անասնաբուծության զարգացմանը: Թերևս մի քիչ ռոմանտիզմի է նման, բայց չենք բացառում, որ Առաջամուղը օրինակ կհանդիսանա, և կգտնվեն բարերարներ, որոնք այլ գյուղերում նմանատիպ ծրագրեր իրականացնելու ցանկություն կհայտնեն»[460],– ասել է Ա. Գասպարյանը: Գյուղում կառուցված տասնինը տուն բնակեցված էր: Բնակիչների մի մասը փախստական էին Ադրբեջանից, մի մասն այնտեղ էր տեղափոխվել Հայաստանից, մյուս մասն էլ՝ Արցախի տարբեր բնակավայրերից, որոնց տները 1991-1994 թթ. պատերազմի տարիներին ավերվել էին[461]: Գյուղն ապահովված էր էլեկտրականությամբ, կոյուղու և խմելու ջրի համակարգերով: Կառուցվել էին գյուղապետարանի շենք ու բուժկետ: Վերաբնակիչներին աշխատատեղերով ապահովելու համար ստեղծվել էր 5 հեկտար նռան այգի: 2017 թ. հիմնադրամը շահագործման էր հանձնել վեց նոր բնակելի տուն:

Առաջամուղ գյուղը 2008 թ. կազմավորվել էր որպես առանձին համայնք՝ ներառելով Առաջամուղ ու Արաքսավան բնակավայրերը: Արաքսավան գյուղը հիմնադրվել էր 2014 թ.: Առաջամուղ համայնքի կազմում ընդգրկվելը նոր հեռանկարներ էր բացել նրա զարգացման համար: Հովիտը ձգվում է մոտ 110 կմ՝ ներառելով Քաշաթաղի ու Հադրութի շրջանների հարավային մասերը: Արաքսավան բնակավայրի ռազմավարական նշանակության ծրագրերն Արցախի կառավարության կողմից սկսեցին իրականություն դառնալ 2012 թվականից: Բնակավայր եկած մարդկանց բնակեցնելու

---

460 «Ազատ Արցախ», 5 հուլիսի, 2005:

461 «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 5 սեպտեմբերի, 2007:

նպատակով կառուցվել էր 35 ժամանակավոր կացարան։ Կառուցվել էին 30 կմ երկարություն, 10 կՎատ բարձր լարման հզորության էլեկտրական գծեր, վերանորոգվել էին 40 կմ-ի հասնող ջրանցքներ, մելիորատիվ աշխատանքներ իրականացնելու նպատակով մաքրվել էին 1000 հեկտարից ավելի վարելահողեր, ինչը հնարավորություն է տալիս մենատնտեսներին զբաղվելու ինչպես բանջարանոցային, այնպես էլ հացահատիկային մշակաբույսերի աճեցմամբ[462]։ Մենատնտեսներին հնարավորություն էր տրվել նաև զբաղվելու այգեգործությամբ ու անասնապահությամբ։

Որպես ծրագրի նշանակետ հիմնադրամն ընտրել էր նաև Քաշաթաղի շրջանի հարավային թևը, որտեղ, Ստեփանակերտի գրասենյակի տնօրենի դիտարկումներով, մարդիկ վատ են ապրել։ «Գյուղեր կան՝ առանց հոսանքի, ջրի ու ճանապարհների, մինչդեռ ժողովրդին պետք է ամրապնդել այնտեղ»,– ասել է նա։ 2004 թ. այդ շրջանի Այգեհովիտ գյուղում հիմնադրամի հովանավորությամբ կառուցվել էր ալրաղաց, որը սպասարկում էր շրջակա 20 գյուղի բնակիչների։ Հիմնադրամի ջանքերով շրջանում վերականգնվել էին 10 հա խաղողի այգիներ, այնտեղ աշխատում էր 20-25 մարդ, աշխատավարձը նորմատիվային էր և տատանվում էր 45-70 հազար դրամի միջև։ Հիմնադրամի նպատակը աշխատատեղերի ստեղծմամբ ժողովրդին այդ տարածքներում ամրապնդելն էր։ Աշխատանքներ են տարվել նաև շրջանի Իշխանաձոր գյուղում բուժամբուլատորիայի կառուցման ուղղությամբ։ Այդ շինարարությունը նախատեսված էր ավարտել 2005 թ. հոկտեմբերին։ Այն կարող էր սպասարկել 2000 բնակչի։ Այդ շրջանում հիմնադրամը իրականացրել է նաև մայրուղիները համայնքներին միացնող ճանապարհների խճապատման աշխատանքներ»[463]։

---

[462] «Ազատ Արցախ», 11 հունիսի, 2016։

[463] «Ազատ Արցախ», 5 հուլիսի, 2005։

Արցախի Հանրապետության իշխանությունների և «Թուֆենկյան» հիմնադրամի այս ծրագիրն ուներ ռազմավարական կարևոր նշանակություն, որի նպատակն էր տնտեսական ծրագրերի իրականացմամբ ամրապնդել հանրապետության հարավային սահմանը: Սակայն նման ծրագրերը անհնարին էր իրականացնել միայն Արցախի պետական բյուջեի միջոցներով: Անհրաժեշտ էր ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ Սփյուռքի մեր հայրենակիցների աջակցությունը:

Արցախի տնտեսական զարգացման բաղկացուցիչ մասը կազմող վերաբնակեցման ծրագրի շրջանակում 2008 թվականից ԹԲՀ-ի կողմից իրագործվել էր Քաշաթաղի շրջանի վերաբնակիչների տների վերանորոգման համար շինանյութի տրամադրման և դրանց նպատակային օգտագործման վերահսկման ծրագիրը: 2008-2013 թթ. Քաշաթաղի շրջանի 7 համայնքների 47 ընտանիքներին տրամադրվել էին համապատասխան շինանյութեր[464]: Հերիկ ու Հակ համայնքներում հիմնադրամի կողմից տուն էր տրամադրվել երկու վերաբնակիչ ընտանիքների[465]: Երկու տուն տրվել էր «Արցախի վիրավոր զինծառայողներին բնակարանային հարմարավետ պայմաններով ապահովելու» ծրագրի շրջանակում: Հիմնանորոգվել էր Աղավնատուն համայնքում ապրող բազմազավակ ընտանիքին հատկացված տունը[466]: Առանց զարգացած ենթակառուցվածքների ու վերաբնակիչների համար տարրական կենսապայմանների ստեղծման հնարավոր չէր պահել գյուղը: Բնակիչների կենսապայմանները բավարարելու համար ԹԲՀ-ն,

---

[464] Վարդանյան Ա., «Թուֆենկյան» բարեգործական հիմնադրամի (ԹԲՀ) գործունեությունը Արցախում, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, Բ, Երևան, 2013, էջ 78:

[465] «Ազատ Արցախ», 4 հոկտեմբերի, 2018:

[466] «Մերան» ԼՂՀ Քաշաթաղի շրջանային թերթ, թիվ 20 (141), հոկտեմբեր, 2015:

համագործակցելով ԱՀ կառավարության հետ, Արցախի տնտեսական զարգացման մի շարք ծրագրերի իրագործման արդյունքում մի շարք գյուղերում կառուցել էր խմելու ջրագծեր՝ գյուղացիներին ապահովելով մշտական ջրով: Հիմնադրամի ֆինանսավորմամբ վերանորոգվել էր Քաշաթաղի շրջանի Քարեգահ և Այգեհովիտ գյուղերի գյուղամիջյան ճանապարհը[467]:

Սիրիայում ընթացող պատերազմի հետևանքով մեծ կորուստներ կրեցին մեր հայրենակիցները, որոնցից շատերը ստիպված էին հեռանալ երկրից՝ ապաստան փնտրելով մայր հայրենիքում: Սիրիահայերի մի քանի ընտանիք հաստատվեց ԱՀ Կովսական քաղաքում: 2011 թ. հիմնադրամը ԱՀ կառավարության հետ համատեղ վերանորոգեց Կովսականի բազմաբնակարան մի շենք, և 7 բնակարան տրամադրեցին Սիրիայից տեղափոխված մեր հայրենակիցներին[468]: ԹԲՀ-ն սիրիահայերի համար շահագործման էր հանձնել մի քանի տներ Գետամեջ ու Վան գյուղերում, վերանորոգվել էին Իշխանաձոր գյուղում հաստատված սիրիահայ ու լիբանանահայ ընտանիքների բնակարանները: Բերձորում, Իշխանաձորում ու Կովսականում հաստատված հողագործ սիրիահայերին ԱՀ կառավարության կողմից տրամադրվում էին վարկեր:

Հիմնադրամը աշխատանքներ է տարել վերաբնակեցված գյուղերի տնտեսության ամրապնդման ու զարգացման ուղղությամբ: Նրա կողմից իրականացվել էր խաղողի այգիների վերականգնման ծրագիր Հարավային Քաշաթաղի Այգեհովիտ և Ուռեկան գյուղերում: Այգիները վերականգնելուց և ծախսերը փակելուց հետո, ըստ կազմած պայմանագրի, դրանք վերադարձվելու էին համայնքի անդամներին: Այգիներում աշխատող գյուղացինե-

---

[467] ԱՀ պետական արխիվ, ֆ. 180, ց. 1, կ-11, պ. մ. 50, թ. 12, 51:

[468] Նյութը տրամադրել է Ստեփանակերտի «Թուֆենկյան» հիմնադրամի գրասենյակը:

ը ստանում էին աշխատավարձ: Հիմնադրամի միջոցներով Քաշաթաղի Այգեհովիտ գյուղում կառուցվել էր ալրաղաց, որը սպասարկում էր շրջակա մոտ 20 գյուղերի բնակիչների[469]: Հարավային Քաշաթաղում շարունակվում էին 2005 ու 2007 թվականներից սկիզբ առած «Ալրաղաց» և «Տեխնիկական բազա» տնտեսական ծրագրերը, որոնք խթան հանդիսացան հատկապես հացահատիկային արտադրության բնագավառի զարգացման համար[470]:

Հադրութի շրջանի Առաջամուղ գյուղի վերաբնակիչներին աշխատատեղերով ապահովելու նպատակով ԹԲՀ-ի տրամադրած ֆինանսական աջակցությամբ 2005 թ. ստեղծվել էր 5 հա նռան այգի: 2018 թ. այգիներից ստացվել էր 18 տոննա նուռ[471]: Երիցվանք գյուղի վերաբնակիչներին աշխատատեղերով ապահովելու նպատակով ԹԲՀ ֆինանսական օգնությամբ 2013 թ. հիմնվել էր 7 հեկտար նռան այգի, կառուցվել էր երկու ջերմոցային տնտեսություն՝ յուրաքանչյուրը 240 մ^2 մակերեսով[472]: Նույն շրջանի Վան գյուղի բնակչության հիմնական զբաղմունքը հողագործություն էր: Մեծ մասը զբաղվում էր ձմերուկի մշակությամբ: ԹԲՀ միջոցներով համայնքում 2018 թ. գարնանը հիմնվել էր 5 հա արքայանարնջի այգի, տնկվել շուրջ 2500 տնկի[473]: Շրջանի Մոշաթաղ ու հարևան Ծիծեռնավանք գյուղական համայնքի Տանձուտ գյուղերում չորս բազմազավակ ընտանիքի հատկացվել էր ընդհանուր 18 մեղվաընտանիք[474]: Հիմնադրամը վերաբնակիչներին տրամադրում էր նաև ցածր տոկոսադրույքով վարկեր: Վարկերի համար տրամադրված

---

469 «Ազատ Արցախ», 5 հուլիսի, 2005:

470 «Հայկական Սփյուռք» տարեգիրք. 2009, էջ 135:

471 Նյութը տրամադրել է Ստեփանակերտի «Թուֆենկյան» հիմնադրամի գրասենյակը:

472 Նյութը տրամադրել է Ստեփանակերտի «Թուֆենկյան» հիմնադրամի գրասենյակը:

473 «Ազատ Արցախ», 6 հոկտեմբերի, 2018:

474 «Ազատ Արցախ», 8 օգոստոսի, 2018:

գումարները ետ ստանալով՝ օգտագործվել էին բնակչության հետագա սոցիալական ծրագրերի իրագործման համար։

Քաշաթաղի շրջանում հիմնադրամն իրականացնում էր բազմաթիվ ծրագրեր, որոնցից էին առողջապահական ծրագրերը։ 2005 թ. Իշխանաձոր գյուղում կառուցվել էր բժշկական համալիր, որը կարող էր սպասարկել 2000 բնակչի[475]։ Բուժհամալիրը կահավորված էր, ուներ իր բաժանմունքները՝ ատամնաբուժական, մանկաբարձական, բուժքույրական անձնակազմով, շտապօգնության մեքենայով։ Հիմնադրամի նախաձեռնությամբ համալիրի աշխատակիցները դասընթացների էին մասնակցել Ստեփանակերտի ծննդատանը և ախտորոշիչ կենտրոնում[476]։ 2009 թ. Քաշաթաղի հյուսիսային ու հարավային բուժկետերին, հիվանդանոցներին, Առողջապահության նախարարությանը ԹԲՀ-ի կողմից տրամադրվել էին «Վարդանանց ասպետներ» և «IMEC» կազմակերպություններից ստացված բժշկական պարագաներ, սարքավորումներ, կահույք։ Նույն թվականին հիմնադրամի հովանավորությամբ բուժկետ էր բացվել Հյուսիսային Քաշաթաղի Մշենի գյուղում[477]։ Հիմնադրամի կողմից կառուցվել էին Աղավնատուն համայնքի, հիմնանորոգվել ու կահավորվել՝ Մոշաթաղի բուժկետերը։

2015 թ. հիմնադրամի մասնակցությամբ Քաշաթաղի շրջանում իրականացված բարեգործություններից էր Խաչգետիկ գյուղում կառուցված բուժկետը։ Այս կարևոր կառույցն իրականություն դարձավ «Թուֆենկյան» հիմնադրամի, Երևանում գործող «One Armenia» կազմակերպության և Լոնդոնում գործող «Հայկական կենտրոն տրեստ» կառույցի միջոցով[478]։

---

[475] ԱՀ պետական արխիվ, ֆ. 180, գ. 1, կ-11, պ. մ. 50, թ. 37, 71։

[476] Մինասյան Է., Վարդանյան Ա., Հայրենիք-Սփյուռք առնչությունները ՀՀ անկախության տարիներին (1991-2009 թթ.), հոդվածների ժողովածու, Ստեփանակերտ, 2010, էջ 95։

[477] «Հայկական սփյուռք» տարեգիրք. 2009, Երևան, 2010, էջ 135։

[478] Մերան, թիվ 20 (141), հոկտեմբեր, 2015։

«Թուֆենկյան» հիմնադրամի ԱՀ գրասենյակը մշակել էր և իրագործել մի ծրագիր, համաձայն որի՝ շինանյութեր էին տրամադրվել գյուղացիներին՝ իրենց տները վերանորոգելու համար: Հիմնադրամը վերանորոգել էր ավելի քան 30 տուն, նախակրթական դպրոց Հակ, Խոջանց ու Գետափ գյուղերում: Այդ գյուղերում բնակիչների կենսապայմանները բավարարելու համար հիմնադրամը, համագործակցելով ԱՀ կառավարության հետ, կառուցել էր խմելու ջրագծեր՝ գյուղացիներին ապահովելով մշտական ջրով[479]:

ԱՀ կառավարության հետ համատեղ խմելու ջրագիծ կառուցվեց Քարոտան, Վարդաբաց և Կումայրի գյուղերում: Գյուղերի տնտեսական վերելքը խթանելու նպատակով «Թուֆենկյան» հիմնադրամը տրամադրել էր ցածր տոկոսադրույքով վարկեր: Վարկերի համար տրամադրված գումարը ետ ստանալով՝ այն օգտագործվում էր հետագա ծրագրերի ընդլայնման համար:

Սոցիալ-տնտեսական ծրագրերի իրականացման շրջանակնում ԱՀ առողջապահության նախարարության հետ համագործակցելով՝ ԹԲՀ-ն կազմակերպել էր շարժական կլինիկայի ուղևորություններ Քաշաթաղի հարավային բոլոր գյուղերը, անցկացրել հետազոտություններ: Անվճար տրվել էր դեղորայք: Ծրագիրը շարունակվել էր ավելի ընդլայնված՝ ընդգրկելով ամբողջ Քաշաթաղն ու Քարվաճառը: Առողջապահության նախարարությունը տրամադրել է դիագնոստիկայի բեռնատար[480]: Կազմակերպվել էին նաև «Birthlink» մանկաբարձների որակավորման դասընթացներ Քաշաթաղի շրջանի բոլոր համայնքների բուժքույրերի համար:

ԹԲՀ-ն կազմակերպել էր շարժական կլինիկայի ուղևորություններ նաև Շահումյանի շրջանում: 2010 թ. սեպտեմբերին Քար-

---

[479] «Հայկական Սփյուռք» տարեգիրք. 2010, Երևան, 2011, էջ 124-125:

[480] «Հայկական Սփյուռք» տարեգիրք. 2010, էջ 124:

վաճառ էին այցելել տարբեր բժշկական մասնագետներից կազմված խմբեր, որոնք իրենց հետ բերել էին համապատասխան բժշկական սարքավորումներ: Տեղի բնակչությունն ուներ նմանատիպ միջոցառումների կարիք և գոհ էր, որ կարողանում էր հետազոտվել շրջանում և ստիպված չէր լինում բժշկական հետազոտման ու ախտորոշում ստանալու համար մեկնել Ստեփանակերտ, Մարտակերտ կամ ՀՀ Վարդենիս քաղաք: Այս ծրագրերը որոշակիորեն թեթևացնում էին բնակիչների այդ հոգսերը[481]:

Սոցիալ-տնտեսական ծրագրերի իրականացման ոլորտում հատկապես կարևորվում էին կրթամշակութային ծրագրերը: Ահա թե ինչու «Թուֆենկյան» հիմնադրամի Արցախի գրասենյակի միջոցով իրագործվում էին նաև լայնամասշտաբ կրթամշակութային ծրագրեր: 2007 թ. ամռանը Առաջամուղ գյուղում շահագործման հանձնվեց 80-տեղանոց դպրոցը, որի շինարարության և կահավորման ծախսերը հոգացել էին «Թուֆենկյան» հիմնադրամը և «Հայ կրթական հիմնադրամը»[482]: 2017 թ. հիմնադրամի կողմից ընդլայնվել էր գյուղի դպրոցի շենքը. ավելացել էր չորս նոր դասասենյակ: Հիմնադրամի ֆինանսավորմամբ նորոգվել էր Քաշաթաղի շրջանի Աղավնատուն համայնքի դպրոցի շենքը, վերանորոգվել էին Հոչանց ու Գետափ գյուղերի դպրոցները: Հակ գյուղի դպրոցը վերանորոգվել էր ԱՄՆ-ում գործող «Հայրենասեր» բարեգործական հասարակական կազմակերպության հետ համատեղ:

Հաշվի առնելով երեխաների նախադպրոցական կրթության կարևորությունը՝ ԹԲՀ-ի Ստեփանակերտի գրասենյակը մեծ ուշադրություն էր դարձնում մանկապարտեզների շինարարությանը: 2013 թ. ամռանը ավարտվեց Քաշաթաղի շրջանի հյուսի-

---

481 «Նոր Շահումյան», ԼՂՀ Շահումյանի շրջվարչակազմի պաշտոնաթերթ, թիվ 17 (88), 1-15 սեպտեմբեր, 2010:

482 «Լուսարար», 16 օգոստոսի, 2007:

սային մասի ամենամեծ համայնքներից մեկի՝ Մոշաթաղի 25 երեխաների համար նախատեսված մանկապարտեզի կապիտալ վերանորոգումը: Մանկապարտեզ կառուցվեց Առաջամուղ գյուղում: Մանկապարտեզների բացումը նպաստում էր երեխաների նախադպրոցական կրթությանն ու հայեցի դաստիարակությանը, տեղերում բնակչության համար աշխատատեղերի ստեղծմանը:

Վերոհիշյալ ծրագրերի շրջանակում «Թուֆենկյան» հիմնադրամի կողմից Քաշաթաղի շրջանի բոլոր գյուղերում երկու փուլով անց էին կացվել համակարգչային դասընթացներ՝ ուսուցիչների, աշակերտների ու գյուղի երիտասարդության համար: Շահումյանի շրջանի համայնքներում համակարգչային գրագիտությունը զարգացնելու նպատակով «Թուֆենկյան» հիմնադրամը, նվիրելով վեց նոթբուք և ինը համակարգչային բլոկ, երկու տարի շարունակ ֆինանսավորել էր դասընթացները[483]:

Անհրաժեշտ է նշել, որ հիմնադրամը ֆինանսական ներդրումներ էր կատարել Շուշիում: Հիմնադրամը Շուշիի պատմաերկրագիտական թանգարանի հովանավորն էր: Նրա միջոցներով վերանորոգվել էր թանգարանը, ձեռք էին բերվել նոր ցուցանմուշներ ու կահույք: 2005 թ. մայիսի 9-ին այստեղ բացվեց նոր բաժին՝ նվիրված Շուշիի ազատագրման ռազմագործողությանը: Նոր բաժինը հովանավորվել էր ի հիշատակ ազգային-հասարակական գործիչ, բոստոնահայ Վահե Մարուխյանի ընտանիքի կողմից: 2004 թվականից սկսած՝ ԹԲՀ-ի կողմից իրականացվում էր «Տաղանդավոր երիտասարդներին ֆինանսական աջակցություն» ծրագիրը: Այն նախատեսված էր օժանդակելու ԱՀ շնորհաշատ երեխաներին ու երիտասարդներին՝ հետագայում նրանց տաղանդը բացահայտելու ու զարգացնելու նպատակով: Տաղանդա-

[483] «Նոր Շահումյան», թիվ 6 (149), 16-31 մարտի, 2013:

վոր երիտասարդների ընտրության հարցում հիմնադրամը համագործակցում էր ԱՀ մշակույթի, կրթության և գիտության նախարարությունների, ինչպես նաև Սպորտի կոմիտեի հետ: Ծրագրում ընդգրկված էին երեխաներ Ստեփանակերտից, Մարտունու, Հադրութի և Մարտակերտի շրջաններից: ԹԲՀ օժանդակությամբ իրագործվել էր Շուշիի երեք երգչախմբերի լազերային սկավառակի ձայնագրությունը, որը մեծ ընդունելության էր արժանացել արտասահմանում[484]: Հիմնադրամը մեծ ուշադրություն էր դարձնում Քաշաթաղի հայկական հուշարձանների պահպանմանը: Նրա ֆինանսական աջակցությամբ 2009 թ. վերանորոգվել էին XVII դարի Սուրբ Մինաս եկեղեցին Հակ գյուղում, 2010 թ.՝ XVII դարի Միրիկ եկեղեցու տանիքը[485]:

Բարձր գնահատելով «Թուֆենկյան» հիմնադրամի սոցիալ-տնտեսական ծրագրերի կենսագործման ուղղությամբ բազմաբնույթ գործունեությունը Քաշաթաղի շրջանում, ինչպես նաև զանազան կազմակերպությունների ու հիմնադրամների ակտիվ մասնակցությունն ու աջակցությունը՝ ԱՀ նախագահ Բակո Սահակյանը նշել է. «Հավատացած եմ, որ համատեղ ուժերով մենք կշենացնենք Արցախի այս գողտրիկ հատվածը, որն ունի համահայկական նշանակություն: Առանց Քաշաթաղի շրջանի հնարավոր չեն Լեռնային Ղարաբաղի՝ որպես անկախ պետության լիարժեք զարգացումն ու անվտանգ գոյատևումը: Սա պետք է հիշենք բոլորս և սրանով առաջնորդվենք մեր բոլոր ձեռնարկներում»[486]:

Քաշաթաղի շրջանի անապահով ընտանիքներին օգնում էին նաև Արցախում, ՀՀ-ում և Սփյուռքում գործող բարեգործական հիմնադրամները՝ «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքներին», Լիբանանում գործող «Արցախ ֆոնդը»,

---

[484] «Ազատ Արցախ», 5 հուլիսի, 2005:

[485] «Հայկական Սփյուռք» տարեգիրք. 2010, էջ 125:

[486] «Ազատ Արցախ», 29 մարտի, 2008:

«ԱՐԻ» ծրագիրը, «Թուֆենկյանը», «Քաշաթաղը», «Դիակոնիան», «ԱԳԱՊԵ»-ն և այլն: 2018 թ. «Հայրենասերի» կողմից Մուշ գյուղում կառուցվեց դպրոցական նոր շենք, որը ծառայում է նաև հարևան Ալաշկերտ համայնքի դպրոցականներին: Դպրոցը կոչվում էր 2016 թ. ապրիլի 2-ին հերոսաբար մարտիրոսված սպա Արմենակ Ուրֆանյանի անունով: 2017 թ. «Թուֆենկյան» հիմնադրամի ֆինանսավորմամբ «Հայրենասեր» կազմակերպությունը Հակ գյուղում հիմնանորոգեց դպրոցի շենքը[487]:

Քաշաթաղի շրջանի հարավային թևում գտնվող Իշխանաձոր գյուղում 2016-2017 թթ. Արցախի Հանրապետության կառավարության օժանդակությամբ, «Քաշաթաղ» բարեգործական հիմնադրամի ֆինանսավորմամբ և «Թուֆենկյան» հիմնադրամի աջակցությամբ կառուցվել էր 1 ութբնակարանոց շենք, 22 բնակելի առանձնատուն: Գյուղի կայացման համար իրենց ներդրումն էին ունեցել նաև բարեգործական կազմակերպությունները: «Թուֆենկյան» բարեգործական հիմնադրամն ու «Հայրենասեր» հասարակական կազմակերպությունը նույնպես նպաստել էին բնակարանաշինությանը և այլ տնտեսական ծրագրերի իրականացմանը[488]:

«Թուֆենկյան» հիմնադրամը 2018-2019 թթ. տնտեսական զարգացման նոր ծրագրեր է իրականացրել Քաշաթաղի շրջանի արաքսամերձ Միջնավան քաղաքում ու Ալաշկերտ գյուղում:

2018 թ. սեպտեմբերի 24-ին «Թուֆենկյանն» իր տնտեսական ծրագրերի իրականացման շրջանակում հերթական բարեգործությունն իրականացրեց Բերձոր քաղաքում՝ բնակելի տուն նվիրելով սիրիահայ Ցեզար Թաթլեյանի ու մարտակերտցի Լուսինե Առուշանյանի ընտանիքին: Միջոցառմանը ներկա էին «Թուֆենկյան» հիմնադրամի գործադիր տնօրեն Ռաֆֆի Դուդակյանը, Արցախի ծրագրերի կառավարիչ Էդվին Գրիգորյանը, հիմնադրամի

---

487 «Մերան», 2018, թիվ 1-2, էջ 2:

488 «Մերան», 2018, թիվ 3-4, էջ 5:

հոգաբարձուների խորհրդի անդամներ, համակիրներ, օժանդակողներ, Քաշաթաղի շրջվարչակազմի ղեկավարի օգնական Ստեփան Սարգսյանը, աշխատակազմի ղեկավար Դավիթ Դավթյանը, քաղաքաշինության ու ճարտարապետության բաժնի վարիչ Հովհաննես Հակոբյանը: Ռաֆֆի Դուդակլյանը տեղեկացրեց, որ 2018 թ. ընթացքում Արցախում վիրավոր զինծառայողներին բնակարանային հարմարավետ պայմաններով ապահովելու ծրագրի շրջանակում շահագործման է հանձնվել 5 տուն, իսկ «Արցախ ֆոնդ» կազմակերպության ԱՄՆ մասնաճյուղի համաֆինանսավորմամբ էլ 6 տուն հանձնվել էր Առաջամուղում: Եվս 2 տուն հանձնվել էր զոհված զինվորականի ընտանիքի Քաշաթաղի շրջանի Գետամեջ ու Վան գյուղերում[489]:

2017 թ. Քաշաթաղի շրջանի Իշխանաձոր գյուղի նորակառույց Ազատամարտիկների թաղամասում կառուցվել էր 11 բնակելի տուն ԱՀ կառավարության և «Քաշաթաղ» բարեգործական հիմնադրամի միջոցներով: 2 բնակելի տուն կառուցվել էր «Թուֆենկյան» հիմնադրամի կողմից: Բազմազավակ 2 ընտանիքի համար բնակելի տուն էր կառուցվել ԱՀ կառավարության կողմից: «Թուֆենկյան» հիմնադրամի աջակցությամբ և «Հայրենասեր» ՀԿ-ի հովանավորությամբ նոր թաղամասում կառուցվեց մարզադաշտ, որը կրում էր 2016 թ. ապրիլի սկզբին հերոսաբար նահատակված Անդրանիկ Զոհրաբյանի անունը: Հիմնադրամի ֆինանսական օգնությամբ, 2017 թ. աշնանից սկսած, համայնքի տարածքում կառուցվեց ևս 60 առանձնատուն ԱՀ կառավարության և «Քաշաթաղ» ԲՀ-ի միջոցներով[490]:

2017 թ. կեսերից Քաշաթաղի հարավային արաքսամերձ Միջնավան քաղաքում կառուցվել էր ութսենյականոց բնակելի միհար-

---

[489] «Մերան», 2018, թիվ 18, էջ 3:
[490] «Մերան», 2018, թիվ 6, էջ 2:

կանի շենք և հիմնանորոգվել քաղաքապետարանի շենքը: Բազմաբնակարան շենքի կառուցումն ու քաղաքապետարանի հիմնանորոգումը իրականացվել էին ոչ միայն «Թուֆենկյան» հիմնադրամի, այլև «Քաշաթաղ» բարեգործական հիմնադրամի ֆինանսավորմամբ և ԱՀ կառավարության օժանդակությամբ[491]:

Քաշաթաղի շրջանում «Թուֆենկյան» հիմնադրամի իրագործած տնտեսական ծրագրերին զուգահեռ շրջկենտրոն Բերձորում ու մոտակայքում մոտ 20 պուրակ ու այգի էր հիմնվել ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի նախկին դեկան, Արցախյան շարժման առաջամարտիկ, «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքներին» հիմնադրամի նախագահ Գուրգեն Մելիքյանի կողմից ու օժանդակությամբ: Շրջանի կազմավորման առաջին օրվանից բարերարն սկսել էր տարբեր բնագավառներում օժանդակել քաշաթաղցիներին՝ բազմազավակ ընտանիքներին տրամադրելով խոշոր եղջերավոր անասուններ, դրան զուգահեռ իրականացնում էր ծառատունկ[492]:

Քաշաթաղի շրջանում 2018 թ. «Թուֆենկյան» հիմնադրամի կողմից տնտեսական ծրագրերի իրականացման շրջանակում նորոգվել էին XVII դարում կառուցված մի շարք եկեղեցիներ՝ Հակի Սուրբ Մինասը, Միրիկի Սուրբ Աստվածածինը, Հոչանցի Սուրբ Ստեփանոսը: Շրջանի կայացման ու զարգացման գործում, բացի պետական հատկացումներից, կարևորվում էին Սփյուռքում և ներսում գործող բարեգործական կառույցները, որոնցից էին «Թուֆենկյանը», «Հայրենասերը», «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքներին» հիմնադրամը, որը, բացի սոցիալ-տնտեսական ծրագրեր իրականացնելուց, յուրաքանչյուր տարի 2-3 անգամ ծառատունկ էր կազմակերպում Բերձորում ու հարակից տարածքներում: Հետևելով «Թուֆենկյան» հիմնադրամի

---

[491] «Մերան», 2018, թիվ 6, էջ 3:
[492] «Մերան», 2018, թիվ 5, էջ 1:

տնտեսական գործունեությանը Արցախում՝ Լիբանանում գործող «ԱՐԻ» հիմնադրամի ֆինանսավորմամբ ու ԱՀ կառավարության օժանդակությամբ Աղավնո գյուղում կառուցվել էր 50 բնակելի առանձնատուն, ծրագիրը շարունակական էր[493]:

2018 թ. հուլիսից «Թուֆենկյան» բարեգործական հիմնադրամի կողմից վերանորոգվել էր Մոշաթաղի համայնքապետարանի շենքը: Հիմնադրամը հիմնանորոգել էր Հոչանց գյուղի XVII դարի Սուրբ Ստեփանոս եկեղեցին: 2018 թ. բնակարանային պայմանները բարելավելու ծրագրով Քաշաթաղի շրջանի 70 ընտանիքի հատկացվել էր մեծ քանակի շինանյութ[494]:

2018 թ. «Թուֆենկյան» բարեգործական հիմնադրամն ստանձնել էր Քաշաթաղի Հոչանց գյուղի Սուրբ Ստեփանոս եկեղեցու հիմնանորոգումն ու տարածքի բարեկարգումը: Ընթացքում հողի տակից գտնվել էին 10-ից ավելի տապանաքարեր, խաչքարի բեկորներ: Հիմնանորոգման ընթացքում եկեղեցին ստացավ իր նախկին տեսքը: 2019 թ. հունիսի 23-ին Հայ առաքելական եկեղեցու (ՀԱԵ) Արցախի թեմի առաջնորդ Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանի ձեռամբ կատարվեց Հոչանցի Սուրբ Ստեփանոս եկեղեցու վերաօծման կարգ[495]:

2020 թ. գարնանը Մայքլ և Սյուզան Կյոզալյանների Բոսթոնի տանը տեղի ունեցած հավաքույթի նպատակն էր «Թուֆենկյան» հիմնադրամի աշխատանքներին ծանոթանալն ու աջակցելը: Այս նպատակով եղան բազմաթիվ նվիրատվություններ, ֆինանսական աջակցություն, որը Ջեյմս Թուֆենկյանի առաջարկով հատկացվեց Քաշաթաղի Վան համայնքի դպրոցի վերանորոգման համար[496]:

---

[493] «Մերան», 2018, թիվ 23-24, էջ3:
[494] «Մերան», 2018, թիվ 23-24, էջ 2:
[495] «Մերան», 2019, թիվ 12, էջ 1:
[496] «Մերան», 2020, թիվ 23-24, էջ 5:

Այսպիսով՝ «Թուֆենկյան» բարեգործական հիմնադրամն իր հայրենանվեր գործունեությամբ, սոցիալ-տնտեսական բազում ծրագրերի իրագործմամբ նպաստում էր Արցախի տնտեսական զարգացմանը: «Սփյուռքի հայությունը կապրի Հայաստանի սիրով ու կապրի անոր ապագայի համար,– ասել է Ալեք Մանուկյանը,– այլապես ինչ իմաստ պիտի ունենար մեր ազգապահպանումի ամբողջ պայքարը, եթե մենք չունենայինք վախճանական նպատակ մը: Մենք համոզված ենք, թե առանց հայրենիքի չի կարող գոյատևել սփյուռքը»[497]:

Ցավով ու ափսոսանքով պետք է արձանագրենք մի իրողություն, որ հիմնադրամի աջակցությամբ և անմիջական մասնակցությամբ իրականացրած մեծածավալ տնտեսական ցարգացման արցախյան այս ծրագրերի արդյունքների մեծագույն մասը այսօր վայելում է մեր հարևան ագրեսոր ու զավթիչ պետությունը՝ Ադրբեջանը, որը, չբավարարվելով Արցախի Հանրապետության մեծագույն մասի նվաճումով, ռևանշիստական մեծ ձգտումներ է ցուցաբերում նաև Հայաստանի Հանրապետության տարածքների նկատմամբ:

[497] Համազասպյան Վ., Ալեք Մանուկյան, Երևան, 1994, էջ 24, տե՛ս նաև Մինասյան Է., Վարդանյան Ա., Հայրենիք-Սփյուռք առնչությունները ՀՀ անկախության տարիներին (1991-2009 թթ.), Ստեփանակերտ, 2010, էջ 67-68:

2020 թ. արցախյան 44-օրյա պատերազմը և դրա հետևանքները

2020 թ. սեպտեմբերի 27-ին՝ թուրք-հայկական պատերազմից հարյուր տարի անց, Ադրբեջանն իր ցեղակից Թուրքիայի աջակցությամբ ու անմիջական մասնակցությամբ նոր պատերազմ սանձազերծեց Արցախի Հանրապետության դեմ: Այն 1990-ական թվականներից ի վեր թվով երրորդ պատերազմն էր, որը պատմության մեջ մտավ Քառասունչորսօրյա պատերազմ անվանումով: Թուրք-ադրբեջանական ուժերը խնդիր էին դրել բլից կարգով հանկարծակի հարձակմամբ վերահսկողության տակ առնելու ամբողջ Արցախը՝ ոչ միայն ետ վերադարձնելով հայերի կողմից ազատագրված 7 շրջանը, այլև ընդարձակելով սահմանները նաև ՀՀ սահմանային շրջանների հաշվին, իրագործելով իրենց պանթուրանական երազանքը՝ ոչնչացնել հայ զինվորական ուժն ու ընդհանրապես հայությանը, որոնք խոչընդոտում էին նրանց ծավալապաշտական քաղաքականության իրագործմանը: Ըստ ադրբեջանա-թուրքական հաշվարկների՝ դա պետք է տևեր առավելագույնը 1 շաբաթ կամ 10 օր, սակայն նրանք իրենց հաշիվներում սխալվեցին, քանզի 44 օր շարունակվեցին այդ անհավասար մարտերը: Ադրբեջանա-թուրքական հորդաներն ու նրանց հավաքագրած, Սիրիայից, Պակիստանից և այլ վայրերից եկած վարձկան ահաբեկիչները տարիների ընթացքում գնված աննախադեպ քանակի սպառազինությամբ ու մեծաթիվ զրահատեխնիկայի և ԱԹՍ-ների (անօդաչու թռչող սարք) կիրառմամբ լայնածավալ հարձակման անցան արցախա-ադրբեջանական շփման գծի ողջ երկայնքով[498]: Թուրք օպերատորների կողմից մեծաքանակ ԱԹՍ-ների կիրառումը Արցախի պաշտպանական բանակին թույլ չէր

[498] «Հայաստանի Հանրապետություն», 1 հոկտեմբերի, 2020:

տալիս մարտադաշտ դուրս բերել ողջ զինանոցը, քանզի թշնամուն հաջողվել էր հենց պատերազմի սկզբից ոչնչացնել Արցախի հակաօդային պաշտպանության ողջ համակարգը[499]: Մարտական գործողություններն ընթանում էին հյուսիսում՝ Մարտակերտ–Թալիշ–Մատաղիս, կենտրոնում՝ Մարտունի–Ճարտար, իսկ հարավում՝ Արաքսի հովտի ողջ տարածքով, սկզբում՝ Ֆիզուլու, Ջեբրայիլի, իսկ ապա՝ Որոտանի (Կուբաթլու) և Կովսականի (Զանգելան) ուղղություններով: Բացի ընդհանուր ռազմաճակատային հարձակումից՝ ադրբեջանա-թուրքական և ծայրահեղ իսլամիստ վարձկանները՝ ջիհադիստները, սկսեցին փոքր դիվերսիոն խմբերով գրոհներ իրականացնել, որոնք, հանդիպելով հայկական ուժերի հուժկու դիմադրությանը կա՛մ ոչնչացվում էին, կա՛մ հետ էին շպրտվում՝ թողնելով զինտեխնիկան ու կրելով կենդանի ուժի զգալի կորուստներ: Պատերազմի հենց առաջին օրը Ադրբեջանի զինված ուժերը հրետակոծեցին նաև հայկական խաղաղ բնակավայրերը, այդ թվում՝ մայրաքաղաք Ստեփանակերտը: Արցախի քաղաքացիական բնակչության շրջանում եղան կորուստներ: ՀՀ-ում և ԱՀ-ում հաստատվեց ռազմական դրություն, և հայտարարվեց համատարած զորահավաք:

Սեպտեմբերի 27-ին և 28-ին Արաքսի հովտի ու Մատաղիս-Թալիշ հատվածներում Արցախի պաշտպանական բանակին (ԱՊԲ) հաջողվեց դիմակայել հակառակորդի բոլոր հարձակումներին՝ նրան հասցնելով անձնակազմի ու տեխնիկայի զգալի կորուստներ. մասնավորապես ոչնչացվեցին թշնամու 22 միավոր տանկ, 10 միավոր այլ զրահատեխնիկա, ավելի քան 370 զինվորական[500]: Սեպտեմբերի 29-ից չբավարարվելով Արցախի դեմ ագրեսիայով՝ ռազմական ակտիվ գործողություններով հարձակումներ

[499] «Հայաստանի Հանրապետություն», 6 հոկտեմբերի, 2020:

[500] «Հայկական ժամանակ», 10 հոկտեմբերի, 2020:

սկսեց նաև ՀՀ սահմանամերձ շրջանների վրա, Ադրբեջանի զինուժը կրակ բացեց ՀՀ ԶՈՒ Վարդենիսի զորամասի ուղղությամբ: «F-16» կործանիչները, օդ բարձրանալով, Գյանջա օդանավակայանից ապահովեցին Դալլար օդանավակայանից ՀՀ Վարդենսի տարածաշրջանի՝ Վարդենիս, Մեծ Մասրիկ, Սոթք շրջաններում տեղակայված ՀՀ բնակավայրերի ու ԶՈՒ ցամաքային ստորաբաժանումների ուղղությամբ Ադրբեջանի «Սու-25» և թուրքական արտադրության «Բայրաքթար» ԱԹՍ-ով ռմբահրթիռային հարվածները: «F-16» կործանիչի կողմից ՀՀ օդային տարածքում խոցվեց ՀՀ ԶՈՒ ռազմաօդային ուժերի «Սու-25» գրոհիչը, իսկ օդաչուն զոհվեց[501]: Միաժամանակ հյուսիսային ուղղությամբ շարունակելով օդային հարձակումները՝ ադրբեջանական օդուժի «Սու-25» տիպի գրոհիչները «Բայրաքթար» ԱԹՍ-ների միջոցով ռմբակոծեցին Հադրութի ու Մարտունու շրջանի բնակավայրերը: Հայկական ուժերը, դիմագրավելով հակառակորդի հարձակումներին, կարողացան ոչնչացնել մեծ թվով կենդանի ուժ ու «ՏՈՍ-1Ա» ռազմական տեխնիկա, խոցեցին «Սմերչ» և «Ուրագան» տիպի ռեակտիվ կայանքները: Ըստ Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանի հրապարակումների՝ պատերազմի առաջին չորս օրվա ընթացքում հայկական զինված ուժերի կողմից խոցվել էր ադրբեջանական այնքան ռազմական տեխնիկա, որքան Արցախյան առաջին ազատամարտի ժամանակ:

Արցախի ՊԲ-ի տվյալներով առաջին չորս օրերի ընթացքում ադրբեջանական զինուժի կորուստները եղել են 130 զոհ, 260 վիրավոր, 29 տարբեր տեսակի զրահատեխնիկա, 3 «ՏՈՍ-1Ա» ծանր հրանետային կայանքներ և 11 ԱԹՍ[502]:

Հոկտեմբերի 2-ին հյուսիսարևելյան ուղղությամբ հակառակորդը, մեծ ուժեր կենտրոնացնելով, փորձել է ճեղքել հայկական

---

501 «Հայաստանի Հանրապետություն», 9 հոկտեմբերի, 2020:

502 «Հայկական ժամանակ», 6 հոկտեմբերի, 2020:

զորքերի պաշտպանությունը, սակայն առանձին հատվածներում, հատկապես «Եղնիկների» և Մատաղիսի ուղղությամբ այն ձախողվել է: «Եղնիկներ» կոչված տեղամասում հայ ազատամարտիկները՝ հերոս հրամանատար Կարեն Ջալավյանի հմուտ ղեկավարությամբ, արյունահեղ մարտերում հերոսական խիզախ ու համարձակ մարտական գործողություններով ոչ միայն հաջողությամբ ետ մղեցին հակառակորդի չդադարող գրոհները, այլև գրավեցին ռազմավարական մեծ կարևորություն ունեցող հենակետեր, դիրքեր՝ հակառակորդին պատճառելով մեծաքանակ կորուստներ: Այս հերոսական գործողության համար դեռևս Ապրիլյան պատերազմի օրերից հայտնի խիզախ հրամանատար Կարեն Ջալավյանն արժանացավ Արցախի հերոսի կոչման[503]: Հյուսիսարևելյան ու հարավային ուղղություններով մղվող խիզախ մարտերում աչքի ընկան և «Արցախի հերոսի կոչում» պարգևին արժանացան Երևանի թիվ 78 հիմնական դպրոցի շրջանավարտ շարքային Էդգար Մարկոսյանը, որը Թալիշի ուղղությամբ խոցել է թշնամու 10 տանկ, Արմավիրի մարզի Սարդարապատի միջնակարգ դպրոցի շրջանավարտ Դավիթ Գրիգորյանը, որը նույն ուղղությամբ խոցել է թշնամու 15 տանկ և 1 ՀՄՄ, Երևանի թիվ 150 դպրոցի շրջանավարտ Յուրա Ալավերդյանը, որը խոցել է թշնամու 9 տանկ ու 1 ավտոմեքենա: «Արցախի հերոսի կոչմանը» հետմահու արժանացավ Վեդի քաղաքի թիվ 1 հիմնական դպրոցի շրջանավարտ Դավիթ Ղազարյանը, որը վարել է մարտը «ոչ մի քայլ նահանջ» սկզբունքով: Նա մասնակցել էր նաև Ապրիլյան քառօրյա պատերազմին ու արժանացել պարգևի[504]: Հաջորդ հերոսը արցախցի գնդապետ Սերգեյ Շաքարյանն է, որը, լինելով Արցախյան գոյապայքարի առաջամարտիկներից, վերջին պատերազմի ժամանակ կազմակեր-

---

[503] «Հայկական ժամանակ», 6 հոկտեմբերի, 2020:

[504] Նույն տեղում, էջ 6:

պել է բազմաթիվ տանկային ու հետևակային զրոհներ՝ հակառակորդին պատճառելով մեծ կորուստներ: «Մարտական ծառայություն» մեդալի արժանացան մի խումբ հայորդիներ, նրանց թվում՝ ՀՀ ԶՈՒ ժամկետային զինծառայող, ծանր վիրավորում ստացած Հարություն Դոխոյանը, որը խոցել է 5 տանկ, 1 ՀՀՄ, 1 «ՏՈՍ-1Ա», 7 զինտեխնիկա՝ ադրբեջանական զինուժին մեծ կորուստներ պատճառելով: Միայն հոկտեմբերի 2ին հյուսիսարևելյան ու հարավարևելյան կողմերում հակառակորդն ունեցել է 520 զոհ, ավելի քան 700 վիրավոր, կորցրել է մոտ 45 միավոր զրահատեխնիկա, 6 ինքնաթիռ, 3 ուղղաթիռ և 6 ԱԹՍ[505]: Այս ընթացքում հակառակորդը շարունակել է Ստեփանակերտ ու Հադրութ քաղաքների թիրախային ռմբակոծումը, որից տուժել են մեծ թվով բնակիչներ, փլուզվել են հարյուրավոր տներ, նաև դպրոցներ ու հիվանդանոցներ: Պատերազմի 43 օրերի ընթացում ադրբեջանա-թուրքական ագրեսորների հարվածների հետևանքով զոհվեց 20 քաղաքացիական անձ Արցախում: Վարդենիսում ԱԹՍ հարվածի հետևանքով վիրավորների թիվը խաղաղ բնակչության մեջ հասավ 93-ի, որից 20-ը թեթև կամ միջին ծանրության էին, իսկ մյուսները ծանր վիճակում էին: Այդ ժամանակահատվածում հիմնովին կամ մասնակի ավերվել էր 4600 միավոր անշարժ, 430 մասնավոր-շարժական գույք, շարքից դուրս էին եկել ու վնասվել 750 տարբեր տեսակի ենթակառուցվածքներ, հանրային ու արտադրական օբյեկտներ[506]: Հայկական միասնական տեղեկատվական կենտրոնի տվյալների համաձայն՝ պատերազմի 13 օրերի ընթացքում հայկական կողմը խոցել է հակառակորդի 17 ինքնաթիռ, 16 ուղղաթիռ, 162 ԱԹՍ, 4 «ՏՈՍ-1Ա», 1 «Սոլնցեպեկ», 4 «Սմերչ» համազարկային կրակի ռեակտիվ համակարգ, 508 տանկ, սպանվածների թիվը հասնում է ա-

---

[505] Նույն տեղում:

[506] «Հայկական ժամանակ», 5 նոյեմբերի, 2020:

ռնվազն 4369-ի: Այդ նույն ժամանակ ՊԲ հրատարակած տվյալներով հայկական բանակից զոհվել է 18-61 տարեկան 376 զինծառայող[507]:

Հոկտեմբերի 6-ին Ադրբեջանի զինված ուժերը, անցնելով հարձակման հարավային ուղղությամբ, օգտագործելով պահուստային ուժեր ու մեծաքանակ ռազմական տեխնիկա, ներառյալ տանկեր ու հրետանի, որոշ առաջխաղացում ունեցան՝ միաժամանակ շարունակելով հեռահար հրետակոծության ենթարկել Ստեփանակերտն ու Շուշին: Հակառակորդը խաղաղ բնակչության նկատմաբ կիրառել է միջազգայնորեն արգելված «LAR-160» տեսակի համազարկային կայանքների կասետային արկեր: Այդ նույն ժամանակ Արցախի ՊԲ հատուկ նշանակության ստորաբաժանման և «Կամավորական շարժում» ՀԿ ջոկատի ակտիվ մասնակցությամբ հյուսիսային ուղղությամբ կազմակերպվեց հակագրոհ, և հետ վերադարձվեց Վարանգաթաղի բարձունքը, որտեղ թուրքական կողմը թողեց 6 դիակ: Այս ուղղությամբ հայկական կողմը, վարելով ծանր մարտեր, ունեցավ զգալի առաջխաղացում: Հոկտեմբերի 9-ին մեկնարկվեցին Հայաստանի, Ռուսաստանի ու Ադրբեջանի արտգործնախարարների բանակցությունները՝ հայտարարելով մարդասիրական նպատակներով Արցախի հակամարտության գոտում հրադադար հայտարարելու, զերիների ու զոհերի աճյունների փոխանակման մասին: Հանդիպման ավարտին տարածվեց արտգործնախարարների համատեղ հայտարարությունը, որով կողմերը Կարմիր խաչի միջնորդությամբ ու վերջինիս չափանիշներով համաձայնեցին 72 ժամ հրադադար հաստատել հոկտեմբերի 10-ից՝ ժամը 12:00-ից, մարդասիրական նկատառումներով, մասնավորապես ռազմագերիների փոխանակման ու զոհվածների աճյունների դուրսբերման համար: Սակայն հրա-

[507] «Հայաստանի Հանրապետություն», 6 հոկտեմբերի, 2020:

դադարի մասին սույն պայմանավորվածությունը խախտվեց Ադրբեջանի կողմից՝ 5 րոպե անց գրոհելով Կարախամբեյլի կոչվող տեղամասի ուղղությամբ[508]:

Այդ նույն ժամանակ ադրբեջանական կողմը դիվերսիոն-հետախուզական ներթափանցման փորձ ձեռնարկեց Հադրութի ուղղությամբ՝ սպանելով 2 բնակչի՝ մորն ու նրա հաշմանդամ որդուն, միաժամանակ հրթիռակոծեց Ստեփանակերտը: Հրադադարի երկրորդ պայմանավորվածությունը ձեռք բերվեց հոկտեմբերի 17-ին, սակայն այն նորից խախտվեց Ադրբեջանի կողմից, որին այս հարցում ևս սատարում էր Թուրքիան: Դեռևս հոկտեմբերի 8-ին ադրբեջանական զիվված ուժերի կողմից հարվածային ու ճշգրիտ կառավարվող ԱԹՍ-ներով մի քանի ժամվա ընթացքում երկու անգամ թիրախավորված հարված հասցվեց Շուշիի Ղազանչեցոց Ամենափրկիչ եկեղեցուն: Խախտելով հրադադարի պայմանավորվածությունը՝ Ադրբեջանը շարունակեց մարտական գործողությունները բոլոր երեք ուղղություններով: Հյուսիսում ադրբեջանական զինված ուժերը մի քանի փորձ են արել ճեղքելու պաշտպանությունը հատկապես Մատաղիսի ուղղությամբ, սակայն հետ են մղվել՝ տալով զգալի կորուստներ: Կենտրոնի ուղղությամբ մի քանի դիվերսիոն խմբեր փորձել են ներթափանցել դիրքեր, սակայն հրետանին դիպուկ կրակահերթով հետ է մղել նրանց, որից հետո դիմել են փախուստի: Հարավային ուղղությամբ մարտերը տեղի են ունեցել Ջեբրայիլի տարածքում, այստեղ հակառակորդը որոշ հաջողություններ ունեցել է, սակայն չի կարողացել գրավել Խուդափերինի ջրամբարը, որը Իրանի ու Արցախի սահմանային ջրամբարն է: Հոտեմբերի 15-ին և 16-ին թշնամին հրետանու կիրառմամբ ինտենսիվ կրակ է բացել Մարտունի քաղաքի ու Կար-

[508] «Հայկական ժամանակ», 17 հոկտեմբերի, 2020:

միր շուկա բնակավայրի, Բերդաշեն համայնքի ուղղությամբ, միաժամանակ հրետակոծվել են Ստեփանակերտը, Հադրութի ու Քաշաթաղի շրջանների գյուղերը: Միաժամանակ թշնամին ԱԹՍ-ներով հարվածներ է հասցրել ՀՀ Սյունիքի մարզի Խնածախ, Արծվանիկ, Դավիթ-Բեկ բնակավայրերին՝ վնասելով քաղաքացիական ենթակառուցվածքները: Թեժ մարտեր են ընթացել նաև Մարտունու շրջանի Շեխեր և Ջիվանի գյուղերի մատույցներում: Հոկտեմբերի 23-ին թշնամին ոչ միայն հրետակոծել է Ասկերանը, այլև կրկին հարվածներ է հասցրել Մարտունի, Ստեփանակերտ ու Մարտակերտ քաղաքներին: Թշնամին, գրադ կայանքից հրթիռակոծելով Քաշաթաղի շրջանի գյուղերը, կիրառել է «Սմերչ» տեսակի հրթիռներ՝ միաժամանակ շարունակելով դիվերսիոն խմբերի ներթափանցման գործողություններ: Մարտերի ընթացքում հակառակորդին հաջողվել է գրավել Ջեբրայիլը, Կուբաթլուն և առաջանալ դեպի Հադրութ[509]: Այս բոլոր ուղղություններով ծավալված մարտերում անձնական խիզախությամբ ու սխրագործություններով աչքի ընկան հայոց բանակի մարտիկները: Նրանց թվում էին հատուկ ստորաբաժանման ղեկավար գնդապետ Վահագն Ասատրյանը, որին հետմահու շնորհվեց «Հայաստանի ազգային հերոս» բարձրագույն կոչում, «Մարտական խաչ» առաջին աստիճանի ասպետ Վահագն Թումասյանը և ուրիշներ[510]: Հերոսի մահով ընկան Արմավիրի Ջանֆիդա գյուղից լեգենդար հերոս, «Սև հովազի» հրամանատար Ռուստամ Գասպարյանն ու նրա որդին: ՊԲ փոխգնդապետ Արայիկ Ավագիմյանը հրետանու հմուտ ու կազմակերպված գործողությունների համար թշնամուն պատճառեց մեծ կորուստներ՝ կասեցնելով նրա առաջխաղացումը, որի համար պարգևատրվեց «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի

[509] «Հայաստանի Հանրապետություն», 28 հոկտեմբերի, 2020:

[510] «Հայաստանի Հանրապետություն», 29 հոկտեմբերի, 2020:

շքանշանով: Նույն կարգի պետական պարգևներ ստացան նաև Գարիկ Հանամյանը, Հայկ Ամիրջանյանը, շարքային Էդուարդ Սարգսյանը, լեյտենանտ Տիգրան Կարապետյանը՝ յուրաքանչյուրը թշնամու երկու տանկ, իսկ ավագ լեյտենանտ Լևոն Ալթունյանը՝ 3 տանկ ոչնչացնելու համար: Մայոր Սամվել Հարությունյանը, կապիտան Իշխան Կարապետյանը, ավագ լեյտենանտներ Արմեն Սարգսյանն ու Մոնթե Գրիգորյանը, լեյտենանտ Նոյ Սողոմոնյանը պարգևատրվեցին «Մարտական ծառայություն» մեդալներով: Նույն պարգևների արժանացան ՊԲ-ի շուրջ 5 տասնյակ սպաներ, որոնք, դրսևորելով անհատական ու կոլեկտիվ պատրաստության գերազանց մակարդակ, անսահման նվիրվածություն հայրենիքին, տարբեր ուղղություններում դիմելով հակահարձակվողական գործողությունների ոչնչացրին թշնամու կենդանի ուժ ու մեծ քանակությամբ սպառազինություն[511]: Այդ հերոս տղաներից շատերը մարտիրոսվեցին, ընկան մարտադաշտում իբրև հերոսներ:

Չնայած հայ զինվորականների հերոսությանը՝ շարքայինից մինչև հրամանատար՝ թշնամին, նոր հարձակումներ ձեռնարկելով գրեթե բոլոր ուղղություններով, օգտագործելով սպառազինության և զինտեխնիկայի թվային առավելությունները, հասավ հաջողության:

Նոյեմբերի 9-ի լույս 10-ի գիշերը՝ ժամը 12:00-ին, ՀՀ, Ադրբեջանի և Ռուսաստանի ղեկավարները հանդես եկան համատեղ հայտարարությամբ[512], որով ԱՀ տարածքի մեծ մասը հանձնվում է Ադրբեջանի վերահսկողությանը՝ ԼՂԻՄ տարածքից դուրս բոլոր շրջանները, իսկ ԼՂԻՄ տարածքներից՝ Լաչինի միջանցքը, Շուշի

[511] «Հայաստանի Հանրապետություն», 29 հոկտեմբերի, 2020:

[512] Հայտարարությանը տեքստը, տե՛ս Հայաստանի վարչապետի, ՌԴ և Ադրբեջանի նախագահների հայտարարության պաշտոնական տեքստը, «ԱՐՄԵՆՊՐԵՍ» հայկական լրատվական գործակալություն (armenpress.am):

քաղաքը, Հադրութի շրջանի մեծ մասը, Ասկերանի ու Մարտակերտի շրջանի որոշ գյուղեր: ԼՂՀ սահմանների պահպանությունը դրվեց ռուս խաղաղապահների վրա: Ազատագրված 11 500 քկմ տարածքից թշնամուն զիջվեց շուրջ 9000 քկմ-ը: Այս խայտառակ համաձայնագրի պատճառով կորսվեց Արցախի տարածքի 70 %-ից ավելին: Համաձայնագրի տեքստը կցվում է: Պատերազմի պարտության պատճառները կուսումնասիրվեն, և պատմությունը կտա իր գնահատականը:

Հայաստանի Հանրապետության վարչապետի, Ադրբեջանի Հանրապետության նախագահի և Ռուսաստանի Դաշնության նախագահի հայտարարությունը

Մենք՝ Հայաստանի Հանրապետության վարչապետ Ն. Վ. Փաշինյանը, Ադրբեջանի Հանրապետության նախագահ Ի. Հ. Ալիևը և Ռուսաստանի Դաշնության նախագահ Վ. Վ. Պուտինը, հայտարարեցինք հետևյալը.

1. 2020 թ. նոյեմբերի 10-ին՝ մոսկովյան ժամանակով 00:00-ից, Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում հայտարարվում է ամբողջական հրադադարի ու բոլոր ռազմական գործողությունների ավարտի մասին: Ադրբեջանի Հանրապետությունն ու Հայաստանի Հանրապետությունը կանգ են առնում իրենց զբաղեցրած դիրքերում:

2. Աղդամի շրջանը վերադարձվում է Ադրբեջանի Հանրապետությանը մինչև 2020 թ. նոյեմբերի 20-ը:

3. Լեռնային Ղարաբաղում շփման գծի երկայնքով և Լաչինի միջանցքի երկայնքով տեղակայվում է Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորախումբ, այդ թվում՝ հրաձգային զենքով զինված 1960 զինծառայող, 90 զրահամեքենա, 380 միավոր ավտոմոբիլային և հատուկ տեխնիկա:

4. Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորակազմը տեղակայվում է Հայկական զինված ուժերի դուրսբերմանը զուգահեռ: Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորակազմը տեղակայվելու է ժամկետ 5 տարի ժամկետով, որը ինքնաբերաբար երկարաձգվելու է հերթական 5-ամյա ժամկետով, եթե միայն կողմերից որևէ մեկը տվյալ ժամկետի ավարտից 6 ամիս առաջ չհայտարարի սույն դրույթի կիրառումը դադարեցնելու մտադրության մասին:

5. Հակամարտության կողմերի կողմից համաձայնագրերի կատարման վերահսկողության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով և հրադադարի ռեժիմը վերահսկելու համար ստեղծվում է խաղաղապահ կենտրոն:

6. Հայաստանի Հանրապետությունն Ադրբեջանի Հանրապետությանը վերադարձնում է Քելբաջարի շրջանը մինչև 2020 թ. նոյեմբերի 15-ը, իսկ Լաչինի շրջանը՝ մինչև 2020 թ. դեկտեմբերի 1-ը: Լաչինի միջանցքը (5 կմ լայնությամբ), որը ապահովելու է Լեռնային Ղարաբաղի կապը Հայաստանի հետ, ընդ որում՝ շրջանցելով Շուշի քաղաքը, մնում է Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորակազմի վերահսկողության ներքո:

Կողմերի համաձայնությամբ, Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի միջև կապն ապահովելու համար առաջիկա երեք տարիների ընթացքում պիտի հաստատվի Լաչինի միջանցքի երկայնքով նոր երթուղու կառուցման նախագիծ, որից հետո ռուսական խաղաղապահ զորակազմը կվերատեղակայվի՝ այդ երթուղին պաշտպանելու համար:

Ադրբեջանի Հանրապետությունը երաշխավորում է Լաչինի միջանցքով քաղաքացիների, տրանսպորտային և բեռնատար միջոցների երթևեկության անվտանգությունը երկու ուղղություններով:

7. Ներքին տեղահանված անձինք ու փախստականները ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի վերահսկողության ներքո վերադառնում են Լեռնային Ղարաբաղի տարածք և հարակից շրջաններ:

8. Տեղի է ունենում ռազմագերիների, պատանդների և պահվող այլ անձանց ու մահացածների մարմինների փոխանակում:

9. Տարածաշրջանում բոլոր տնտեսական ու տրանսպորտային կապերն ապաշրջափակվում են: Հայաստանի Հանրապե-

տությունը երաշխավորում է տրանսպորտային կապերի անվտանգությունը Ադրբեջանի Հանրապետության արևմտյան շրջանների և Նախիջևանի Ինքնավար Հանրապետության միջև՝ երկու ուղղություններով քաղաքացիների, տրանսպորտային միջոցների ու ապրանքների անխոչընդոտ տեղաշարժը կազմակերպելու համար: Տրանսպորտային հաղորդակցության հսկողությունն իրականացնում են ՌԴ ԱԴԾ սահմանապահ ծառայության մարմինները:

Կողմերի համաձայնությամբ կապահովվի Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունն ու Ադրբեջանի արևմտյան շրջանները կապող տրանսպորտային նոր ուղիների շինարարությունը[513]:

[513] Տե՛ս նույն տեղում:

ՎԵՐՋԱԲԱՆ

Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումից հետո ՀՀ-Սփյուռք և Արցախի Հանրապետություն-Սփյուռք կապերն ու առնչությունները նոր որակ ստացան՝ թևակախելով նոր փուլ: Դա դրսևորվեց Սփյուռքի բոլոր կազմակերպությունների կողմից հայրենիքում ազատ գործելու լայն հնարավորության առկայությամբ: Չնայած հայրենիք-Սփյուռքի արդի հարաբերությունների առաջին փուլում նկատվեցին գաղափարաբանական հակասություններ ՀՀ-ում իշխող կուսակցության ու Սփյուռքի ազգային կազմակերպությունների միջև, սակայն դրանք հաղթահարվեցին հատկապես երկրորդ շրջափուլում՝ 1998 թվականից սկսած, երբ Սփյուռքի հետ հարաբերությունները կառուցվեցին փոխճանաչողության հիմքով, քաղաքական փոխինտեգրման ուղիով: Այն իր արտացոլումը գտավ 1999 թվականից սկսած պարբերաբար հրավիրվող Հայաստան-Սփյուռք համաժողովների՝ 2002, 2006, 2011, 2014 և 2017 թթ. հայտարարություններում: Բացի դրանից՝ 1998-2008 թթ. շրջափուլում մեծ ոգևորություն առաջացրեց հայրենիքում համահայկական խաղերի պարբերաբար կազմակերպումը (1999, 2001, 2003, 2007, 2011, 2015, 2017 թթ.): Վերջինը իր աշխարհագրական ընդգրկմամբ ու մասնակիցների թվով ամենամեծն էր: Հայրենիք-Սփյուռք և Արցախ-Սփյուռք սոցիալական, մշակութային կապերի ու առնչությունների զարգացմանը մեծապես նպաստեցին նաև մշակութային փառատոնների պարբերաբար անցկացումը, ուսուցիչների պատրաստման, վերապատրաստման աշխատանքները, դասագրքերի, ուսումնական ձեռնարկների տպագրումն ու առաքումը Սփյուռք և այլն: Այս շրջափուլում ավելի ընդլայնեցին իրենց գործունեության շրջանակները առաջին շրջափուլում գործունեության ծավալած բարեգործական կազմակերպությունները, կառույցները, միությունները և այլն: ՀՀ-

ին և Արցախին բազմաբնույթ օգնություն և աջակցություն կազմակերպեցին դեռևս նախորդ շրջափուլում՝ 1992 թ. ստեղծված «Հայաստան» համահայկական հիմնադրամն ու համահայկական, համասփյուռքյան այլ ներդրումներ ու բարեգործական կազմակերպություններ ու կառույցներ, այդ թվում՝ Ք. Քրքորյանի կողմից հիմնված «Լինսի» հիմնադրամը, «Հայկական բարեգործական ընդհանուր միությունը» (ՀԲԸՄ), «Միացյալ հայկական ֆոնդ» բարեգործական կազմակերպությունը, «Հովարդ Կարագյուզյան» բարեգործական հասարակական կազմակերպությունը, ՀՕՄ-ը, ՀՕՖ-ը և այլն: Եթե ՀՀ անկախության առաջին շրջանում Արցախ-Սփյուռք տնտեսական հարաբերություններում ուշադրությունը սևեռված էր Արցախյան պատերազմի ու շրջափակման պայմաններում բնակչության նվազագույն կարիքների բավարարման վրա, ապա 1990-ական թթ. երկրորդ կեսից և հատկապես XXI դարասկզբից ուշադրություն դարձվեց Արցախի տնտեսության վերականգնման ու ձեռնարկատիրության զարգացմանը: Այդ տարիներին ԱՀ տնտեսության մեջ ներդրումներ կատարած օտարերկրյա ներդրողների շուրջ 69 %-ը սփյուռքահայեր էին:

Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության քաղաքականությունը Սփյուռքի նկատմամբ ավելի խորացավ և նպատակային դարձավ 2008 թվականից սկսած, երբ ստեղծվեց ՀՀ սփյուռքի նախարարությունը, որով ՀՀ-Սփյուռք և Արցախ-Սփյուռք հարաբերությունները դրվեցին ավելի բարձր մակարդակի վրա: ՀՀ սփյուռքի նախարարության առջև ծառացան հիմնական խնդիրներ՝ նպաստել Սփյուռքում համազգային ներուժի համախմբմանը համազգային խնդիրների լուծման գործում և մշակել ու ներդնել հայրենադարձությունը խթանող կառուցակարգը:

ՀՀ սփյուռքի նախարարությունը մշակեց Հայկական սփյուռքի ու Արցախի նկատմամբ Հայաստանի պետական քաղաքականությունը, «Հայաստան-Սփյուռք գործունեության զարգացման հայեցակարգը» և ռազմավարության ծրագիր, որոնք հաջողությամբ

իրագործվել ու իրականացվում են Սփյուռքի համապատասխան կառույցների ու կազմակերպությունների աջակցությամբ, նրանց մասնակցության ու համախմբան արդյունքում: ՀՀ սփյուռքի նախարարության կողմից մշակված ու կազմակերպված բազմաբնույթ միջոցառումներն ու համագործակցությունը սփյուռքյան կազմակերպությունների ու կառույցների հետ էլ ավելի են սերտացան ու ամրապնդեցին հայրենիք-Սփյուռք փոխհարաբերությունները:

Դարասկզբի առաջին տասնամյակներում Սփյուռքի մասնակցությունը Արցախի Հանրապետության սոցիալ-տնտեսական կյանքին ՀՀ սփյուռքի նախարարության ակտիվ նախաձեռնությամբ դարձել էր առավել կազմակերպված ու նպատակային: Անբացատրելի է Սփյուռքի դերակատարությունը հայրենիքում, հատկապես Արցախում այնպիսի ոլորտների զարգացման գործում, ինչպիսիք են դրամատնային համակարգը, զբոսաշրջությունը, գյուղատնտեսությունը, տեղեկատվական տեխնոլոգիաներն ու ծառայությունները: Հայաստանի ու Արցախի համար տնտեսական գերակայություն է արտահանմանն ուղղված արտադրությունների զարգացումն ու արտաքին շուկայում հայկական ապրանքների պատշաճ ներկայացումը:

Մենագրության հեղինակները հավաքած գրավոր սկզբնաղբյուրների՝ Հայաստանի ազգային արխիվի, Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության պետական արխիվի նյութերի, ՀՀ և ԱՀ պարբերական մամուլի՝ «Հայաստանի Հանրապետություն», «Ազգ», «Ազատ Արցախ», «Մերան», «Նոր Շահումյան», «Լուսարար» և այլն, «Հայկական Սփյուռք» տարեգրքերի տարբեր համարների, «Համահայկական հիմնադրամի», «Հայկական բարեգործական ընդհանուր միության» (ՀԲԸՄ), «Թուֆենկյան» հիմնադրամի և համասփյուռքյան այլ հիմնադրամների, բարեգործական ու հասա-

րական կազմակերպությունների ընթացիկ արխիվների պաշտոնական գրությունների, փաստաթղթերի, վիճակագրական նյութերի և կառավարական ու պետական այլ հաստատությունների հրապարակած փաստաթղթերի, ինչպես նաև տեսական գրականության օգտագործմամբ գիտական վերլուծության են ենթարկել ԼՂԻՄ նախկին տարածքում և Արցախի Հանրապետության ազատագրված բոլոր յոթ շրջաններում իրականացվող սոցիալ-տնտեսական մեծածավալ ծրագրերը:

Կոլեկտիվ մենագրության մեջ փաստական հարուստ նյութերի վերլուծությամբ ցույց են տրված սփյուռքահայ բարերարների ու բարեգործական կազմակերպությունների, համահայկական հիմնադրամների լայնածավալ գործունեությունն ու ներդրումները XX դարավերջին և XXI դարասկզբի երկու տասնամյակներում Արցախի սոցիալ-տնտեսական ոլորտի զարգացմանն ուղղված բազմաթիվ ծրագրերի իրականացման գործում: Հատկապես ուշագրավ են կրթության, առողջապահության, մշակույթի, բնակարանաշինության, ճանապարհաշինության, դպրոցաշինության, սոցիալական աջակցության և տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման ուղղությամբ կատարված ներդրումներն ու համակողմանի աշխատանքները, որոնց շնորհիվ ազատագրված ու անկախ հռչակված Արցախի Հանրապետությունը բռնեց իր կայուն զարգացման ուղին: Սակայն այն ընդհատվեց 2020 թ. 44-օրյա թուրք-ադրբեջանական ագրեսիայի ու սանձազերծած պատերազմի արդյունքում, որը ոչ միայն մեր բնակչությունից խլեց զգալի մարդկային կյանքեր, այլև բռնազավթվեց Արցախի տարածքի շուրջ 75 %-ը: Ըստ էության, 1991-1994 թթ. ազատագրված տարածքներում (7 շրջան) և նաև Շուշիում ու Հադրութում սփյուռքահայ բարերարների ու բարեգործական կազմակերպությունների ու ՀՀ-ի ու Արցախի կառավարության կատարած ներդրումներն ու մեծածավալ աշխատանքները ի չիք դարձան, քանզի մեր

հարևան թշնամի պետությունը Ադրբեջանը այսօր ոչ միայն օգտվում է այդ աշխատանքների պտուղներից՝ վայելելով դրանք, այլև հաղթողի հոգեբանությամբ խախտում է ՀՀ պետական սահմանները՝ սպառնալով ՀՀ տարածքային ամբողջականությանն ու անվտանգությանը:

Փաստորեն՝ ՀՀ սփյուռքի նախարարության անմիջական ներկայությամբ և մշակած ծրագրերի իրականացման, սփյուռքյան կառույցների, կազմակերպությունների և ակտիվ անհատների համագործակցությամբ ապահովվեց ՀՀ-Սփյուռք և Արցախ-Սփյուռք արդյունավետ գործունեությունը՝ նպաստելով հայ ժողովրդի հոգևոր միասնության, հայ կրթական, գիտական, մշակութային, առողջապահական, տնտեսական, երիտասարդական, մարզական կյանքի զարգացմանը, հայոց աշխարհի բարգավաճմանը նպաստող պայմանների ստեղծմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Տպագիր սկզբնաղբյուրներ և ուսումնասիրություններ

Ա. Արխիվային սկզբնաղբյուրներ

Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆոնդեր

1. NN 113, 326, 362, 823, 875, 1172, 1173

ՀՀ արտ. գործ. նախարարության ընթացիկ արխիվ (1991-2017 թթ., արտաքին գործերի նախարարության տարեկան հաշվետվություններ՝ Սփյուռքի մասին):

Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1173, ց.3, գ.379, թ.71 և այլն:

ԼՂՀ պետական արխիվ, ֆ.180, ց.1, կ-10, պ.մ.45, թ.8, տես նաև ֆ.180, ց.1, կ-11:

ԼՂՀ պետական արխիվ, ֆ.180, ց.1, կ-11, պ.մ.50, թ.25, 65-66:

ԼՂՀ պետական արխիվ, ֆ.180, ց.1, կ-11, պ.մ.50, թ. 55-56:

ԼՂՀ պետական արխիվ, ֆ.180, ց.1, կ-11, պ.մ.50, թ.82, 11-12, 75, 86:

ԼՂՀ պետական արխիվ, ֆ.180, ց.1, կ-11, պ.մ.50, թ.78, 83:

ԼՂՀ պետական արխիվ, ֆ.180, ց.1, կ-11, պ.մ.50, թ.74:

ԼՂՀ պետական արխիվ, ֆ.180, ց.1, կ-11, պ.մ.50, թ.14:

ԼՂՀ պետական արխիվ, ֆ.180, ց.1, կ.9, պ.մ.452, թ.222:

ԱՀ պետական արխիվ, ֆ.180, ց.1, կ-11, պ.մ.50, թ.37, 71:

ԱՀ պետական արխիվ, ֆ.180, ց.1, կ-11, պ.մ.50, թ.12, 51:

Fund For Armenian Relifef (FAR) 2007 Annual Report, p.13.

Բ. Տպագիր սկզբնաղբյուրներ

1. Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության ծրագրերը ԼՂՀ-ում, Ստեփանակերտ, 2002:

2. Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն, Հայաստան, տեղեկագիր, 2015, Երևան, 2016:

3. Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության ծրագրերը Արցախում, Ստեփանակերտ, 2017:

4. Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն, Հայաստան, Տեղեկագիր, 2016, Երևան, 2017:

5. Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն, Հայաստան, տեղեկագիր, 2017, Երևան, 2018:
6. Համազգային հայ կրթական և մշակութային միութիւն, Համազգային 75, 1928-2003, Պէյրութ, 2003:
7. Հայ կրթական հիմնարկություն, Գլենդել, 2005:
8. Armenian Educational Foundation, Glendale, 2005.
9. Armenian Educational Foundation. Scholarship Program, March 2016, pp. 1-2, ՀԿՀ Գլենդելի գրասենյակ:
10. Armenian General Benevolent Union, August, 2019.
11. AGBU NEWS, Ostober, 2002.
12. AGBU NEWS, November, 2010.
13. «Յուշարար Միութիւն», 1 ապրիլի, 2009:
14. ՀԲԸՄ ծրագրերը Հայաստանում 2007-208, Երևան, 2009:
15. ՀԲԸՄ Հայաստանի լրատու, 2013, թիվ 26:
16. ՀԲԸՄ ծրագրերը Հայաստանում. 2009-2010, Երևան, 2011, Ստեփանակերտի «Թուֆենկյան» հիմնադրամի գրասենյակ:
17. ՀԲԸՄ ծրագրերը Հայաստանում. 2009-2010:
18. Հայ օգնության ֆոնդ տարեկան տեղեկագիր, 2003-2004, էջ 4:
19. Հայ օգնության ֆոնդ տարեկան տեղեկագիր, 2006:
20. «Հայաստան» համահայկական հիմնադրամ, 1995, 1996 ֆինանսական հաշվետություն. 1992-1996 ծրագրային գործունեություն, Երևան, 1996:
21. «Հայաստան» համահայկական հիմնադրամ, ֆինանսական և ծրագրային հաշվետվություն. 1996-1997, Երևան, 1997:
22. «Հայաստան» համահայկական հիմնադրամ, ֆինանսական և ծրագրային հաշվետություն. 1997-1998, Երևան, 1999:
23. «Հայաստան» համահայկական հիմնադրամ, ֆինանսական և ծրագրային հաշվետվություն. 2000, Երևան, 2001:
24. «Հայաստան» համահայկական հիմնադրամ, ֆինանսական և ծրագրային հաշվետվություն. 2001, Երևան, 2002:
25. «Հայաստան» համահայկական հիմնադրամ. 2011, տարեկան հաշվետվություն Երևան, 2012:
26. «Հայաստան» համահայկական հիմնադրամ. 2013, տարեկան հաշվետվություն, Երևան, 2014:
27. «Հայաստան» համահայկական հիմնադրամ. 2014, Երևան, 2015:
28. «Հայաստան» համահայկական հիմնադրամ. 2015, Երևան, 2016:

29. «Հայաստան» համահայկական հիմնադրամ. 2016, Երևան, 2017:

30. Հայաստանը և Սփյուռքը XXI դարի շեմին, գիտաժողովի նյութեր (Երևան, 29-30 մայիս, 1998), Երևան, 1998:

31. Հայաստանի Հանրապետություն: Կուսակցություններ, Երևան, 2002:

32. «Հայաստանյայց Ավետարանական եկեղեցի», 1998, հմ 43

33. «Հայաստանյայց Ավետարանական եկեղեցի», 2005, հմ 4:

34. «Համահայկական Սփյուռք» տարեգիրք, ՀՀ սփյուռքի նախարարություն, Երևան, 2014:

35. Տե՛ս «Հեռուստամարաթոն 2005», http://himnadram.org/index.php?id=22326&lang=2:

36. Տե՛ս «Հեռուստամարաթոն 2010-Ջուրը կյանք է», http://himnadram.org/index.php?id=23543lang=2:

37. Տե՛ս «Հեռուստամարաթոն 2011», http://himnadram.org/index.php?id=23801lang=2:

38. Տե՛ս «Հեռուստամարաթոն 2012», http://himnadram.org/index.php?id=23990lang=2:

39. Տե՛ս «Հեռուստամարաթոն 2013», http://himnadram.org/index.php?id=245lang=2:

40. Տե՛ս «Հեռուստամարաթոն 2014», http://himnadram.org/index.php?id=24350lang=2:

41. Տե՛ս «Հեռուստամարաթոն 2015», http://himnadram.org/index.php?id=24169lang=2:

42. Տե՛ս «Մեր մասին», http://himnadram.org/index.php?id=28id=2:

43. Ջավախքը XXI դարի մարտահրավերներին ընդառաջ (խորհրդաժողովի նյութերի ժողովածու), Երևան, ՀՅԴ, «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միություն, «Ուսանողական մատենաշար», թիվ 1, 2006:

44. Հակոբյան Հ., XXI դարի մարտահրավերները գլոբալացվող աշխարհում: Հայ երիտասարդությունը և նոր հարյուրամյակի մարտահրավերները, Երևան, 2008:

45. «Հայ Սփյուռք» հանրագիտարան, Երևան, 2003:

46. Հայագիտական միջազգային երկրորդ համաժողով, «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները», լիազումար նիստի զեկուցումներ, Երևան, 2013:

47. Հայագիտական միջազգային երկրորդ համաժողով, «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները», Զեկուցումների դրույթներ, Երևան, 2013:

48. «Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգ», Երևան, 2010:

49. Հայաստան-Սփյուռք կեսդարյա պատմություն, փաստաթղթերի ժողովածու, ՀՀ ազգային արխիվ, Երևան, 2008:

50. Հայկական ինքնության խնդիրները XXI դարում, գիտաժողովի զեկուցումներ, Երևան, 2013:

51. Հայկական գրադարանների միջազգային երրորդ համաժողովի նյութեր, Երևան, 2014:

52. «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ» իրավաբանների համահայկական երկրորդ համաժողով: Համաժողովի նյութերի ժողովածու (05-06.07.2013), ՀՀ սփյուռքի նախարարություն, Երևան, 2014:

53. ՀՀ սփյուռքի նախարարության գործունեության հինգ տարիները, ՀՀ սփյուռքի նախարարություն, Երևան, 2013:

54. Սփյուռքի հեռանկարները գլոբալացվող աշխարհում, միջազգային համաժողովի զեկուցումների ժողովածու, ՀՀ սփյուռքի նախարարություն, Երևան, 2012:

55. Սփյուռքի կազմակերպությունների ղեկավարների և ներկայացուցիչների համահայկական համաժողով, համաժողովի նյութեր (խմբագիրներ՝ Մխիթարյան Գ., Մկրտչյան Ն.), Երևան, 2011:

56. Տեղեկատվական փաթեթ՝ Հայաստան-Սփյուռք չորրորդ համաժողովում (2011 թ. սեպտեմբերի 19-20, Երևան) արված առաջարկությունների կատարման վերաբերյալ, 19-20 սեպտեմբերի, Երևան, 2014:

57. Տեղեկատվական փաթեթ՝ Հայաստան-Սփյուռք հինգերորդ համաժողովում (2014 թ. սեպտեմբերի 18-20, Երևան) արված առաջարկությունների կատարման վերաբերյալ, 18-20 սեպտեմբերի, Երևան, 2017:

58. «XXI դարի մարտահրավերները և Հայաստանի անվտանգության հիմնախնդիրները» քաղաքագետների և միջազգայնագետների համահայկական համաժողով, համաժողովի նյութեր (19-20.11, 2012), ՀՀ սփյուռքի նախարարություն, Երևան, 2014:

59. «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», N 24(90), 3 սեպտեմբերի, 1999, Երևան, 1999:

60. «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», N 25(91), 30 սեպտեմբերի, 1999, Երևան, 1999:

61. «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», N 23(121), 10 հոկտեմբերի, 2000, Երևան, 2000:

62. «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», N 16(148), 12 հունիսի, 2001, Երևան, 2001:

63. «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», N 33(208), 14 օգոստոսի, 2002, Երևան, 2002:

64. «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», N 40(215), 18 սեպտեմբերի, 2002, Երևան, 2002:

65. «Հայկական Սփյուռք» տարեգիրք. 2009 (հեղ. խմբի ղեկավար՝ Հ. Հակոբյան և ուրիշներ), Երևան, 2009:

66. «Հայկական Սփյուռք» տարեգիրք. 2010 (հեղ. խմբի ղեկավար՝ Հ. Հակոբյան և ուրիշներ), ՀՀ սփյուռքի նախարարություն, Երևան, 2011:

67. «Հայկական Սփյուռք» տարեգիրք. 2011 (հեղ. խմբի ղեկավար՝ Հ. Հակոբյան և ուրիշներ), ՀՀ սփյուռքի նախարարություն, Երևան, 2012:

68. «Հայկական Սփյուռք» տարեգիրք. 2012 (հեղ. խմբի ղեկավար՝ Հ. Հակոբյան և ուրիշներ), ՀՀ սփյուռքի նախարարություն, Երևան, 2013:

69. «Հայկական Սփյուռք» տարեգիրք. 2013 (հեղ. խմբի ղեկավար՝ Հ. Հակոբյան և ուրիշներ), ՀՀ սփյուռքի նախարարություն, Երևան, 2014:

70. «Հայկական Սփյուռք» տարեգիրք. 2014 (հեղ. խմբի ղեկավար՝ Հ. Հակոբյան և ուրիշներ), ՀՀ սփյուռքի նախարարություն, Երևան, 2015:

71. «Հայկական Սփյուռք» տարեգիրք. 2015 (հեղ. խմբի ղեկավար՝ Հ. Հակոբյան և ուրիշներ), ՀՀ սփյուռքի նախարարություն, Երևան, 2016:

72. «Հայկական Սփյուռք» տարեգիրք. 2016 (հեղ. խմբի ղեկավար՝ Հ. Հակոբյան և ուրիշներ), ՀՀ սփյուռքի նախարարություն, Երևան, 2017:

Գ. Պարբերականներ

1. «Ազգ», 1991-2017:
2. «Ազգ», 15 օգոստոսի, 1998:
3. «Ազգ», 8 մայիսի, 2001:
4. «Հայաստանի Հանրապետություն», 1991-2017:
5. «Հայաստանի Հանրապետություն», 5 մարտի, 1994:
6. «Հայաստանի Հանրապետություն», 28 մարտի, 1996:
7. «Հայաստանի Հանրապետություն», 28 սեպտեմբերի, 1999:

8. «Հայաստանի Հանրապետություն», 12 նոյեմբերի, 1999:
9. «Հայաստանի Հանրապետություն», 28 հունվարի, 2000:
10. «Հայաստանի Հանրապետություն», 17 նոյեմբերի, 2001:
11. «Հայաստանի Հանրապետություն», 5 հոկտեմբերի, 2004:
12. «Հայաստանի Հանրապետություն», 5 սեպտեմբերի, 2007:
13. «Առավոտ», 1991-2017:
14. «Հայոց աշխարհ», 1991-2001:
15. «Հայրենիքի ձայն», 1991-1993:
16. «Ժամանակ», 1991-2000:
17. «Республика Армения», Երևան (օրաթերթ), 1991-2003:
18. «Տեղեկատու» պաշտոնաթերթ Գահիրէի հայկական բարեգործական ընդհանուր միութեան, 2002, յուլիս, թիւ 24:
19. «Մարտիկ» Ստեփանակերտ, 2000, 20-24 մարտի:
20. «Ազատ Արցախ», Ստեփանակերտ, 29 ապրիլի, 2003:
21. «Ազատ Արցախ», 18 նոյեմբեր, 2004:
22. «Ազատ Արցախ», 5 հուլիսի, 2005:
23. «Ազատ Արցախ», 12 սեպտեմբերի, 2006:
24. «Ազատ Արցախ», 7 հոկտեմբեր, 2007:
25. «Ազատ Արցախ», 21 մայիսի, 2009:
26. «Ազատ Արցախ», 14 հոկտեմբեր, 2010:
27. «Ազատ Արցախ», 22 ապրիլի, 2011:
28. «Ազատ Արցախ», 10 սեպտեմբերի, 2011:
29. «Ազատ Արցախ», 7 հուլիսի, 2012:
30. «Ազատ Արցախ», 30 հոկտեմբեր, 2012:
31. «Ազատ Արցախ», 13 փետրվարի, 2013:
32. «Ազատ Արցախ», 21 մարտի, 2013:
33. «Ազատ Արցախ», 4 մայիսի, 2013:
34. «Ազատ Արցախ», 3 հուլիսի, 2013:
35. «Ազատ Արցախ», 20 հուլիսի, 2013:
36. «Ազատ Արցախ», 28 օգոստոսի, 2014:
37. «Ազատ Արցախ», 17, 20 սեպտեմբերի, 2014:
38. «Ազատ Արցախ», 14, 16, 25 հոկտեմբերի, 2014:
39. «Ազատ Արցախ», 27 նոյեմբերի, 2014:
40. «Ազատ Արցախ», 11 հունիսի, 2015:
41. «Ազատ Արցախ», 20 օգոստոսի, 2015:

42. «Ազատ Արցախ», 11 հունիսի, 2016:
43. «Ազատ Արցախ», 7 սեպտեմբերի, 2017:
44. «Ազատ Արցախ», 4 հոկտեմբերի, 2018:
45. «Ազատ Արցախ», 6 հոկտեմբերի, 2018:
46. «Ազատ Արցախ», Ստեփանակերտ, 23 հոկտեմբերի, 2019:
47. «Ազատ Արցախ», Ստեփանակերտ, 23 նոյեմբերի, 2019:
48. «Ազատ Արցախ», Ստեփանակերտ, 15 հունվար, 2020:
49. «Ազատ Արցախ», Ստեփանակերտ, 6 ապրիլի, 2020:
50. «Ազատ Արցախ», Ստեփանակերտ, 28 մայիսի, 2020:
51. «Ազատ Արցախ», Ստեփանակերտ, 2 հուլիսի, 2020:
52. «Ազատ Արցախ», Ստեփանակերտ, 11 հուլիսի, 2020:
53. «Մերան», թիվ 1-2, 2018:
54. «Մերան», թիվ 3-4, 2018:
55. «Մերան», թիվ 6, 2018:
56. «Մերան», թիվ 7-8, 2018:
57. «Մերան», թիվ 19, 2018:
58. «Մերան», թիվ 1-2, 2019:
59. «Մերան», թիվ 3-4, 2019:
60. «Մերան», թիվ 9-10, 2019:
61. «Մերան», թիվ 12, 2019:
62. «Մերան», թիվ 18, 2019:
63. «Մերան», թիվ 20, 2020:
64. «Մերան», թիվ 21-22, 2020:
65. «Մերան», թիվ 23-24, 2020:
66. «Մերան», թիվ 23-24, 2020:
67. «Մերան» ԼՂՀ Քաշաթաղի շրջանային թերթ, թիվ 20(141), հոկտեմբեր, 2015:
68. «Նոր Շահումյան» երկշաբաթաթերթ, 1-17 սեպտեմբերի, 2019:
69. «Նոր Շահումյան» երկշաբաթաթերթ, 1-17 հուլիսի, 2020:
70. «Ապառաժ», 9-16 հունվարի, 2008:
71. «Խօսնակ» պաշտոնաթերթ ՀԲԸՄ և Լիբանանի շրջանակի, 61-րդ տարի, թիւ 3:

Դ. Ուսումնասիրություններ

1. Աբրահամյան Հ., Ժողովրդավարությունը և քաղաքական կուսակցությունները, Երևան, 2009:

2. Ալեքսանյան, Հ. (2016). Հայկական համայնքները խորհրդային հանրա- պետություններում 1941-1991 թթ., *Երևան.*

3. Արշակյան Գ., Թուրքիայի Հանրապետության արտաքին քաղաքականությունը, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2015:

4. Սիմավորյան, Ա., Հովյան, Վ., Ղանալանյան, Տ. (2014). Արտերկրի հայագիտական կենտրոնները. ներուժի գնահատում. *Երևան,«Նորավանք» ԳԿՀ, 182.*

5. Արտերկրում գտնվող հայկական պատմամշակութային ժառանգության իրավական կարգավիճակը (Սարգսյան Ա., Միրզոյան Լ.), հետազոտական աշխատանք, Երևան, 2010:

6. Արտերկրում գտնվող հայկական պատմամշակութային ժառանգության իրավական կարգավիճակը (Վրաստան, Մոլդովա, Ռուսաստանի Դաշնություն, Ուկրաինա), (Անափիոսյան Ա., Միրզոյան Լ.), հետազոտական աշխատանք, Երևան, 2011:

7. Արտերկրում գտնվող հայկական պատմամշակութային ժառանգության իրավիճակը (Թուրքիա, Իսրայել, Հնդկաստան), (Միրզոյան Լ., Կարապետյան Լ.), հետազոտական աշխատանք, Երևան, 2012:

8. Ժամկոչյան, Ա. (2011). Արևելյան Եվրոպայի հայ համայնքների խնդիրները. *Երևան,«Նորավանք» ԳԿՀ, 184.*

9. Ամատունի Մ., Ռոբերտ Քոչարյանը Հայկական հարցի ճակատագրում, գիրք 1, Երևան, 2005, գիրք 2, Երևան, 2007, գիրք 3, Երևան, 2009, գիրք 4, Երևան, 2010:

10. Անտոնյան Ք., Հայրապետյան Գ., Սփյուռքի ներդրումային ներուժի բարձրացման ուղիները ՀՀ տնտեսության մեջ, Երևան, 2016:

11. Ավետիսյան, Ս., Գրիգորյան, Ա., Բաբաջանյան, Ս., Կիրակոսյան, Ա. (2015). Սփյուռքի ներդրումները ՀՀ տնտեսության մեջ. զարգացման հեռանկարները. Երևան.

12. Բալայան Վ., Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության, Ստեփանակերտ, 2012:

13. Բայբուրդյան Վ., Իրանի հայ համայնքը. Արդի հիմնախնդիրները, Երևան, 2013:

14. Բահարյան Վ., Հայաստան-Սփյուռք համաժողովը և հայաստանյան օրագիր, Երևան, 2001:

15. Բարխուդարյան Վ., Ալեքսանյան Հ., Ռուսաստանի հայ գաղթօջախների պատմություն (Հյուսիսային Կովկաս, Նոր Նախիջևան, Աստրախան, Սանկտ Պետերբուրգ, Մոսկվա), Երևան, 2015:

16. Բարսեղյան Լ., Հայոց ցեղասպանության հրապարակայնորեն դատապարտման և ճանաչման ժամանակագրություն (1915-2000 թթ.), Երևան, 2001:

17. Բարսեղյան Լ., Տարեգրություն Հայոց ցեղասպանության պաշտոնական դատապարտման և ճանաչման (1915-2003 թթ.), Երևան, 2004:

18. Դալլաքյան Կ., Հայ Սփյուռքի պատմություն (համառոտ ակնարկ), Երևան, 2004:

19. Իսկանդարյան Գ., Հայաստան-Իրան հարաբերությունները Հայաստանի անկախության ձեռքբերումից հետո (1991-2014 թթ.), Երևան, 2016:

20. Իրանահայոց հանրագիտարան: Անվանի իրանահայերի կենսագրականները (կազմ.՝ Ժ. Լազարյան, պարսկերենից թարգմ.՝ Ժ. Աբրահամյանի), Երևան, 2012:

21. Եղիազարյան Ա., Անանյան Մ., Հովհաննիսյան Ա., Հովհաննիսյան Է., Հովսեփյան Մ., Վարդանյան Հ., Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները 1918 թվականից մինչև մեր օրերը, Երևան, 2017:

22. Խանլարյան Կ., Հայ բնակչության էթնոկրոնական վերակերպումները Թուրքիայի Հանրապետությունում (1923-2005 թթ.), Անթիլիաս, 2009:

23. Խոջաբեկյան Վ., Հայաստանի բնակրության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում XXI դարի շեմին, Երևան, 2001:

24. Կարապետյան Ս., Կովկասյան թանգարանի հայկական հավաքածուն, Երևան, 2004:

25. Կիրակոսյան Ա., Ակնարկներ Հայկական հարցի և եղեռնի միջազգային ճանաչման պատմության, Երևան, 2006:

26. Կիրակոսյան Ջոնի (Ջոն), Ընտրանի, Երևան, 2014:

27. Համազասպյան Վ., Հայկական բարեգործական ընդհանուր միությունը և Հայաստանը, Երևան, 2001:

28. Հայ գաղթաշխարհի պատմություն (միջնադարից մինչև 1920-ական թթ.), հ. 1, Սլավոնական աշխարհի և Հյուսիսային կովկասի հայկական գաղութները (խմբ.՝ Վ. Միքայելյան), Երևան, 2003:

29. Հայ գաղթաշխարհի պատմություն (միջնադարից մինչև 1920 թ.), հ. 2, Ասիայի և Աֆրիկայի հայկական գաղութները, 2003:

30. Հայ գաղթաշխարհի պատմություն (միջնադարից մինչև 1920-ական թթ.), Եվրոպայի և Ամերիկայի հայկական գաղութները, հ. 3, Երևան, 2013:

31. Նահապետյան, Հ., Վերանյան, Կ., Սիմավորյան, Ա., Ղանալանյան, Տ. (2010). Հայ համայնքն ԱՄՆ-ում.

32. Հայոց ցեղասպանություն-100. Ճանաչումից՝ հատուցում, միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, 2016:

33. «Հայոց ցեղասպանության ժխտողականությունը նոր օսմանականության գաղափարախոսության համատեքստում», գիտաժողովի նյութեր, 18.12.2015, Երևան, 2016:

34. Հայոց ցեղասպանությունը միջազգային իրավական փաստաթղթերում (կազմող՝ Վ. Քոչարյան), Երևան, 2014:

35. Հայրենադարձների փորձն ու ինտեգրումը Հայաստանում. Խոչընդոտներ և հնարավորություններ (հեղինակային կազմ՝ Վ. Մարաշյան, Ն. Գալստյան, Ի. Գրիգորյան), Երևան, 2015:

36. Հայրենադարձության խթանման և ինտեգրման քաղաքականություն այլ երկրների փորձերի հիման վրա, համեմատական վերլուծություն (խմբագիրներ՝ Վ. Մարաշյան, Հ. Միքայելյան, Բ. Շահնազարյան), Երևան, 2015:

37. Հովյան, Վ. (2015). Սփյուռքի ներդրումը Հայաստանի գիտական համա- կարգի զարգացման գործում Երևան:

38. Հարիւամեայ յուշարձեան Հայ օգնութեան միութեան 1910-2010, հրատ. ՀՕՄ կենդրոնական վարչության, 2010:

39. Հայ օգնության ֆոնդ. տարեկան տեղեկագիրք, 2003-2004:

40. Հայ օգնության ֆոնդ. տարեկան տեղեկագիր, 2006:

41. ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով), Երևան, 2016:

42. Հակոբյան Հ., Հայկական Սփյուռքը հարափոփոխ աշխարհում, Երևան, 2017:

43. Ժամակոչյան, Ա., Մանուսյան, Ա., Գալստյան, Դ., Հակոբյան, Լ. (2014). Սփյուռքի դիրքորոշումները ՀՀ աշխարհաքաղաքական կողմնորոշումների շուրջ. *Երևան, «Նորավանք» ԳԿՀ, 152.*

44. Ղանալանյան, Տ. (2016). Սփյուռքի ներքին տեղաշարժերը 1950-1980-ական թվականներին. *Երևան.*

45. Ղարախանյան Վ., «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության հայանպաստ գործունեությունը 1956-2006 թթ. (խմբագիր՝ Զավեն Եկանյան), Երևան, 2008:

46. Մադոյան Ա., Հայ օգնության ֆոնդը 10 տարեկան է, Երևան, 1999:

47. Մարության Ա., Հայոց ցեղասպանության հիմնահարցը համաշխարհային քաղաքականության ազդեցիկ դերակատարների՝ Թուրքիայի հետ հարաբերությունների համատեքստում, Երևան, 2015:

48. Մարության Ա., Հայոց ցեղասպանության նյութական հետևանքների հաղթահարման հիմնահարցը, Երևան, 2015:

49. Մելիքսեթյան Հ., Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980 թթ.), Երևան, 1985:

50. Մելքոնյան Ռ., Աբրահամյան Մ., Օսմանյան կայսրության և Թուրքիայի Հանրապետության բռնի իսլամացման քաղաքականությունը հայերի նկատմամբ որպես ցեղասպանական արարք, Երևան, 2015:

51. Մելքոնյան Ռ., Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի պատմության (1920-ականներից մինչև մեր օրերը), Երևան, 2010:

52. Մելքոնյան Է., Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմություն, Երևան, 2005:

53. Մինասյան Է., Վարդանյան Ա., Հայրենիք-Սփյուռք առնչությունները ՀՀ անկախության տարիներին (1991-2009 թթ.), հոդվածների ժողովածու, Ստեփանակերտ, 2010:

54. Մինասյան Է., Հայաստանի երրորդ հանրապետության պատմություն, Երևան, 2013:

55. Մինասյան Է., Հայոց նորագույն պետականության քառորդ դարը (1991-2017), Երևան, ԵՊՀ հրատ., 2018:

56. Մինասյան Է., Հայրենիք-Սփյուռք առնչությունները XXI դարասկզբին (2001-2017 թթ.), Երևան, ԵՊՀ հրատ., 2018:

57. Պետրոսյան Ք., Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները 1988-2001 թթ., Երևան, 2011:

58. Պզտիկյան Է., Մխիթար վրդ. Սեբաստացիի և Մխիթարեաններու նպաստը հայ մշակույթին, Երևան, 2003:

59. Պողոսյան Է., Անկախ պետականության հաստատման գործընթացը Հայաստանում (1991-2001 թթ.), Երևան, 2013:

60. Սարգսյան Ն., Սփյուռքահայերի 1946-1948 թթ. մեծ հայրենադարձը, Երևան, 2014:

61. Ստեփանյան Ա., XX դարի հայրենադարձությունը հայոց ինքնության համակարգում, Երևան, 2010:

62. Սփյուռքագիտություն: Տարեգիրք, Երևան, ԵՊՀ հրատ., 2013:

63. Սփյուռքի դիրքորոշումները ՀՀ աշխարհաքաղաքական կողմնորոշումների շուրջ (գիտ. խմբագիր՝ Գ. Հարությունյան), Երևան, 2014:

64. Սփյուռքագիտություն (տեսության և պատմության հարցեր), Երևան, 2012:

65. Սփյուռքահայ կազմակերպություններ, Երևան, 2002:

66. Սիմավորյան, Ա. (2013). Սփյուռքի վերլուծական հանրույթը որպես պետության ներուժ. միջազգային փորձը,«. *ԳԼՈԲՈՒՍ», թիվ, 12*, 45.

67. Վարդանյան Գ., Գիտելիքահենք տնտեսություն, հնարավորություններ և մարտահրավերներ, Երևան, 2008:

68. Ցավի, հիշողության և պայքարի կոթողներ, Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված կոթողներ, ՀՀ սփյուռքի նախարարություն, Երևան, 2010:

69. Ցավի, հիշողության և պայքարի կոթողներ, ՀՀ սփյուռքի նախարարություն, Երևան, 2015:

70. Փաշայան Ա., Հարությունյան Լ., Սիրիայի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ, Երևան, 2011:

71. Փաշայան Ա., Հարությունյան Լ., Ծոցի արաբական երկրների հայ համայնքները. արդի հիմնախնդիրներ, Երևան, 2012:

72. Օհանյան Ս., Իրաքի հայ համայնքը XX դարում, Երևան, 2016:

73. Օսկանյան Վ., Անավարտ տասնամյակ, ելույթների ընտրանի, Երևան, 2009:

74. Օսկանյան Վ., Անկախության ճանապարհով, Երևան, 2013:

75. Armam G., Kirakossian, Brief history of the Armenian Question and the Armenian Genocide, Vienna, 2014.

76. “Armenia-Diaspora Relations: 20 Years since independence”, A. Publication of Policy Forum Armenia, 2010.

77. “The Armenians. Past and Present in the making of National Identity”, ed. by Ed. Herrig and M. Kurkchiyan, New York, 2005.

78. Cohen R., Global diasporas: An introduction//Global diasporas/ ed. By. R. Cohen.-Second sedition, N. Y., 2008.

79. Мелконян Э., Армянский всеобщий благотворительный союз, неоконченная история, Ереван, 2010.

80. Мелконян Э., Дятлов В., Армянская диаспора: Очерки социо-культурной типологии, Ереван, 2009.

81. Диаспора, нефть и розы, чем живут страны Южного Кавказа, под. ред. Ивлиана Хамндравы и Александра Искандаряна, Ереван, 2005.

82. Манукян А., Некоторые проблемы межгосударственных и межцивилизационных отношений на Южном Кавказе, Ереван, 2013.

83. Ананян Ж., Хачатурян В., Армянские общин России, Ереван, 1993.

84. Григорянц В., Армении Средней Азии. История, современное положение, перспективы, Ереван, 1994.

85. Григорянц В., Возрождение армянской общины Крыма: достижения и проблемы, Симферополь, 2004.

86. Тер-Саркисянц А., Худавердян В., Армянская диаспора Юга России, Москва, 1993.

87. Очерки истории стран Южного Кавказа, мульти перспективный взгляд на историю, под ред. С. Григоряна, Ереван, 2009.

1. Բաղալյան Ա., Խորհրդային Հայաստան-Սփյուռք կապերի պատմական փուլերը, «Հայ գաղթականությունը և Հայրենիք-Սփյուռք կապերը 1918-1985 թթ.» միջազգային գիտաժողովի զեկուցումներ, Եր., 1986 թ.:

2. Բայաղյան Հ., Հայաստան-Սփյուռք հարաբերությունների թեման նախազահի թեկնածուների ծրագրերում, http://hetg.am/am/am/news/-31708/hayastan-spyurg-haraberutyuneriteman-nakhayahi-teknatsuneri-tsagrarum.html:

3. Գասպարյան Ս., Սփյուռքահայ մշակութային և հայրենակցական միությունները արդի շրջանում, ՊԲՀ, 1970, N3:

4. Հովհաննիսյան Պ., Հայ ժողովրդի պատմության պարբերացման հիմնահարցին նվիրված համաժողով, ՊԲՀ, 1993, N4:

5. Հովյան Վ., Հայաստան-Սփյուռք 3-րդ խորհրդաժողով, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENTID=239:

6. Հարությունյան Գ., Ծայրահեղականության աճը և «մտավոր հավասարության» գործոնը, «XXI դար», Երևան, 2015:

7. Հովյան Վ., Հայկական սփյուռքի փոխակերպումը. Մարտահրավերներ և հնարավորություններ, Երևան, 1913, թիվ 5, էջ 43-47:

8. Հովյան Վ., Լիբանանի հայ համայնքն արդի մարտահրավերներին ընդառաջ, «Նորավանք» ԳԿՀ, Երևան, թիվ 7, 2013:

9. Մակարյան Լ., Հայաստանի օգնության կոմիտեի համագործակցությունը հայրենակցական միությունների հետ, «Հայոց պատմության հարցեր» (գիտական հոդվածների ժողովածու), 2012, N3:

10. Մակարյան Լ., Հայաստանի օգնության կոմիտեի փոխհարաբերությունները սփյուռքահայ կուսակցությունների հետ, ԲՀԱ, 2010, N1:

11. Մելքոնյան Է., Հայաստանի երրորդ հանրապետության և Սփյուռքի քաղաքական փոխհարաբերությունների հարցի շուրջ, «Սփյուռքագիտություն, տեսության և պատմության հարցեր» տարեգիրք, Երևան, 2012:

12. Մելքոնյան Է., Հայաստան-Սփյուռք հարաբերությունների փոխակերպումը XX դարում, քաղաքական իշխանության խնդիրը, «Սփյուռքի հեռանկարները գլոբացվող աշխարհում» միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, 2012:

13. Մինասյան Է., Հայրենիք-Սփյուռք առնչությունները գիտության բնագավառում 1990-ական թթ., «Գիտական աշխատություններ», Գյումրի, 2005, N 8:

14. Մինասյան Է., Հայրենիք-Սփյուռք մշակութային առնչությունները 1990-ական թթ., «Նոր-Դար», Երևան, 2004, h. 4:

15. 85 հազար ամերիկյան դոլար Հայաստանի և Սփյուռքի կարիքավոր երեխաներին, «Ջանասեր» 2000, թիւ 7-8, 9-10, ԿԳ տարի, էջ 133-153:

16. Тавадян Т., Армянские национальные «Кочари» в Краснодарском крае (степень организованности и переспективы), Бюллетень научно-образовательного фонда, «Нораванк», 2007, N20, с. 45-52.

17. Мелконян Э., Армянская апостольская церковь во взаимоотношениях Армении и Диаспоры, Релегия и политика на Кавказе. Материалы международной конференции, Ереван, 2004.

18. Tölölyan Kh., Elites and institutions in the Armenian Transaction, Diaspora, A Journal of Transnational Studies, Vol. 9, N1, spring, 2000.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Էդիկ Գարեգինի Մինասյան, Արարատ Վլադիմիրի Վարդանյան,
Վրեժ Կիմի Հարությունյան, Էլլադա Էդվարդի Հայրապետյան

ԱՐՑԱԽ-ՍՓՅՈՒՌՔ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XX ԴԱՐԱՎԵՐՋԻՆ ԵՎ XXI ԴԱՐԱՍԿԶԲԻՆ

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. Խմբագրումը՝ Մ. Հովհաննիսյանի

Ստորագրված է տպագրության՝ 03.12.2022:
Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլը՝ 17.375:
Տպաքանակը՝ 300:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երեւան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.ysu.am